ԱՇՈՏ ԱՎԱԳՅԱՆ

ՊԱՆԹՈՒՐՔԱԿԱՆ ԵՐԱԶԱՆՔ ԿԱՄ «ԳՈՐԾ ԳԱՅԼԵՐ»

9(56)
Ch-77

ՊԱՆԹՈՒՐՔԱԿԱՆ ԵՐԱՁԱՆՔ ԿԱՄ «ԳՈՐԾ ԳԱՅԼԵՐ»

ԸՍՏ ԱՍՊԱՐԵԶՈՒՄ ԵՂԱԾ ՆՅՈՒԹԵՐԻ

Կազմեց Աշոտ ԱՎԱԳՅԱՆԸ

4881

ՀՏԴ 94/99:327
ԳՄԴ 63.3+66.4
Ա 770

Ա 770 ՊԱՆԹՈՒՐՔԱԿԱՆ ԵՐԱԶԱՆՔ ԿԱՄ «ԳՈՐՇ ԳԱՅԼԵՐ»/Կազմ. Ա. Ավագյան. - Եր.: «Հանուն հայրենիքի» հայրենասիր. հ/կ, 2013.- 154 էջ:

Երկիրն այսօր աշխարհաքաղաքական մեծ փոփոխությունների շեմին է: Հայաստանի Հանրապետությանն ուղղված նորագույն մարտահրավերները շարունակում են սպառնալ քսանամյա կենսագրություն ունեցող նորանկախ պետության գոյությանը: Այժմ, առավել քան երբևէ, պետք չէ կորցնել զգոնությունը նոր՝ «եվրոպական» կերպ ու ձև ստացած, բայց նպատակով և բովանդակությամբ նույնը մնացած պանթուրքական նկրտումներին դիմագրավելու համար:

Պետք է քաջ գիտակցել, որ թուրքական հասարակական կյանքի հիմնական առանձնահատկությունը թուրքիզմն է, առաջին հերթին՝ այլամերժ թուրքական ազգայնամոլությունը:

Ներկա աշխատանքը մի փորձ է ասպարեզում եղած, թեմային առնչվող նյութերի (գիտական աշխատանքներ, համացանցի էջեր, համասփյուռի, ձայնասփյուռի կայաններ, հոդվածներ) միջոցով ճանաչել ու հասկանալ այն իրական վտանգը, որի անունը գորշգայլական ազգայնամոլություն է:

ՀՏԴ 94/99:327
ԳՄԴ 63.3+66.4

ISBN 978-99941-2-834-1

© Ավագյան Ա., 2013 թ.

ՊԱՆԹՈՒՐՔԱԿԱՆ ԵՐԱԶԱՆՔ ԿԱՄ «ԳՈՐՇ ԳԱՅԼԵՐ» ԳՐՔԻ ՄԱՍԻՆ

«Գորշ գայլերը» գործում են աննկատ, հաճախ տարբեր մշակութային և սպորտային կազմակերպությունների անվան տակ, այդ իսկ պատճառով նրանց մասին լրատվությունը բավականին սակավ է, երբեմն էլ՝ անհասանելի:

Ներկա գիտահանրամատչելի աշխատանքը փաստերի հանրագումար է՝ գրեթե առանց մեկնաբանությունների: Այն բավական լավ պատկերացում է տալիս այդ պանթուրքիստական և ծայրահեղ ազգայնամոլ կազմակերպության և նրա ուղղվածության մասին:

ՌՈՒԲԵՆ ՍԱՖՐԱՍՏՅԱՆ
ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի տնօրեն,
պ.գ.դ., պրոֆեսոր

«ԹՈՒՐՔԱԿԱՆ ՎՏԱՆԳ, ՈՐ ՄԻԱՅՆ ՅՈԹՆԻՑՍ ԿՈՒՅՐԵՐԸ ՉԵՆ ՏԵՄՆՈՒՄ»

Մեր ժողովուրդն իր ողբերգական անցյալի սխալներն ուղղելու համար պարտավոր է դասեր քաղել մարդկության զարգացման պատմությունից, սակայն առավել ևս՝ իր պարտություններից: Մեր ապագայի անսխալ կառուցման համար մեր տարածքային կորուստների իրական պատճառների վերհանումը միայն մեկ նպատակ պետք է հետապնդի՝ Հայոց պատմական տարածքների վրա Հայոց պետականության վերակերտում:

«Հանուն հայրենիքի» ՀԿ-ն երկրորդ անգամ է անդրադառնում «Գորշ գայլերի» հրատապ թեմային. առաջին անգամ 2010 թվականին հրատարակման պատրաստվեց Աշոտ Ավագյանի հեղինակած «Գորշ գայլեր» համառոտ ուրվագծեր գրքույկը: Ցավոք, այդ թեմային վերաբերող մատչելի գրականության խիստ պակաս էր զգացվում, և գրքույկը իր փոքր տպաքանակով սպառվեց մեծ արագությամբ, ինչից կարելի էր եզրակացնել, որ «Գորշ գայլերի» գործունեությանը ծանոթ են միայն գիտական նեղ շրջանակներում:

«Պանթուրքական երազանք կամ «Գորշ գայլեր» գրքի հրատարակման աշխատանքներն իրականացնելիս ինչպես միշտ հավատարիմ ենք մնացել Նժդեհյան ազգային գաղափարախոսության կարևորագույն դրույթներին: «Ճանաչի՛ր ինքդ քեզ»,-ասում էր Սոկրատեսը, «Ճանաչի՛ր թշնամուդ»,- հավելում էր Զարևանդը, «Գերազանցի՛ր թշնամուդ,- բացատրում է Նժդեհը,-որովհետև հաղթել՝ նշանակում է գերազանցել թշնամուն»:

«Ցեղակրոն եմ, ասել է՝ պարտավո՛ր եմ, կամենո՛ւմ եմ, կարո՛ղ եմ գերազանցել և պե՛տք է գերազանցեմ ցեղիս թշնամիներին»:

ՆԵՐՍԵՍ ՆԵՐՍԻՍՅԱՆ
«ՀԱՆՈՒՆ ՀԱՅՐԵՆԻՔԻ» ՀԿ նախագահ

ԽՄԲԱԳՐԻ ԿՈՂՄԻՑ

Մեր օրերում Հայաստանի Հանրապետության դեմ թշնամաբար տրամադրված թուրքական երկու հարևան պետություններում ահագնացող ազգայնական տրամադրությունները, որոնք հաճախ պետական մակարդակի են հասնում հատկապես Ադրբեջան կոչված արհեստածին երկրում, լրջագույն վտանգ են հայ ժողովրդի համար, և դրա դեմս առնելու համար հարկ է միավորել հայության ամբողջ ներուժը: Ճիշտ գործողություններ ձեռնարկելու համար հարկավոր է մանրակրկիտ ուսումնասիրել թուրքական պետությունների ներսում տեղի ունեցող զարգացումները, այդ թվում՝ թուրքական «Գորշ գայլեր» ազգայնական շարժման գործողությունների ձևերն ու ուղղվածությունը, նրանց որդեգրած թիրախները, որոնցից գլխավորը այսօր էլ հայությունն է և Հայաստանի ներկա հանրապետությունը:

ԶՈՀՐԱԲ ՄՈՒՂԴՈՒՍՅԱՆ

Հեղինակն իր շնորհակալությունն է հայտնում «Հանուն հայրենիքի» հասարակական կազմակերպությանը, ի դեմս նախագահ՝ Ներսես Ներսիսյանի, գրքի հրատարակման աշխատանքներին աջակցելու համար:

ՊԱՆԹՈՒՐՔԱԿԱՆ ԱԶԳԱՅՆԱՄՈԼՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ

«Գորշ գայլերի» գործունեության քաղաքական դաշտը

«Մինչ հայը իր ցեղի մեջ մարդկութիւն, թուրքն իր հոգում՝ գայլութիւն է մշակում»:
Գարեգին Նժդեհ

Վերջին տարիներին Թուրքիայում ազգայնամոլությունը զգալի աճ է ապրում հասարակական և պաշտոնական բոլոր մակարդակներում: Ազգայնամոլության վերելքը, որ հաճախ դրսևորվում է որպես հակազդեցություն Եվրոմիությանը Թուրքիայի անդամակցության գործընթացին, Կիպրոսի խնդրին, Իրաքում քրդական ազգային զարթոնքին ու նաև Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման արշավին, դրսևորվում է բռնարարքներով, վարչական շենքերի ավերումներով, խափանարարական գործունեությամբ:

Որպես պահանջատեր և տնականորեն պանթուրքական ծրագրերի վտանգի մատնված ժողովուրդ՝ հարկ է քաջատեղյակ լինել թուրքական ազգայնամոլական կառույցների և դրանց գործելակերպի մասին: Այս առումով արժանի է ուշադրության ԱՇԿ-ն («Ազգայնական շարժում» կուսակցություն-MHP Milliyetci Hareket Partisi): Այն գործում է Թուրքիայում և Թուրքիայից դուրս՝ ինչպես թուրքալեզու հանրապետություններում, այնպես էլ Եվրոպայում (հատկապես՝ Հոլանդիայում, Բելգիայում, Գերմանիայում), իսլամական ու արաբական մի շարք երկրներում, ԱՄՆ-ում և բոլոր այն երկրներում, ուր կան թուրքական համայնքներ:

Սակայն անհրաժեշտ է նկատել, որ ռասսիստական միտումները միշտ էլ նկատելի տեղ են զբաղեցրել թուրք հասարակության մեջ ինչպես Օսմանյան կայսրությունում, այնպես էլ հանրապետական Թուրքիայում: Բացի մի քանի քրդական կուսակցություններից, բոլոր կուսակցություններն էլ քարոզում են թուրքիզմ, բայց սրանց մեջ առաջնակարգ դերը պատկանում է ԱՇԿ-ին:

1923-50 թվականներին Թուրքիայում եղել է միակուսակցական քաղաքական համակարգ, սակայն այսօր այդ պետության քաղաքական դաշտը բոլորովին այլ պատկեր ունի:

Օրենսդիր իշխանությունը ԹԱՄԺ-ն է (Թուրքիայի Ազգային մեծ ժողով): Ունի 550 պատգամավորական տեղ, 2007 թվականից ընտրվում է 6 տարի ժամկետով:

2009 թվականին Թուրքիայում տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ժամանակ 2002 թվականից իշխող ԱԶԿ-ն[1] առաջին անգամ նվազագույն արդյունքներ գրանցեց, ինչն անսպասելի էր:

ԱԶԿ-ն 2009 թվականի տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններում հավաքել է ձայների մոտ 39-40 %-ը, որն էլ զիջում է խորհրդարանական ընտրություններում նրանց հավաքած ձայներին:

Ընտրությունների այդպիսի արդյունքների պատճառները կարելի է տեսնել առաջին հերթին տնտեսական ճգնաժամի մեջ, որը ծանր ազդեցություն է թողնում նաև Թուրքիայի վրա:

Ընտրություններում գրանցված հաջորդ անսպասելի արդյունքը պանթուրքիստական, աջ ծայրահեղական ազգայնական կուսակցության ձայների ավելացումն էր: ԱՇԿ-ն հավաքել էր ձայների 17 %-ը:

Քրդաբնակ շրջաններում «Քրդական ժողովրդավարական հասարակություն» կուսակցությունը առաջին անգամ կարողացավ հասնել հաղթանակի, մասնավորապես՝ Դիարբեքիրի քաղաքապետի ընտրություններում:

Սակայն պետք է նշել, որ ՏԻՄ ընտրություններն ունեն որոշակի առանձնահատկություններ. ընտրազանգվածը առավելապես կողմնորոշվում է անհատների ունեցած հեղինակությամբ: Այսինքն՝ ՏԻՄ ընտրությունների ժամանակ ընտրողներին առավելապես հետաքրքրում են տվյալ ՏԻՄ ղեկավարի թեկնածուի կառավարման ձիրքը, սոցիալական ու համայնքային գործունեությունը, քաղաքական փորձառությունը, ու միայն հետո են հաշվի առնվում կուսակցական պատկանելությունն ու այլ գործոններ:

2007 թվականի ՏԻՄ ընտրություններում «Երջանկություն» կուսակցությունը ստացել էր ձայների 2,3 %, իսկ 2009-ին՝ 5,2 %-ը: Ձայների ավելացումը պայմանավորված էր հիմնականում կուսակցության նոր ղեկավարի դրական ազդեցությամբ: Մինչ այդ կուսակցությունը ղեկավարում էին Էրբաքանն ու Ռեջայի Քութանը:

Շատ հետաքրքիր է ԱԶԿ-ի օգտին քվեարկողների սոցիալական պատկանելության հարցը, որը մշտապես կուսակցության ուշա-

[1] ԱԶԿ-«Արդարություն և զարգացում» իշխող իսլամամետ կուսակցություն:

դրության կենտրոնում է եղել: Նախևառաջ կուսակցության անվան կողքին դրվող «իսլամամետ» որոշիչը շատերի մոտ ստեղծում է այն սխալ տպավորությունը, թե ԱԶԿ-ի օգտին պետք է քվեարկեին հատկապես մոլի հավատացյալները: Թուրքական հասարակության ձգտումը երիտասարդ, դինամիկ, չկոռումպացված, հարգված ու նախկինում էլ իրեն չվարկաբեկած քաղաքական թիմ ունենալն էր: Այնպես որ 2002 և 2007 թթ. նորաստեղծ ԱԶԿ-ի օգտին քվեարկեցին ոչ միայն իսլամականները, այլև 2001 թվականի տնտեսական ճգնաժամի պատճառով մեծ վնասներ կրած միջին խավը: Մեծ քաղաքների բնակիչները ևս դարձան ԱԶԿ-ի պաշտպաններ:

ԱԶԿ-ն ներկայանում է իբրև միջին թուրքի կուսակցություն, որի համակիրները մերժում են աստվածապետությունը, սակայն շեշտում են կրոնի նկատմամբ հարգանքի անհրաժեշտությունը, հավատում են ժողովրդավարական աշխարհիկ սկզբունքներին, պնդում են կրոնական գլխաշորի վերացման անհրաժեշտության մասին, կողմ են հասարակությունը պառակտող խնդիրների փոխզիջումային ու խաղաղ լուծմանը:

Ընտրություններում Թուրքիայի 81 վիլայեթներից 62-ում ԱԶԿ-ն գրավում էր առաջին տեղը:

ԱԶԿ-ն չափավոր պահպանողական է, կողմ՝ շուկայական տնտեսվարմանը և Թուրքիայի՝ Եվրամիություն մտնելուն:

ԱԶԿ-ի գլխավոր քաղաքական ախոյանը՝ Հանրապետական ժողովրդական կուսակցությունը (ՀԺԿ), տարիների ընթացքում ձեռք է բերել համակիրների իր կայուն թիմը: Սակայն, ի տարբերություն ԱԶԿ-ի, այն չունի սոցիալական կողմնորոշման կուսակցության հեղինակություն:

ՀԺԿ-ն, թեև հայտնի է որպես սոցիալ-ժողովրդավարական գաղափարախոսության ջատագով, շարունակում է մնալ վերնախավային՝ գաղափարական ու սոցիալական խավերից մեկուսացված կուսակցություն: ՀԺԿ-ի ղեկավար Դ. Բայքալի օրոք կուսակցությունը ոչ մի էական ձեռքբերում չի ունեցել, իսկ 1999 թ. ընտրություններում նույնիսկ չհաղթահարեց անհրաժեշտ 10 %-ի արգելքը:

2009 թ. մարտի 29-ին Թուրքիայում անցկացված տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններում ներկայացված էին 19 կուսակցություններ ու մի շարք անկախ թեկնածուներ: Իրենց դիրքերն ավելի էին ամրապնդել Ժողովրդահանրապետական կուսակցությունն ու «Ազգայնական շարժումը», այսինքն՝ «Գորշ գայլերը»,

որոնք ուժեղ էին հատկապես ռեգիոններում: Ստորև բերված աղյուսակում ներկայացված են տվյալներ 2004, 2007, 2009 թթ. պառլամենտական ընտրությունների ընթացքում առաջին 3 տեղերը գրաղեցրած կուսակցությունների հավաքած ձայների քանակի վերաբերյալ:

	2004 թ.	2007 թ.	2009 թ.
ԱԶԿ	41.67 %	46.58 %	38.83 %
ՀԺԿ	18.23 %	20.88 %	23.12 %
ԱՇԿ	10.45 %	14.67 %	16.07 %

Վերջին երեք խորհրդարանական ընտրություններում ԱԶԿ-ի, ՀԺԿ-ի և ԱՇԿ-ի գրանցման արդյունքները:

	2002 թ.	2007 թ.	2011 թ.
ԱԶԿ	34,3 %	46.54 %	49,92 %
ՀԺԿ	19,34 %	20.79 %	25,92 %
ԱՇԿ	8,34 %	14.25 %	12,98 %

Հետաքրքրական է, որ 2009-ի մարտի 29-ի՝ Թուրքիայի տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններում «Գորշ գայլերի» ցուցակով 2 հայ կար՝ Լևոն Աքջա և Խաչո Քեշիշ, որոնցից Լևոն Աքջան հաղթեց և ընտրվեց Մերսին նահանգի համայնքներից մեկի քաղաքապետարանի խորհրդի անդամ:

2002 թվականի նոյեմբերի 3-ին տեղի ունեցած խորհրդարանական ընտրություններն ավարտվեցին ԱԶԿ-ի հաղթանակով: 1987 թվականից այն դարձավ առաջին կուսակցությունը, որն ստացավ խորհրդարանական աթոռների հստակ մեծամասնությունը: Բազմակուսակցական համակարգի ավելի քան կեսդարյա պատմության ընթացքում յուրաքանչյուր ընտրության ժամանակ գրանցվում է մոտ 23 %-անոց շարժ: ԱԶԿ-ն «Բարօրություն» (Refah), «Առաքինություն» (Fazilet) կուսակցությունների ժառանգորդն է: 1983 թվականի հուլիսի 19-ից «Բարօրություն» կուսակցությունը վերանվանվեց «Առաքինություն», իսկ 2001 թվականի հունիսի 22-ից՝ «Երջանկություն» (SAADET):

2002 թվականին իսլամամետ և ազգայնական կուսակցությունները ընդհանուր առմամբ հասան իրենց ընտրազանգվածի աջակցության

գագաթնակետին՝ հավաքելով մոտ 53 %, ինչն ամենաբարձր ցուցանիշն էր թուրքական քաղաքական պատմության մեջ: Այսպես՝

ԱՇԿ (MHP)-1999 թվական-17,98 %, 2002 թվական-8,34 %

ՄՄԿ (BBP)-1999 թվական- 1,46 %, 2002 թվական-1,02 %:

Արևելագետ Ա. Շաքարյանը իր՝ Թուրքիայում ընտրությունների վերլուծությունում գրում է. «Թուրքիայի արևելյան և հարավարևելյան շրջանները սոցիալ-տնտեսական և մշակութային առումներով ամենից քիչ զարգացածն են, իսկ քաղաքական նախապատվության վրա ազդում է ազգային գործոնը: Այստեղ ամենից ուժեղ են քրդական ծագմամբ կուսակցությունները. 1990 թվականից՝ HADEP-ը, 2002 թվականից՝ DEHAP-ը»:

Ծովափնյա շրջանները սոցիալ-տնտեսական առումով ամենից զարգացածն են: Այստեղ քաղաքական նախապատվությունը հիմնականում կենտրոնամետ է:

Փոքրասիական սարահարթային շրջանները սոցիալ-տնտեսական զարգացվածությամբ միջին դիրք են գրավում վերոհիշյալ երկու տարածաշրջանների համեմատ: Նրանք ներկայացնում են թուրքական ազգայնական և իսլամամետ ընտրազանգվածը:

2001 թվականի խոր տնտեսական ճգնաժամից հետո ԺՁԿ-ԱՇԿ-ՄՀԿ կոալիցիան, որը 1999 թվականին հավաքել էր շուրջ 54 % քվե, 2002 թվականին հավաքեց ընդամենը 15 %:

Թուրքիայում քաղաքական նախապատվության կարևորագույն չափանիշներից է կրոնադավանաբանական պատկանելությունը: Կրոնական տարրի ակտիվացման դեպքում նկատում ենք իսլամիստական կուսակցություններին ցուցաբերվող աջակցության աճ: Հակառակ դեպքում աճ է ապրում ձախերի վարկանիշը: Ազգայնական տրամադրությունների բարձրացումը բերում է աջերի հաղթանակին (ալևիները հաճախ նախապատվությունը տալիս են ՀԺԿ-ին):

1999 թվականի ապրիլին տեղի ունեցած խորհրդարանական ընտրությունների արդյունքում ԱՇԿ-ն դարձավ Թուրքիայի 2-րդ կուսակցությունը՝ ստանալով 129 պատգամավորական աթոռ, և DSP-ի, Dogru Yol Partisi-ի հետ կազմեց կոալիցիա:

Հաշվի առնելով ԱՇԿ-ի գործունեության կարևորությունը և ներկայացրած վտանգը մեզ համար՝ հարկ ենք համարում մանրամասն ներկայացնել այդ կուսակցությունն ու նրա գործունեությունը:

ԱՇԿ («Ազգայնական շարժում» կուսակցություն)

Ժամանակակից Թուրքիայի քաղաքական կյանքում իր ուրույն տեղն ունի «Ազգայնական շարժում» կուսակցությունը (ԱՇԿ- Milliyetci Hareket Partisi -MHP): Հասարակության լայն շրջանակներին «Գորշ գայլեր» (Bozkurt) անվամբ հայտնի ԱՇԿ-ի քաղաքական ու գաղափարական հայեցակարգը թուրքական ազգայնականության առավել ծայրահեղական՝ պանթուրքիստական ուղղությունն է: Սակայն վերջին տասնամյակների ընթացքում պանթուրքիստական գաղափարախոսություն սերմանող ԱՇԿ-ի գործունեությունը մեզանում անհրաժեշտ ուշադրության չի արժանացել, ուստի փորձ է արվում վերլուծել ու ներկայացնել ԱՇԿ-ի կառուցվածքային առանձնահատկությունները, գործունեության հիմնական ուղղությունները և առանձնացնել նրա անցած կարևորագույն փուլերը, ինչը հնարավորություն կտա ավելի պարզ պատկերացում կազմել «Գորշ գայլերի» գործելակերպի և նպատակադրվածության մասին: Մասնավորապես փորձ է արվում ներկայացնելու ԱՇԿ-ի երեք հատվածների՝

1. Կուսակցության, 2. Գաղափարաքաղաքական կազմակերպության և 3. Զանգվածային շարժման միջև եղած փոխկապակցվածությունը: Հենց դրանց մանրազնին ուսումնասիրության դեպքում է հնարավոր ճիշտ գնահատական տալ թուրքական աջ ծայրահեղական շարժման մոբիլիզացիոն ուժերին: Խնդիրը հետաքրքիր է ոչ միայն գիտական տեսանկյունից, այլև ռեալ նշանակություն ունի Թուրքիայում այսօր տեղի ունեցող քաղաքական վայրիվերումներում, քանի որ ԱՇԿ-ն հենց այն կուսակցությունն է, որը ներկայացնում է աջ ծայրահեղականությունը քաղաքական դաշտում. այն երկու անգամ մտել է քաղաքական իշխող կոալիցիայի մեջ: 2002 թվականի նոյեմբերին ԱՇԿ-ն, պարտվելով համընդհանուր ընտրություններում և ԹԱՄԺ-ից դուրս մնալով, 2004 թվականի մարտին Թուրքիայի ՏԻՄ ընտրություններում գրավում է 3-րդ տեղը՝ իրենից առաջ թողելով միայն այն կուսակցություններին, որոնք ներկայացված էին ԹԱՄԺ-ում: 2009 թվականին կրկնում է իր արդյունքը՝ նորից գրավելով 3-րդ տեղը: Նրա կազմակերպչական ուժն են կազմում ոչ միայն կուսակցական սփռված ցանցերը, այլև ազգայնական պանթուրքականների ծայրահեղական կազմակերպությունները կամ, ինչպես նրանց կոչում են Թուրքիայում, «Գաղափարապաշտների օջախները» (Ulku ocaklari), որոնք, պաշտոնապես չմտնելով ԱՇԿ-ի կազմի մեջ,

այնուամենայնիվ ենթարկվում են նրա ղեկավարությանն ու օգտագործվում՝ նրա հիմական ու կայուն ընտրազանգվածի տրամադրությունների ու գործելակերպի վրա ազդեցություն թողնելու համար:

«Գորշ գայլեր» կուսակցության մասին սակավ տեղեկատվության առկայությունը պայմանավորված է հենց իրենցով՝ «Գորշ գայլերով»: Բանն այն է, որ կուսակցությունը բոլոր հնարավոր միջոցներն օգտագործում է, որպեսզի աշխարհում չտարածվի այն իրական վատ, բացասական կերպարը, որն ունի իրենց կուսակցությունը: Հակառակ դեպքում իրավիճակը կարող է բացասաբար ազդել իրենց կուսակցության արտերկրյա մասնաճյուղերի վրա: Գործելով աննկատ և անաղմուկ՝ «Գորշ գայլերն» իրենց բոլոր, այդ թվում և ֆինանսական միջոցներն ուղղում են պանթուրքիստական ծրագրերի իրագործմանը: «Գաղափարապաշտների օջախների» անդամների մոտ կա սիրված ասացվածք. «Այն, ինչ չհաջողվեց անել օսմանցիներին սրի միջոցով. այն է՝ գրավել Արևմուտքը, հաջողվեց անել թուրք միգրանտներին»:

Ինչու «գորշ գայլ»

«Գորշ գայլը» բերնեբերան անցած թուրքական էպոս է, որը հետո գրի առնվեց ու դարձավ թուրքերին հաղթանակների տանող խորհրդանիշ: Գորշ գայլը թուրքերի համար նույնն է, ինչ անգլիացիների համար առյուծը, ռուսների համար՝ արջը, պարսիկների համար՝ վագրը, ճապոնացիների համար՝ ծովահրեշը, իտալացիների համար՝ Հռոմի գայլը, տիբեթցիների համար՝ կապիկը, ամերիկացիների համար՝ արծիվը:

Ամեն մի ազգի համար կարևոր խորհուրդ ունի իր իսկ ստեղծած ժողովրդական դյուցազներգությունը՝ էպոսը: Հայերի համար դա «Սասնա ծռեր»-ն է, հրեաներինը՝ Մովսեսի հնգամատյանը, իսկ թուրքերինը՝ «Գորշ գայլը»: Ինչպիսին ազգն է, այնպիսին էլ իր էպոսն է:

Մինչև գրավոր խոսքը կային էպոսներ, որոնք բերնեբերան փոխանցվում էին սերնդեսերունդ: Ամեն ազգի էպոս, այդ թվում և թուրքականը, չի գրվել մեկ մարդու կողմից: Երկար ժամանակ դրանք ընկալվել են որպես հեքիաթներ, առասպելներ և հերոսական պատմություններ, որոնք, սերնդեսերունդ փոխանցվելով, անընդհատ հղկվել են, ավելի ուշ հավաքվել, գրի են առնվել ու զետեղվելով մեկ ընդհանուր դյուցազներգության մեջ՝ դարձել են ազգերի պատմություն, ազգային դյուցազներգություն՝ էպոս: Bozkurt.net վեբ-կայքում գրված է. «Ամեն կրթված մարդ, որը չի ընդունում Գորշ գայլին, նշանակում է՝ չի ճանաչում, ժխտում է ազգային պատմությունը, իսկ իր ազգին, ազգությանը չհարգողին՝ ոչ ոք չի հարգի»:

Մոտենալով խունական դարաշրջանին՝ «Գորշ գայլի» կերպարը ավելի է կարևորվում: Արդեն այն միայն հոգևոր հայր չէ կամ դրոշի վրա եղած ազգային խորհրդանիշ: Այս ամենի հետ գորշ գայլը[2] մի աստվածային ուժ է, բանակին ճանապարհ ցույց տվող ուղեկցորդ, դժվարության մեջ մնացածին վազող-հասնող մի օգնական:

Չինական աղբյուրներից մեկի համաձայն՝ «...թուրքերի նախնիները բնակվել են Արևմտյան ծովի արևմտյան ափին: Թուրքերին ջարդում են Լին անվամբ երկրի բանակները: Սպանում են բոլորին, բացի մի 10-ամյա տղայից, որին Լին երկրի զինվորները խղճում են, ձեռքերն ու ոտքերը կտրելով՝ նետում են մի ճահճուտ: Իմանալով այդ մասին՝ Լին երկրի տիրակալը հրամայում է սպանել նրան նույնպես, որ թուրքերի

[2] Գորշ գայլ-հին թուրքերենում գորշ գայլին անվանում էին Քյոք Բորի:

արմատը վերջնականապես կտրվի...Թշնամու զորքերը երեխային գտնելու համար ճամփա են ընկնում: Բայց մի էգ գորշ գայլ, երեխայի ծոծրակից ատամներով բռնելով, փախցնում է Ալթայ և պահում նրան քարանձավում: Գայլը, լիզելով վիրավոր տղայի վերքերը, բուժում է նրան: Ալթայի լեռներում, որտեղ անտառ կար, պահում է երեխային: Վերքերը լիզելով, խնամելով բուժում է: Տղան շուտով ամուսնանում է այդ գայլի հետ: Ծնվում են 10 երեխաներ, որոնք էլ, ուրիշ աղջիկների հետ ամուսնանալով, բազմանում են, բանակ են ստեղծում, հարձակվում Լին երկրի վրա և լուծում նախնիների վրեժը: Ստեղծվում է մի հզոր պետություն: Եվ խաները, իրենց նախնիների մոր՝ էգ գայլի հարգանքից դրդված, իրենց զարդարված վրանների առջև գայլի գլխով մի դրոշակ են ամրացնում»:



Այդ խորհրդանիշը հետագայում գրծածվել է նաև Աթաթուրքի կառավարման ժամանակ թուրքական դրամի վրա, մի հանգամանք, որով «գորշ գայլերը» փորձում են Աթաթուրքին նույնպես «գորշ գայլ» ներկայացնել: Bozkurt.net վեբ-կայքում կա տեղեկություն նաև այն մասին, որ իբր թուրքերը հին երկաթագործներ են: Եվ այսպիսի տողեր. «...Թրքությունը չի մոռացել և պահպանում է իր ազգային արժեքները և խորհրդանիշները: Թուրք ազգայնականները երբեք չեն մոռանալու և շարունակելու են ապրեցնել դրանք: Մինչև երկրի կանգ առնելն էլ լուսին ու աստղ պատկերող կարմիր դրոշը շարունակվելու է ծածանվել երկնքում, ու գորշ գայլը շարունակելու է մնալ որպես թրքության անկախության ու ազատության խորհրդանիշ»:

Գումլիևի **"Древние тюрки"** գրքում զետեղված է «գորշ գայլի» մասին մեկ այլ լեգենդ, որտեղ նշվում է. «Խունի տան շրջանից մինչև արևմտյան շրջանը, այսինքն՝ Աթիլլայի տերությունը, որն իր հզորության գագաթնակետին իրեն է ենթարկել Արևելյան Հռոմեական կայսրությունը, Կապադովկիան, բնաջնջել Սիրիան, գրեթե ամբողջովին ավերվում է հարևանների կողմից. փրկվում է միայն մեկ 9-ամյա տղա, որին թշնամիները ձեռքերն ու ոտքերը կտրելուց հետո նետում են ճահճի մեջ: Այնտեղ նրանից հղիանում է մի էգ գայլ: Վերջիվերջո տղային սպանում են, իսկ էգ գայլը փախչում է Ալթայ և այնտեղ ծնում է 10 տղաներ. ազգը մեծանում ու զորանում է»:

Եվ այսպես, ըստ այս լեգենդի, թուրքերն առաջացել են արևմտյան հոներից: Սրանք եղել են II-IV դարերում ձևավորված քոչվոր ցեղեր, այժմ, որպես ժողովուրդ, ըստ էության, չկան, բայց դեռևս մերձսևծովյան որոշ քոչվոր ցեղերի համար օգտագործվում է այդ անվանումը:

Ըստ մեկ այլ լեգենդի՝ թուրքերն առաջացել են տեղական Սո ցեղից ու նորից էգ գայլից: Ողջ ցեղը մահանում է իր հիմարությունից (պատճառը չի բացատրվում), և միայն էգ գայլի 4 թոռներն են փրկվում: Մեկը վերածվում է կարապի, երկրորդը բնակվում է Արու (Աբական) և Գյան (Ենիսեյ) գետերի մեջտեղում, իսկ երրորդն ու չորրորդը՝ Չուսի (Չուի) գետերում՝ հարավային Ալթայում:

5-րդ դարում թուրք էր անվանվում իշխան Աշինայի[3] շուրջ հավաքված հորդան, որը 6-8-րդ դարերում կազմում էր մի ոչ մեծ ժողովուրդ[4], որն արդեն խոսում էր թուրքերեն: Իսկ ինքը՝ թուրքալեզու շրջանը, ձգվում էր արդեն Ալթայից արևմուտք՝ այն երկրները, որտեղ ապրում էին դազերը, պեչենեգները, հին բուլղարներն ու հոները:

[3] Աշինա-հին չինարենով՝ բարի գայլ, Աշինա (Asina) կոչում են նաև «Գորշ գայլերի» իգական սեռին պատկանող անդամներին:

[4] Մեթեի դինաստիային՝ Աշինայի տղաներին, կոչում էին Բոզքուրթ-սուլթաններ:

ԱՇԿ-ի գաղափարախոսությունն ու կարգավորման նախադրյալները

Ստորև բերում ենք «Գորշ գայլերի» հիմի, քայլերգի և «գաղափարապաշտների» երդման տեքստերը, որոնք, մեր կարծիքով որոշակի պատկերացում են տալիս ԱՇԿ-ի իրական նպատակների և բուն գաղափարախոսության մասին:



BOZKURT
BOZKURTLARIN KURANI VAR,
ALLAHIDIR ONA TEK YAR,
GULLERINE YAGMASIN KAR,
IMANLARI SoNMEDiKcE!

Գորշ գայլ
Ղուրան ունեն գորշ գայլերը,
Ալլահն է նրանց միակ սիրելին,
Թող ձյուն չիջնի նրանց ժպիտներին,
Մինչև որ չմարի նրանց հավատքը:

BOZKURT MARSI

Bozkurtlarla, bozkurtlarla
Turk yukselir bozkurtlarla.
Elde sancak, gokte bayrak,
Hak birliktir bozkurtlarla!...

Fedadır yurda canımız.
Er meydanı mekanımız.
Donatacak dokuz tugu,
Damardaki al kanımız!

Emir senden, olmek bizden,
Adanmısız bu ulkeye,

Donmek yoktur sozumuzden!...
Hain, kahpe yoktur bizde,
Birlik vardır ulkemizde!...

Adımıza bozkurt derler,
Korku yoktur gozumuzde!...
Inanmısız bir Allah´a
Rehberimiz hem Kur´an´a!
Uzak degil, cok yakında
Varacagız biz Turan´a.

«Գորշ գայլերի» հիմը*

Գորշ գայլերով, գորշ գայլերով,
Թուրքն է զորանում գորշ գայլերով:
Ձեռքում՝ դրոշակ, երկնքում՝ դրոշ,
Իրավունքն է ամբողջանում գորշ գայլերով...

Մեր մարմինը մատաղ է երկրին:
Մեր բնակատեղին է մարտադաշտը:
Թող խեղդվեն իշխանության 9-ը գայիսոնները,
Երակի՛ց վերցրու մեր արյունը:

Ստրուկը՝ քեզնից, մեռնելը՝ մեզնից,
Երդվել ենք մենք այս երկրին,
Մեր խոսքից հետդարձ չկա...
Դավաճան, ստոր մեր մեջ չկա,
Մեր երկրի մեջ միություն կա...

Մեզ գորշ գայլ են անվանում,
Վախ չկա մեր աչքերում...
Հավատացել ենք միայն Ալլահին,
Մեր ուղեցույցն է ճշմարիտ Ղուրանը:
Հեռու չէ, շատ մոտ է,
Կհասնենք մենք Թուրանին:

*Թուրքերենից տողացի թարգմանությունը Աշոտ Ավագյանի:

1884

BOZKURTLARIN Yuruyus Marsi

Dikin goktugları Turan ustune
Yuruyun Bozkurtlar dusman ustune.
Simsek gibi cakın, yel gibi esin
Savas turkunzu Kursad dinlesin
Ayak sesinizden yer-gok inlesin.
Dogsun hilaliniz vatan ustue
Yuruyun Bozkurtlar dusman ustune.
Ileri, ileri bir an durmayın
Vurun Bozkurtlarım ama vermeyin
Kızıl kopeklere zaman vermeyin.
Tufanlar yagdırın tufan ustune
Yuruyun Bozkurtlar dusman ustune.

«Գորշ գայլերի» քայլերգը*

Լեռան, երկնքի տերերի աչքը Թուրանի վրա,
Քայլե՛ք, Գո՛ր շ գայլեր, թշնամու վրա:

Կայծակի պես դանակ, փոթորկի պես զեփյուռ,
Ձեր ռազմերգը թող Քուրշադը[5] լսի,
Ձեր ոտնաձայնից երկիր-երկինքը թող ցնցվի:

Թող ծագի նորալուսինը հայրենիքի վրա,
Քայլե՛ք, գո՛ր շ գայլեր, թշնամու վրա:

Առա՛ջ, առա՛ջ, երբեք կանգ մի՛ առեք,
Խփե՛ք, գոր՛ շ գայլերս, բայց մի՛ տվեք,
«Կարմիր շներին[6]» ժամանակ մի՛ տվեք:

Հեղե՛ղ թափեք հեղեղի վրա,
Քայլե՛ք, գո՛ ր շ գայլեր, թշնամու վրա:

* Թուրքերենից տողացի թարգմանությունը Աշոտ Ավագյանի:

[5] «Bozkurtlarin olumu» գրքում («Գորշ գայլերի մահը», հեղինակ՝ Նիհալ Աթսըզ) արքայազն Քուրշադը պայքարում է չինացի զավթիչների դեմ: Թուրքիայի վերածնունդը (Gok Turk) կապվում է Քուրշադի հետ, որտեղ Քուրշադը գլխավորում է այդ պետությունը: Այստեղ բերված է որպես դրական, առասպելական հերոս:

[6] «Կարմիր շներ»-նկատի ունի կոմունիստներին:

Գաղափարապաշտի երդումը

Ալլահի, Ղուրանի, Հայրենիքի, Դրոշակի,
Ազգի, Ձենքի և Բաշբուղի առջև՝
Երդվում եմ.
Թող Նահատակները, Հերոսները վստահ լինեն,
Որպես գաղափարապաշտ թուրք երիտասարդներ,
Համայնավարության, դրամատիրության, ցեղապաշտության
և ամեն տեսակ կայսերապաշտության դեմ
Մեր պայքարը պիտի շարունակվի,
Մեր պայքարը մինչև վերջին զինվոր, վերջին շունչ,
Մինչև արյան վերջին կաթիլն է,
Մեր մարտը Ազգային Թուրքիայից
Մինչև Մեծ Թուրանն է:
Չպետք է ընկրկենք,
Չպետք է վհատվենք, չպետք է ընկնենք...
Պետք է իրականացնենք, պետք է իրականացնենք,
Պետք է իրականացնենք:
Ալլահը թող պաշտպանի և հզորացնի Թուրքին:

Պանթուրքական ծրագրերը նախկինում իրականացնում էին երիտթուրքական պարագլուխներից Էնվերը, դոկտոր Նազըմը և նրանց խումբը Աֆղանստանում, հետո՝ Մուսթաֆա Քեմալ Աթաթուրքը, Զիյա Գյոքալփը[7], Ռաուֆ բեյը՝ Թուրքիայում: Հենց այսպիսի մթնոլորտում էլ ծագեց ու ձևավորվեց ԱՇԿ-ն:

MHP-ին (Mililiyetci Hareket Partisi-եԱզգայնական շարժում» կուսակցության) դաշնակից է համարվում թուրք գեներալիտետը: Այն աջ ծայրահեղական է, պահպանողական և նեոնացիստական: Դեֆակտո այն ստեղծվել է 1948 թվականին: Կողմ է կորպորատիվ հասարակության ստեղծմանը: Ղեկավարներն են՝ Դևլեթ Բահչելին, Մեհմեդ Շանդիրը: Շատ համակիրներ ունի հատկապես Կենտրոնական Անատոլիայի աղքատ գյուղացիության շրջանում:

[7] Զիյա Գյոքալփ-Մեհմեդ Զիյա (1876 թ. Դիարբեքիր-1924 թ. Ստամբուլ): Սոցիոլոգ, գրող, բանաստեղծ: Թուրքիզմի և իսլամիզմի սինթեզի միջոցով առաջարկում էր տարածել թուրքական մշակույթը: (Gyokalp–երկնքի դարպաս, հին թուրքերենով՝ կապույտ դարպաս): Շատ վերլուծաբաններ համարում են, որ հենց նրա գաղափարները հանգեցրին Հայոց ցեղասպանությանը: Գյոքալփը համարվում է «թուրք ազգայնականության հայրը»:

1944 թվականի հունվարին լույս տեսավ Օ. Թյուրքանի «Նացիոնալիզմի ճանապարհին» գիրքը, որի մեջ հեղինակը թուրքիզմը համեմատում էր ֆաշիզմի հետ և կարծում, որ դրանք նույն իմաստն ունեն, ապա կոչ էր անում պաշտպանել ֆաշիզմը ու չդադարեցնել թշնամանքը Խորհրդային Միության հանդեպ: «Թուրքիզմը,-ասում էր նա,- թուրքական նացիոնալիզմն է, որ գոյություն ունի Թուրքիայում, ինչպես Գերմանիայում գոյություն ունի նացիոնալ-սոցիալիզմ»: Այնուհետև նշում էր .«Թուրքիզմը, ինչպես ամեն մի նացիոնալիզմ, հետապնդում է ազգային դաշինքի գաղափարը: Թուրք ազգը ընդգրկում է այն բոլոր 65 միլիոն թուրքերին, որոնք ապրում են Թուրքիայից դուրս՝ Բուլղարիայից մինչև Ալթայ ընկած ընդարձակ տարածությունում: Դժբախտ դեպքերն ու իրադարձությունները քաղաքականապես բաժանեցին թուրքերին, բայց այդ բաժանումը չի կարող մեզ ստիպել հրաժարվել միասնական դաշինքի մեր գաղափարից, այլ, ընդհակառակը, միայն քաջալերում է դրա իրականացումը»:

1944 թվականին լույս է տեսնում նույն Թյուրքանի «Դեպի թուրքիզմի ուղին» գիրքը, որտեղ հեղինակը գրում էր, թե թուրքերին քաղաքականապես միմյանցից բաժանել են դժբախտ դեպքերն ու իրադարձությունները, և որ անհրաժեշտ է նորից միավորել նրանց: Իսկ ո՞վ պետք է ստանձնի միավորողի դերը, եթե ոչ գորշգայլական թուրքիզմը: Գրքի «Գորշգայլականների կանոնադրությունը և երդումը» գլխում Թյուրքանը գրում էր . «Ո՞վ ենք մենք-գորշգայլականնե՛ր: Մեր գաղափարախոսությո՞ւնը.-թուրքի՛զմ: Ինչի՞ն են հավատում գորշգայլականները.-մյուս բոլոր ռասսաների ու ազգերի նկատմամբ թուրքական ռասսայի ու թուրքական ազգի գերազանցությանը: Արդյո՞ք գորշգայլականները պանթուրքիստներ են.-այո՛: Ի՞նչն է մեր գերազանցության աղբյուրը.-թուրքական արյունը: Ո՞րն է թուրքերի իդեալը.-դառնալ առավել մեծ պետություն, դառնալ ամենամեծ պետությունը և միակ պետությունը: Երիտասարդ թուրք իդեալիստի համար դա է ամենաթանկագին գաղափարը: Գորշգայլական թուրքիզմի սուրբ իդեալն է՝ Թուրքիան ընդարձակել: Ի՞նչ իրավունքների վրա է խարսխվում այդ սկզբունքը՝ գորշգայլականներն արդեն վաղուց հռչակել են. «Իրավունքը չի տրվում, այն վերցվում է» սկզբունքը: Այսինքն՝ դուք առաջարկում եք պայքա՞ր -այո՛: Պատերազմը բնության օրենքն է, մենք՝ ռազմիկների սերունդ...»: Ազգապաշտ թուրքը «մի գերմարդ» է, որը չի ընդունում այս աշխարհում 2-րդ ազգի գոյություն: Գորշգայլականները վաղուց են համոզվել այն բանում, որ պատերազմի, զինվորական

կանության և հերոսության մեծարումը անհրաժեշտ է բարձրացնել ամենավերին մակարդակի:

Գրքի տարբեր էջերում Օ. Թյուրքանը գովերգում է «թուրքական ռասսան», նրա «առավելությունները», զարգացնում թուրքերի՝ «ընտրյալ» լինելու մասին գաղափարը: «Պանթուրքիստները,- ասում է նա,- հավատում են, որ թուրքական ռասսան և թուրք ազգը բարձր են մյուս բոլոր ռասսաներից և ազգերից»:



Թուրք ռասսիստներն իրենց համարում էին Զիյա Գյոքալփի աշակերտները, բայց վերադաստիարակվելով գերմանական ծրագրերով՝ նրանք Գյոքալփից շատ ավելի առաջ գնացին՝ նոր գլուխ ավելացնելով թուրք ռասսայի գերազանցության մասին նրա ուսմունքի մեջ: Զիյա Գյոքալփը, որը 1909 թվականին եկել էր Դիարբեքիրից՝ մասնակցելու երիտթուրքերի համագումարին, գովերգում էր Աթիլլային, Չինգիզին, Օղուզ խանին, ապացուցում, որ թուրքերի հայրենիքը Թուրքիան չէ, ոչ էլ Թուրքեստանը, այլ՝ լայնատարած Թուրանը: Նա ասում էր, որ թուրք ազգն ավելի առաջնային է, կարևոր, քան իսլամը, որ կարևորը ռասսայական հպարտությունն է: Օսմանի՝ Ալթայից եկած թուրքերի առաջնորդի գովքը նրանց ամենասիրած թեման էր:

Պանիսլամիզմը իր տեղը զիջել էր ռասսայական պանթուրքիզմին:

Մյուս բոլոր ժողովուրդների նկատմամբ իրենց «գերազանցության» գերմանաֆաշիստական գաղափարը փոխադրելով թուրքական հողի վրա՝ թուրք «գիտնականները» զբաղված էին անտրոպոլոգիական

չափումներով՝ թուրքական ռասսայի «տիպիկ» գծերը որոշելու համար: Հիտլերյան ռասսիստների օրինակով թուրք դոկտոր Մուսթաֆա Հաքքը Աքանսելը «Չինարալթը» հանդեսի 1944 թվականի հունվարի համարում գրել է. «Ռասսայի ազդեցությունը կենդանիների վրա անհամեմատ ուժեղ է, քան նրա ազդեցությունը մարդկանց վրա: Կենդանիները վարում են այնպիսի ապրելակերպ, որ նրանց համար պատրաստել է բնությունը և որին նրանք հարմարվել են, իսկ մարդկային ռասսայի առանձնահատկությունները դրսևորվում են հստակորեն: Բարձր է այն ռասսան, որը մաքուր է, խառնված չէ ուրիշների հետ»:

Այդ շրջանում մարդատյաց ռասսիզմի ամենամոլի պրոպագանդիստներից մեկի համբավ էր ձեռք բերել ուսուցիչ Նիհալ Աթսըզը, որը պահանջում էր ընդօրինակել Հիտլերի գործելակերպը և թուրքական ռասսան մաքրել բոլոր ոչ թուրք տարրերից: «Ես գտնում եմ,-ասում էր նա,-որ Թուրքիայում պետք է տիրապետի թուրքական ռասսան: Ով ցանկանում է թուրք կոչվել, պետք է ապացուցի իր արյան մաքրությունը մինչև երեք պորտը: Նրանք, ովքեր ունեն չերքեզների, ալբանացիների, հայերի, արաբների և այլ ռասսաների արյուն, չեն կարող թուրքեր համարվել: Բոլոր ոչ թուրքերը պետք է դուրս շպրտվեն Թուրքիայից և ուղարկվեն այն երկրները, որտեղ ապրում են նրանց ռասսաների մարդիկ... Ոչ մի ոչ թուրք չպետք է լինի ո՛չ պետական կառավարման մեջ, ո՛չ սպայական կորպուսում»: Իր որդուն թողած հոգևոր կտակի մեջ 1949 թվականին («Вестник АН СССР», թիվ 8, էջ 101-102) Աթսըզը գրել է. «Ազգը արյուն է, այդ իսկ պատճառով ոչ թուրքական ռասսայի մարդկանց թուրքեր մի՛ համարիր: Եթե նույնիսկ նրանք չիմանան ուրիշ ոչ մի լեզու, բացի թուրքերենից, միևնույն է, մի՛ հավատա նրանց: Ոչնչացրու՛ նրանց՝ հանուն դրա վտանգելով նույնիսկ կյանքդ»:

Թուրքագետ Ռուբեն Մելքոնյանը իր «Ակնարկ Ստամբուլի հայ համայնքի պատմության» գրքում նշում է, որ Թուրքիայի վարչապետ, հետագայում նախագահ Իսմեթ Ինոնյուն 1925 թվականին Անկարայում «թուրքական օջախների համագումարի» իր ելույթի ժամանակ հայտարարել է. «Մենք բացահայտ ազգայնամոլներ ենք: Մենք ցանկացած գնով պետք է թրքացնենք նրանց, ովքեր ապրում են մեր հայրենիքում»:

Ըստ Հր.Սիմոնյանի՝[8] 1944 թվականի մարտին Ֆ.Ռուզվելտը Ստալինին գրել է, թե Թուրքիան շարունակում է մեծ քանակությամբ քրոմի հանքաքար առաքել Գերմանիա, մի բան, որ մեծապես անհանգստացնում էր նոր կազմավորվող Միավորված ազգերի կազմակերպությանը՝ ՄԱԿ-ին, որը կյանքի էր կոչվում II աշխարհամարտի ավարտից հետո պետությունների միջև ծագելիք քաղաքական և դիվանագիտական հարցերը կարգավորելու համար: Նախատեսվում էր միջազգային այդ կազմակերպության մեջ առայժմ ընդունել միայն այն երկրներին, որոնք գտնվում էին հակահիտլերյան խմբավորման մեջ: ՄԱԿ-ը հիմնելու համար 1944 թվականի օգոստոսի 21-ից սեպտեմբերի 28-ը ԱՄՆ-ում տեղի ունեցավ ԽՍՀՄ-ի, ԱՄՆ-ի և Մեծ Բրիտանիայի ներկայացուցիչների կոնֆերանս: Օգոստոսի 31-ին՝ կոնֆերանսի հերթական նիստերից մեկում, հաստատվեց ԱՄՆ-ի պատվիրակության ներկայացրած պետությունների ցուցակը, որտեղ Թուրքիան բացակայում էր:

Գերմանիայի մոտալուտ պարտության հեռանկարը, ՄԱԿ-ից Թուրքիայի դուրս մնալը թեպետ անհանգստացրել էին թուրքական կառավարությանը, սակայն վերջինս չէր շտապում արգելք դնել ծայրահեղ աջերի գործողությունների առջև: Օգտվելով դրանից՝ ազգայնականները 1944 թվականի մայիսին Անկարայի փողոցներում հակակառավարական ցույցի դուրս եկան՝ պահանջելով մինչև վերջ լինել Գերմանիայի կողքին: Իսկ 2 ամիս հետո՝ օգոստոսի 4-ին, ֆաշիստամետ թուրք ուսանողները Ստամբուլում հարձակվեցին չեզոք նկատված երկու թերթերի խմբագրությունների և խորհրդային մշակութային կենտրոնի վրա:

Վերջապես, թուրքական կառավարությունը ստիպված եղավ որոշ արգելքներ հարուցել վտանգներով լի նման քայլերի դեմ:

1944 թվականի մայիսի 18-ին Անատոլիական գործակալությունը հրապարակեց թուրքական կառավարության պաշտոնական հաղորդագրությունը Թուրքիայում պանթուրքականների «մերկացման» մասին: Հաղորդագրության մեջ նշված էր, որ խուզարկություններից մեկի ժամանակ հայտնաբերված փաստաթղթերի, գաղտնի կոդերի, ծածկագրերի, լոզունգների, թղթակցությունների, ծրագրերի ու համաձայնագրերի հիման վրա քննչական մարմինները եկել էին այն համոզման, որ ռասսայական, պանթուրքական գործունեությունը վտանգավոր է, քանի որ հակասում է թուրքական Սահմանադրությանը և կրում է քրեական հանցավոր բնույթ:

[8] Տե՛ս Հր.Ռ. Սիմոնյան, Թուրք-հայկական հարաբերությունների պատմությունից:

Նախագահ Իսմեթ Ինոնյուն, որը Գերմանիայի ռազմական հաջողությունների շրջանում հարկ չէր համարում թաքցնել իր համակրանքը հիտլերականների հանդեպ, մայիսի 19-ին, հանդես գալով երիտասարդության տոնի առթիվ, ստիպված եղավ դատապարտել ծայրահեղ աջերի մեքենայությունները: Նա երիտասարդությանը կոչ արեց «բարձրացնել զգոնությունը» ռասսիզմի վնասակար գաղափարախոսության տարածման դեմ: Նշելով, որ երկպառակտություն ու ինտրիգներ հարուցելու նպատակով «ռասսիստներն ու թուրանականները դիմել են գաղտնի կոմբինացիաների», Ինոնյուն, խոսքն ուղղելով երիտասարդությանը, հարցնում էր. «Ո՞ւմ և ի՞նչ նպատակի են ծառայում նրանք, ովքեր հայտարարում են, թե ներկա միջազգային դրության պայմաններում Թուրքիան պետք է դառնա ռասսայական կամ թուրանական: Պարզ է, որ նման գաղափարներ առաջ քաշողները միայն աղետներ և դժբախտություններ կբերեն և չեն կարող որևէ ծառայություն մատուցել թուրք ժողովրդին: Այսպիսի գործողությունները կարող են օգտակար լինել միայն օտարերկրացիներին»:

Այդ օրվանից ծայրահեղ աջերին սկսեցին քննադատել թուրքական լրատվամիջոցները, այդ թվում՝ պանթուրքական որոշ ուղղության թերթեր ու հանդեսներ:

Այսպես, խավարամիտ Հուսեյին Յալչընը, «Թանին» թերթում «մերկացնելով» պանթուրքականներին, գրում էր, թե նրանք «ունեն ակնհայտ բեռլինյան ծագում»: Նույնիսկ բացահայտ ֆաշիստացած «Թասֆիր-ի Էֆքյար» թերթը 1944 թվականի մայիսի 20-ին գրում էր, որ ռասսիստներն ու թուրանականները կարող են «...թշնամություն հրահրել Թուրքիային շրջապատող բարեկամների շրջանում և խախտել անվտանգության մթնոլորտը...Միայն հիմարը չի հասկանա, որ ռասսիզմի թշնամական գաղափարները վնասակար ու վտանգավոր են Թուրքիայի համար: Մենք թույլ չենք տա, որ մեր հայրենիքը դառնա քաղաքական շուկա, որտեղ թշնամություն են անում թշնամական տեսություններով»:

Ինչ խոսք, այդ օրերին Թուրքիայում բարձրացված արհեստական աղմուկը նպատակ էր հետապնդում խուսափել պատասխանատվությունից: «Քննչական մարմինները դեռ չեն համարձակվում բացահայտորեն ժողովրդին ասել ողջ ճշմարտությունը,- այդ օրերին գրում էր խորհրդային հանդեսներից մեկը: -Իսկ ճշմարտությունն այն է, որ պանթուրքականների՝ այսպես կոչված «գաղտնի» կազմակերպությունը, որը երկրում լայնորեն ճյուղավորվել է բնակչության որոշ խմբերի շրջանում, փաստորեն բացահայտ գերմանաֆաշիստական

գործակալություն է Թուրքիայում, որը հիտլերականները ստեղծել էին 2-րդ համաշխարհային պատերազմից դեռ շատ առաջ»: Այնուհետև հոդվածագիրը նշում էր, որ միայն միամիտները կարող են հավատալ թուրքական կառավարությանը, որն այնպես է ձևացնում, թե ոստիկանությունը ոչինչ չի իմացել Թուրքիայում ֆաշիստական գործակալության և այն մասին, որ պանթուրքականները երկար ժամանակ քարոզչություն են տանում Խորհրդային Միության դեմ, փառաբանում ֆաշիստական Գերմանիային: Նրանցից ոմանք, ինչպես օրինակ, պաշտոնաթող էրքիլեթը, Իսան Սաբիսը, Նիհալ Աթսըզը, Թյուրքանը, լրագրող Նադիր Նադին բացահայտ գործակալներ են, որոնք ամենևին հարկ չեն համարում թաքցնել, որ իրենք խնդիր ունեն ֆաշիստականացնել Թուրքիան: «Դժվար չէ հասկանալ հիտլերյան պանթուրքիստ հաճոյակատարների խորամանկությունը,- շարունակում էր հոդվածագիրը,- որոնք կորցրել են հավատն իրենց տիրոջ նկատմամբ: Որքան ավելի է մոտենում Գերմանիայի ջախջախումը, այնքան ավելի է ուժեղանում իրենց հույսը Հիտլերի վրա դրած մարդկանց չարությունն ու հուսալքությունը, այնքան ավելի է լայնանում «զոջացած» մեղավորների շրջանը, որոնք սարսափով են նայում ապագային»:

Վերահաս պատասխանատվությունից խուսափելու համար թուրքական կառավարությունը դիմում էր նաև այլ քայլերի: Դեռ 1944 թվականի ապրիլի 21-ից Թուրքիան դադարեցրեց քրոմի մատակարարումները Գերմանիային, իսկ 1944 թվականի օգոստոսի 2-ին վերջապես խզեց դիվանագիտական հարաբերությունները նրա հետ:

Թուրքական պանթուրքիզմի գաղափարախոսության հիմնադիր Զիա Գյոքալփը, դեռևս օսմանյան ժամանակաշրջանում գործադրեց «Ազգային իդեալ» (Milli Mefkure) հասկացողությունը, որը հետագայում՝ 1930-ականներին, լայն տարածում գտավ պանթուրքիստների մոտ: Այդ բառի համարժեքն է ulku-իդեալը (գաղափար), որը, սակայն, գործադրվեց 1960-ական թվականներին Ա. Թյուրքեշի կողմից (իսկ նրանց գլխավոր ulku-ն գաղափարը, Թուրանն էր):

ԱՇԿ-ի հիմնադիրն էր Ալփարսլան Թյուրքեշը: Նրա իսկական անունն էր Հուսեին Ֆեյզոլլահ: Ա. Թյուրքեշին «գորշ գայլերը» անվանում էին բաշբուղ՝ գլխավոր ղեկավար, ինչը և հետագայում դար-

ձավ նրա տիտղոսը: Նշենք, որ այդպես էր սիրում իրեն անվանել նաև Էնվեր փաշան: «Բաշբուղ» անվանումը համապատասխանում է ֆաշիստական կուսակցությունների տիտղոսներին. Գերմանիայում՝ ֆյուրեր, Իտալիայում՝ դուչե, Իսպանիայում՝ կառուդիլիա:

Ա. Թյուրքեշը ծնվել է 1917 թվականին Կիպրոսում: 1938 թվականին նա դարձավ բանակի սպա, փոխեց իր անունը Ալփարսլան Թյուրքեշի, որը ավելի լավ էր համընկնում իր մտքերին ու գաղափարներին: Ալփարսլանն այն սուլթանի անունն է, որը 1071 թվականին վճռական պարտության մատնեց Բյուզանդիային, իսկ Թյուրքեշ՝ նշանակում է «թուրքերի ընկեր, բարեկամ»:

Թյուրքեշը դեռ երիտասարդ տարիքում հրապուրվել է պանթուրքիստական գաղափարներով: Այս գաղափարական հոսանքը ձևավորվել է անցյալ դարում հիմնականում որպես թուրք մտավորականների մշակութային շարժում: Նրանք ժամանակին ականատես էին եղել զորեղ Օսմանյան կայսրության փլուզմանն ու նրա՝ «Բոսֆորի ափին հիվանդ մի ծերունու» վերածվելուն: Նրանց՝ պանթուրքիստների կարծիքով պետք էր մի նոր ու մեծ կայսրություն ստեղծել բոլոր թուրքախոս ժողովուրդների համար: Ահա այս քաղաքական-մտավորական մթնոլորտում էր, որ մեծացավ Թյուրքեշը:

Երկրորդ աշխարհամարտի ընթացքում Թյուրքեշը ցանկանում էր միանալ Հիտլերին՝ պանթուրքիզմի գաղափարը իրականացնելու հույսով: Թյուրքեշը չէր թաքցնում, որ Հիտլերի գաղափարները, ինչպես օրինակ, ցեղերի ու ռասսաների մասին նրա հայեցակարգը, իրեն դուր է գալիս: Այնտեղ, ուր Հիտլերը գերմանացիների մասին խոսում էր որպես «բարձր-ազնիվ» ցեղի, Թյուրքեշը գործածում էր «Asil Turkler» (Ազնիվ, ազնվացեղ թուրքեր) բառակապակցությունը: Նրա կարծիքով, թուրքերն աշխարհի «ամենաազնվացեղ ժողովուրդն» են:

Նա երիտասարդ տարիքից վարել է հակահամայնավարական գործունեություն՝ միշտ տարածելով աշխարհի թուրք ժողովուրդներին միացնելու իր տեսլականը: Անդամակցել է 1939 թվականին Թուրքիայում նացիստական Գերմանիայի դեսպան Ֆոն Բաբենի ստեղծած նախկին իթթիհատականներից ու համաթուրանականներից բաղկացած կազմակերպության «հեղափոխական միավորներ»-ին (հետագայում նացիստական իշխանությունները թուրքական բանակի այս բաժանմունքը օգտագործեցին ռազմական երկու հեղաշրջումների ժամանակ, որոնք մատնվեցին անհաջողության):

1991 թվականի դեկտեմբերի 12-ին պառլամենտում իր ելույթի ժամանակ Թյուրքեշը կոչ արեց. «Արձագանքե՛լ թուրքական պետությունների՝ Ադրբեջանի, Ուզբեկստանի, Ղազախստանի, Ղրղզստանի ու Թուրքմենստանի ճգնաժամային իրավիճակին»: Հիշեցնելով ներկաներին՝ ինչպես էին իրեն նախկինում մեղադրում «շովինիզմի ու երազկոտության մեջ», նա հայտարարեց, որ այսուհետ աշխարհի 200 միլիոն թուրքերի միասնության դեպքում «թուրանիզմը ոչ թե ֆանտազիա է, այլ իրականություն»:

Թյուրքեշը կարևոր դեմք էր «Ulkucu» շարժման մեջ հենց նրա ստեղծման առաջին օրերից: Այդ ժամանակ ուլքյուջուներն իրենց կոչում էին նացիոնալ-իդեալիստներ (ազգայնական-գաղափարապաշտներ):

1944 թվականի մայիսին էր, որ արտաքին աշխարհը տեղեկացավ այս շարժման մասին: Այդ օրը մի դատական գործընթաց սկսվեց թուրք ազգայնականների ու պանթուրքականների (Turanci), այսինքն՝ Մեծ Թուրան գաղափարի համակիրների դեմ: Ամբաստանյալների մեջ էին շարժման գաղափարական առաջնորդներ Նիհալ Աթսըզը և Թյուրքեշը: Նրանք մեղադրվում էին ապօրինի կուսակցություն ստեղծելու մեջ, որը նպատակ ուներ տապալել կառավարությունը՝ տարածելով ցեղապաշտության գաղափարն ու դժգոհություն սերմանելով պետության դեմ:

Դատավարությունն աննկատ չանցավ: Անկարայում նրանց հազարավոր համակիրներ բողոքի ցույց կազմակերպեցին:

Նացիստական Գերմանիայի ու Ֆաշիստական Իտալիայի պարտությունից հետո Թուրքիայի ռազմաքաղաքական վերնախավի ազգայնական շրջանակների հովանավորությունը ստանձնեց ԱՄՆ-ը: 1948-ին Թյուրքեշը մի խումբ գաղափարակից զինվորականների հետ ուղարկվում է ԱՄՆ ու մինչև 1955 թվականը հմտանում է հակահրոսակային (հակագերիլլիական) պատերազմագիտության մեջ: 1960 թվականին թուրքական բանակը քեմալականների ղեկավարությամբ ամերիկյան աշխարհակալությանը դիմադրելու և Ադնան Մենդերեսի կառավարության կոշտ քաղաքականությանը վերջ տալու պատրվակով իրականացնում է պետական հեղաշրջում, որի մեջ իր որոշիչ մասնակցությունն է ունենում Թյուրքեշը՝ ստանալով նաև հեղափոխականների բանբերի պաշտոնը: Հեղաշրջումից հետո ուղարկվում է (փաստացի՝ աքսորվում է) Հնդկաստան՝ Նյու Դեյլի, իբրև դեսպան: Վերադառնալով Թուրքիա՝ Թյուրքեշը ազատվում է բանակից, անդամակցում է ցեղապաշտական ու ֆաշիստական ուղղվածություն

ունեցող «Հանրապետական գյուղացիների ազգ» կուսակցությանը և դառնում նրա ղեկավարը: 1969 թվականին կուսակցությունը անվանափոխվելով դառնում է «Ազգայնական շարժում» կուսակցություն: Ալփարսլան Թյուրքեշը դառնում է գերագույն ղեկավար (basbug):

Նախագահ Իսմեթ Ինոնյուն, այսինքն՝ Աթաթուրքից հետո երկրորդ մարդը Թուրքիայի Հանրապետության հիմնադրման գործում, զգուշացրեց իր երկրի քաղաքացիներին պանթուրքիզմի վտանգի մասին: 1944 թվականի մայիսի 19-ին նա հայտարարեց. «Թուրանչիները գտել են մի դեղատոմս, որն անդարմանալի կերպով փսասելու է իր հարևանների հետ թուրք ժողովրդի հարաբերություններին: Հանրապետական կառավարությունը իր տրամադրության տակ եղած բոլոր միջոցները գործի է դնելու, որպեսզի թուրք ժողովրդի ճակատագիրն այս անխիղճ ու անամոթ խռովարարների ձեռքը չընկնի: Մենք ամբողջ ուժով կպաշտպանենք մեր հայրենիքը այսպիսի սադրանքներից»:

Չնայած նախագահի կտրուկ ու վճռական այս հայտարարությանը՝ դատարանն այս «խռովարարներին», ներառյալ Թյուրքեշին, ազատ արձակեց:

«Գորշ գայլերը» մայիսի 3-ը նշում են որպես պանթուրքիզմի տոն, Մեծ Թուրանի գաղափարի օր: Ըստ «գորշ գայլերի»՝ բոլոր «դրսի թուրքերը», հատկապես նրանք, ովքեր բնակվում են նախկին խորհրդային հանրապետությունների տարածքում, պետք է «ազատագրվեն»: Մեծ թվով «գորշ գայլեր» խոսում են նույնիսկ Օսմանյան կայսրության վերականգնման մասին, որը սփռվում էր «Վիեննայից մինչև Չինական պարիսպ»:

Որոշ «գորշ գայլեր» գտնում են, որ Թուրքիան կարիք ունի ցեղային զտման:

«Այդ հսկայական տարածքում,- պնդում են նրանք,- բոլորը թուրք են, նույնիսկ չեչենները»: Մայիսի 3-ը նրանք տոնում են իրենց այն նպատակի համար, որ Թուրքիան դարձնեն մի գերուժ և նույնիսկ վերջում՝ աշխարհի միակ տերությունը:

1950 թվականից հետո երկրում ուժեղացել էր ամերիկյան ազդեցությունը: Ա. Մենդերեսի կառավարությունը խրախուսում էր Զիյա Գյոքալփի, Նիհալ Աթսըզի, Ֆեթիհ Թնեթոլիի և այլ պանթուրքիստների գրքերի տպագրությունը: Այդ տարիներին էլ սկսեցին գործել «Թուրք նացիոնալիստների ասոցացիա», «Թուրք վտարանդիների և վերաբնակիչների ֆեդերացիա» ազգայնական կազմակերպությունները: «Թուրան» հրատարակչությունը մշտապես պանթուրքական գրքեր էր տպագրում: Ամենաթունդ պանթուրքիստական հրապարակումների հեղինակը Ստամբուլի համալսարանի դասախոս Գ. Չաղաթայն էր:

Ա. Վամբերին 19-րդ դարի վերջին մի գրքույկ էր հրատարակել, որտեղ խոստովանում էր. «Իսկական թուրք համարվում են Փոքր Ասիայի սելջուկների հետնորդները, և այդ իսկական թուրքերի թիվը Թուրքիայում խիստ քիչ է՝ համեմատած կայսրության մեջ բնակվող մյուս ցեղերի թվի հետ»: Նա գրում էր. «Թուրքերին չի հաջողվել ցեղային պատկանելության տեսակետից մեծամասնություն կազմել, որն անհրաժեշտ է պետության միության համար»: «Երբ թուրքերի մեջ զարթնեց ազգի գաղափարը, հին աշխարհընկալումների հետևորդները դառնությամբ տեսան, որ Թուրքիայում կամ գեթ նրա արևմտյան մասում իսկական թուրք գրեթե չկա»:

Ըստ Ա. Թյուրքեշի՝ բոլոր սպիտակ ժողովուրդներն առաջացել են թուրքերից, ուստի Թուրքիան իրավունք ունի ստեղծելու իր կայսրությունը: Պանթուրքիստները այսօր էլ պահանջում են Թուրքիային միացնել Արևմտյան Թրակիան, հունական Սամոս, Քիոս, Միտիլինե, Հռոդոս և այլ կղզիները: 2-րդ աշխարհամարտի նախօրյակին թուրք շովինիստ Ջելալ Նուրին հռչակում էր, որ Իրաքը, Եմենը պետք է լրիվ թուրքական դառնան: Այնտեղ պետք է տիրապետի թուրքերենը ...: Անհրաժեշտ է թուրքացնել արաբական հողերը, սաղմի մեջ ճնշել արթնացող ազգայնականությունը արաբ երիտասարդների մեջ: Ըստ նրա՝ «Թուրքական նվաճողական ձին ավելի լավ է, քան մի այլ ազգի մարգարեն»:

Բեհադդին Շաքիրն իրեն և իր գործընկերներին համեմատում էր Քրիստոսի, Մովսեսի և Մուհամմեդի հետ: Ասում էր, թե իրենք ուժեղ կամքի տեր մտավորականներ են և պետք է հիմնեն «Թուրանի կրոնը»:

1944 թվականի դատավարությունից հետո «Գորշ գայլերն» սկսեցին կազմակերպվել մշակութային միություններում ու լույս ընծայել իրենց թերթերն ու մամուլը: Երկրորդ աշխարհամարտին հաջորդող տարիներին Ալփարսլան Թյուրքեշը որոշակի դեր ունեցավ շարժման մեջ, սակայն իրական առաջնորդն ու ոգին Նիհալ Աթսըզն էր: Այս տարիներին շարժման պայքարի սուր ծայրն ուղղված էր «կարմիր վտանգի» դեմ: 1944 թվականին բանտից ազատվելուց հետո սպա Թյուրքեշը վերադարձավ բանակ: 1948 թվականին նա ուղարկվեց ԱՄՆ, ուր ստացավ զինվորական ու տնտեսագիտական կրթություն: Այնուհետև նա անցավ Գերմանիա՝ միջուկային պատերազմի ռազմավարական ուսում ստանալու: 50-ական թվականներին նա արդեն ՆԱՏՕ-ում ներկայացնում էր Թուրքիան: 1960 թվականին ուներ

գնդապետի աստիճան: Նրա հին բարեկամներն ու ծանոթները նրան «գնդապետ» էին կոչում: Ահա հենց այդ թվականին էլ նա մասնակցեց մայիսի 7-ի ռազմական հեղաշրջմանը: Պետական հեղաշրջումից հետո կառավարության մեջ ընթացող ներքին պայքարից նա թեթև փսասով դուրս պրծավ:

«Ալփարսլան Թյուրքեշը, աքսորվելով երկրից, փորձեց անցնել սիրիական «Մուսուլման եղբայրներ» կազմակերպության գլուխ, պղտորել սիրիահայության անդորրը, Լիբանանում կազմակերպել հակահայկական շարժում: Նա չէր խորշում բանսարկություններից, սպանություններից: Բազմաթիվ տպագիր ու ձեռագիր կոչեր տարածվեցին այս երկրներում հայերի դեմ՝ անհիմն կերպով նրանց մեղադրելով թուրքական կրոնական գործիչների սպանության և հակաթուրքական այլ գործողությունների մեջ: «Դինիմե սեռվթյուն» (հավատքս հայհոյեց) արտահայտությունը հաճախ էր հանդիպում այդ կոչերում: Նպատակը՝ մահմեդական կրոնական զգացմունքների գրգռումն էր հայերի դեմ[9]»:

Թուրքական պետականության հարվածները ուղղվում են հայ ժողովրդի դեմ բուն Թուրքիայում, նրանից դուրս՝ Լիբանանում, Սիրիայում, Իրանում և այլուր:

«Գորշ գայլերի» շարժումը հովանավորվում ու խրախուսվում էր և՛ ԱՄՆ-ի, և՛ Արևմտագերմանական պետությունների իմպերիալիստական շրջանակների կողմից:

Է. Հասանովան գտնում էր, որ գաղափարապես ֆաշիզմին ամենամոտ կանգնած են եղել պանթուրքիստները. նրանց միավորում էին ռասսիզմը, շովինիզմը և հակասովետիզմը:

1944 թվականի հոկտեմբերի 9-ին Բեռլինի գեստապոյի պետը գրում է արտգործնախարարություն. «Բոլոր պանթուրքիստական խմբավորումների հետ կապ պահպանելը համապատասխանում է ռայխի շահերին: Առայժմ այդպիսի կապ կա լոկ Թյուրքեշի հետ, որը սպայական ուսումնարան է ավարտել ու պանթուրքական շարժման պարագլուխներից մեկն է»:

«Թյուրքեշը ֆինանսական օժանդակություն էր ստանում Ստամբուլի առևտրական և արդյունաբերական պալատներից, խոշոր մոնոպոլիստական «Սաբանջի» տրեստից: ԱՄՆ-ի, Արևմտյան Գերմանիայի և այլ երկրների նեոնացիստական կազմակերպություններից: Թյուրքեշը կապված էր ԱՄՆ-ի Կենտրոնական հետախուզու-

[9] Տե՛ս Ջոն Կիրակոսյան, Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ, հ. 2, էջ 419 :

թյան վարչության, ԳՖՀ-ի նեոֆաշիստական կազմակերպությունների, Իտալիայի տեռորիստական խմբավորումների հետ[10]»:

1944 թվականի պետական հեղաշրջման փորձի համար Թյուրքեշը ձերբակալվեց: Հեղաշրջման նպատակը Գերմանիայի կազմում Թուրքիայի մուտքն էր պատերազմի մեջ:

[10] Տե՛ս Ջոն Կիրակոսյան,Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ, հ. 2, էջ 417:

«Գորշ գայլեր» կայսրության կազմավորումը (1965-77 թթ.)

1960 թ. մայիսի 27-ին հանրապետական Թուրքիայի պատմության մեջ առաջին անգամ բանակն ուղղակիորեն միջամտեց քաղաքական կյանքին: Մի խումբ սպաներ (Թ. Այդեմիր, Դ. Սեյհան, Օ. Էրքանը, Ֆ. Գյուվենթյուրք, Ա. Թյուրքեշ, Ս. Մոչաս, Ն. Էթսին, Ս. Քարաման և այլն) կազմակերպեցին ու իրականացրին ռազմական հեղաշրջում: Երկրում ամբողջ իշխանությունն անցավ նորաստեղծ Ազգային միասնության կոմիտեի (ԱՄԿ) (Milli Birlik Komitesi) ձեռքը: «Մայիսյան հեղաշրջումն ուներ նախաձեռնողական բնույթ. այն չիրականացվեց բանակի ղեկավարության կողմից, ինչպես դա տեղի ունեցավ զինվորականների հետագա «միջամտությունների՝ 1971 և 1980 թվականների ժամանակ: «Մայիսի 27-ը» կազմակերպեցին ու իրականացրին գլխավորապես միջին աստիճանակարգ ունեցող սպաները: Բանակում խախտվեց աստիճանակարգային կարգապահությունը (Rutbeye disiplin). այն քննադատում է «նախաձեռնողական գործողությունները» ու պարտադրում է գործել «հրամանի սկզբունքով», ինչը ենթադրում է անքննելի ենթակայություն առավել բարձր աստիճան ունեցող սպաների հրամանին[11]»:

ԱՄԿ-ի գործունեության արդեն առաջին իսկ ամիսներին լուրջ հակասություններ առաջացան նրա անդամների միջև՝ կապված երկիրը ղեկավարելու հետագա ընթացքի հետ: ԱՄԿ-ն բաժանվեց երկու մասի՝ պահպանողականների և արմատականների: Պահպանողականների խումբը, որի կազմում էին ԱՄԿ-ի անդամ գեներալները՝ Ջ. Գյուրսելի գլխավորությամբ, փորձում էր շուտափույթ նոր ընտրություններ կազմակերպել և իշխանությունը փոխանցել քաղաքական կուսակցություններին (այս խմբի մեջքին կանգնած էր փորձառու Իսմեթ Ինոնյուն)[12]: Ի դեպ, Իսմեթ Ինոնյուն՝ 1943 թ 2-րդ աշխարհամարտի թոհուբոհի ժամանակ Գերմանիայից բերել տվեց Թալեաթի աճյունը և ամփոփեց Ազատություն կոչվող բլրի վրա, թերևս որպես հակահայ քաղաքականության խորհրդանիշ: Իսկ ԱՄԿ-ի

[11] Տե՛ս Արթուր Դումանյան, Թյուրքագիտական և Օսմանագիտական հետազոտություններ, հ. 5, էջ 147:

[12] Իսմեթ Ինոնյու-Թալեաթի քրոջ ամուսինը, որին Շտուրմերը կոչում էր Թուրքիայի չթագադրված թագավոր, որը հայտարարել է. «Ես երեք ամսում ավելի շատ բան արեցի հայերի խնդիրը լուծելու համար, քան Աբդուլ Համիդը՝ 30 տարում»:

արմատական անդամները համոզված էին, որ միայն Դեմոկրատական կուսակցությանը իշխանությունից զրկելով՝ զինվորականության առաքելությունը չի ավարտվում, և նրանք պետք է իշխանության ղեկը պահեն իրենց ձեռքում՝ երկրում արմատական բարեփոխումներ իրականացնելու համար: Պահպանողականները այդ պայքարում հաղթանակ տարան:

Այսպիսով՝ 1965-74 թթ. հենց այն ժամանակաշրջանն էր, երբ կազմավորվեց «Գորշ գայլեր» կուսակցությունը:

1965 թ.՝ իր վերադարձից 3 ամիս հետո, Թյուրքեշը դարձյալ մասնակցեց պետությանը հարված հասցնելու ևս մի փորձի, որը կրկին ձախողվեց: Թյուրքեշը դատարանից ազատվեց իբր թե փաստերի բացակայության պատճառով: 1965 թվականին 3 այլ նախկին աքսորյալների հետ մտավ Հանրապետական գյուղացիական ազգային կուսակցության (CKMP, Cumhuriyetci Koylu Millet Partisi) մեջ և դարձավ նրա ղեկավարը: 1967 թվականի նոյեմբերի 24-25-ին CKMP-ի կուսակցական համագումարին ներկայացվեց Ա. Թյուրքեշի հեղինակությամբ մի վարդապետություն, որի կատարման դեպքում ենթադրվում էր, որ Թուրքիան առաջ կգնա. դա «9-ը ջահեր (ջահեր, լույս, ճառագայթ)» (Dokuz Isik)–ն[13] էր: Այս աշխատությունը համարվում է «գաղափարապաշտների» ուղեցույցը, ուր որոշակիորեն ներկայացվում են նրանց գործունեության հիմնական դրույթները.

1. «Milliyetcilik»-ազգայնականություն: Ազգայնականությունը թուրք ժողովրդի հանդեպ մեծ սիրո արտահայտությունն է: Յուրաքանչյուր մարդ, ով իր մեջ չունի այլ ռասսայի հանդեպ մեծամիտ վերաբերմունք, անկեղծորեն համարում է, որ ինքը թուրք է ու թուրքիզմին կապված թուրք: Մեր ազգայնականությունը անհանդուրժող և անբարյացակամ չէ այլոց նկատմամբ: Ազգայնականություն (նացիոնալիզմ)՝ նշանակում է անսահման սեր թուրք ազգի նկատմամբ: Թուրքը այն մարդն է, որ երբեք չի ցանկանա մի ուրիշ ցեղի պատկանել, որ ճշմարտացիորեն թուրք է զգում իրեն և իրեն նվիրում է թուրքականության:
2. «Ulkuculuk»-գաղափարապաշտություն: Գաղափարայնությունը արտացոլում է «գաղափարապաշտություն» բառը: Յուրաքանչյուր ազգի համար ազգային գաղափարը արեգակ է, որը լուսավորում է տվյալ ազգի ճանապարհը: Սա նշանակում է, որ ամեն մարդ մարդկությանը պետք է ծառայի՝ նախ և առաջ իր ազգին ծառայելով:

[13] Տե՛ս Alparslan Turkes, Dokuz Isik, Менлик 2(8) 1992 г.:

Մեր գաղափարն է՝ ամենակարճ ժամկետում ու մոտ ժամանակներում թուրք ժողովուրդների հին հոգևոր արժեքները վերածնել ու բարձրացնել ամենավերին մակարդակի, հասնել անկախ, ինքնուրույն կյանքի, որի համար անհրաժեշտ է ձեռքում պահել իր բոլոր իրավունքները և ազատությունները:

3. «Ahalcilik»-բարոյականություն: Թենգիրիզմ: Մեր բարոյական հասկացողության հիմքը: Թուրքական բարոյականությունը պետք է համապատասխանի թուրքական սովորույթներին, թուրք ոգուն ու համոզմունքներին, համապատասխան լինի բնության օրենքներին, հավատարիմ մնա ավանդույթներին:
4. «Toplumculuk»-համայնականություն: Սոցիալականություն-սոցիալիզմ: Թուրքերի գիտակցության մեջ պատմական ամբողջականության, ազգի, հայրենիքի ու պետության շահը միշտ եղել է ավելի բարձր արժեք, քան անհատինը, անհատականը: Պետք է պաշտպանվի ու քաջալերվի սեփական գործունեությունը, պայմանով, որ գործատուների ու գործավարների միջև «վտանգավոր» հակասությունները կանխատեսվեն: Եվ սրանով հանդերձ՝ առանձին անհատի քաղաքական, սոցիալական և տնտեսական իրավունքների պաշտպանությունը պետք է լինի պետության կարևոր նպատակներից մեկը:
5. «Huriyetcilik»-դեմոկրատիա: Ազատություն, ազատականություն: Երջանկությունը մարդկանց համար առաջին հերթին կապված է անկախ լինելու հետ: Պետք է երաշխավորվի անձի ազատությունը. նա պետք է ունենա խոսքի ազատություն, սեփական ձեռնարկի ազատություն: Թուրքերի համար ազատ դեմոկրատիան և ժողովրդական դեմոկրատիան պետք է լինեն գլխավոր ուղենիշները: Ժողովրդին պետք է ոչ միայն քաղաքական ազատություն, այլև՝ տնտեսական ու մշակութային, և պետությունը պետք է ժողովրդի համար ստեղծի այդ պայմանները:
6. «Koyculuk»-հոգածություն գյուղի, գյուղացու նկատմամբ: Գյուղացին ազգի հիմքն է: Պետք է զարգացնել գյուղը ինդուստրացմամբ և տեխնոլոգիաներով: Գյուղացին միշտ ապրել է կյանքի ամենածանր պայմաններում: Ինչքան էլ որ նա աշխատեր, միշտ մնում էր չքավոր: Թուրք գյուղացին պետք է իր հանդեպ զգա պետական այնպիսի հոգածություն, ինչպիսին մենք տեսնում ենք զարգացած երկրներում: Գյուղաբնակի կյանքի պայմաններից կարելի է դատել պետության զարգացվածության մակարդակի մասին:

7. «Ilimcilik»-գիտականություն, կրթություն: Ուժեղ և ինքնուրույն պետության հասնելու համար պետք է հասնել գիտության ու տեխնիկայի զարգացվածության բարձր մակարդակի: Պետք է ամեն ինչ ուսումնասիրել ըստ գիտական չափանիշների: Հասարակության չկրթված և գիտության ու տեխնիկայի առաջընթացից հետ մնացող անդամները, ինչքան էլ որ լինեն խիզախ, ոչնչի չեն հասնի անձնական կյանքում և ոչնչով չեն օգնի իրենց պետությանը ռազմական, ազգային հզորության ամրապնդման գործում:
8. «Gelismecilik ve halkcilik»-զարգացում և ժողովրդավարություն: Ամեն ինչ ժողովրդից, ժողովրդի համար ու ժողովրդի միջոցով: Ժամանակակից կյանքում պետք է ի մի բերել բոլոր ուժերն ու ռեսուրսները, որպեսզի ժողովրդին հասանելի լինեն ժամանակակից արդյունաբերության, նոր տեխնոլոգիաների արտադրանքները: Ատոմային և միջուկային դարում ուժեղ պետություն ստեղծելու համար պետք է հասնել զարգացած արդյունաբերության և նորագույն տեխնոլոգիաների բարձր մակարդակի: Գոլորշու և էլեկտրականության դարաշրջանը մնացել է հետևում: Առջևում է էլեկտրոնիկայի, ինֆորմատիկայի, բարձր տեխնոլոգիաների, միջուկային էներգետիկայի, տիեզերքի նվաճման, մարդու բնույթի մասին նոր գիտելիքների ձեռքբերման դարաշրջանը:
9. «Endustrecilik ve teknikcilik»-արդյունաբերություն և տեխնիկա: Միայն ինդուստրացիայի ու նոր տեխնոլոգիաների քաջալերմամբ է հնարավոր առաջ գնալ: Հասարակության ամբողջական և մարդկանց անհատական զարգացումը կյանքի բարելավման ճանապարհների մշտական փնտրտուք է: Ազգերը նման են մեծ ծառի: Ազգի արմատները նրա պատմությունն են: Հենց դրա համար էլ ամեն մի զարգացում պետք է հենվի տվյալ ազգի արմատների վրա:

Թյուրքեշը ամբողջովին վերափոխեց կուսակցության քաղաքական և գաղափարական ուղղությունները: 1969 թվականին այն արդեն վերանվանվեց ԱՇԿ «Ազգայնական շարժում (գործողության)» կուսակցություն (Milliyetci Hareket Partisi)՝ այսինքն՝ «Գորշ գայլեր» կուսակցություն: Կուսակցության անվանումը Թյուրքեշը վերցրել էր Ֆրանկոյի կուսակցության անվանումից:

Բաշբուղ Թյուրքեշի «Temel Gorusler» («Հիմնական տեսակետներ») գրքում կարդում ենք. «Հենց այսօր՝ մեր օրերում, երկրագնդի ողջ տարածքում մղվում է չհայտարարված, բայց ահավոր մի պատերազմ, պատերազմ տարբեր ազգերի միջև, պատերազմ մշակույթների միջև: Կարելի է գրավել մի ազգի բազում ամրոցներ և բերդեր, բազմիցս

պարտության մատնել բանակին, բայց այնքան ժամանակ, քանի դեռ նրա սիրտն ու հոգին չես գրավել, այդ ազգը չես նվաճել: Անժխտելի իրականություն է, որ մարդ այն ազգի մասն է կազմում, որին ինքն է նախընտրում պատկանել: Մշակութային պատերազմում յուրաքանչյուր ազգ ջանում է ոչնչացնել մյուս ազգերի լեզուն, կրոնը, ավանդույթները, ազգային ու հոգևոր արժեքները ու դրանք փոխարինել իր մշակութային արժեքներով[14]»:

Սա, ըստ էության, մշակութային պատերազմի բնորոշում է: Հայաստանում նման խնդիրներով զբաղվող քիչ մասնագետներ կան, այնինչ խնդիրը կարևորներից է: Թուրքիայում նման խնդիրներին մեծ ուշադրություն է դարձվում: Թուրք ազգային գաղափարախոսության տեսանկյունից թուրքական մշակույթն աշխարհի որ մասում էլ լինի, պետք է պահպանվի: Այլ մշակույթներով տարվելը թուրքերի համար անթույլատրելի է: Դեռ ավելին, ազգային մշակույթն օգտագործվում է թուրքերին ազգայնամոլական գաղափարների շուրջ համախմբելու համար: Երաժշտությամբ, արձակով ու հեքիաթներով ջանում են ընդարձակել համակիրների շարքերը: Սրանով թեև ոտնահարվում է սովորական ունկնդրի այլ կարգի երաժշտություն, հեքիաթներ լսելու իրավունքը, բայց արժևորվում և պետականորեն առաջ է քաշվում ազգայինը:

«Գորշ գայլերի» մի մասի կարծիքով Բաշբուղ Թյուրքեշը սխալվել էր, երբ իրենց խնդիրների լուծման համար չէր թողնում, որ իրենք դիմեն զենքի: Ըստ նրանց՝ ճիշտ չէր գործել նաև Ադրբեջանի նախկին նախագահ Էլչիբեյը, երբ կառավարման ապարատում չէր վերացրել կոմունիստներին ու դավաճաններին:

«Գորշ գայլերը» նշել են նաև հետևյալը. «Երանի թե օսմանցիները դեպի արևմուտք կատարած իրենց արշավանքի ժամանակ Իրանն էլ գրաված լինեին: Մենք այլևս ստիպված չէինք լինի գործ ունենալ մեր արևելքում ծվարած այդ բուֆերային երկրի հետ»: Իսկ ալևիներին[15] հաճախ կասկածում են ձախ հայացքներ ունենալու և քրդասիրության մեջ: 1992 թվականին Սիվաս քաղաքում հրդեհվեց մի հյուրանոց, որտեղ 37 մտավորական ու արվեստագետ՝ մեծ մասամբ ալևիներ, կենդանի վառվեցին, մինչդեռ ոստիկանությունն անհոգ հանդիսատեսի դեր էր կատարում: Դատական գործընթացը, որը տևեց 6

[14] Տե՛ս Արսեն Նազարյան, Գորշ գայլեր, էջ 85:

[15] Ալևիների թիվը 5,5 միլիոն է, նրանք իսլամի ազատամիտ մի հոսանքի հետևորդներն են և հալածվում են «Գորշ գայլերի» կողմից:

տարի և 8 ամիս, եկավ այն եզրակացության, որ ահաբեկչական գործողությունը «ուղղված էր հանրապետության չեզոքացման և աշխարհիկ կարգի դեմ»՝ վսասելու համար գրող-հումանիստ Ազիզ Նեսինի հայացքներին և գործունեությանը: Սիվասում տարածված թռուցիկներում հիշեցվում էր, որ Ազիզ Նեսինը թերթերից մեկում հրապարակել է Սալման Ռյուշդիի «Սատանայի բանաստեղծություններ» գրքից հատվածներ, որոնք իբրև թե վսասում են Առաքյալին և իսլամին և որ «հավատացյալները պետք է պայքարեն «սատանայի ընկերների դեմ»: 33 մեղադրյալներ դատապարտվեցին մահվան:

«Գորշ գայլերի» հանդիսություններից մեկի ժամանակ ցուցապաստառին գրված էր Հաջի Բեկթաշ Վելիի բանաստեղծությունից մի հատված «Bir olalim, iri olalim, diri olalim» (Մե՛կ լինենք, մե՛ծ լինենք, ուժե՛ղ լինենք): Հարց է ծագում՝ ի՞նչ գործ ունի այստեղ ալևի գրող մտավորականի բանաստեղծությունը: Ճիշտ է, ալևիները իհարկե մուսուլման են, բայց, ինչպես նշում են հենց «գորշ գայլերը», «լավ» ալևիներ էլ կան, որոնցից մեկը նշել էր. «Մենք՝ ալևիներս, որպես Ահմեդ Եսևիի սերունդ, զտարյուն թուրք ենք»: Ահմեդ Եսևին ալևիզմի Բեկթաշ ճյուղի նախահայրն էր: Սակայն քիչ չեն եղել ալևիների և «գորշ գայլերի» միջև արյունալի դեպքերը: Այդ արյունահեղությունների գագաթնակետը Քահրամանմարաշի (Գերմանիկ-Վասպուրական) 1978 թվականի դեկտեմբերի 4-ի ջարդն էր, որի ընթացքում զոհվեցին տասնյակ ալևիներ, իսկ շատերն էլ վիրավորվեցին: Սրա կազմակերպիչների մեջ էին MHP-ի բարձր ղեկավարության անդամներ:

«Գաղափարապաշտների» կազմակերպությունները մեծ մասամբ բաղկացած էին երիտասարդներից և հիմնականում զբաղված էին պանթուրքիստական գաղափարախոսության քարոզչությամբ ու տարածմամբ: «Գաղափարապաշտների» մենաբանությամբ «գաղափարապաշտ» լինել՝ նշանակում է ամեն ինչ զոհաբերել հանուն գաղափարի. «կատարել ոչ թե այն, ինչ հուշում է տրամաբանությունը, այլ այն, ինչ հրամայում է ղեկավարը»:

1970-ական թվականներին, ներգրավվելով ահաբեկչական պայքարի մեջ, «գաղափարապաշտների» կազմակերպությունները վերածվել էին մի հզոր բանակի, որոնք 1970-ական թվականներին իրենց կազմում ունեին ավելի քան 100 հազար անդամ:

1990-ական թվականներին MHP-ականները զբաղված էին Չեչնիայով: Ըստ որոշ տեղեկությունների՝ չեչենների կողմից կռվել են 5-6 հարյուր «գորշ գայլեր»:

Այսպիսով՝ մինչև 1973 թվականի խորհրդարանական ընտրությունները վերջնականապես ձևավորվեցին «Գորշ գայլերի» գաղափարախոսական ու քաղաքական ուղղությունները: 1973 թվականի խորհրդարանական ընտրությունների արդյունքում ԱՇԿ-ն ստացավ քվեների 3.38 %-ը (3 պատգամավորական մանդատ), ինչը կարծես չնչին արդյունք էր, և ԱՇԿ-ն պետք է, որ լուրջ ազդեցություն չունենար քաղաքական կյանքի հետագա ընթացքի վրա, սակայն Ալփարսլան Թյուրքեշի ծրագրերն այլ էին:

«Գորշ գայլերի» կազմավորմանը և հզորացմանը նպաստեցին Արևմտյան երկրների գաղտնի ծառայությունները: Կան տեղեկություններ, որ 1960-ական թվականներին ԱՄՆ-ի Կենտրոնական հետախուզության վարչությունը (ԿՀՎ) ՆԱՏՕ-ի անդամ երկրներում ստեղծեց «կոնտրգերիլաների» (Counter Guerilla-հակապարտիզանական) գաղտնի կազմակերպություններ, որոնք ուղղված էին ձախակողմյան շարժումների դեմ և ամեն գնով խոչընդոտելու էին դրանց զարգացման: Թուրքիայում «կոնտրգերիլաների» գործունեությունը համակարգելու նպատակով ստեղծվեց Հատուկ պատերազմի բաժինը (այսուհետև՝ ՀՊԲ, Ozel Harp Dairesi), որը գաղտնի կառույց էր և գործում էր սկզբում ՄԻԹ-ի (Milli Istibaharat Teskilati- Ազգային հետախուզական ծառայություն), իսկ հետագայում՝ Գլխավոր շտաբի ենթակայության ներքո: Ընդհանուր թշնամու գործոնը, ի դեմս ձախակողմյան շարժումների, անխուսափելի էր դարձնում «Գորշ գայլերի» և ՀՊԲ-ի համագործակցությունը: Վերջինիս համար «գորշ գայլերը» ձախակողմյան շարժումների դեմ պայքարի ընթացքում «սև աշխատանքներ» կատարողներ էին:

1968 թվականից Թուրքիայում տարածում գտավ «հիտլերյուգենդի» նման «կոմանդոսների» շարժումը:

1960-ականների վերջին ՀՊԲ-ի օժանդակությամբ ստեղծվեցին «Գորշ գայլերի» «կոմանդոսների» ճամբարները, որոնք կարևորագույն դեր խաղացին «Գորշ գայլերի» հզորացման ճանապարհին: Այդ ճամբարներում «Գորշ գայլերի» գրոհայինները՝ «կոմանդոսները», հատուկ պատրաստություն էին անցնում. նրանց վարժեցնում էին թե՛ ֆիզիկապես, թե՛ գաղափարապես և թե՛ հոգեպես: Հատուկ ուշադրություն էր դարձվում հատկապես «կոմանդոսների» գաղափարական պատրաստությանը՝ նրանց մեջ մանրամասն սերմանելով պան-

թուրքիստական գաղափարներ: 1970-ական թվականների վերջերին Թուրքիայում կար այդպիսի 28 ճամբար, որտեղ հատուկ պատրաստություն էին անցել ավելի քան 1500 երիտասարդ:

Հզորացման շրջան[16]

1974 թվականի ամռանը ռազմական գործողությունների արդյունքում Թուրքիան զավթեց Կիպրոսի հյուսիսային հատվածը: Կիպրոսի դեմ ուղղված ռազմական գործողությունները նոր հակասություններ առաջացրին իշխող կոալիցիայի անդամներ Ժողովրդահանրապետական կուսակցության (հետայսու՝ ԺՀԿ-Cumhuriyet Halk Partisi) նախագահ Բ. Էջևիթի և Ազգային փրկության կուսակցության (այսուհետ՝ Milli Selamet Partisi) նախագահ Ն. Էրբաքանի միջև. վերջինս կարծում էր, որ հարկավոր է ամբողջ կղզին գրավել, իսկ Էջևիթը դեմ էր նման գործողություններին՝ նշելով, որ դա միջազգային հանրության առջև հնարավոր չի լինի հիմավորել: Կիպրոսի դեպքերը նպաստեցին ԺՀԿ-ի վարկանիշի կտրուկ աճին: ԺՀԿ-ի բացարձակ հաղթանակը անխուսափելի էր թվում, և Էջևիթը նոր ընտրություններ անցկացնելու ակնկալիքով հրաժարական տվեց: Նա փորձում էր ազատվել անցանկալի գործընկերոջից: Ձախակողմյան կուսակցության նմանօրինակ ծրագրերը անհանգստացրին ոչ միայն աջ ուղղվածության կուսակցություններին, այլև լուրջ մտահոգություն առաջացրին Թուրքիայի արևմտյան դաշնակիցների և Թուրքիայի արևմտականացման գլխավոր ջատագովի՝ թուրքական բանակի մոտ: Վերջինիս «խրախուսմամբ» Ս.Դեմիրելին հաջողվեց իր շուրջը համախմբել խորհրդարանական որոշ ուժերի և ստանալ ձայների անհրաժեշտ քանակ՝ ԹԱՄԺ-ում մեծամասնություն ձևավորելու համար:

Հակակոմունիստական ալիքի վրա ձևավորված Ազգայնական ճակատ (Milliyetci Cephe-ԱՃ) կոալիցիայում իր ուրույն տեղը չէր կարող չունենալ Թուրքիայում հակակոմունիստական պայքարի առաջամարտիկը՝ «Ազգայնական շարժում» կուսակցությունը:

ԱՇԿ-ն 1975 թվականի ԱՃ-ի իշխող կոալիցիայի մաս կազմեց, և Թյուրքեշը դարձավ փոխվարչապետ: Գտնվելով իշխանական կոալիցիայում՝ Ա. Թյուրքեշը առավելագույնս օգտագործեց իշխանական լծակները իր կուսակցության հզորացման համար: Բաշբուղն ամեն կերպ աջակցում էր իր կուսակիցների՝ պետական մարմիններ ներթափանցմանը, որի արդյունքում 1970-ական թթ. կեսերից «գորշ գայլերը» հայտնվեցին պետական գրեթե բոլոր կառույցներում: Ա. Թյուրքեշը հատկապես խթանում էր «գորշ գայլերի»՝ ուժային

[16] Տե՛ս Արթուր Դումանյան, Թյուրքագիտական և օսմանագիտական հետազոտություններ,. հ. 4, էջ 106-111:

կառույցներ մտնելու գործընթացը. մեծ թվով «գորշ գայլեր» ներթափանցեցին ոստիկանական համակարգ, բանակ և ՄԻԹ: Արդեն 1970-ական թթ. կեսերից ՄԻԹ-ի մի քանի վարչություններ գտնվում էին Թյուրքեշի վերահսկողության տակ:

Այս ժամանակահատվածում վերջնականապես ձևավորվեցին «Գորշ գայլերի» գրոհային ջոկատները: Նրանք ապահովվեցին զինամթերքով, որի զգալի մասն ստանում էին Կիպրոսի հյուսիսային հատվածից:

«Գորշ գայլերը», բավարար չհամարելով կոմունիստների դեմ («գորշ գայլերի» կողմից կոմունիստական էին համարվում բոլոր ձախակողմյան շարժումները) կառավարության կողմից կազմակերպվող միջոցառումները, պայքարը դուրս բերեցին փողոց՝ փորձելով ահաբեկչական ու սադրիչ գործողություններով պայքարել ձախակողմյան շարժումների հզորացման դեմ:

1970-ական թթ. ահաբեկչությունը դարձավ «Գորշ գայլերի» գործունեության բաղկացուցիչ մասը: Ահաբեկչական գործողության մասին որոշումն ընդունում էին ՀՊԲ-ն ու ԱՇԿ-ի ղեկավար կազմը: Նախապատրաստվող ահաբեկչական գործողության հրահանգը բանավոր կերպով ստացվում էր ԱՇԿ-ի երիտասարդական բաժանմունքի կողմից, զենքը նախօրոք տրամադրում էին տեղական կազմակերպության ղեկավարները, իսկ ահաբեկիչների կորիզը կազմում էին «կոմանդոսները»:

Գտնվելով իշխանության հովանու ներքո՝ ահաբեկիչ «գորշ գայլերին» հաջողվում էր խույս տալ քրեական պատասխանատվությունից, և այդ անպատժելիության մթնոլորտն էլ ավելի էր նպաստում ահաբեկչության ալիքի ընդլայնմանը:

Այդ տարիներին «Գորշ գայլերի» կազմակերպած ամենազանգվածային ահաբեկչական գործողությունը տեղի ունեցավ 1977 թվականի մայիսի 1-ին: Աշխատավորության մայիսմեկյան տոնի կապակցությամբ ձախակողմյան շարժումների կողմից Թաքսիմի հրապարակում կազմակերպված ցույցի ժամանակ «գորշ գայլերը» կազմակերպեցին ահաբեկչական սադրիչ գործողություններ, որի արդյունքում զոհվեց 34, վիրավորվեց 100-ից ավելի մարդ: Հատկանշական են տեղեկություններն այն մասին, որ ըստ Էջևիթի՝ Թաքսիմի արյունոտ դեպքերի ետևում կանգնած էր Հատուկ պատերազմի բաժինը:

1977 թվականին ԱՇԿ-ի կողմից ստեղծվեց ՄԻՍԿ-ը (MISK-Milliyetci Isci Sendikalari Konfederasyonu-Ազգայնական աշխատավորական արհմիությունների համադաշնություն)՝ որպես հակակշիռ

ԴԻՍԿ-ի (Devrimci Isci Sendikalari Konfederasyonu- Հեղափոխական աշխատավորական արհմիությունների համադաշնություն), որը ձախակողմյան խոշորագույն արհմիությունների համադաշնություն էր: 1970-ական թթ. վերջերին MISK-ը իր կազմում ուներ մոտ 65 հազար աշխատավոր:

1977 թվականին խորհրդարանական ընտրությունների արդյունքում ԱՇԿ-ն ստացավ 16 պատգամավորական մանդատ նախկին 3-ի փոխարեն: ԱՇԿ-ի նման հաջողությունը հաստատելու է գալիս վերը նշված այն պնդումը, թե ԱՃ կոալիցիայից առավելապես օգտվեց հատկապես Թյուրքեշի կուսակցությունը: Այդ հաջողությունն ԱՇԿ-ին հնարավորություն տվեց ԱՃ-ի երկրորդ կառավարությունում ավելի ամրապնդել իր դիրքերը: Սակայն ԱՃ-ի երկրորդ կառավարությունը գոյատևեց ընդամենը մի քանի ամիս (21 հուլիս 1977 թ.-05 հունվար 1978 թ.):

1977 թվականի նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին «Արդարություն» կուսակցության մի քանի անդամներ անցան ընդդիմադիր դաշտ, ինչը խախտեց ԹԱՄԺ-ում ուժերի հաստատված հարաբերակցությունը, և 1977 թ. դեկտեմբերին Հանրապետական Թուրքիայի պատմության մեջ առաջին անգամ ԹԱՄԺ-ն անվստահություն հայտնեց կառավարությանը. «Ազգայնական ճակատ» կոալիցիոն կառավարությունը դադարեցրեց իր գործունեությունը: 1978 թ. հունվարի 5-ին ձևավորվեց Էջևիթի երրորդ կառավարությունը (05.01.1978 - 24.10.1979):

Պայքար հանուն իշխանության

1970-ական թվականների վերջերին «Գորշ գայլերի» ծրագրերում առաջնային էր դարձել իշխանությունը զավթելու գաղափարը: Դեռ 1978 թ. հունիսի սկզբին ռազմական հեղաշրջում նախապատրաստելու համար բանակից հեռացվեցին ցամաքային զորքերի հրամանատար, բանակի գեներալ Նամըկ Քեմալ Էրսինը և մոտ 200 ծայրահեղական սպա: Էրսինի ձախողված հեղաշրջման նախաձեռնողն էր Ա. Թյուրքեշը: Դավադրության տապալումը, սակայն, չընկճեց Թյուրքեշի՝ իշխանությունը զավթելու նկրտումները, ավելին, 1978 թ. սկսած, Թյուրքեշը այդ գործընթացի մեջ ներգրավեց «կոմանդոսներին»՝ ներքաշելով այդ պայքարի մեջ իր վերահսկողության տակ գտնվող զրոհային ջոկատները:

1978 թվականի հունվարին Էջևիթի կառավարության կազմավորումից հետո «Գորշ գայլերը» անցան նոր մարտավարության. եթե մինչ այդ «գորշ գայլերի» ահաբեկչական գործողություններն ուղղված էին ձախերի դեմ և նպատակ ունեին պառակտել ու թուլացնել ձախ շարժումը, ապա 1978 թ. սկսած՝ դրանք ձեռք բերեցին նոր որակական դրսևորումներ: «Գորշ գայլերը» ամեն կերպ փորձում էին իրենց ահաբեկչական ու սադրիչ գործողություններով այդ պայքարը դարձնել ավելի զանգվածային նպատակ հետապնդելով ապակայունացնել երկրի ներքին դրությունը, ինչը կթուլացներ Էջևիթի իշխանությունը և հող կնախապատրաստեր իշխանությունը զավթելու համար:

Միայն 1978 թ. հունվար ամսին, այսինքն՝ ԱՃ-ի կոալիցիայի գործունեության դադարեցումից հետո առաջին ամսվա ընթացքում, ահաբեկիչների զոհ դարձավ 14, վիրավորվեց 75 մարդ, ինչն աննախադեպ աճ էր նախորդ ամիսների համեմատ:

1978 թվականի մարտի 16-ին «գորշ գայլերը» Ստամբուլի համալսարանի դիմաց կազմակերպեցին պայթյուն, որի հետևանքով զոհվեց 7, վիրավորվեց 41 ուսանող: Պայթյունն իրականացրած Զուքլուֆ Իսոթը խոստովանել էր, որ ահաբեկչության հրամանը տվել էր Բաշբուղը, իսկ գործողությունը կազմակերպելու գործում նրան օգնել էին ոստիկանության որոշ աշխատակիցներ: Դեպքից կարճ ժամանակ անց Իսոթը, զղջալով իր արարքի համար, փորձում է հանձնվել իրավապահ մարմիններին, ինչի համար սպանվում է «գաղափարապաշտ ընկերների» կողմից: Սույն օրինակը հստակ ցույց է տալիս, որ շատ երիտասարդներ, չգիտակցելով հնարավոր անցանկալի հետևանքները, մտնում էին այդ ահաբեկչական կազմակերպության մեջ

և այլևս չէին կարողանում դուրս գալ այնտեղից. «գորշ գայլերի» համար հետդարձի ճանապարհ չկար: Այդ են վկայում նաև Թյուրքեշի հայտնի խոսքերը. «Խփե՛ք, սպանե՛ք բոլոր նրանց, ովքեր պայքարել են մեր նպատակի համար և հիմա երես են թեքում»:

«Գորշ գայլերի» ահաբեկչությունն ուղղված էր հասարակության բոլոր շերտերի դեմ: «Գորշ գայլերն» էին կրում դասախոսների (Օրհան Յավուզ, Յամիթ Քաթանջըօղլու), հասարակական-քաղաքական գործիչների (ԴԻՍԿ-ի նախկին ղեկավար Քեմալ Թյուրքլեր), հարյուրավոր ուսանողների, լրագրողների («Milliyet» թերթի գլխավոր խմբագիր Աբդի Իփեքչիի) և բազմաթիվ այլ անմեղ մարդկանց սպանության պատասխանատվությունը:

Քահրամանմարաշում «Գորշ գայլերի» կազմակերպած սադրիչ գործողությունների արդյունքում տեղի ունեցավ Հանրապետական Թուրքիայի պատմության մեջ ամենազանգվածային բախումը երկրի սուննի և ալևի բնակչության միջև: 1978 թվականի դեկտեմբերին Քահրամանմարաշ քաղաքում գտնվող կինոթատրոններից մեկում «Ե՞րբ է ծագելու արևը» (Gunes ne zaman dogacak?) հակակոմունիստական ֆիլմի ցուցադրման ժամանակ «Գորշ գայլերը» իրականացրին պայթյուն և դրանում մեղադրեցին ալևիներին, որոնք ավանդաբար սատարում էին ձախերին: Հաջորդ մի քանի օրերին «Գորշ գայլերը» կազմակերպեցին ևս մի քանի սադրիչ գործողություններ, որոնց արդյունքում բախումներ սկսվեցին ալևի և սուննի բնակչության միջև՝ դառնալով մոտ 100 մարդու մահվան պատճառ:

Քահրամանմարաշի դեպքերից հետո երկրի 13 շրջաններում մտցվեց ռազմական դրություն, ինչը Քահրամանմարաշի բախումների հեղինակների գլխավոր նպատակն էր:

Արդեն 1978 թվականից սկսած՝ Թյուրքեշն սկսել էր բացեիբաց խոսել բանակի ղեկավարության վրա իր ազդեցության տարածման մասին, իսկ ռազմական դրության իրավիճակում բանակը ակամա ներքաշվում էր քաղաքականության մեջ, և ավելի դյուրին էր դառնում այս կամ այն քաղաքական հոսանքի տարածումը նրա մեջ:

1970-ական թթ. վերջերին թուրքական բանակում մեծ թվով «գորշ գայլեր» հայտնվեցին: Թյուրքեշականները հաճախ էին դիմում զինվորականներին՝ ասելով. «Մենք ձեզ նման ազգայնականներ ենք, իսկ հակառակ կողմում կոմունիստներն են»:

ԱՇԿ-ի նախկին փոխնախագահ Ռըզա Մյուֆթուօղլուն, 2000 թվականին հրատարակած «Մահակների զինվորները» («Coplarin askerleri») գրքում նշում էր, որ 1980 թվականի ռազմական հեղա-

շրջումից առաջ բանակում մի քանի խմբավորում կար, որոնցից մեկը գտնվում էր Ա. Թյուրքեշի ազդեցության տակ: Թյուրքեշը այդ խմբավորման միջոցով, որը ղեկավարում էր գեներալ գնդապետ Սուաթ Իբրահիմը, ռազմական հեղաշրջում էր նախապատրաստում՝ երկրում ֆաշիստական դիկտատուրա հաստատելու նպատակով: Եթե ավելացնենք նաև այն հանգամանքը, որ «Գորշ գայլերը» 1970-ական թվականների վերջին կարճ ժամանակահատվածում կարող էին մոբիլիզացնել մոտ 200 հազար զինված համակիրների, կարելի է եզրակացնել, որ իրավիճակի նմանօրինակ զարգացման պարագայում Թյուրքեշը իրական հնարավորություն կունենար իշխանությունը զավթելու համար: Սակայն զինվորականության հերթական միջամտությունը Թուրքիայի քաղաքական անցուդարձին խառնեց Թյուրքեշի բոլոր խաղաթղթերը՝ ի չիք դարձնելով իշխանությունը զավթելու նրա մտադրությունը:

1971 թվականի մարտի 12-ին թուրքական բանակը «միջամտեց» երկրի քաղաքական անցուդարձին, որը պատմության մեջ մտավ «հուշագրային հեղաշրջում» անվանմամբ: Թուրքիայի ԶՈՒ հրամանատարությունը Թուրքիայի նախագահին ներկայացրեց հուշագիր, որով պահանջում էր կառավարության հրաժարականը՝ սպառնալով հակառակ դեպքում իր ձեռքը վերցնել երկրի իշխանությունը: Նույն օրը Սուլեյման Դեմիրելի ղեկավարած կառավարությունը հրաժարական տվեց և դադարեցրեց իր գործունեությունը: Մարտի 12-ի կազմակերպիչների առաջնորդի նպատակն էր կանխել ցածր զինվորական աստիճան ունեցող սպաների կողմից նախապատրաստվող նախաձեռնողական ռազմական հեղաշրջումը:

Դեռևս 1960-ականների վերջերից երկրում սկսել էր գործել մի գաղտնի կազմակերպություն, որը ռազմական հեղաշրջում էր նախապատրաստում: Այդ կազմակերպության մեջ թոշակի անցած սպաների, 1960 թ. հեղաշրջման կազմակերպիչների և բանակի արմատական տրամադրված սպայակազմի անդամների հետ միասին գործում էին նաև ձախ ուղղվածություն ունեցող քաղաքական գործիչներ (Դ. Ավջըօղլու): Այդ կազմակերպությունը ղեկավարում էր Ջ. Մադանօղլուն: 1971 թվականի սկզբին այն զգալի ուժ և ռեսուրսներ ուներ հեղաշրջում իրականացնելու համար: Սակայն զինվորական ղեկավարությանը հայտնի դարձան կազմակերպության ծրագրերը, և բանակի վերնախավը «մարտի 12-ի միջամտության» միջոցով կարողացավ խափանել դրանք: Մարտի 12-ի «միջամտությունից»

հետո անմիջապես բանակից հեռացվեցին մեծ թվով սպաներ, սպայական կազմում մեծաթիվ փոփոխություններ իրականացվեցին:

Այսպիսով՝ դիտարկելով «Գորշ գայլերի» գործունեության հիմնական փուլերը 1960-70-ական թվականներին՝ կարելի է եզրակացնել, որ «Գորշ գայլերը» իշխանությունը զավթելու նպատակաուղղված քաղաքականություն էին իրականացնում՝ երկրում ռազմական դիկտատուրա սահմանելու և իրենց պանթուրքիստական քաղաքականությունը տարածելու նկրտումներով: Սակայն 1980 թվին զինվորական հեղաշրջումը հերթական անգամ տապալեց Թյուրքեշի՝ իշխանությունը զավթելու դավադիր ծրագրերը:

1980 թվականի սեպտեմբերի 12-ին թուրքական ղեկավարությունը գլխավոր սպայակույտի պետ գեներալ Ք. Էվրենի գլխավորությամբ վերջին 20 տարում երրորդ անգամ երկրում ռազմական հեղաշրջում իրականացրեց: 1980թ. Ք. Էվրենի ռազմական հեղաշրջումը մեծ հարված հասցրեց «Գորշ գայլերի» շարժմանը, սակայն այն վերջնական ու մահացու չէր: Հեղաշրջման հեղինակները ամենևին էլ չէին ցանկանում ամբողջովին ջախջախել «Գորշ գայլերի» շարժումը, և երբ վերջիններս դադարեցին վտանգ ներկայացնել զինվորականների իշխանության համար, սկսեցին նորից օգտագործվել՝ հենց նույն զինվորական իշխանության կողմից: Մասնավորապես՝ «գորշ գայլերը» թուրքական պետության կողմից ակտիվորեն օգտագործվում էին Քրդական աշխատավորական կուսակցության (PKK-ի) և ԱՍԱԼԱ-ի դեմ պայքարում «սև աշխատանք» կատարելու համար:

Երկրի ղեկը իր ձեռքը վերցրած Ազգային անվտանգության խորհրդի նախագահ, ԳՇ-ի պետ Քենան Էվրենի հայտարարություններում զինվորականության՝ քաղաքական կյանքին միջամտելու գլխավոր պատճառների մեջ նշվում էր նաև 1970-ական թթ. վերջերին աննախադեպ ծավալների հասած ահաբեկչությունը:

Ահաբեկչությունն իրականացնում էին աջ և ձախ ծայրահեղականները, որոնց միջև ընթացող չհայտարարված քաղաքացիական պատերազմի հիմական նախաձեռնությունը բխում էր աջ ծայրահեղական ԱՇԿ-ից:

Հիշենք «1978 թվականի մարտի 16-ին Ստամբուլի համալսարանի դիմաց՝ Բայազետի հրապարակում, գաղափարապաշտների կազմակերպած ահաբեկչական գործողությունը, որի հետևանքով զոհվեց 7, վիրավորվեց 41 ուսանող, Բալգաթի արյունալի դեպքերը, երբ զոհվեց 4 մարդ, Իփեքչիի սպանությունը և այլն: Պատկերն ամբողջացնելու համար նշենք մի քանի վիճակագրական տվյալներ. եթե 1976 թվին

ահաբեկչության զոհ է դարձել 82 մարդ, ապա 1978 թվականին՝ 879, 1979 թվականին՝ 1200, իսկ 1980 թվականի առաջին 8 ամիսների ընթացքում՝ մինչ սեպտեմբերի 12-ը, մոտ 2000 մարդ»[17]:

Զինվորականության՝ իշխանության գլուխ անցնելուց հետո 4 գլխավոր կուսակցություններից ամենածանր պատժամիջոցներն իրականացվեցին հատկապես ԱՇԿ-ի նկատմամբ: Մեղադրական փաստաթղթերում տեղեկություններ կային այն մասին, որ, գտնվելով իշխող կոալիցիայի մեջ, ԱՇԿ-ն դավադրություն էր կազմակերպում՝ նպատակ ունենալով երկրում ֆաշիստական դիտատուրա հաստատել: Ըստ այդ փաստաթղթերի՝ հաջորդ փուլը լինելու էր «մեկ ազգ, մեկ պետություն» կարգախոսով բոլոր թուրքալեզու ժողովուրդներին մեկ «Թուրան» պետության մեջ համախմբելը:

Հեղաշրջման ձախողման դեպքում և իրավիճակի նմանօրինակ զարգացման պարագայում ԱՇԿ-ն իրական հնարավորություն կունենար զավթելու իշխանությունը, ինչը անկանխատեսելի հետևանքներ կունենար ոչ միայն Թուրքիայի, այլև ողջ տարածաշրջանի համար:

Հատկանշական են տեղեկություններն այն մասին, որ սեպտեմբերի 12-ի հեղաշրջումից հետո ԱՇԿ-ականները փորձել են սպանել ԱԱԽ-ի նախագահ Քենան Էվրենին, որի փոխարեն ԱԱԽ-ի նախագահ էր դառնալու ցամաքային զորքերի հրամանատար Նուրեդդին Էրսինը, որը լոյալ դիրքորոշում ուներ ԱՇԿ-ի նկատմամբ: Սակայն շուտով ԱԱԽ-ին հայտնի դարձավ նախապատրաստվող մահափորձի մասին, և հնարավոր եղավ կանխել այն:

Հեղաշրջման կազմակերպիչների կողմից նշվում էին 1980 թվականի ռազմական հեղաշրջման անհրաժեշտության հիմնավորման հիմական կովանները՝ քրդական անջատողականությունը, երկրի սոցիալական ճգնաժամը, ահաբեկչությունը, ներքաղաքական ճգնաժամը, ձախ շարժման գործունեությունը, մասնավոր սեկտորի անհանգստության գործոնը, կառավարության կողմից իրավիճակի անվերահսկելիությունը և այլն:

Անդրադառնանք ռազմական հեղաշրջման այն պատճառներին, որոնք, մեր կարծիքով, վճռական նշանակություն ունեցան զինվորական միջամտության համար:

1980 թվականի ռազմական հեղաշրջման նախօրեին Թուրքիայում կային շրջաններ, գյուղեր, քաղաքներում՝ թաղամասեր, որոնք ամբողջությամբ կամ մասնակի գտնվում էին կա՛մ աջ, կա՛մ ձախ ծայրա-

[17] Տե՛ս Արթուր Դումանյան, Մերձավոր Արևելք, հ. 2, էջ 85:

հեղականների վերահսկողության տակ: Նրանց մեջ ընթացող պայքարը կարելի է բնութագրել որպես չհայտարարված քաղաքացիական պատերազմ: Եթե ձախերը բաժանված էին խմբավորումների, ապա աջերը ղեկավարվում էին ԱՇԿ-ի կողմից:

Ահաբեկչության ալիքի ընդլայնումը հնարավոր եղավ կանխել միայն ռազմական հեղաշրջման միջոցով:

Ուղղակի կապ է գոյություն ունեցել Թուրքիայում ԿՀԿ-ի ներկայացուցիչ Փոլ Հենցի և ռազմական հեղաշրջումն իրականացրած գեներալների միջև: 1980 թվականի սեպտեմբերի 12-ին Հենցը, զանգահարելով Սպիտակ տուն, զեկուցել է. «Մեր տղաները հեղաշրջում իրականացրին»:

1980 թվականի հեղաշրջման մասին թուրքական լրատվությունը կուտակել է բավարար նյութեր ՊԱԿ-ի և ԶԼՄ-ների հետաքննող դատարանների ահաբեկչական գործողությունների վերաբերյալ՝ նշելով ահաբեկչության մեջ երիտասարդության մեծ ներգրավվածության մասին: Այսպես, 1996 թվականին վերահրատարակված «Խոստովանություն» գրքույկում շարադրված էր գաղափարապաշտներից մեկի՝ Օմեր Թանլաքի ողիսականը: Հրապարակման նախաբանում նշվում էր, որ այդ ահաբեկիչ-մարդասպանը ընդամենը 19 տարեկան է: Նա պատմում է, թե ինչպես է կորցրել մարդկային կերպարանքը, ինչպես է մասնակցել հանցագործություններին, կոտանքներին, մասսայական սպանություններին: Ինչպես է նրա հոգում տեղ գրավել դաժանությունը..., հարյուրավոր երիտասարդներ սպանում են, նետում են ռումբեր: Նրանց մեծ մասը դեռ չի բոլորել 17 տարեկանը..., այդ երտասարդները թողել են տունը, լքել դպրոցները: Բացի սպանությունից նրանք այլ բան անելու ընդունակ չեն և ճանապարհ էլ չունեն: Եթե նույնիսկ նրանք չէին ցանկանում մասնակցել հանցագործություններին, նրանք չունեին դրա հնարավորությունը. «Եթե հաղորդեի իշխանությանը, ապա MHP-ի մարդիկ այդ մասին տեղյակ կպահեին կուսակցությանը: Ստիպված էի վերադառնալ կուսակցություն: Այն բոլորի առջև ներկայանում է որպես հանցագործ՝ իր ղեկավար կազմով և երիտասարդական բաժանմունքների ղեկավարներով»: Գրքից հայտնի է դառնում, որ Օմեր Թանլաքը՝ որպես ուսանողության առաջնորդ, 1975 թվականին մտել է Անկարայի Ուլքյու Օջաքլարը տեղական կազմակերպության մեջ, որպեսզի կարողանա «ճնշել կոմունիզմը, վերջ դնել դրան Թուրքիայում»: Այդ տարիներին նրա կազմակերպության անդամների թիվը 25-ից հասավ 250-ի:

1970-ական թթ. իսլամական շարժումը Թուրքիայում ներկայացնում էր «Ազգային փրկություն» կուսակցությունը (ԱՓԿ):

Հարկ է նշել, որ քննարկվող ժամանակահատվածում թուրքական բանակի վերնախավին (Թուրքիայի արևմտյան դաշնակիցներին ևս՝ հատկապես իրանական իսլամական հեղափոխությունից հետո) անհանգստացնում էր իսլամիստների գործունեությունը: Քեմալի կողմից մշակված լայիցիզմի՝ աշխարհիկության սկզբունքի հանդեպ անընդունելի էին ոտնձգությունները, որոնք շատ էին ԱՓԿ-ի գործողությունների մեջ՝ երբեմն հասնելով նույնիսկ խալիֆաթի վերականգնման և շարիաթի հաստատման անհրաժեշտության հայտարարությունների:

«1970-ական թթ. վերջերին Մերձավոր և Միջին Արևելքում տեղի ունեցան 2 կարևորագույն իրադարձություններ՝ իսլամական հեղափոխությունն Իրանում և խորհրդային զորքերի ներխուժումն Աֆղանստան, որոնք խախտեցին տարածաշրջանում ուժերի հաստատված հավասարակշռությունը՝ թուլացնելով ԱՄՆ-ի դիրքերը տարածաշրջանում: ԱՄՆ-ում ստիպված էին դիրքերը վերականգնելու նոր ուղիներ փնտրել, ինչը հանգեցրեց Թուրքիայի դերի կտրուկ աճին»[18]:

Զինվորականների իշխանության գալով՝ ահաբեկչության ալիքը հիմնականում թուլացավ: Մարդիկ սկսեցին մեծ մասամբ հանգիստ ապրել, ինչպես նաև աշխատել, հաճախել կինոթատրոն, ռեստորաններ և այլն: Ինստիտուտներում և դպրոցներում դասերն անցնում էին բնական հունով:

Վերլուծելով վեցամյա ռազմական ղեկավարության որոշակի արդյունքները՝ Ազգային անվտանգության խորհրդի ներկայացուցիչ, երկրի նախագահ Ք. Էվրենը, մարտի 28-ին ելույթ ունենալով Թուրքիայի հյուսիսային Մանիսա և Ալաշեհիր քաղաքներում, հատուկ նշեց, որ նշված ժամանակամիջոցում ահաբեկչությունը և անկարգությունը երկրում կրճատվել են 90 տոկոսով, 24 հազարից ավել մարդ գտնվում են ոստիկանական հսկողության տակ, կամ էլ ահաբեկչությանը մասնակից լինելու մեղադրանքով ձերբակալված են, թուրք քաղաքացիների կողմից հանձնվել է կամ նրանցից առգրավվել 25 մլրդ լիրայի արժողությամբ զենք և զինամթերք: Ք.Էվրենի խոսքերով այդ զենքը ստանում էին արտասահմանից: Երկրի նախագահը հաստատեց Սահմանադրական դատարանի գումարման ժամանակը՝ օգոստոսի 30-ից մինչև հոկտեմբերի 29-ը՝ ավելացնելով, որ նրա

[18] Տե՛ս Արթուր Դումանյան, Մերձավոր Արևելք, հ. 3, Երևան 2006 թ., էջ 53:

աշխատանքը սկսվելուց հետո կորոշվի խորհրդարանի ընտրությունների ժամանակը:

Սակայն ահաբեկչության դեմ պայքարը դեռ շարունակվում էր: Մարտի վերջին Թուրքիայի անվտանգության ուժերը Ադանա քաղաքի ծայրամասերում ձերբակալեցին ավելի քան 20 ահաբեկիչների, որոնք մաս էին կազմում ֆաշիստամետ «Վրիժառության խումբ» կազմակերպությանը: Առգրավվեց մեծ քանակությամբ զենք և զինամթերք: Ռազմական դատարանները քննում էին տարբեր կազմակերպությունների և անձանց գործերը, որոնք կապ էին ունեցել քաղաքական անկարգությունների հետ: Պատասխանատվության կանչվեց ԱՇԿ-ի ղեկավարությունը: ԱՇԿ-ն ֆինանսական աջակցությունը ստանում էր խոշոր բուրժուազիայից, այդ թվում նաև խոշոր բուրժուա Բայրաքից: Այդ գործարարը բավականին մութ անցյալ ուներ: Կար տեղեկություն, որ 2-րդ աշխարհամարտի տարիներին գերմանացիների կողմից Հարավսլավիայի շրջափակման ժամանակ նա ծառայել էր SS-ի զորամասերում:

«Հակակոմունիստական, հակասովետական պայքարի քողի տակ նեոֆաշիստները հարձակումներ էին ձեռնարկում իշխանությունների դեմ: 1980 թվականի ամռանը նրանք նույնիսկ ռազմական գործողությունների «փորձ» կատարեցին երկրի հյուսիսում գտնվող ոչ մեծ Յոզգաթ քաղաքում: Երիտասարդ ֆաշիստները ջարդում էին դեմոկրատական կազմակերպությունների շենքերը, թալանում բանկերը և կրպակները, ծեծում էին, ում ցանկանում էին: Միայն կանոնավոր զորքերի մուտքը և ուժի կիրառումը փրկեց քաղաքի բնակչությանը հրոսակախմբերից»[19]:

Շատ ազնիվ վերլուծաբաններ նշում էին, որ եթե ԱՇԿ-ին հաջողվեր իշխանության գլուխ գալ, ապա Թյուրքեշը Ազգային անվտանգության համակարգում, ոստիկանությունում, պետական և իշխանական մարմիններում ոչ քիչ կողմակիցներ կունենար, իսկ դա ողբերգություն կարող էր դառնալ Թուրքիայի բնակչության համար: Այդ մասին են վկայում «Գորշ գայլերի» մասնաճյուղերի շենքերում հայտնաբերված «համաշխարհային կոմունիզմի գործակալների ցուցակները», որոնց թվում և խաղաղության ու դեմոկրատիայի ջատագովների անունները, որոնք էլ համարվում էին ֆաշիստների թիվ մեկ թիրախը:

Լուրջ մեղադրանքներ էին ներկայացվել նաև Ազգային փրկության կուսակցությունը և նրա ղեկավար կրոնական ֆանատ Նեջմեդդին

[19] Տե՛ս Родионов, Турция ст. 254-256.

Էրբաքանին: Օգտվելով բնակչության որոշ խավերի աջակցությունից (հատկապես հենվում էին երկրի արևելյան շրջանների վրա), որոնց համար, ինչպես նախկինում, բնորոշ էր գործազրկության բարձր, կյանքի պայմանների ցածր մակարդակը՝ ԱՓԿ-ն դեմ էր արտահայտվում երկրի ղեկավարման աշխարհիկ կարգին, որն ըստ իրենց ի վիճակի չէր լուծել գլխավոր սոցիալ-տնտեսական խնդիրները: ԹԱՄԺ-ում ԱՓԿ-ն, միավորվելով մեկ «Արդարություն» կուսակցության, մեկ ԱՇԿ-ի հետ, մեկ ԺՀԿ-ի հետ, օր օրի տապալում էր էլ ավելի մեծ թվով ծրագրեր, որոնք ներկայացնում էին իշխանությունները:

1980 թվական: 1983-85 թթ. Պահպանողական կուսակցություն[20]

«Գորշ գայլերին» հիմնականում անդամակցում են երիտասարդները, որոնց, անհրաժեշտության դեպքում, համաձայն նախնական պլանի, օգտագործում են որպես հարվածային ջոկատներ՝ զանգվածային գործողություններ, այդ թվում և բռնարարքներ իրականացնելու համար: Իր ժամանակին ԱՇԿ-ի ղեկավար ու հիմնադիր Ալփարսլան Թյուրքեշը անձամբ խրախուսել է երիտասարդ «գաղափարապաշտների» զենք կրելն ու օգտագործել կարողանալը: «Մենք մի ազգ ենք, որը սիրում է զենք: Մեզնից ո՞վ զենք չունի»[21]:

Բացի այդ, մասնագետների պնդմամբ, երկրում գործում են բազմաթիվ մաֆիոզ խմբավորումներ, որոնց ղեկավարությունը ուղղակիորեն կապված է ԱՇԿ-ի վերնախավի հետ: Մանրակրկիտ կազմավորված այս հիերարխիկ ցանցը, որը տարածված է ոչ միայն Թուրքիայով մեկ, այլև ամենուր, որտեղ կան թուրք վերաբնակներ, հասարակական-քաղաքական «Գորշ գայլեր» շարժումն է, իսկ նրա յուրաքանչյուր անդամ, լինի դա կուսակցական ղեկավար, համալսարանի «օջախից» պրոֆեսոր-գաղափարապաշտ, փողոցային խժդժությունների ակտիվ մասնակից կամ թե ուղղակի համոզված ԱՇԿ-ական, իրեն կոչում է «գորշ գայլ»: Գիտական գրականության մեջ «գորշ գայլերին» հաճախ անվանում են նաև թուրքական ֆաշիստներ:

1982 թվականի նոր սահմանադրության ընդունումից և 1983 թվականի քաղաքական կուսակցությունների մասին օրենքից հետո արգելված և ռազմական ղեկավարության կողմից փակված կուսակցությունները Թուրքիայի քաղաքական համակարգում հանդես եկան վերակազմավորված կազմավորումների տեսքով: Կուսակցությունների վերակազմավորման և նոր քաղաքական ուժերի ստեղծման բուն գործընթացը խստորեն վերահսկվում էր ռազմական իշխանությունների կողմից:

Վերակազմավորված քաղաքական նոր ուժերից էր Պահպանողական կուսակցությունը (Muhafazakar Partisi), որն այդ անվան տակ գործեց ընդամենը 2 տարի: Մեր հետաքրքրությունը այս կուսակցությամբ պայմանավորված է այն փաստով, որ հենց այս կուսակցությունը հիմք դարձավ ԱՇԿ-ի վերակազմավորման համար:

Թեև ԱՇԿ-ն վերջին շրջանում հատկապես թուրք հետազոտողների ուշադրության կենտրոնում է, սակայն գրեթե բոլորը հիմնականում անդրադառնում են ԱՇԿ-ի պատմության այն շրջափուլին, երբ կուսակցությունը իշխանության մաս էր կազմում կամ, լինելով ընդդիմություն, որոշակի ազդեցություն էր թողնում երկրի քաղաքական կյանքի վրա: Այդ իսկ պատճառով մասնագետները գրեթե աչքաթող են արել ԱՇԿ-ի հնարավորությունների մոբիլիզացման և ռեսուրսների հարցը: Ստորև փորձենք ամբողջական պատկերացում տալ այդ քաղաքական կազմակերպության ուժի ու կենսունակության մասին, որի համար էլ հենց ուսումնասիրվել է նրա պատմության այն շրջանը, երբ նրա համար բնորոշը եղել է ոչ թե պայքարը իշխանության համար, այլ պայքարը գոյատևման համար: Այդպիսին են եղել 1983-85 թթ., երբ «Գորշ գայլեր» կուսակցությանը ներկայացնում էր Պահպանողական կուսակցությունը՝ 1970-ական թվականների ԱՇԿ-ի ժառանգորդը և ներկայիս ԱՇԿ-ի նախորդը:

[20] Տե՛ս Ռուբեն Սաֆրաստյան, Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, հ. 23, «Գորշ գայլեր» 1983-85 թթ. էջ 254-27:

[21] Թուրքերի մշակույթի անբաժան մասն է: Ինչպես իրենց ասացվածքն է ասում. «Ավելի լավ է ունենաս մի ատրճանակ, քան 10 եղբայր»:

Պահպանողական կուսակցության ծագման քաղաքական միջավայրը

Թուրքիայի Հանրապետության ստեղծման առաջին երկու տասնամյակներին քեմալականները, որոնք ավտորիտար բնույթի համակարգ էին ստեղծել, ճնշում էին իրենց հայացքներին ոչ համահունչ մտքեր արտահայտող բոլոր ուժերին: Այս շրջանում պանթուրքիզմի գաղափարների կրողները իրենց հայացքները փորձում էին տարածել միայն որոշակի հրապարակախոսական և գրական ստեղծագործությունների միջոցով:

1960-ական թթ. պետության հսկողության մասնակի թուլացման շրջանում, նկատվում է պանթուրքական ուժերի ակտիվացումը, և նրանք սկսում են վերախմբավորվել:

Անցյալ դարի 70-ական թվականների կեսերից սկսվում է աջ ծայրահեղական-ազգայնական և ԱՇԿ-ի ղեկավարմամբ գործող ֆաշիստամետ ուժերի սերտաճում: ԱՇԿ-ի «մարգական» ճամբարներում պատրաստություն անցած «Գորշ գայլերի» երիտասարդ զինված ջոկատները, որոնք կազմում էին «կոմանդոսների» հիմական կորիզը, իսկական պատերազմ սկսեցին Թուրքիայի խոշոր քաղաքներում ձախերի և բոլոր նրանց դեմ, ովքեր համաձայն չէին իրենց հայացքներին: Նրանց գործողությունները «ծածկում» էին և մասնավորապես խրախուսում ԱՇԿ-ի այն անդամները, որոնք գտնվում էին պետական կառավարման համակարգի մեջ ու ոստիկանությունում: 1970-ական թվականների վերջին ԱՇԿ-ն և իր կողմակիցները մամուլում պանթուրքական գաղափարախոսություն էին քարոզում, օգնում այդ ուղղվածությունն ունեցող տարբեր պարբերականների լույս ընծայմանը և այլն: Բոլոր այս հրապարակումները երկրում ստեղծում էին վախի ու ազգայնամոլության, շովինիզնի մթնոլորտ: Իզուր չէ, որ թուրք հետազոտող Հաքան Յավուզը ԱՇԿ-ի վարած քաղաքականությունը անվանում էր «վախի քաղաքականություն»: ԱՇԿ-ի ակտիվ կողմակիցները ներգրավված էին պետական բյուրոկրատական համակարգում ու հատուկ ծառայություններում, երբ ինքը՝ կուսակցությունը, 1975-77 թթ. մտել էր իշխող կոալիցիայի մեջ, իսկ նրա ղեկավար Ալփարսլան Թյուրքեշը նույն այդ թվականին զբաղեցնում էր փոխվարչապետի պաշտոնը: ԱՇԿ-ն, փաստորեն, օգտվելով Թուրքիայի ներքաղաքական կյանքում տիրող և օրըստօրե աճող քաոսից, որը զգալիորեն հենց ինքն էր ստեղծում, և գործի դնելով

նման դեպքերի համար ստեղծված կառույցները, օգտագործելով զանգվածային ահաբեկչությունն ու վախի գործելաոճը՝ իշխանությունը նվաճելու ուղղություն վերցրեց:

Այն բանից հետո, երբ 1980 թվի սեպտեմբերի 12-ին տեղի ունեցավ ռազմական հեղաշրջում, երկրում դադարեցրին բոլոր կուսակցությունների և կազմակերպությունների գործունեությունը, իսկ նրանց ղեկավարներին վերցրին հսկողության տակ: Բայց ԱՇԿ-ի ղեկավար Ա. Թյուրքեշը, օգտագործելով իր հին կապերը ռազմական հրամանատարության մեջ, կարողացավ նախօրոք տեղեկանալ իրականացվելիք հեղաշրջման մասին ու թաքնվեց և դրանով իսկ կարողացավ ժամանակավորապես խուսափել ձերբակալումից: Երեք օրերի ընթացքում նա գտնվում էր ոչ լեգալ կարգավիճակում ու օգտագործեց այդ ժամանակահատվածը ԱՇԿ-ի ուժերը ճիշտ տեղաբաշխելու և նոր պայմաններին հարմարեցնելու համար, որից հետո միայն կամավոր հանձնվեց ռազմական իշխանություններին:

1980 թվականին արգելված MHP-ն վերակազմավորվելուց հետո հանդես է գալիս «Ազգային աշխատանքային» կուսակցություն անունով: Կուսակցության մեջ բացի թուրքերից կային նաև ադրբեջանցիներ, դազախներ, վրացիներ:

Գալով իշխանության գլուխ՝ զինվորականներն սկսեցին մեծամասշտաբ հալածանքներ կիրառել ինչպես ձախերի, այնպես էլ աջերի հանդեպ: Հալածանքի ենթարկվեցին նաև այլ քաղաքական կազմակերպություններ ու հատկապես մտավորականության՝ առավել հայտնի ներկայացուցիչներ, որոնք ունեին քեմալիստական պաշտոնական գաղափարախոսությունից տարբերվող քաղաքական հայացքներ: Համաձայն Գերմանիայում տեղակայված «TAYAD» կազմակերպության հավաստի տեղեկությունների՝ զինվորականների հշադրության կիզակետում էին մոտ 650 հազար մարդ, այսինքն՝ երկրի ամեն 10-րդ քաղաքացի:

Ճնշումներ իրականացվեցին նաև ԱՇԿ-ի ղեկավարության շրջանում, «գաղափարապաշտների օջախներում», ինչպես նաև շարքային «գորշ գայլերի» շրջանում: Դեռ ավելին, բոլոր 4 մեծ կուսակցություններից զինվորականները կոշտ մեթոդների դիմեցին հատկապես ԱՇԿ-ի հանդեպ՝ համարելով, որ Աթաթուրքի գաղափարաքաղաքական ժառանգության համար ավելի մեծ վտանգ է ներկայացնում հենց այդ կազմակերպությունը: Բանակային վերնախավի ճնշող մեծամասնությունը 1980 թվականին հետևողականորեն դեմ արտահայտվեց ԱՇԿ-ի ահաբեկչական գործողություններին:

ԱՇԿ-ի և «գաղափարապաշտների օջախների» գործով անցնում էր 587 մարդ: Ավելի լուրջ մեղադրանքներ ներկայացվել էին Ա. Թյուրքեշին: Նա մեղադրվում էր իշխանությունը բռնի կերպով զավթելու փորձի համար: 1981 թվականի ապրիլից սկսած՝ դատական գործընթացի ժամանակ դատավորը նրա, ինչպես նաև 200-ից ավելի «գորշ գայլերի» համար մահապատիժ սահմանեց: Զինվորականները, որոնք իրենց համարում էին քեմալական Թուրքիայի ավանդների փաստացի պահապաններ, մտադիր չէին իրենց իշխանությունը կիսել որևէ մեկի հետ:

1981 թվականի հոկտեմբերի 16-ին Թուրքիայի բոլոր կուսակցությունները փակվեցին: Մեկ շաբաթ հետո տեղի ունեցավ Սահմանադրական ժողովի առաջին նիստը, որի առջև խնդիր էր դրվել կազմել նոր սահմանադրության տեքստը: Սակայն, ինչպես արդարացիորեն նշում են հետազոտողները, նոր սահմանադրության փաստացի հեղինակներն էին թուրքական բանակի ԱԱԽ-ի անդամ հինգ գեներալներ, որոնք իրականացրել էին ռազմական հեղաշրջումը:

1983 թվականին՝ արդեն նոր սահմանադրության ընդունումից հետո, հրապարակվեց քաղաքական կուսակցությունների մասին օրենքը, որը հնարավորություն էր տալիս ԱԱԽ-ին մենաշնորհային իրավունքով որոշել քաղաքական կուսակցությունների ճակատագիրը: Դրանով իսկ զինվորականները հիմք դրեցին երկրի նոր կուսակցական համակարգի ձևավորմանը՝ համաձայն իրենց գաղափարաքաղաքական հայացքների: Այն նպաստում էր Թուրքիայում քեմալիզմի գաղափարախոսության ամրապնդմանը:

2.Պահպանողական կուսակցության ձևավորումը

Պահպանողական կուսակցությունն ստեղծվել է 1983 թվականի հուլիսի 7-ին: Նախօրոք ենթադրվում էր, որ նոր կուսակցությունը կկոչվի Հանրապետական պահպանողական կուսակցություն, սակայն նախարարների խորհուրդը մերժեց գրանցել այն այդ անվամբ՝ համարելով, որ այն իր գործունեությամբ կարող է վարկաբեկել «Հանրապետություն» հասկացությունը: Այդ իսկ պատճառով նոր ստեղծված կուսակցությունը կոչվեց Պահպանողական կուսակցություն, որն այդ անվամբ գործեց մինչև 1985 թվականի դեկտեմբերին հրավիրված կուսակցական համաժողովը: Այն դարձավ 10-րդ կուսակցությունը՝ ստեղծված1980 թվականի հեղաշրջումից հետո:

Պահպանողական կուսակցության հայտնվելուց դեռ մեկ ամիս առաջ թուրքական մամուլում լուր տարածվեց, որ սկսվել է մի կուսակցության ձևավորման գործընթաց, որը կձգտի միավորել բոլոր աջ ուժերին: Նշվում էր, որ այդ ուղղությամբ գործում են իրարից անկախ 4 խմբավորում: Այդ խմբերից մեկին հաջողվեց որոշակի չափով իր շուրջը համախմբել մյուս խմբավորումներին և հռչակել ՊԿ-ի հիմնադրումը: Նրա ղեկավար Մեհմեթ Փամաքը, որը Չանաքքալեից խորհրդակցական մեջլիսի անդամ էր, ավելի վաղ զբաղեցրել էր ֆինանսների նախարարության եկամուտների ուղղորդման գլխավոր պետի տեղակալի պաշտոնը, այժմ դարձավ ՊԿ-ի առաջին գլխավոր ղեկավարը:

Այդ ժամանակ Մեհմեթ Փամաքը ընդամենը 32 տարեկան էր: Նա Անկարայի համալսարանի քաղաքական գիտությունների ֆակուլտետի (քեմալական Թուրքիայի պետական ծառայության կադրերի պատրաստման հիմնական դարբնոց) շրջանավարտ էր: Հնարավոր է, որ դրա շնորհիվ էր, որ նա հասցրել էր լավ կարիերիա անել՝ չնայած իր երիտասարդ տարիքին: Քաղաքականությամբ չէր զբաղվում: Հավանաբար, հաշվի առնելով այդ հանգամանքը, Ազգային անվտանգության խորհուրդը, նպատակ ունենալով մեծ քաղաքականությունից հեռացնել երկրի շատ առաջատար քաղաքական գործիչների և խրախուսելով նոր դեմքերի մուտքը Խորհրդակցական մեջլիս, հավանություն էր տվել Փամաքի թեկնածությանը: Այս կառույցը հիմնվել էր ռազմական իշխանությունների հրամանով և մտցվել Սահմանադրական ժողովի կազմի մեջ՝ որպես նրա ներքին պալատ: Այն հանգամանքը, որ Մ. Փամաքը նշանակվել էր Խորհրդատվական մեջլիսի անդամ ոչ թե տեղական շրջանների

արտակարգ դրության հրամանատարներից մեկի հրամանով, այլ՝ ԱԱԽ-ի, վկայում է, որ նա օգտվում էր Թուրքիայի՝ այդ ժամանակի բարձր ղեկավարության վստահությունից: Սակայն արդեն Խորհրդատվական մեջլիսում աշխատելու ընթացքում Մ. Փամաքն արտահայտում է ռազմական ղեկավարության տեսակետներին մասամբ չհամապատասխանող մտքեր: Այսպես, ժողովներից մեկում նա առաջարկեց Սահմանադրությունում ներառական մտցնել Ալլահի մասին հիշեցման տեղում, որի հետևանքով նա Խորհրդատվական մեջլիսում քվեարկեց Սահմանադրության տեքստի դեմ և այս առիթով ստիպված եղավ գրավոր բացատրություն տալ ԱԱԽ-ին: Զինվորականները կորցրին իրենց վստահությունը Փամաքի նկատմամբ. դա էլ պատճառ դարձավ, որ որոշում կայացնեն հեռացնել նրան մեծ քաղաքականությունից:

Փամաքը «Գորշ գայլեր» կուսակցության ակտիվ անդամ էր: Արդեն հետին թվով «Սթար» թերթը նրան բնորոշում էր որպես 1960-ական թվականների գաղափարապաշտների շարժման ակնառու գործիչ: Նա նաև ԱՇԿ-ի անդամ էր, սակայն թաքցնում էր դա: Փամաքի գործունեության այս կողմի մասին լայն հասարակությանը քիչ էր հայտնի, քանի որ այդ տարիներին «գաղափարապաշտները», որոնք մտել էին ձախակողմյան կուսակցությունների ու կազմակերպությունների անդամների հետ լայնածավալ արյունալի հաշվեհարդարների մեջ, հիմնականում աշխատում էին չհրապարակել իրենց գործունեությունը և սահմանափակվում էին յուրատեսակ հռչակով իրենց յուրայինների մոտ՝ այսինքն այն անդամների մոտ, ովքեր մաս էին կազմել աջ ծայրահեղական կազմակերպություններին և կուսակցություններին, որոնք մեծ դերակատարություն ունեցան Թուրքիայի՝ անցյալ դարի 60-70-ական թվականների երկրորդ կեսի քաղաքական դաշտում: 1980 թվականի հեղաշրջումից հետո միայն պարզվեց, որ ԱՇԿ-ում և տարաբնույթ «գաղափարապաշտների օջախներում» պաշտոնական անդամների հետ միասին բավականին թիվ էին կազմում նաև «գաղտնի» կամ «ոչ լեգալ» անդամները, որոնց անունները հայտնի չէին ոստիկանությանը: Փամաքը պատկանում էր հենց այդ «թաքնված» տեսակի «գորշ գայլերի» թվին: Հենց դա էլ նրան հնարավորություն էր տվել պետական ծառայության մեջ ոչ վատ կարիերա անել: Բնորոշ է, որ 70-ական թվականների ԶԼՄ-ների հրապարակումներում, այդ թվում նաև ԱՇԿ-ի կողմից հրատարակվող «Hergun»-ում, նա ստորագրում էր ոչ իր անունով, այլ օգտվում էր «Մեհմեթ Էրջիշլի» մականունից: Սակայն «յուրայինները» շատ լավ

ճանաչում ու գնահատում էին երիտասարդ ու կրթյալ «գաղափարապաշտին»: Ըստ լավ տեղեկացված թուրք հեղինակի՝ Մ.Փամաքը նախապես առաջարկություն էր ստացել մտնել Սահմանադիր ժողով միանգամից երկու կուսակցություններից, երկուսն էլ աջակողմյան՝ «ANA VATAN», «Buyuk Turkiye» («Մայր Հայրենիք» ու «Մեծ Թուրքիա»): Իմիջիայլոց, «ANA VATAN» կուսակցության հիմնադրման գաղափարի հեղինակ, ապագայում անփոխարինելի ղեկավար Թուրգութ Օզալը Փամաքին համարում էր գերազանց քաղաքական կադր:

Փամաքը մերժեց Սահմանադիր ժողով մտնելու առաջարկները: ԱՇԿ-ի ղեկավարությունը, ի դեմս Ա. Թյուրքեշի, նկատի ունենալով Փամաքի անձնական որակները, որոշեց նրան օգտագործել այլ նպատակներով: Քաղաքական հալածանքների պայմաններում նա պետք է նախապատրաստեր այդ կուսակցության վերածնունդը: Այս ենթադրությունը հետագայում հաստատվում է թուրքական մամուլում. ՊԿ-ն հիմնվել էր հատկապես Ա. Թյուրքեշի նախաձեռնությամբ ու հրամանով:

Ուրեմն պատահական չէր, որ Փամաքի կազմակերպչական գործունեությունը այդ ուղղությամբ սկսվում է հատկապես ձերբակալության մեջ գտնվող Թյուրքեշի հետ հանդիպումից հետո: Ստանալով նրա օրհնությունը և համապատասխան ցուցումները՝ նա անցավ բուռն գործունեության: Նրա կապերը վկայում են, որ ենթադրվում էր ստեղծել մի կուսակցություն, որը կլիներ ոչ լրիվ «մաքուր» պանթուրքական, այլ կունենար ավելի լայն ուղղվածություն: Նա հանդիպումներ էր ունեցել թուրքական համայնքի իսլամական շրջանակների ներկայացուցիչների հետ, այդ թվում՝ Սուլեյմանիե օրդենի ղեկավարների հետ՝ առաջարկելով նրանց համագործակցություն՝ ստեղծելու նոր, աջակողմյան իսլամիստական-ազգայնական կողմնորոշմամբ կուսակցություն: Սակայն իսլամիստները մերժել են այդ առաջարկությունը: Դրանից հետո Փամաքը շարունակում է խորհրդակցել արդեն միայն իր գործընկերների շրջաններում՝ «Գորշ գայլեր» շարժման անդամների հետ: Հիմնականում հենց նրանց միջից ընտրվեցին գործիչներ, որոնք մտան ՊԿ-ի Սահմանադիրների ժողով: Չնայած հենց ինքն էլ պատկանում էր այն մարդկանց թվին, որոնք հայտնի չէին քաղաքականության մեջ, ԶԼՄ-ներում լուր տարածվեց, որ նրանցից ոմանք անցյալում արգելված ԱՇԿ-ի մաս են կազմել:

Հիմնադրվելուց անմիջապես հետո ՊԿ-ն անցավ նախընտրական պայքարի, որի նախնական էտապում պետք է լուծեր հետևյալ խնդիր-

ները. օգոստոսի 24-ին անհրաժեշտ էր ԱԱԽ-ին ներկայացնել հիմնադիրների ցուցակը՝ կազմված ամենաքիչը 30 մարդուց և ստանալ նրա թույլտվությունը քաղաքական գործունեության համար ու նաև ստեղծել կուսակցության մասնաճյուղերը 34-ից ավել իլերում ու բոլոր իլչեների ավելի քան մեկ երրորդում: Միայն այս նշաձողը հաղթահարելուց հետո կուսակցությունը իրավունք կստանար մասնակցելու ընտրություններին: ՊԿ-ն չկարողացավ իրականացնել այս պահանջները ու դրա համար չմասնակցեց 1983 թվականի նոյեմբերի խորհրդարանական ընտրություններին: Գրանցման կազմակերպական գործընթացը հաջողվեց ավարտել միայն 1983 թվականի հոկտեմբերին: Դրանով իսկ ՊԿ-ն զրկվեց մասնակցել հեղաշրջումից հետո առաջին համընդհանուր ընտրություններին:

Սրա պատճառը նախևառաջ ՊԿ-ի հանդեպ ռազմական իշխանությունների անվստահությունն էր հատկապես այն բանից հետո, երբ հայտնի դարձավ, որ նրա գլխավոր ղեկավար Փամաքը ժամանակին ԱՇԿ-ի անդամ է եղել: ԱԱԽ-ն մեկ անգամ չէ, որ արգելել է ՊԿ-ի ղեկավարությանը, ներառյալ Փամաքին և իր 5 տեղակալներին, քաղաքականությամբ զբաղվել: Արգելվել էր նաև ՊԿ-ի «շարքային» հիմնադիր-անդամների մեծամասնության գործունեությունը: Բացի այդ, պետությունը գլխավոր դատախազի հայցով Սահմանադրության 14-րդ հոդվածի հիման վրա ՊԿ-ի դեմ գործ հարուցեց նրա վերջնական փակման համար:

Ռազմական իշխանությունները խոչընդոտում էին ՊԿ-ի և այլ կուսակցությունների գործունեությանը՝ առաջնորդվելով ոչ միայն գաղափարական նկատառումներով, այլ նաև այն բանով, որ նրանք հարմար չէին զինվորականների կողմից ծրագրված նախընտրական պայքարի ծրագրին: Իր ելույթներից մեկի ժամանակ պետության ղեկավար և ԱԱԽ-ի նախագահ Քենան Էվրենը հայտարարեց, որ, ինչպես ցույց է տալիս մյուս երկրների փորձը, հնարավոր է ստեղծել ուժեղ կառավարություն և ապահովել կայունություն այն դեպքում, եթե ընտրություններին մասնակցում են ոչ ավելի քան 2-3 կուսակցություն: Կենսագործելով այս ծրագիրը՝ ԱԱԽ-ն ամեն կերպ խոչընդոտում էր կուսակցություններից շատերի գործունեությունը:

Փամաքն ստիպված էր թողնել իր պաշտոնը և շուտով դուրս գալ կուսակցությունից: Նրա փոխարեն գլխավոր ղեկավար ընտրվեց Ահմեդ Օզսոյը, անձնավորություն, որը բոլորովին անհայտ էր քաղաքականության բնագավառում, սակայն շուտով նա էլ ստիպված եղավ թողնել իր պաշտոնը:

Անհաջողությամբ ավարտվեց ՊԿ-ի նաև այն փուլը, երբ փորձում էր հաղթահարել երկրորդ արգելքը՝ ստեղծել իր մասնաճյուղերը 34 վիլայեթներում՝ չնայած այս ուղղությամբ ՊԿ-ի գործունեությունն ավելի հաջող էր ընթանում: Գլխավոր ղեկավարի օգնականներից մեկը՝ Զ. Սեփերենը, օգոստոսի 14-ին հայտարարեց, որ մոտ 60 իլերում ամբողջ թափով առաջ է գնում ՊԿ-ի մասնաճյուղեր ստեղծելու գործը: 10 վիլայեթներում, որոնք տեղակայված էին հիմնականում երկրի արևելքում, այսինքն՝ այն իլերում, որոնք սովորաբար օժանդակում էին ԱՇԿ-ին, գործը հաջողությամբ պսակվեց: Սակայն, չնայած ՊԿ-ի ղեկավարության բազմաթիվ լավատեսական հայտարարություններին, տեղերում մասնաճյուղեր ստեղծելու գործընթացը ձգվեց ու ավարտվեց միայն 1983 թվականի հոկտեմբերին:

Հետագայում՝ 1983 թվականի հուլիս-օգոստոս ամիսներին կայացած նախընտրական պայքարում կրած պարտությունից հետո, ՊԿ-ի քաղաքական ակտիվությունը կտրուկ նվազեց: Ալի Քոչը՝ հերթական գլխավոր ղեկավարը, դա բացատրում էր նրանով, որ Թուրքիայի ՍԴ-ի կողմից ՊԿ-ի գործունեության շարունակվող հետաքննության պայմաններում գիտակցաբար է գնացել գործունեության թափի կրճատման և կանգնեցրել է կուսակցության համախմբման գործընթացը:

Այս ստիպողական «քնած» վիճակը շարունակվեց մոտ երկու տարի: Այդ ժամանակաշրջանում ՊԿ-ն ոչնչով չէր տարբերվում մյուս «փոքր» ընդդիմադիր կուսակցություններից: Պատահական չէ, որ թուրքական մամուլը այդ տարիներին նրան քիչ ուշադրություն էր դարձնում: Սակայն կուսակցության ներսում տեղի էին ունենում բավականին զգալի փոփոխություններ: Օգտվելով համակարգի որոշակի թուլացումից՝ խորհրդարանական ընտրություններից հետո և երկրում քաղաքացիական իշխանության պաշտոնապես հաստատումից հետո ՊԿ-ի շարքերում սկսեցին հայտնվել դեմքեր, որոնք մեծ փորձ ունեին քաղաքականության մեջ և ուղղակիորեն կապված էին ԱՇԿ-ի հետ: Այսպես օրինակ, Ա. Օզսոյին գլխավոր ղեկավարի պաշտոնում փոխարինեց Իսմաիլ Հաքքի Յըլանլըօղլուն, մի փորձառու պանթուրքիստ՝ դեռ անցյալում ծայրահեղ-շովինիստական թուրքական ազգայնականների միության նախագահ: Նա ԱՇԿ-ի առաջնորդներից էր և կուսակցության ցուցակներով ընտրվել էր խորհրդարանի անդամ, սակայն հետագայում նա առանձնացավ Թյուրքեշից և դուրս եկավ ԱՇԿ-ից: Ռազմական իշխանությունները, հավանաբար հաշվի առնելով այդ հանգամանքը, նախընտրական փուլերում նրան չէին

խոչընդոտում, ու նա վարում էր գլխավոր ղեկավարի պաշտոնը ՊԿ-ում:

Նոր և փորձառու առաջնորդի ի հայտ գալով՝ ՊԿ-ի գործունեությունը կենտրոնացվեց: Այն սկսեց հավաքել նոր անդամներ, բարձրացավ կուսակցության ներքին կարգապահությունը: Բացի այդ, այս շրջանում անվստահություն ու լարում սկսեց նկատվել այն «գաղափարապաշտների» մոտ, որոնք մտել էին ՊԿ, ու նրանց մոտ, ովքեր գերադասեցին հեռու մնալ կուսակցությունից՝ չհամարելով այն ամբողջովին իրենցը, այսինքն՝ ԱՇԿ-ի իսկական ժառանգորդը. նրանք չէին վստահում ԱՇԿ-ի ղեկավարությանը:

Յըլանլըօղլուի ղեկավարման ժամանակ սկսում է նկատվել ՊԿ-ի էլ ավելի գաղափարական ուղղվածությունն ու նմանությունը ԱՇԿ-ի գաղափարաքաղաքական հիմնադրույթներին, չնայած «Գորշ գայլերի» ռիմակի մեջ կային տարաձայնություններ: Այս հանգամանքը սկսեց անհանգստացնել ռազմական իշխանություններին, և 1984 թվականի վերջին նոր արգելք դրվեց կուսակցության գործունեության վրա, որի արդյունքում գլխավոր ղեկավար Յըլանլըօղլուն ստիպված եղավ թողնել իր պաշտոնը:

Սակայն արդեն ՊԿ-ի ԱՇԿ-ացման գործընթացը հնարավոր չէր կասեցնել: 1984 թվականի դեկտեմբերին կուսակցության նոր գլխավոր ղեկավար ընտրվեց կրթությամբ իրավաբան, իսկ իր քաղաքական հայացքներով ու գործելակերպով «գորշ գայլ» Ալի Քոչը: Թուրքական մամուլը հաղորդում էր, որ նա ժամանակին եղել է ԱՇԿ-ի կողմից ղեկավարվող «Գաղափարապաշտների օջախներ» միության ղեկավար: Քոչը հայտնի էր նաև Ա. Թյուրքեշի նկատմամբ ունեցած իր անձնական նվիրվածությամբ. մամուլում հայտնվել էր նրա հայտարարությունը, որում ասվում էր. «Թյուրքեշին ես սիրում եմ հորս պես»: Ամենայն հավանականությամբ հենց այս հանգամանքը կարևոր դեր խաղաց նրա՝ գլխավոր ղեկավար ընտրվելու համար: Թյուրքեշը վերականգնեց իր հսկողությունը ՊԿ-ի վրա, որը բավականին թուլացել էր Յըլանլըօղլուի ղեկավարման ժամանակ: Հների հետ ՊԿ-ի նոր ղեկավար կազմ մտան «գորշ գայլերի» այնպիսի հայտնի գործիչներ, ինչպես «Գաղափարապաշտների օջախի» միության նախագահ Շեմսեքը և նախկին գլխավոր ղեկավար Աքընջին: Այսպիսով՝ կարելի է ենթադրել, որ Քոչին ու նրա թիկունքին կանգնած Թյուրքեշին հաջողվեց հաղթահարել «գորշ գայլերի» միջև սկսած պառակտումը:

ՊԿ-ի առաջին համագումարի նախապատրաստման ժամանակ (համագումարը սկսվելու էր 1985 թվականի նոյեմբերին) նրա գործունեությունը էլ ավելի ակտիվացավ: Դրանից 10 օր առաջ գլխավոր ղեկավար Դենմեզը հայտարարեց, որ շուտով կուսակցությունը կհամալրվի մեծ թվով նոր անդամներով: Նրանց մեջ մեծ թիվ էին կազմում նախկին անդամներն ու նաև նրանք, ովքեր համակրում էին ԱՇԿ-ին: Այդ օրերի մամուլում լուր տարածվեց, որ համագումարում ենթադրվում է փոխել ՊԿ-ի անվանումն ու փոփոխություններ մտցնել խորհրդանիշում և կանոնադրության մեջ, ընդլայնել ՊԿ-ի կենտրոնական ղեկավար կոմիտեն: ՊԿ-ի ղեկավարության հայտարարություններից պարզ դարձավ, որ առաջարկվում են ՊԿ-ի հետևյալ նոր անունները՝ «Ազգայնական Թուրքիա», «Ազգայնական պահպանողական կուսակցություն», «Ազգայնական աշխատանքային կուսակցություն» ու նաև «Ազգայնական նպատակի կուսակցություն»: Խորհրդանիշի մեջ առաջարկվում էր անպայման մտցնել մահիկը, իսկ ՊԿ-ի գլխավոր ղեկավարի տեղակալ Չելիքը առաջարկում էր կուսակցության խորհրդանիշի վրա միանգամից ներառել 3 կիսալուսին: Այս փոփոխությունները քննարկելու համար ստեղծվեց հատուկ կոմիտե, որն իր առաջարկությունները պետք է ներկայացներ հանձնաժողովին:

Վերլուծելով ՊԿ-ի անվան ու խորհրդանիշի առաջարկվող տարբերակները՝ դժվար չէ գալ այն եզրակացության, որ նրանց օգնությամբ միտում կար ցույց տալ դեռևս չվստահող «գորշ գայլերին»,թե ուղիղ կապ գոյություն ունի ԱՇԿ-ի և ՊԿ-ի միջև: Սա է վկայում նաև այն հանգամանքը, որ կուսակցության համար առաջարկվող բոլոր անուններում օգտագործվում էր «ազգայնական» բառը: Հավատարմությունը ԱՇԿ-ին ՊԿ-ն պետք է արտահայտեր նաև խորհրդանիշի վրա մահիկներ պատկերելով. դա ԱՇԿ-ի խորհրդանիշն էր՝ հաստատված 1969 թվականին՝ իր մեջ ներառելով 3 կիսալուսին ու 9-ը ճառագայթ:

«Ազգայնական շարժում» կուսակցության դրոշակի կարմիր ֆոնին զետեղված երեք հավասար չափով ճերմակ կիսալուսիններ են, որ խորհրդանշում են Դրոշակ, Հայրենիք, Աստված: Երեք կիսալուսինների իմաստը բացատրվում է այսպես. 3 կիսալուսինները նախ և առաջ դարեր շարունակ Օսմանյան կայսրության սյուներն են՝ փողփողված ամեն ամրոցի և բերդի վրա: Յուրաքանչյուր կիսալուսնի մասին բազմահազար գիրք կարելի է գրել: 3 կիսալուսինները խորհրդանշում են. Դրոշակը՝ երկիր, Հայրենիքը՝ ազգ, Աստվածը՝ հավատք: Բացի դա, 1-ինը նշանակում է հավատք, 2-րդը՝ ազնվություն, 3-րդը՝ լավ գործ:

Սրանով հանդերձ, վախենալով իշխանության հալածանքներից, ՊԿ-ի ղեկավարները, հավակնելով դառնալ ԱՇԿ-ի գաղափարական հետևորդը, միաժամանակ ժխտում էին այն մեղադրանքները, թե ՊԿ-ն ԱՇԿ-ի շարունակությունն է և մեկ անգամ չէ, որ ապացուցել է իր կուսակցության ինքնուրույն լինելը: Այսպիսի մարտավարությունը բացատրվում է նրանով, որ, համաձայն 1982 թվականին ընդունված Սահմանադրության՝ քաղաքական կուսակցությունների մասին նոր օրենքի, արգելվում էր մինչ 1980 թվականի սեպտեմբերը գոյություն ունեցած կուսակցությունների վերստեղծումը: Այս քաղաքական վարվելակերպը կուսակցության ղեկավարները շարունակեցին նաև առաջին կոնգրեսից հետո: Հենց վերոնշյալ պատկերացումներից ելնելով էլ մերժվեց կրկին առաջարկվող անվանումը, որի հապավումը նույնն էր, ինչ որ ԱՇԿ-ի դեպքում. ԱՇԿ՝ «Ազգայնական շարժում» կուսակցություն (Milliyetci Hedef Partisi) և Ազգային նպատակի կուսակցություն, որը թուրքերենում լինում է Milliyetci Hareket Partisi. Այսինքն՝ էլի MHP:

Թուրքիայում սկսվեց անցումային շրջանը, որը սովորաբար հաջորդում է ռազմական հեղաշրջումներին: 1980 թվականի անցումային շրջանը նախորդ՝ 1960 թվականի հեղաշրջման և 1971 թվականի զինվորականների «միջամտության» անցումային շրջանների համեմատ բավականին երկար տևեց՝ ավելի քան 3 տարի:

ՊԿ-ի առաջին համաժողովը տեղի ունեցավ 1985 թվականի նոյեմբերի 30-ին Անկարայում: Մասնակցում էին 215 պատվիրակ և ավելի քան 7 հազար հյուր: Նրանց մեջ էին «Հայրենիք» կուսակցության ղեկավար գործիչներ աջ ազգայնական-դեմոկրատական կուսակցությունից, հանրապետության դատախազ Չիլինգիրողլուն: Համաժողովը ընդունեց կարևոր որոշումներ: Փոխվեց կուսակցության անվանումը. այսուհետ այն կոչվելու էր «Ազգայնական աշխատանքային կուսակցություն»: Հաստատվեց նոր խորհրդանիշը, ընտրվեց կենտրոնական ղեկավար կոմիտեի նոր ընդլայնված կազմը: Բոլոր այս որոշումներն ունեին մեկ ընդհանուր միտում. որոշակի նպատակ էին հետապնդում՝ ցույց տալ ԱՇԿ և ՊԿ կուսակցությունների ընդհանրությունը:

Համաժողովի գլխավոր խնդիրներից մեկն էլ գլխավոր ընդհանուր ղեկավար ընտրելն էր: Առաջարկվում էին մի քանի թեկնածություններ: Նրանց մեջ, բացի այն ժամանակվա գլխավոր ղեկավար Ալի Քոչից, կային նաև վալի Աքքայան ու այլք:

Սակայն շատերի համար անսպասելիորեն համաժողովին դրվեց միայն Ալի Քոչի թեկնածությունը, որն էլ ընտրվեց: Կրկին դեր խաղաց նրա անձնական մտերմությունը Ա. Թյուրքեշի հետ: Դա ևս Ազգայնական աշխատանքային կուսակցության հետագա «թյուրքեշացման» մի ապացույց էր:

Համաժողովում նրա ելույթը պանթուրքական դեմագոգիայի բնորոշ օրինակ էր, որն օգտագործվում էր դեռևս Ա. Թյուրքեշի կողմից: Ալի Քոչն ասաց. «Մեր կուսակցության նպատակը մեծ է և սուրբ, մեր միակ խնդիրը թուրք ազգի բոլոր անդամների համախմբվելն է համընդհանուր հպարտության զգացումի, ճակատագրի շուրջ, ազգային զգացմունքը ազգային գաղափարների հիմքի վրա հանրագումարի բերելն է, թուրքական ազգը որպես ժողովուրդների համաշխարհային ընտանիքի արժանավայել անդամ պատրաստելն է....» և այլն: Իր ելույթում նա դեմ արտահայտվեց «ձախ գաղափարախոսությանը»՝ մեղադրելով նրան «շահախնդիր և բացասական լինելու մեջ», բոլոր աջ ուժերին միասնության կոչ արեց՝ հայտարարելով, որ չկա ոչինչ ավելի ուժեղ այն մարդկանցից, «որոնց սրտերը բաբախում են նույն սուրբ իդեալի համար»:

Ներկա լրագրողների տեղեկությունների համաձայն՝ համաժողովի մասնակիցները բղավում էին տարաբնույթ կոչեր՝ արգելված ԱՇԿ-ի ոճով, իսկ դահլիճում կախված էին նույն ոգով ու բովանդակությամբ կարգախոսներ: Դրանք արժեքավոր նյութ են տալիս ինչպես համաժողովի գաղափարական ուղղվածության, այնպես էլ Ազգայնական աշխատանքային կուսակցության գործունեության ընդհանուր բնույթի մասին: Կարելի է առանձնացնել կոչերի հիմնական խմբերը.

ա.-պանթուրքական-նեոֆաշիստական՝ «Ազատենք պատանդ թուրքերին», «Անիծված լինեն բուլղարները», «Բաշբուղ Թյուրքեշ», «Բաշբուղը կգա, դեմքը կլուսավորվի», «Բոզքուրթներն են գալիս», «Ազգային պետություն, ուժեղ իշխանություն»:

բ.-իսլամական-«Օ՜, Մե՛ծն Ալլահ», «Ամենաթող և ամենագթասիրտ Ալլահի համար», «Առանց ազանի արևը չի ծագի», «Եթե հեղվի մեր արյունը, իսլամը կհաղթի»:

գ.-հակախորհրդային-հակակոմունիստական և հակաիմպերիալիստական - «Կոմունիստներին՝ Մոսկվա՛», «Կորչեն կոմունիստները և իմպերիալիստները»:

Այսպիսով՝ նշյալ կոչերի բովանդակային վերլուծությունը հնարավորություն է տալիս ենթադրելու, որ համաժողովի ժամանակ Ազգայնական աշխատանքային կուսակցությունը բաց հայտարարեց ինչպես իր կուսակցության՝ ԱՇԿ-ի հետնորդ լինելը, այնպես էլ Ալի Քոչի՝ Ա. Թյուրքեշի հետնորդ, գաղափարաքաղաքական ժառանգորդ լինելը: Պատահական չէ, որ համաժողովի մասնակիցները վանկարկում էին՝ «Բաշբուղ Ալի»:

Այս համաժողովից հետո ԱԱԿ-ն կտրուկ ակտիվացրեց իր գործունեությունը և փաստորեն բացահայտ հայտարարեց իր՝ ԱՇԿ-ի հետնորդ լինելը: Սրանում, անշուշտ, զգալի դեր խաղաց այն հանգամանքը, որ 1985 թվականի ապրիլին Ա. Թյուրքեշը գրավի դիմաց ազատվեց բանտից և ուղղակիորեն զբաղվեց իր կուսակցության գործերով:

ԱԱԿ-ի ակտիվացման մեջ զգալի դեր խաղաց Թուրքիայի քաղաքական միջավայրը: 1983 թվականի նոյեմբերին իշխանության եկած «Հայրենիք» կուսակցության ղեկավարությունը Թ. Օզալի գլխավորությամբ նոր քաղաքական ուղղություն վերցրեց. օտարերկրյա կապիտալի լայն ընդգրկում, պետական մասնաբաժնի ծավալում, տեղական խոշոր կապիտալի խրախուսում: Սակայն չհաջողվեց երկրի տնտեսության մեջ հասնել կայունացման: Արդյունքում շարունակեց աճել արժեզրկումը, մեծացավ գործազուրկների թիվը, նվազեցին հասարակության լայն զանգվածների իրական եկամուտները, ավելացավ սոցիալական լարվածությունը: Թուրգութ Օզալի քաղաքական կաբինետից դժգոհ էր երկրի բնակչության մեծամասնությունը, այդ թվում՝ ազգային փոքր և միջին բուրժուազիան, որն ավելի շատ էր տուժում արտերկրյա և տեղական մենատիրական կապիտալից: Այս ամենը բարենպաստ միջավայր էր ստեղծում այն կուսակցությունների համար, որոնք օգտագործում էին աջ ազգայնական, իսլամիստական կարգախոսներ և փորձում էին վերածնել ԱՇԿ-ի ֆաշիստական ծայրահեղականությունը: Ստեղծված իրավիճակից էլ փորձեց օգտվել ԱԱԿ-ն՝ իր հովանավորությունն ստանալով այն շրջանակներից, որոնք ժամանակին ԱՇԿ-ին էին սատարում:

3. Պահպանողական կուսակցության հիմնական գաղափարական հիմնադրույթները

ՊԿ-ի գաղափարական հիմնադրույթների առանձնահատկությունների որոշման համար նրա կազմավորման առաջին փուլում կարևոր նշանակություն ուներ նրա ղեկավար Մ. Փամաքի ծրագրային ելույթը, որով նա հանդես եկավ կուսակցության հիմնադրման օրը: Այդ հայտարարությամբ նա դիմեց այն թուրքերին, որոնք «հայրենասեր են, ազգայնական ու հավատացյալ մարդ»: Դրանով էլ ՊԿ-ն հենց սկզբից հասկացրեց, որ իր գործունեության մեջ հենվելու է ազգայնականության և կրոնի վրա: Դեռ ավելին, ազգայնականությունը գերադասվում էր իսլամից: Այս մասին են վկայում կուսակցությանը հավատարմության մասին հայտարարությունների մեջ առկա արտահայտություններ. հավատարմություն՝ «բանակին, ազգին, պետությանը, գերբին», «անկախության քայլերգին» (այսինքն՝ երկրի հիմնին) ու նաև ազգային ու հոգևոր արժեքներին, «որոնք ազգին ազգ են դարձնում»: Սրանք են հենց բնորոշում թուրք ազգայնականներին: Մ. Փամաքը վերջում նշեց, որ ՊԿ-ի համար ավելի կարևոր խնդիր չկա, քան «ապահովել մեծն թուրքական ազգի միությունն ու միասնությունը ու նաև վերջին անկախ թուրքական պետության գոյության հավերժությունը»: Ուշադրություն է գրավում Մ. Փամաքի՝ Թուրքիայի Հանրապետությանը տրված բնորոշումը. «Վերջին անկախ թուրքական պետություն»: Օգտագործելով իր մեջ յուրահատուկ իմաստ կրող այս արտահայտությունը՝ հեղինակն ակնարկում է նոր ստեղծված կուսակցության և ԱՇԿ-ի միջև առկա ազգակցական կապի մասին: Հենց սրանով բավականին զգույշ նշվում էր ՊԿ-ի ստեղծման իրական նպատակը: Ծրագրում ներառվում էին նաև այլ բնորոշումներ, որոնք ակնարկում էին ՊԿ-ի պանթուրքիստական բնույթը: Այսպես, նրանում նշվում էր, որ թուրքերենը, լինելով Թուրքիայի պաշտոնական լեզուն, միաժամանակ «թուրքական աշխարհի հարազատ լեզուն է»:

Փամաքի մյուս հայտարարություններում և ՊԿ-ի մյուս ղեկավարների ելույթներում սահմանվում էին կուսակցության սկզբունքային մոտեցումները առանձին հարցերի վերաբերյալ: Այսպես, կարևոր նշանակություն ունեին Ա. Օզսոյի բացատրությունները կրոնի և խղճի ազատության հարցի վերաբերյալ ՊԿ-ի մոտեցման մասին: Նշելով, որ կուսակցությունը բոլորովին էլ լայիցիզմ չի քարոզում, ինչպես հակակրոնական շարժում, նա շեշտել է, որ ՊԿ-ն մեծ նշանակություն

է տալիս «հոգևոր զարգացմանը», այսինքն՝ իսլամական արժեքներին: Հենց դրանով էլ քողարկված ձևով հաստատվեց, որ ՊԿ-ի գլխավոր գաղափարախոսությունը եղել է ազգայնականությունը, որը նրա ղեկավարների կողմից բնորոշվում էր իբրև «դեմոկրատական ազգայնականություն»:

ՊԿ-ն մեծ նշանակություն էր տալիս լեզվի խնդրին: Պատահական չէր, որ նրան էր նվիրված կուսակցության ծրագրի հատուկ բաժին՝ վերնագրված «Թուրքերեն»: Փամաքը, ծանոթացնելով լրագրողներին այդ մասին, շեշտել է, որ «լեզուն ազգի հասարակական կառուցվածքի հիմնաքարն է»: Նա նաև ասել է, որ լեզուն հենց ազգի էության արտահայտությունն է, տվյալ հասարակության միավորումը ապահովող գործոնը:

«Թուրքերենը, բացի նրանից, որ Թուրքիայի Հանրապետության պաշտոնական լեզուն է, հարազատ լեզու է նաև բոլոր թուրք քաղաքացիների համար»: Հենց դրանով ՊԿ-ն հիմնավորեց թուրքերենի և թուրք ազգայնականության միջև առկա խնդիրների նեղ փոխկապակցվածությունը՝ հրաժարվելով ճանաչել ազգային փոքրամասնությունների իրավունքները: Ծրագրում դրանից հետո խոսվում էր այն մասին, որ անհրաժեշտ է թուրքերենի պարզեցման խնդրի նկատմամբ խիստ գիտական մոտեցում ցուցաբերել, հակառակ դեպքում խնդիրների ոչ մտածված լուծումները և ծայրահեղությունները կարող են հանգեցնել լեզվի աղավաղումների և նույնիսկ տարբեր սերունդների միջև անհասկացողության:

Փամաքը լեզվի խնդրին նվիրված ելույթներից մեկում ամբողջությամբ մեղադրում էր թուրքական լեզվաբանական միությանը այն բանում, որ «նա օժանդակել է թուրքերենի խեղմանը և գրկաբաց ընդունել անարխիան ու անարխիստներին»: «Արդյունքում,- շարունակում է նա,- թուրքերենը գտնվում է «խորը ճգնաժամի մեջ». նույնիսկ մտավորականությունը լիարժեք չի տիրապետում, գործածում է ոչ ճիշտ բառեր, իսկ երիտասարդ սերնդի շատ ներկայացուցիչներ ընդհանրապես չեն հասկանում հարյուրավոր բառեր, որոնք թուրքերենի բառապաշարի հիմքն են կազմում, չգիտեն շատ նորաբանություններ: Հիմնվելով այն թեզի վրա, որ «առանց բառի հնարավոր չէ մտածել»՝ նա անսպասելի կերպով հետևություն է անում, որ «բառեր չիմանալու պատճառով մեր մտավորականությունը զրկված է մտավոր կարողություններից»: ՊԿ-ի մոտեցումը լեզվի խնդրին պայմանավորված էր նաև քաղաքական նկատառումներով:

Հիմնականում հենվելով ազգային ու կրոնական զգացմունքների

վրա՝ ՊԿ-ի հասարակական ելույթներում քիչ տեղ էր հատկացվում սոցիալ-տնտեսական հարցերին: Չնայած դրան՝ այդ հարցերը լայնորեն լուսաբանվել են. կուսակցության ծրագրում կար «Զարգացում» բաժինը և հոդվածներ ներդրումների, մասնավոր ձեռնարկատիրության, օրինական եկամուտների, արհեստավորների մասին: Հետաքրքրություն են առաջացնում ՊԿ-ի սոցիալ-տնտեսական հետևյալ ծրագրային դրույթները.

1.ՊԿ-ն հանդես եկավ «աշխատավոր աշխարհի» անվտանգության ապահովման, կառավարության, աշխատողների և գործատուների միջև համագործակցություն ապահովելու օգտին:

2.ՊԿ-ն առաջարկում էր միջոցներ ձեռք առնել, որպեսզի այդ գործընթացում ներգրավվեն անհատական ներդրումները, երկրի աշխատավորների լայն խավերի խնայողությունները:

3. ՊԿ-ն, համաձայնվելով սոցիալական իրավունքների ընդլայնման անհրաժեշտության հետ, միաժամանակ շեշտում էր, որ դրանով հանդերձ պետք է հաշվի առնի «տնտեսության ընդհանուր հնարավորությունները»:

Այսպիսով՝ կարելի է եզրակացնել, որ ՊԿ-ն ձգտում էր ձեռք բերել միջին խավերի ու աշխատավոր զանգվածի աջակցությունը՝ տալով նրանց որոշակի խոստումներ:

Միաժամանակ բացառվում էին դասակարգային հակասությունները թուրք հասարակության մեջ, թուրք ազգի «միասնականությունը և միությունը» հիմնավորվում էր արտաքին սպառնալիքի հակազդեցության անհրաժեշտությամբ: ՊԿ-ի քարոզչական գործունեության մեջ մեծ տեղ ուներ քաղաքական դեմագոգիան: Կուսակցության ղեկավար Մ. Փամաքը հաճախ էր խաղում այնպիսի արտահայտությունների հետ, ինչպիսիք են՝ «անհատի ազատություն», «ազգի անկախություն», «միություն և եղբայրություն» և այլն: ՊԿ-ի ղեկավարները իրենց ելույթներում շեշտում էին, որ անհրաժեշտ է երեխաներին կրթել ազգային մշակույթի և բարոյական ավանդական արժեքների, այդ թվում և իսլամի ոգով: Փամաքը հատուկ ուշադրություն էր դարձնում Արևմտյան Եվրոպայում ապրող թուրք աշխատավորների երեխաների մոտ ազգային ոգու կորստի խնդրին, որին առաջարկվեց նվիրել Խորհրդատվական ժողովի հատուկ նիստը:

Յըլանլըօղլուի՝ գլխավոր ղեկավար ընտրվելուց հետո սկսվեց մի շրջան, երբ աստիճանաբար սկսեց փոխվել կուսակցության ավելի չափավոր պահպանողական բնույթը ԱՇԿ-ի գաղափարական զինանոցից վերցված ավելի ծայրահեղական դրույթներով: Որպես առաջին

քայլ՝ Յըլանլըօղլուն դիմեց կուսակցության անդամներին հատուկ ուղերձով, որում, հետևելով ԱՇԿ-ի սովորույթներին, պահանջեց ըստ ամենայնի ամրապնդել ներկուսակցական կարգուկանոնը, խստորեն հետևել կուսակցության ծրագրին և նրա կանոնադրությանը: Այդ փաստաթղթում, խստորեն հետևելով ԱՇԿ-ի հիմադրույթներին, սակայն օգտագործելով ավելի ծայրահեղ ձևակերպումներ, կուսակցության անդամներից պահանջվում էր ուշադիր հետևել և հակահարված տալ «պարտվողական և անջատողական էլեմենտներին», որոնք իրենցից մեծ վտանգ էին ներկայացնում «երկրի և ազգի ամբողջության, պետության գոյության համար»:

Այդ փաստաթղթում ՊԿ-ի գաղափարական 2 կարևոր հիմադրույթներն են ազգայնականությունը և պահպանողականությունը: Սակայն արդեն հաջորդ՝ ներկուսակցական կյանքին վերաբերող կարևոր փաստաթղթում ուղղակիորեն նշվում էր, որ այն ազգային գաղափարին հավատարիմ միլիոնավոր «գաղափարապաշտների կուսակցությունն է»:

ՊԿ-ի գաղափարական վերափոխման գործընթացը շարունակվեց Ալի Քոչի ժամանակ: 1985 թվականի սկզբին նա դիմեց կուսակիցներին հատուկ հայտարարությամբ, որում «Գորշ գայլերին» հարիր սովորույթով շեշտվում էր . «Ուժը, որի կարիքը մենք ունենք, մեր արյան մեջ է»:

ՊԿ-ի վերոնշյալ հիմադրույթները նրա գործունեության սկզբնական շրջանում գտնվում էին ընդհանուր առմամբ թուրքական քաղաքական պահպանողականության շրջանակներում: Քաղաքական այդ հոսանքը տվյալ ժամանակաշրջանում բավականին թույլ էր արտահայտված երկրի ինչպես քաղաքական, այնպես էլ մտավորականության կյանքում: Առաջին կուսակցությունը, որի ծրագրում պարունակվում էին որոշակի, իրենց բնույթով պահպանողական դրույթներ, Առաջադիմական հանրապետական կուսակցությունն էր, որը գործում էր 1920-ական թվականների երկրորդ կեսին և ներկայացնում էր քեմալականների աջ թևը: Հետագայում առանձին պահպանողական դրույթներ իրենց քաղաքական ծրագրերում ներառեցին Դեմոկրատական կուսակցությունը, որը Թուրքիայում իշխում էր 1950-ական թվականներին, և «Արդարություն» կուսակցությունը, որը նշանակալից դեր խաղաց երկրի քաղաքական կյանքում անցյալ դարի 60-70-ական թվականներին: Պահպանողականությունը իրենից ներկայացնում էր մի բարդ խառնուրդ՝ բողոքական քեմալիզմից վերցված դրույթներով ու ավելի տոլերանտ հարաբերություններով քաղաքական իսլամի նկատմամբ: ՊԿ-ի փոր-

ձը առաջ բերեց թուրքական պահպանողականության դրսևորման այլ ձևեր՝ աջ ծայրահեղական ազգայնականության տեսքով:

Այս ամենը վկայում է թուրք պահպանողականության ծայրահեղ թույլ և տհաս լինելու մասին: Սրա պատճառը թաքնված է ինչպես թուրքական հասարակական-քաղաքական մտքի առանձնահատկությունների մեջ, որոնք բնորոշում են ծայրահեղական քաղաքական վառ արտահայտված կառուցվածքով, այնպես էլ նրանով, որ հենց իրենք՝ թուրք պահպանողականները, ինչպես արդարացիորեն նշում է հայտնի թուրք քաղաքագետ պրոֆ. Ս. Օզանը, չէին ուսումնասիրել դասական անգլոսաքսոնական պահպանողականությունն ու լիբերալիզմը: Ահա այդ պայմաններում հնարավոր դարձավ պահպանողականության ու «Գորշ գայլերի» սերտաճումը:

ՊԿ-ի առաջին և միաժամանակ վերջին համաժողովը քաղաքական դաշտ բերեց մի կուսակցություն, որը ԱՇԿ-ի գաղափարական ժառանգորդն էր և ներկայացնում էր իրենից նույն գաղափարաքաղաքական հոսանքը: Վերջացավ անցումային շրջանը, նրա հետ՝ ավելի «քաղաքակիրթ» շրջանը: «Գորշ գայլերը», նետելով իրենց վրայից «զառան մորթիները», իշխանության վրա հարձակման անցան:

Նոր զարգացումներ

Բաշբուղ Թյուրքեշը մահանում է 1997 թվի ապրիլի 7-ին: Մահացած Ալփարսլան Թյուրքեշի թաղմանը մասնակցել է 300 հազար մարդ: Ցավակցություններ հայտնեցին ողջ թուրքական աշխարհից: «Turkiye» թերթում հայտնվում են ամբողջական էջերով ցավակցական ծանուցումներ Եվրոպայի թուրքական կազմակերպությունների կողմից: TRT int. թուրքական պետական հեռուստակայանը ուղիղ եթերով հեռարձակում է հուղարկավորության արարողությունը: Թանսու Չիլլերը «Արդար ուղի» (Adalet Yolu) կուսակցության կողմից հրապարակավ ցավակցություն է հայտնում: Նույնն է անում «Մայր հայրենիք» (ANAV) կուսակցության կողմից Մեսութ Յըլմազը (կարծիք կա, որ Թուրքիայի նախկին վարչապետ Մեսութ Յըլմազը համշենահայ է եղել): Սա արդեն ակնհայտորեն պետական կարգի հուղարկավորություն էր: Ո՞վ պետք է գրավեր Բաշբուղի տեղը:

1997 թվի մայիսի 18-ին Անկարայում տեղի է ունենում MHP-ի համագումարը: Կուսակցության նոր նախագահի թեկնածուներն են Թյուրքեշի տղա Թուղրուլ Թյուրքեշը, Դևլեթ Բահչելին, Էնիս Օքսուզը, Ռամիզ Օնգյունը, Մուհարրեմ Շեմսեքը և Իբրահիմ Չիֆթչին: Այս վերջին 3-ը հանում են իրենց թեկնածությունը հօգուտ Բահչելիի: Թուղրուլի հետևորդները այլևս չեն կարողանում զսպել իրենց: Սկսվում է ծեծ ու ջարդ, կրակում են օդում: Իրավիճակը հանդարտեցնելու համար Անկարա է գալիս Գերմանիայի թուրքական ֆեդերացիայի նոր նախագահ Մեհմեթ Էրդողանը: Հուլիսի 6-ին համագումարի ժամանակ մասնակիցներն իրենց արդեն հանգիստ են պահում: Նույնիսկ Թուղրուլ Թյուրքեշը շնորհավորում է Բահչելիին: Թուղրուլ Թյուրքեշը համագումարին հաջորդած մամուլի ասուլիսում ասել է. «Քաղաքականությունը մի երկար ճանապարհ է, չպետք է շուտ մի կողմ քաշվել»: Նա կսպասի մինչև կայանալիք հաջորդ ընտրությունները, որ տեղի կունենան հաջորդ համագումարում՝ հոկտեմբերին, երբ իրեն կրկին թեկնածու կհայտարարի[22]:

[22] Տե՛ս Ստելլա Բրամ, Մեհմեդ Ուլգեր, Գորշ գայլեր, էջ 182:

Կուսակցության նոր նախագահ Բահչելին ծնվել է 1948 թվականին Օսմանիա նահանգում և պատանի հասակից հարել է «ՈՒլքյուջու» գաղափարներին (ասեկոսեներ կային, որ MHP նախագահ Դևլեթ Բահչելին էլ հայ է, բայց վերջինս դրանց առաջն առնելու համար պատվիրել էր տեղեկություն գրել իր տոհմի մասին և ապացուցել էր իր թուրքմեն լինելը):

1967 թվականին նա է հիմնադրել MHP-ի երիտասարդական բաժինը՝ «ՈՒլքյու Օջաքլարը»-ն, որ նշանակում է գաղափարապաշտական օջախներ: Ավելի ուշ սկսել է դասավանդել հասարակական գիտություններ Ղազիի համալսարանում: 1987 թվականին թողել է համալսարանի իր պաշտոնը՝ իրեն լիովին նվիրելով կուսակցության գործին[23]:

«Գորշ գայլերն» էին իրականացրել 1981 թվի մայիսին Հռոմի Պապ Պողոս Երկրորդի դեմ կատարված մահափորձը, որի իրականացնող Մեհմեթ Ալի Աքչան ծանր վիրավորել էր Պողոս Երկրորդին, ապա ձերբակալվել, բանտարկվել, ներում հայցել Հռոմի Պապից, որն էլ տեսակցել էր նրան: Չնայած դրան՝ 1997 թվի հունիսի 9-ին «Գորշ գայլերի» երկու համակիրներ գրավել էին մալթայական պետական ավիաուղուն պատկանող «Բոինգ-737»-ը՝ իր 80 ուղևորներով ու պահանջել էին ազատել Աքչային: Այժմ Ալի Աքչան ազատ է արձակված:

«Գորշ գայլերը» զբաղվում են թմրանյութերի առևտրով, մարդկանց առևանգումով, բանտերից փախցնելով: Թուրքիայի MHP-ն ողջ Եվրոպայի «Գորշ գայլերի» մայր կուսակցությունն է: Իրենց մաֆիոզ ղեկավարներին անվանում են «Բաբաներ»: Փորձում են մտնել տեղական պետական մարմինների մեջ, այդ թվում նաև ոստիկանություն՝ իրենց մարդկանց օգնելու, հասարակական դիրք գրավելու համար, քանի որ համազգեստ՝ նշանակում է նախևառաջ հասարակական ստատուս:

«Գորշ գայլերի» անցկացրած խաղաղ միջոցառումների ժամանակ նրանց միջից առանձնացվում են կարգապահներ (գյորելի) և հրաման

[23] Տե՛ս Ստելլա Բրամ, Մեհմեդ Ուլգեր, Գորշ գայլեր, էջ 183:

տվողներ (բաշկան), որոնց հրամանները կատարում են գյորելիները:

Ինչպես հենց իրենք՝ «Գորշ գայլերն» են վկայում, իրենք բարգավաճում են շնորհիվ որևէ թշնամու գոյության: Մինչև 80-ականների կեսերը MHP-ի պայքարը կոմունիստների դեմ էր: Ըստ նրանցից մեկի՝ միակ բանը, որ իրենք անում էին, ձախերին հարվածելն էր: 1980 թվի պետական հեղաշրջումից հետո ձախերի համար լավ ժամանակներն անցել էին: Նրանց տեղը, սակայն, բռնեց PKK-ն (Partiye Kargerane Kurdistan) և նրա առաջնորդ Օջալանը, որին թուրքերն անվանում էին Ապո: Առանց նրա «Գորշ գայլերի» շարժումը երբեք ի վիճակի չէր լինի 80-ականներին այդպիսի մի զորեղ վերադարձ արձանագրել: Կառավարությունը պաշտպանում էր «Գորշ գայլերին» և է՛: Պատահական չէր, որ «Ozel Timler»-ը, որը թարգմանաբար նշանակում է «Հատուկ ջոկատներ», մեծամասամբ կազմված էր գորշգայլականներից: Եվ նրանց տխրահռչակ գոյությունը բանակում համարվում էր «բնական»:

Բացի սա, Եվրոպայի թուրքերը տարեկան շուրջ 5 միլիարդ եվրո են փոխադրում Թուրքիա: Իհարկե, դրամը միակ պատճառը չէ Թուրքիայի շահագրգռվածության համար: Այն ժամանակ, երբ դեռ Թանսու Չիլլերն էր Թուրքիայի նախագահը, շեշտում էր, որ իր երկրի հպատակները Եվրոպայում պետք է ի շահ Թուրքիայի լոբբիստական աշխատանք տանեն:

Հավաքներից մեկի ժամանակ գոչում են. «Թուրքիան այստեղ է, ու՞ր է PKK-ն», «Չեչնիան ռուսների գերեզմանն է լինելու», «Թուրքիան Ապոյի գերեզմանն է լինելու»: Սակայն MHP-ի ներսում էլ ամեն ինչ կարգին չէ. նրանք լուրջ խնդիրներ ունեն թմրամոլության հետ կապված: Բացի այդ, բոլորը չէ, որ գոհ են եղել Բաշբուղ Թյուրքեշից. ոմանց կարծիքով նա չափազանց փափուկ էր և արդեն զառամյալ:

1987-ի սեպտեմբերի 6-ին կուսակցության քաղաքական արգելափակման որոշումից անմիջապես հետո՝ 1987-ի հոկտեմբերի 4-ին, Ազգայնական աշխատանքային կուսակցությունը (Milliyetci Calisma Partisi) իր արտակարգ համագումարում Թյուրքեշին ընտրեց կուսակցության համանախագահ:

1993-ի հունվարի 24-ին իր 4-րդ համագումարում ԱԳԿ-ն դառնում է ԱՇԿ. ԱՇԿ-ն վերածնվում է:

ԱՇԿ-ի դրոշակը բացահայտում է կուսակցության նպատակներից մեկը՝ հին թուրքական կայսրության վերականգնումը՝ Թուրանը:

«Ազգայանական շարժում» կուսակցության կենտրոնը Անկարան է:

Կուսակցության կորիզը բաղկացած է՝

1.«Ազգայնական շարժում» կուսակցության համանախագահություն
2.«Ազգայնական շարժում» կուսակցության ղեկավարության գերագույն խորհուրդ
3.ԱՇԿ կենտրոնական վարչության խորհուրդ
4.ԱՇԿ կենտրոնական կարգապահական խորհուրդ
5.ԱՇԿ երեսփոխաններ
6.ԱՇԿ կանանց թև
7.ԱՇԿ նահանգապետեր
8.ԱՇԿ քաղաքապետեր

ԱՇԿ պաշտոնաթերթերից է «Ortadogu»-ն՝ հիմված Զեքի Սարարօղլուի կողմից 1972 թվին: «Ortadogu»-ի զանազան նյութերի մեջ հաճախ հանդիպում ենք Հայաստանի և հայ ժողովրդի մասին նյութերի, ուր հոդվածագիրները, խեղաթյուրելով պատմությունը, վարկաբեկում են հայ ժողովրդին առնչվող ամեն ինչ: Այստեղ է գործում պոլսահայ պատմաբան-հրապարակագիր Լևոն-Փանոս Դաբաղյանը (ծնված 1933թ.), որն ընդգծված «գորշ գայլ» է: Դաբաղյանը Ա. Թյուրքեշի ցանկությամբ տարիներ շարունակ հոդվածներ է գրել «Ortadogu»-ի համար:

ԱՇԿ-ն կրոնի հարցում ազատություն է քարոզում. «Յուրաքանչյուր ոք ազատ է հետևելու կամ չհետևելու կրոնին»: Այս ազգայնականները չեն ընդունում «խստաբարո» իսլամը:

«Ուլքուջուների» (գաղափարապաշտների) շարժումը հիմավորված է «ազգի միասնականությունը և հայրենիքի ամբողջականությունը» պահպանելու համար մղված պայքարով: «Պետք է պայքարել նրանց դեմ, ովքեր կասկածվում են այդ շարժմանը չմասնակցելու և այդ գործին խանգարելու մեջ»:

«Էնվերի կողմից 1-ին համաշխարհային պատերազմի նախօրյակին ստեղծված կազմակերպությունը ևս կոչվում էր «Գորշ գայլեր»: Այժմ «Գորշ գայլեր» են կոչվում ԱՇԿ բոլոր անդամները»[24]:

Թրքալեզու հանրապետությունների (Ադրբեջան, Թուրքմենստան, Ղազախստան) պետական կառույցների պատերի վրա կարելի է տեսնել «Գորշ գայլի» նշանը:

[24] Տե՛ս Աւօ Գաթրճեան, Համաթրքության և համաթուրանականության թունդ ժառանգորդ՝ «Ազգային շարժում» կուսակցությունը (ԱՇԿ/MHP): Համացանց:

«Գորշ գայլերի» տեսակետը արաբների նկատմամբ մի քիչ կարծր է, նրանցից ոմանք նույնիսկ չեն ընդունում արաբերենը՝ որպես Ղուրանի լեզու:

1980-ական թվականներին «Ուլքուջուները» երկարացնում էին իրենց բեղը մինչև կզակ (առանց մորուքի), որպեսզի տարբերվեն ուրիշներից: Բեղերի այդ ձևը հատուկ էր միայն «գորշ գայլերին», որով էլ կարծես ուզում էին ցույց տալ, որ կառչած են մնում իրենց նախահայրերին: Հետագայում, սակայն, որոշ «Ուլքուջուներ» սկսեցին կարճացնել այն:

«Ուլքուջուներն» ունեն հատուկ դասագիրք՝ «Ուլքուջույե նոթլար» «Ցուցումներ գաղափարապաշտի համար», որի հեղինակը նույնպես Բաշբուղն էր՝ Ա. Թյուրքեշը, որը նրանց սովորեցնում է ազգապաշտություն ու թրքապաշտություն: «Գորշ գայլերի» երիտասարդական բաժինը կոչվում է «Ուլքու օջաքլարը», որը և՛ Թուրքիայում, և՛ արտերկրում կենտրոնատեղիներ ունի, որոնք մշակույթի ակումբների, սպորտային միությունների անվան տակ քողարկված գայլերի որջեր են: Ստորև բերվում է այդ ակումբներից մի քանիսի անունը.

- «Ուլքու օջաքների կենտրոնատեղի»
- «Ալփարսլան Թյուրքեշ Ուլքու օջաք»
- «Հաջի Մուստաֆա փաշա Ուլքու օջաքլարը»

Այս կենտրոններում խրախուսում են թուրք երիտասարդներին, որ տոնեն մայիսի 3-ը՝ պանթուրքականների տոնը:

«Գորշ գայլերը» պայքարում են հայերի, ալևիների, քրդերի, հրեաների դեմ: Թուրքիայում 1970-80 թթ. հատկանշվում են «Գորշ գայլերի» հակահայ արշավով:

Կիսառազմականացված այս կառույցը այդ շրջանում բուռն գործունեություն ծավալեց թուրք, քուրդ այլախոհ տարրերի դեմ, Թուրքիայի հայերի և սփյուռքահայության, մասնավորապես ԱՍԱԼԱ-ի դեմ՝ 1975-85 թթ.: «Գորշ գայլերի» կիրառած թրքացման քաղաքականության սպառնալիքի տակ Թուրքիայի հայությունը ստիպված իրեն ներկայացնում էր իբրև «քրիստոնյա թուրք»՝ հայ ծագումն ու պատկանելությունը դիտելով որպես քաղաքական հանցանք: Թերևս թուրքական պատկանելություն՝ ԹԻՍ (թուրք, իսլամ, սուննի) բանաձևի հորինումն ու տարածումը կարելի է այս շրջանի արդյունք համարել:

Հակահայ գործողություններ կատարող «գորշ գայլերը», (օրինակ՝ Չելիքը), հպարտությամբ ասում էին. «Մենք պետական պարտականություն էինք կատարում»:

«Գորշ գայլերը» 1980 թվականից առաջ պայքարում էին ձախ շարժումների դեմ: Նրանց արմատները գալիս են դեռ 1950-ական թթ. «Համայնավարության դեմ պայքարի միություն»-ից, որը մասնաճյուղեր ուներ ողջ Թուրքիայում: Այն հովանավորվում էր Ա. Թյուրքեշի կողմից:

«Գորշ գայլերի» առաջին կազմակերպությունը Հոլանդիայում կոչվում էր «Ուլքուջու թյուրք իշչիլեր դերնեղի» («Թուրքական գաղափարապաշտ աշխատավորական ընդհանուր միություն»), նրան հաջորդեց Հոլանդիայի թուրքական միությունների ֆեդերացիան: Այն հիմնադրվել է 1982 թվի սեպտեմբերի 22-ին:

Եվրոպայի թուրքական ֆեդերացիան այն օղակն է, որ իրար է կապում Եվրոպայի տարբեր երկրների (Գերմանիա, Ավստրիա, Շվեդիա, Բելգիա, Անգլիա, Շվեյցարիա, Դանիա, Հոլանդիա և Ֆրանսիա) թուրքական ֆեդերացիաները: Եվրոպայից դուրս կան ֆեդերացիայի անդամ կազմակերպություններ Կանադայում, ԱՄՆ-ում, արաբական երկրներում, Եգիպտոսում և Ավստրալիայում: Այս բոլոր կազմակերպությունների «մայր կազմակերպությունը»՝ Եվրոպայի ժողովրդավար-գաղափարապաշտ միությունների դաշնակցությունը, գոյություն ունի դեռևս 1970-ական թվականների վերջերից:

Կանայք ունեն իրենց առանձին միությունը՝ քողարկված տարբեր անունների տակ:

Եվրոպայում թուրքերը ջանում են ստանալ «Եվրոպայի թուրք» կոչումը, որպեսզի տարբերվեն «փոքրամասնություն» կարգավիճակից: Կան խմբեր, որոնք նախընտրում են իրենց կոչել «Եվրոպայի իսլամիստներ»: Դրան դեմ են ԱՇԿ-ի «գորշ գայլերը», քանի որ գտնում են, թե իրենք նախ և առաջ թուրք են և նոր միայն ուրիշ բան: Այս հարցը առավել ամրապնդելու համար թուրքական հեռուստատեսության մի շարք կայաններ, օրինակ՝ TRGT, D, «Star» և այլն, տարիների ընթացքում հանդես են եկել հատուկ հայտագրերով, ինչպես «Avrupa Turkler»-ը (Եվրոպայի թուրքերը) և այլն:

1990-թվականից ի վեր, ամեն տարվա օգոստոս ամսվա առաջին շաբաթվա ընթացքում տեղի է ունենում ԱՇԿ վեհաժողովը՝ «Էրչիսեյ հաղթանակի վեհաժողով» անվամբ, որը տեղի է ունենում Կեսարիայի շրջանի Էրչիսեյ լեռան հովտում: Այնտեղ են հավաքվում տասնյակ «Ուլքուջուներ»՝ ԱՇԿ անդամներ աշխարհի 4 կողմերից, առավելապես Եվրոպայից:

Ատենախոսներից մեկն ասում է. «Էրչիսեյ լեռը իր վեհությամբ չի զիջում թուրք ազգին, բայց մենք եկել, հասել ենք այստեղ՝ Թեքիրի բարձրավանդակ, որը ծովի մակերևույթից 2150 մետր բարձրության վրա է: Մեր նպատակն է նույն ձևով գրավել մնացած ամբողջ աշխարհը»:

Վեհաժողովը փառաբանական բնույթ ունի. ներկա են լինում երգիչներ, պարախմբեր, օսմանյան փողային նվագախումբը (Մեհթար քայլերգեր երգող-նվագող)՝ օսմանյան դրոշակներով և այլն:

Արտերկրից եկած «ուլքուջուները» անհամբեր սպասում են իրենց ղեկավարի ճառը լսելուն, նրանով ոգևորվելուն, լիցքավորվելուն և գալիք օրերի գործունեության ուղեցույցը ստանալուն:

1990-ական թվականներին ԱՇԿ-ի պայքարի հիմնական նպատակը Չեչնիայիում թուրքական հանրապետության ստեղծումն էր:

Սառը պատերազմի ջերմ գործարքները

Թյուրքեշը, 1920-ականների Թուրքիայի կառավարություն ձևավորած ազգայնական ուժերի հետ դաշնակցելով, հասնում է մինչև փոխվարչապետի պաշտոնի: Ներթափանցման այս աշխատանքը լծակների ապահովման կողքին նաև անփոխարինելի միջոց էր «Գորշ գայլերի» երիտասարդական կադրերի մարզման և զինման համար: Սակայն նույն տարիներին կերտվում էր հարաբերությունների այլ ոլորտ, որը պետք է կարևոր դերակատարություն ունենար «Գորշ գայլերի» գործելաոաշտի հստակեցման վրա:

ԱՄՆ-ի հետախուզական ու անվտանգության մարմինները 1950-ական թվականներին ՆԱՏՕ-ի և ԽՍՀՄ հարակից երկրների հետ սկսել էին կազմել, մարզել ու զինել ընդհատակյա գաղտնի կազմակերպություններ, որոնց նպատակն էր ներխուժման դեպքում պարտիզանական գործունեությամբ թիկունքից հարվածել խորհրդային ուժերին: Այս կազմակերպություններից ամենից հայտնին «Գլադիոն»[25] էր, որը բացահայտվել էր 1990-ական թվականներին: Սակայն այս ընդհատակյա ուժերը իրենց ստեղծման առաջին իսկ օրից օգտագործվում էին ներքին՝ տեղական նպատակներով: «Սուպեր-ՆԱՏՕ» նշվող այս ցանցի թուրքական թևը կազմված էր Թուրքիայի՝ ՆԱՏՕ-ին անդամակցելու համար: Կոչվում էր ՄԶԽ (Մարտավարական զորաշարժի խումբ-1952 թվական, Tactial Mobilization Group), նրա հրամանատարությունը տեղակայված էր «Սի-Այ-Էյ»-ի հանգույց-կենտրոնում: Ավելի ուշ ՄԶԽ-ն վերակազմվեց ու անվանվեց Պատերազմական հատուկ բաժանմունք. այն ուղղակի ենթակա էր թուրքական բանակի սպայակույտի պետին: Այս բաժանմունքի «հակահիրոսակային կազմակերպությունը» զբաղվում էր առևանգմամբ, ահաբեկչական տարբեր գործողություններով. այն իր հովանավորության տակ վերցրեց «գորշ գայլերին», զբաղվեց նրանց զինմամբ ու մարզմամբ:

Այսպիսով՝ մինչև 70-ականները Թուրքիայում նշմարվում էր ժողովրդավարական զարթոնքի մի նոր ձախամետ շարժում, իսկ «Գորշ գայլերը» թևակոխում էին գործունեության մի նոր շրջան, որի ընթացքում պետք է իրականացնեին մտավորականների, ակադեմիկոսների, արհեստակցական պատասխանատուների, ուսանողների և առհա-

[25] Gladio-երկրի նվաճման դեպքում դիմադրական շարժում, ստեղծվել է ՆԱՏՕ-ի կողմից ԽՍՀՄ-ի դեմ 5-րդ շարասյուն կազմելու համար:

սարակ հանրային, քաղաքական գործիչների 100-ավոր սպանություններ: Իսկ հակահրոսակային կազմակերպության՝ «Գորշ գայլերի» թուրքական գաղտնի սպասարկու կառույցի միացյալ գործողություններից կարելի է հիշել 1977 թվականի մայիսին աշխատավորների դեմ կատարած գործողությունները, երբ սպանվեցին ու տանկերի անիվների տակ տրորվեցին 39 աշխատավոր, ավելի քան 200 մարդ վիրավորվեց, 1978 թվականի մարտին Կ. Պոլսի համալսարանի մոտ հավաքված ուսանողների դեմ հարձակումը, որը պատճառեց բազմաթիվ զոհեր ու վիրավորներ: «Գորշ գայլերը» 1974 թվականին մասնակցեցին Կիպրոս ներխուժմանը, իսկ 1981-ին ստացան համաշխարհային ճանաչում, երբ 23-ամյա Մեհմեդ Ալի Աքչա «գորշ գայլը» մահափորձ կատարեց Հռոմի Պապի դեմ:

«Գորշ գայլերի» ոճրագործությունները ճամփա հարթեցին 1980 թվականի զինվորական պետական հեղաշրջման համար, որից հետո Թուրքիայի բոլոր կուսակցությունները, ներառյալ ԱՇԿ-ն, արգելվեցին: Չնայած քաղաքական այս սահմանափակումներին՝ «Գորշ գայլերը» դարձան Թուրքիայի ազգայնական ծրագրի անբաժան մասնիկը:

«Գորշ գայլերի» խմբեր են գործում Նիդերլանդներում, Բելգիայում, Շվեյցարիայում, Ֆրանսիայում:

1981 թվականին Արևմտյան Եվրոպայում գործում էր «Գորշ գայլերի» 129 մասնաճյուղ[26]:

«Գորշ գայլերը» իրենց շուրջ համախմբելու համար օգտագործում են սպորտը, որի դերը շեշտել էր դեռևս Բաշբուղ Թյուրքեշը, իր «Temel gouusler»-ում («Հիմնական սկզբունքներ»). «Առողջ, խիզախ ու որակյալ թուրք երիտասարդ սերունդ ստեղծելու համար պետք է օգտագործել սպորտի հիանալի միջոցը»: Դա քաղաքական ասպարեզում օգտագործվող պրակտիկա է պատանիներին իրենց կողմը քաշելու համար: Չպետք է մոռանալ, որ Ջեմալ փաշան իր հերթին անձամբ ղեկավարում էր «Իզջի» (Izci) շարժումը, որն իր բնույթով նման էր ամերիկյան բոյսկաուտական շարժմանը: Թուրքական մի կուսակցության երիտասարդ թևը կոչվում է «Akincilar» (արշավորդներ):

[26] «Գորշ գայլերի» Եվրոպայի շտաբ-բնակարանը գտնվում է արևմտագերմանական Հեյլբրոնե քաղաքում: Ա. Թյուրքեշի կազակերպությունը գտնվում է Ֆրանկֆուրտ Մայնում, Մյունխենշտրասե 21 հասցեում, «Թուրք-իսլամական մշակութային միությունների Ֆեդերացիա», «Դանթյուրք» (Հաագայում) և այլն:

Ըստ «Գորշ գայլերի»՝ ամեն մի թուրք պետք է պարծենա իր ազգությամբ, որովհետև «թուրք ժողովուրդը աշխարհի ամենից բարձր ժողովուրդն է»: Նրանց պապերը եկել են Անատոլիա Հեռավոր Արևելքից՝ առաջնորդվելով գորշ գայլերով»:

«Գորշ գայլերը» ողջույնի յուրահատուկ ձև ունեն, որի իմաստը հետևյալն է.

1.Ճկույթ մատը նշանակում է թրքություն.

2.Ցուցամատը՝ մահմեդականություն.

3.Ճկույթ մատի և ցուցամատի միջև եղած բաց տարածությունը՝ աշխարհ.

4.Երեք մատների միացման կետը (միջնամատ, մատնեմատ ու բութ մատ)՝ կնիք:

Ըստ «Գորշ գայլերի»՝ վերոնշյալ ողջույնի ձևը նշանակում է. «Թուրքական իսլամական կնիքով պիտի կնքենք աշխարհը»:

«Ուլքյուջուների» մոտ առանց նախագահի ներկայության կամ առանց նրա հրամանի ոչինչ չի սկսվում: Ունեն բարևելու իրենց հատուկ ձևերը: Ձեռքով բարևելու ձևը այսպես է. մեկը բռնում է մյուսի աջ ձեռքը և իր ճկույթը մտցնում մյուսի ճկույթի արանքը, ցուցամատը և միջնամատը ինքնաբերաբար ձգվում են առաջ, բթամատերը ցցվում են վեր, իսկ մատնեմատերը տակից պինդ պահում են ձեռքերը: Հաջորդ բարևելու ձևը հետևյալն է. իդեալիստները ճակատներն են շփում իրար՝ մեկ աջ, մեկ ձախ կողմից: «Bozkurt» բառը օգտագործելու բացառիկ իրավունքը պատկանում է միմիայն նրանց: «Գորշ գայլերի» պարբերաթերթն է «Ulku ocak»-ը («Գաղափարապաշտական օջախ»): «Գորշ գայլերի» գույներն են կարմիրը և սպիտակը: Էլեկտորատը կենտրոնական Անատոլիան է:

Տարվում է բացահայտ քաղաքական քարոզչություն անգամ մզկիթներում: Իմամ Աբդուլլահն ասում է. «Նրանք, որոնք չեն երկրպագում մարգարեին, անասուն են: Նրանց ու անասունների միջև տարբերություն չկա, քանզի անասունն էլ ուտում, խմում, բազմանում է: Սիրելի՛ հավատացյալներ, խնդրում եմ ձեզ հեռու մնալ այն մարդկանցից, որոնք մեծ մարգարեին չեն երկրպագում» :

Կամ Ulu Cami-ի իմամը քարոզում էր, որ մատաղ անելու օրը (Kurban bayram) ավելի լավ կլինի փող նվիրաբերել Չեչնիայի իրենց

«եղբայրներին», որոնք գտնվում են ծանր կացության մեջ: Սակայն, ինչպես հետագայում պարզվում է, փողը նույնիսկ չի հասել Չեչնիա, այլ բաժանվել է թուրքական այլ համայնքների միջև:

Մուհամմեդ մարգարեի ծննդյան 1425-րդ տարեդարձին նվիրված միջոցառմանը ելույթ ունեցող Անկարայի համալսարանի աստվածաբանության պրոֆեսոր Հայրանի Աթլինթաշը ասում է. «Արևմուտքում միայն 19-րդ դարում սկսեցին մարդու իրավունքների մասին զգուշորեն խորհել: Մեզ մոտ մարդու իրավունքներն արդեն 14 դար է, ինչ իրականացվել են Ղուրանի միջոցով: Վերցնենք, օրինակ, կանանց իրավունքը: Նախքան իսլամը կանանց կենդանի թաղում էին: Իսլամը վերջ տվեց այդ սովորություններին... Արևմուտքը դեռ շատ բան ունի մեզնից սովորելու»:

1996 թվականի դեկտեմբերին տեղի է ունենում մի այլ կոնֆերանս-համագումար: Հրավիրյալ դասախոսը պրոֆեսոր Էօկսուզն է՝ թուրքական «Եվրասիա-1» հաստատության նախագահը: Էօկսուզը հայտարարում է. «2000 թվականից հետո այն տարածաշրջանում, որ տարածվում է Ադրիատիկ ծովից մինչև Չինական պարիսպները», կստեղծվի թուրքական մի մեծ պետություն»: Ըստ նրա՝ «աշխարհը կարիք ունի արդարության և մեծահոգության, որը յուրահատուկ է թուրքերին»: «Թուրանչըլըքի», Մեծ Թուրանի գաղափարը երբեք այսքան կենդանի չի եղել: Պրոֆեսորը, Արևմուտքի մարդկանց քամահրելով, ասում է, թե «յուրաքանչյուր մուսուլմանի պարտականությունն է, որ գյավուրներին՝ անհավատներին, մուսուլման դարձնի»:

1995 թվականի ապրիլի 23-ը այն պատմական օրն է, երբ «Գորշ գայլերը» դարձյալ իրենց թաքստոցից դուրս եկան:

BBP (Buyuk Birlik Partisi)-ը մրցակից չէ, անջատվել է MHP-ից, նրա՝ Եվրոպայի մասնաճյուղերը կոչվում են ANAF (Avrupa Nizami-Alem Federasyonu), «Միջազգային կարգ» եվրոպական ֆեդերացիա:

Թուրք երիտասարդությունը տարվում է ոչ միայն «Գորշ գայլերի», այլև «Milli Gorus» («Միլլի Գյորուշ») կազմակերպության գաղափարներով: Վերջինս թուրք արմատական իսլամական շարժում է Եվրոպայի տարածքում: Ըստ այս երկուսի տվյալների՝ նրանք ունեն համապատասխանաբար՝ 40.000 ու 32.000 համակիրներ Հոլանդիայում: Եթե դա իրոք այդպես է, ուրեմն թուրք փոքրամասնության 1/4-ը հարում է կամ կրոնական-արմատական և կամ ազգայնամոլական գաղափարներին:

1986 թվին «Գորշ գայլերի»՝ Գերմանիայի թուրքական ֆեդերացիայից (Թուրքիայից հետո «Գորշ գայլերի» ամենամեծ օջախն էր և է՝) դուրս է գալիս նախագահը՝ Մուսա Մերդար Չելեբին ու 1988 թվին հիմնում «Turk Islam Kultur Dernekleri Birligi»-ն (Թուրք իսլամական մշակութային կազմակերպությունների միավորումը), որի համար ավելի առաջնահերթ էին իսլամական արժեքները:

Հայտնի «գորշ գայլեր»

Տասնամյակներ շարունակ «գորշ գայլերը» գործակցել են թուրքական իշխանությունների, բանակային ահաբեկչական հեղինակությունների հետ՝ իրենց ազգայնամոլական մոլուցքին հագուրդ տալու և միաժամանակ պետական պատվերներ իրականացնելու համար (ներքին ընդդիմադիրների չեզոքացում, քրդական շարժման ճնշում, ԱՍԱԼԱ և այլն): Չնայած որ «Գորշ գայլեր»-MIT գործակցությունը ծանոթ էր շատերին, սակայն մինչև 1999 թվականի նոյեմբերի 3-ը չկար որևէ փաստ, որ հնարավոր լիներ իրար կապել այս համագործակցության տարբեր եզրերը: Նշյալ թվականին Անկարայից 100 մղոն հեռավորության վրա՝ Սուսուրլուք ավանում, մեքենայի վթարը եկավ ցնցելու Թուրքիայի քաղաքական համակարգի հիմքերը: Ճամփեզրին շրջված մեքենայից դուրս բերվեցին երեք դիակներ և մեկ ծանր վիրավոր: Դրանցից մեկը Թանսու Չիլլերի կուսակցության և ԹԱՄԺ-ի անդամ Սեդար Բուչակն էր՝ մի հրոսակապետ, որը հայտնի էր Թուրքիայի հարավարևելյան նահանգներում իր անձնական բանակով կազմակերպած վայրագություններով:

Վթարի զոհերի շարքում էր Կ. Պոլսի նախկին փոխոստիկանապետ, ոստիկանական ակադեմիայի նախկին տնօրեն Հյուսեին Քոչաթաղը՝ Թուրքիայի հակաքրդական արշավի մի կարևոր մասնակից: Նրա կողքին փռված էր նախկին միսս-սինեմա, երրորդ սպանվածը մի փախստական «գորշ գայլ» էր՝ Աբդուլլահ Չաթլը[27]՝ անկասկած ամենախնդրահարույցը Սուսուրլուքի զոհերից: Մեքենայի մեջ գտնվել էր նաև մեծաքանակ զենք ու զինամթերք, ատրճանակների խլացուցիչներ, թմրանյութեր և լրտեսական սարքեր: Չաթլրի մոտ գտնվել էր զենք կրելու կառավարական արտոնագիր՝ իր պատկերով, տարբեր անուններով 6 կեղծ անձնագրեր, որոնցից մեկը նրան ներկայացնում էր իբրև Մեհմեդ Օզբեյ՝ անվտանգության պատասխանատու. այս վկայականը կրում էր երկրի ներքին գործերի նախարարի ստորագրությունը: Ի դեպ, 1981 թվականին Հռոմի Պապի դեմ մահափորձ կատարած Մեհմեդ Ալի Աքչայի կրած կեղծ անձնագիրը ևս Մեհմեդ Օզբեյի անվամբ էր:

[27] Աբդուլլահ Չաթլը (1956 – 1996թթ.)-Ծննդավայրը Նելեհիր (Անատոլիա): Օգնել է բանտից փախչել Աքչային և կազմակերպել Հռոմի Պապ Պողոս II-ի դեմ մահափորձը: 1985 թվականին դատի ժամանակ Չաթլրն հայտարարել է, թե կապ է հաստատել Գերմանական հետախուզական ծառայության (BND) հետ:

Չաթլրն 1970-ականներից ի վեր Թյուրքեշից հետո երկրորդ կարևորագույն անձն էր «Գորշ գայլեր» կազմակերպության մեջ: Նա կազմակերպության ցամաքային գործողությունների պատասխանատուն էր և պետական ու կազմակերպվող հանցագործ ուժերի հետ համակարգողը: Սուսուրլուքի դեպքից հետո բազմաթիվ հետաքննությունները լույս սփռեցին Չաթլրի գործունեության վրա: Չաթլրն 7 ձախակողմյան գործիչներ սպանելու մեղադրանքով 1978 թվականին հեռակա կարգով դատապարտվեց, որի պատճառով անցավ ընդհատակյա գործունեության: 1982 թվականին ձերբակալվել է 1979-ին «Milliyet» թերթի խմբագիր Իփեքչիին ահաբեկելու, բանտարկված Մեհմեդ Ալի Աքչայի փախուստը կազմակերպելու, նրան Եվրոպա փոխադրելու, Պապի դեմ մահափորձի ժամանակ օգտագործված ատրճանակն ու կեղծ անձնագիրը տրամադրելու ամբաստանությամբ, սակայն «փաստերի անբավարարության պատճառով» ազատ է արձակվել: Համաձայն «Լը Մոնդ Դիփլոմաթիք» ամսաթերթի (մարտ, 1977 թվական)՝ Պապի մահափորձը կազմակերպել էր նույն Չաթլրն, «Գորշ գայլերին» խոստացված 3 միլիոն գերմանական մարկի դիմաց, որից հետո նա անցնում է Ֆրանսիա, ուր մի շարք հարձակումներ է իրականացնում հայկական թիրախների դեմ: Թմրանյութերի մաքսանենգության համար ձերբակալվում է Փարիզում, դատապարտվում և 1982-ին փոխադրվում Շվեյցարիա, ուր ևս նրա դեմ կային նմանատիպ մեղադրանքներ: 1990-ի մայիսին կարողանում է խորհրդավոր հանգամանքներում խուսափել բանտից, ապա վերադառնում է Թուրքիա, որտեղ էլ իր մասնագիտական ծառայություններն է ի սպաս դնում պետականամետ ծրագրերին:

Բացի այդ Չաթլրն ունեցել է նաև դիվանագիտական անձնագիր, որի միջոցով նա կարող էր առանց արգելքի ճամփորդել արտասահմանում: Պարզվեց նաև, որ նա կառավարության պատվերով մարդիկ է վերացրել. օրինակ՝ բախտախաղի կայսրության տեր Օմար Լութֆու Թոփալին:

Այդ ավտովթարի հետևանքով ի հայտ եկավ «Գորշ գայլերի» և թուրքական կառավարության ուղղակի կապը: Թանսու Չիլլերը, որ այդ ժամանակ փոխվարչապետ էր, ի տարբերություն ընդդիմադիր կուսակցությունների, որոնք պահանջում էին «մաքուր հասարակություն», Չաթլրին հերոս անվանեց. «Նա այդ փամփուշտները կրակել է պետության համար: Ով պետության համար սպանում կամ սպանվում է, հարգանքի արժանի մարդ է»: Չաթլրն հողին հանձնվեց MHP-ի, Basbug Թյուրքեշի կուսակցության պանթեոնում:

Հայտնի «գորշ գայլ» էր Օրալ Չելիքը: Նա 70-ական թվականներից հետո իր գործունեության վայրը տեղափոխեց Եվրոպա, 80-ական թվականների կեսերին Հոլանդիայում ստեղծեց «Գայլեր-մաֆիա» հրոսակախումբը: 1986 թվականին ձերբակալվեց Ֆրանսիայում՝ հոլանդական համարանիշներով «Մերսեդես» ավտոմեքենայի մեջ: Թմրանյութերի վաճառքի մեղադրանքով Ֆրանսիայում նա դատապարտվեց 8 տարվա ազատազրկման: Ձերբակալվելով Շվեյցարիայում՝ 1996 թվականի սեպտեմբերի 4-ին հանձնվեց Թուրքիայի իշխանություններին: Մի կարճ ժամանակ նա բանտ նստեց, որտեղ սկսեց կազմակերպել բանտարկված թուրք ազգայնամոլների հարձակումը բանտում գտնվող քրդերի դեմ ու սպանեց նրանցից մի քանիսին:

Ինչպես Աբդուլլահ Չաթլրին, այնպես էլ Օրալ Չելիքին հովանավորում էին բարձր դիրք ունեցող պետական պաշտոնյաներ: Այսպես, Չելիքը Մեհմեդ Ալի Աքչայի հետ միասին հայտնվել էր լրագրող Աբդի Իփեքչիի[28]՝ 1979 թվականի փետրվարի 1-ի սպանության գործի վարույթում: Սակայն գործի հիմնական վկան անսպասելիորեն հրաժարվեց նախապես տված մեղադրական ցուցմունքներից: Նա հայտարարեց, որ Չելիքին չի ճանաչում, որի հետևանքով վերջինս ազատ արձակվեց: Բանտից ազատվելիս նրան սպասում էր MHP–ի բարձր պաշտոնյաներից բաղկացած մի հանձնախումբ: Ցուցմունքներից մեկում նա ասել է. «Ես ու Աբդուլլահ Չաթլրն երկար ժամանակ գործել ենք պետության պատվերով» :

Ըստ ռուսալեզու վեբ-կայքերից մեկի՝ «գորշ գայլ» էր նաև Աբդուլլահ Չեթինը, որի՝ «Milliyet» թերթին 1997 թվի ապրիլի 11-14-ին տված հայտարարության մեջ նշվում է, որ մասնակից է եղել այն խմբակցությանը, որը մահափորձեր էր կատարել Էդուարդ Շևարդնաձեի ու Հեյդար Ալիևի դեմ:

Ալի Աքչան աշխատել է 8 տարեկանից, տառապել է էպիլեպսիայով: Եղել է Հիտլերի, ինչպես նաև ահաբեկիչ Կառլոս Իլիչ Ռամիրեսի երկրպագուն: Ունեցել է ընդգծված հակահայկական և հակաքրիստոնեական հայացքներ: Առաջին անգամ մարդ է սպանել 19

[28] Աբդի Իփեքչի (1929–1979 թթ, Ստամբուլ)–Երկխոսության կողմնակից: Մարդու իրավունքների պաշտպան: 1979 թվականի փետրվարի 1-ին մեքենայով աշխատավայրից տունդարձի ճանապարհին սպանվեց: Իփեքչին թաղվել է Zincirlikuyu գերեզմանոցում: Կինը՝ Սիբել, աղջիկը՝ Նյուքեթ, տղան՝ Սեդաթ: 2000 թվականի փետրարի 7-ին Շիշլիում բացվեց Աբդի Իփեքչիի արձանը:

տարեկանում: Ահաբեկիչը գործել է Կայսր, Մեթին, Մուրադ, Հաջի ծածկանուններով:

Աքչան է սպանել Իփեքչիին ԽՍՀՄ–ի նկատմամբ ունեցած նպաստավոր դիրքորոշման համար:

1981 թվականի մայիսի 13-ին Հռոմում Ալի Աքչան մահափորձ է կատարում և վիրավորում «խաչակիրների հոգևոր առաջնորդ և պարագլուխ» Հռոմի Պապ Պողոս II-ին: Այս մասին ճանաչված հայ գրող բեյրութցի Գառնիկ Ադդարյանը գրել է. «23-ամյա այս թուրք ֆաշիստը քալեց Պոլսո փողոցներու մեջ և կանգ առավ հանկարծ. դիմացը մեծ ոճրագործն էր՝ վերածված հուշարձանի, դահճապետ Թալեաթը կարծես թե կժպտեր իրեն ու կըսեր՝ մի՛ վարանիր, սրբություն չկա ու չկա մարդկայնություն, ըրե՝ ինչ կուզես, սպանե՝ ով ուզես, ես ի գործ դրի ամբողջ ազգի մը բնաջնջման ծրագիրը ու տես, հիմա հուշարձան եմ արդեն՝ թրքական պետության իսկ կողմեն կառուցված, շարունակե իմ ուղիովս ու մի՛ վարանիր, մեր մոտ ոճիրը կըվարձատրվի ու սրբապղծումը կընկատվի սրբագործություն...»:

Իտալիայի նախագահ Կառլո Չամպին ներում է շնորհում Աքչային և թույլատրում տեղափոխել Թուրքիա: Թուրքիայում նա դատապարտվեց 25 տարվա բանտարկության:

Մահափորձի հիմնական վարկածը եղել է «բուլղարականը». 1980 թվականին Սոֆիայում Աքչան հավաքագրվում է Բուլղարիայի հատուկ ծառայությունների կողմից, որը Խորհրդային Միության ՊԱԿ-ի մասնաճյուղն էր...

Ըստ խորհրդային վարկածի՝ մահափորձը իրականացրել էր մասսոնական «Պի-2» ամենազոր օթյակը, որը հավասարապես կապեր ուներ և՛ սիցիլիական մաֆիայի, և՛ վատիկանյան այն կարդինալների հետ, որոնք դժգոհ էին ազգությամբ լեհ Պապի ընտրությունից և նրա քայլերից: Ամեն դեպքում Աքչան գիտե Պապի մահափորձի գաղտնիքը:

Մի այլ տխրահռչակ «գորշ գայլ» է Չաքրջրն, որը զբաղվում է թմրանյութերի առևտրով: Պառլամենտական «Ֆան-թրա» կոչվող թղթապանակի զեկույցում կարդում ենք. «Թուրքիայից դուրս՝ հատկապես Գերմանիայում, Ֆրանսիայում ու Հոլանդիայում, կարելի է հանդիպել «գորշ գայլերի»: Ըստ որոշ ձախակողմյան թերթերի՝ Չաքրջրն օգտագործում է դիվանագիտական անձնագիր (գնդապետի կարգի), որը ստացել է թուրքական կառավարությունից: Նա իր առաքելությունն էր համարում «քաղաքակրթություն տարածել»: Նա ծնվել և մեծացել է

Պոլսի Գյուլբեքե չքավոր թաղամասում, որը «Գորշ գայլերի» շարժման բույնն է:

Չաքրջրն կարճ ժամանակում կարողացավ մաֆիոզ շրջանակներում իր տեղը գրավել ու այս բնագավառում ճանաչված անուններից արագորեն առաջ անցնել: Նրա ուժի հիմքը «անդրաշխարհում» (ապօրինի գործարքների աշխարհում) հանդիսանում էին մի խումբ մարդիկ, որոնց նա հավաքել էր իր շուրջը: Այս խումբը մեծ մասամբ կազմված էր «իդեալիստներից»: Մաֆիոզ շեֆերի մոտ նա առաջինն էր, որ խոստովանում էր, թե «գորշ գայլ» է: Չաքրջրն ներկայացնում է մաֆիոզների մի նոր սերունդ: 80-ական թվականների կեսերին թուրք հասարակությունը առաջին անգամ լսեց «Գորշ գայլեր» մաֆիայի մասին: Մինչև այդ ժամանակները հիշյալ մաֆիայի գործունեությունը սահմանափակվում էր «գանձման գործերով»: «Ուլքյուջուները» վարձվում էին, որպեսզի բաց մնացած հաշիվները փակվեն, և դա տեղի էր ունենում կոպիտ միջոցների կիրառումով: Այն, որ «Ուլքյուջուները» վերջապես անցնելու էին առավել շահավետ՝ թմրանյութերի առևտրին, ժամանակի հարց էր միայն: Թե ինչպես տեղի ունեցավ այդ փոփոխությունը, նկարագրել է աջ ծայրահեղական հանցագործ Հաքան Չեշենգիլը 1988-ին «Նոքթա» շաբաթաթերթում. «1980 թվականի պետական հեղաշրջումից հետո կազմակերպությանը ժամանակ էր պետք, որպեսզի ինքն իրեն վերականգներ: Երբ այդ գործն ավարտվեց, «ուլքյուջուները» ավելի հաճախակի սկսեցին երևալ մաֆիական շրջանակներում: Նրանք օգտագործում էին իրենց լայն կապերն ու ծանոթությունները: Ես համոզված եմ, որ սա մտածված մի ռազմավարություն էր հենց իր՝ Թյուրքեշի կողմից ծրագրված: Այսպես, MHP–ի նախկին պարագլուխները հանկարծ հայտնվեցին մի նոր «մաֆիոզ» շեֆի շուրջ: Նրանք օգտագործում էին իրենց դիրքը՝ «գործի» գաղտնիքները սովորելու համար»:

Երբ «գործի» գաղտնիքները յուրացրին, այլևս ժամանակ չկորցրին, անմիջապես գործի անցան: Այսպիսով. առաջացավ «Բաբաների» մի նոր սերունդ:

Գերմանիայում ակտիվ են Ուզեյիր Բայրաքլին և Ռիֆաթ Յըլդըրըմը, երկու «իդեալիստներ», որոնք արդեն Թուրքիայում պատասխանատվություն են կրում մեծ թվով հանցագործությունների համար:

Այն բանից հետո, երբ Յըլդըրըմը 1978 թվականին Թուրքիայում կասկածվեց մի ուսուցչի սպանության մեջ, փախավ Եվրոպա: Նրա մասին այսպես է գրել 1993 թվականին սպանված թուրք լրագրող

Ուգուր Մումջուն. «Թուրքիայում Յըլդըրըմը Ուզեյիր Բայրաքլիի հետ միասին իրականացրեց Մեհմեթ Կարաբուլութի սպանությունը: Այս երկուսը իրականացրին համալսարանի դասախոս Բեթրեթին Ջոմերթի սպանությունը, այս անգամ Էլդար Սոլակի համագործակցությամբ: Դրանից հետո Յըլդըրըմը Ֆրանսիայի ճանապարհով անցավ Գերմանիա: Գերմանիայի Ֆրանկֆուրտ քաղաքում նրան օգնեց Սերդար Չելեբին՝ ապահովելով նրա համար բնակարան և գործ: Այստեղ Յըլդըրըմը ստեղծեց մի հրոսակախումբ, որն զբաղված էր զինված գործողություններով: 1982 թվականին նա դատապարտվեց 7 տարվա բանտարկության՝ կեղծ փաստաթղթեր սարքելու համար: 2 տարի հետո 7 տարով բանտարկվեց թմրանյութերի առքուվաճառքի մեջ մասնակցություն ունենալու մեղադրանքով: 1984 թվականին նրա հետ ձերբակալվեց նաև Մուսթաֆա Էրդեմը: Հետաքրքրական է, որ Էրդեմը բնակվում էր Գերմանիայի Թուրքական ֆեդերացիայի շենքում»:

Գերմանիայում Յըլդըրըմն ու Բայրաքլին դատապարտվեցին ազատազրկման, «սակայն դատարանի բարյացակամության շնորհիվ շատ երկար չնստեցին», - գրում են գերմանական լրագրողներ Յուրգեն Ռութն ու Մարկ Ֆրեյը: «Գայլերն» այժմ դարձյալ ազատ քայլում են իրենց համար:

Նրանք դարձյալ հենց նույն գործերով են զբաղվում, ինչ որ առաջ՝ դրամաշորթություն, ծեծ ու ջարդ և մարդասպանություն: Իսկ գերմանական ոստիկանությունը տակավին չգիտի, թե նրանց հանցագործությունները քաղաքական՞ շարժառիթներ ունեն, թե՞ քրեական:

Անգլիան իր հերթին ապաստան է տվել Նուրեդդին Գյուվենին: Այս 33 տարեկան ֆուտբոլիստը ամբողջ Թուրքիայում ճանաչված էր որպես «Մալաթիա» ֆուտբոլային ակումբի նախագահ: Աստիճանաբար նա աճեց ու դարձավ Թուրքիայից դեպի Եվրոպա՝ հերոինի արտահանման կենտրոնական դեմքը: Այս պատճառով Ֆրանսիայում նա դատապարտվեց 16 տարվա ազատազրկման: Գյուվենը, սակայն, ֆրանսիացիներից ավելի ճարպիկ գտնվեց: Նա փախավ Անգլիա ու հաստատվեց այնտեղ: Սկոտլենդ Յարդը և անգլիական հետախուզական ծառայության մի խոսնակ «Սանդեյ Թայմզում» հայտարարել են, որ Գյուվենին ձերբակալելու իրենց ջանքերը միշտ հանդիպում են «բյուրոկրատական քաշքշուկների»: Այժմ Գյուվենն ապրում է Լոնդոնի շքեղ թաղամասերից մեկում իր անգլիացի կնոջ հետ:

ՔՈՒՐԴ ՆՈՐԱԳՈՒՅՆ ԶԻՆՅԱԼ ՊԱՅՔԱՐԻ ՄԱՐՏԻԿՆԵՐԸ[29]

Կա կարծիք, որ իբր ահաբեկչությունը ի վիճակի է ստիպելու մարդկանց խորհելու քաղաքականապես, թեկուզ իրենց կամքին հակառակ:

PKK-Partiya Karkerane Kurdistan
(PKK KGK KADEK)

Մուրադ Քարայիլան՝ ղեկավար:

Նպատակը՝ Թուրքիայի, Իրանի, Իրաքի ու Սիրիայի սահմաններում ստեղծել Քրդական Սոցիալիստական պետություն:

Աշխարհայացքը՝ քրդական ազգայնականություն, մարքսիզմ- լենինիզմ:

Գործելակերպը՝ ռմբահարում, քիմիական հարձակում, թմրավաճառություն, մարդկանց առևտուր, խափանարարական աշխատանք, ռմբային ինքնասպանություն:

Արգելված է Մեծ Բրիտանիայում: ԽՍՀՄ-ի փլուզումից հետո ուշադրություն դարձվեց ավելի շատ քրդական ազգայնականության վրա, քան թե կոմունիստական հայացքների: Ուշադրություն դարձվեց նաև իսլամին:

Նիհալ Աթսըզը, դիմելով Թուրքիայի քրդերին, հայտարարեց. «Եթե դուք քրդերդ, պետք է շարունակեք խոսել ձեր պարզունակ լեզվով, ապա թուրքերը կկոտորեն ձեզ, ինչպես ժամանակին ոչնչացրին հայերին, վրացիներին և հույներին: Դուք կարող եք դիմել ՄԱԿ, որպեսզի ձեզ հայրենիք տրամադրեն Աֆրիկայի ինչ-որ վայրում, այլապես թուրքական ռասսան կվերածվի կատաղած առյուծի, որին ոչ ոք չի կարող կանգնեցնել»:

1970-ական թվականներին խմորված քրդական շարժումը 1980-ական թվականներին հասնում է բյուրեղացման աստիճանի և ժայթքում իբրև Քուրդիստանի բանվորական կուսակցության (ՔԲԿ, PKK) զինյալ պայքար:

[29] Տե՛ս Современный терроризм ст. 214-219.

Քրդական հարցը հենց սկզբից էր «Գորշ գայլերի» համար թիրախ դարձել: ԱՇԿ-ի քաղաքական գործիչները և՛ Թուրքիայում, և Եվրոպայում վարում էին քրդերի դատը վարկաբեկելու քաղաքականություն՝ հրապարակային կարգախոսներով և հակաքրդական գրականության տարածմամբ: «Քրդերը զինված են հայերի միջոցով»: Այս պնդումները հանգերգվում էին ազգայնամոլ լրատվամիջոցների կողմից, մինչդեռ քրդական նահանգներում «Գորշ գայլերի» տեղական ուժերը ամեն օր ահաբեկում և սպանում էին տեղի քուրդ բնակիչներին:

Թուրքական իշխանությունները հակաքրդական պայքարի նոր մակարդակ թևակոխեցին 1999 թվականին, երբ ստեղծվեց այսպես կոչված «Ընտրանի բանակը», որը դեռ տասնամյակներ առաջ պահանջում էր Ա. Թյուրքեշը: Այս բանակի անդամները, որոնց մեջ մեծ թիվ էին կազմում «գորշ գայլերը», մարզվում էին գերմանական «Ջի-Էս-Ջի»-ի կողմից հատուկ ընտրված մարզիչների ղեկավարությամբ: Պաշտոնապես «ահաբեկչության» դեմ պայքարելու համար ստեղծված այս զորաբաժինը իրականում նպատակ ուներ ճնշել քրդական շարժումը: Գյուղերի ամբողջական հրկիզումը հատուկ գործելաձև էր «Ընտրանի բանակի» համար: Այս բանակի ստեղծմամբ գործնականում վերացվեց Թուրքիայի անվտանգության ուժերի և «գորշ գայլերի» միջև աշխատանքային բաժանումը, և «գորշ գայլերը» հնարավորություն ստացան իրենց ծրագրերը իրականացնել թուրքական բանակի համազգեստով, պետական դրոշի ներքո....

«Քենան Էվրենը քրդերին համարում էր Միջին Ասիայից եկած թուրքական ցեղերի ճյուղավորումներից մեկը[30]»:

Քրդերի թիվն աշխարհում հասնում է մոտ 30-35 միլիոնի: Նրանք բնակվում են Իրաքի հյուսիսում, Թուրքիայի հարավ-արևելքում և Իրանի արևմտյան շրջաններում: Թուրքիայում ապրում է մոտ 8-8,5 մլն քուրդ: Քրդերը չունեն պետականություն, եթե հաշվի չառնենք Իրաքում ունեցած ինքնավարությունը: 1978 թվականին Թուրքիայի տարածքում, որտեղ քրդերն ավելի շատ էին, քան Իրաքում և Իրանում, կազմավորվեց Քրդական աշխատավորական կուսակցությունը (PKK, ՔԱԿ կամ ՔԲԿ) Աբդուլլահ Օջալանի գլխավորությամբ: Այս կուսակցությունն իր նպատակը համարեց քրդերի անկախ պետականության հռչակումը այն հողերի վրա, որտեղ նրանք ապրում էին բազում դարեր:

[30] Տե՛ս Զոն Կիրակոսյան, Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ, հ. 2, էջ 421:

Բնականաբար, սա հաշվի առնելով, նրանք իշխանության նկատմամբ ծայրահեղ բացասական վերաբերմունք ունեին: Արագ կերպով սպառելով քաղաքական պայքարի բոլոր օրինավոր ճանապարհները ՔԱԿ-ը 1984 թվականին թուրքական կառավարությանը պատերազմ հայտարարեց: Այս նպատակով կազմավորվեց կուսակցության ռազմական կառույցը՝ Քրդստանի ազատագրման ազգային ճակատը, Քրդստանի ժողովրդավարական ազատագրական բանակը, Վրեժի քաղաքական խմբավորումը: Դրանք գործում էին Անկարայում, Ստամբուլում և ընդհանուր հաշվով իրենց կազմում մոտ 5 հազար մարդ ունեին: Նրանց մարտական առաջին գործողությունը եղավ 1984 թվականի օգոստոսի 15-ին թուրքական Էրախ քաղաքում, որը ժամանակավորապես գրավվեց:

ՔԱԿ-ը որդեգրել է գործողությունների՝ հիմնականում պարտիզանական մարտավարությունը լեռնային տեղանքում: Նրա մարտական ջոկատները մարտնչում են թուրքական բանակի և ոստիկանության դեմ երկրի հարավարևելյան մասում, որտեղ գերակշռում է քուրդ բնակչությունը: Սրա հետ միասին ՔԱԿ-ը օգտագործում է քաղաքական ահաբեկչության մարտավարությունը: Ահաբեկիչները սպանում են թուրք պաշտոնյաներին, զինվորներին, քաղաքական գործիչներին, դիվանագետներին թե՛ Թուրքիայում և թե՛ Եվրոպայում, կազմակերպում են դիվերսիոն զանազան գործողություններ: Ահաբեկչության ևս մի ձև են հարձակումները արտասահմանյան զբոսաշրջիկների վրա՝ Թուրքիայի տնտեսության կարևոր ոլորտներից մեկը վնասելու նպատակով: 1984-99 թթ. ընթացքում ռազմական և զինյալ գործողությունների հետևանքով 2 կողմից զոհվեցին ավելի քան 37 հազար մարդ: Միայն 1993 թվականին ՔԱԿ-ի մարտիկները իրականացրին 4 հազար զինված հարձակում և այլ զինված գործողություններ: Օրինակ, 1993 թվականի հունիսի 27-ին քուրդ զինյալները մի քանի նռնակ էին նետել Անթալիա տուրիստական քաղաքում գտնվող ռեստորաններում և սրճարաններում: Վիրավորվել էր 28 մարդ: Հուլիսի 28-ին Ստամբուլում ռումբի պայթյունից վիրավորվել էին 2 իտալացի զբոսաշրջիկ: Օգոստոսի 18-ին նռնակների պայթյունից վիրավորվել էին հունգար զբոսաշրջիկներ ու տեղացիներ: Սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին ՔԱԿ-ի մարտիկները պատանդ վերցրին 19 արտասահմանցի զբոսաշրջիկների, որոնց հնարավոր եղավ ազատել ավելի ուշ: Հոկտեմբերի 29-ին 3 քուրդ զինյալներ հարձակում կատարեցին Փարիզում գտնվող «Բոսֆոր» թուրքական բանկի վրա: Հարձակման ընթացքում զոհվեց 4 մարդ: Նոյեմբերի 4-ին ՔԱԿ-ի մարտիկները պայթյունների շարք էին

կազմակերպել թուրքական դեսպանատներում և առևտրական ընկերություններում. զոհվել էր 1, վիրավորվել 20 մարդ:

Քուրդ զինյալների առավել աղմկահարույց գործողություններից էր 1986 թվականի փետրվարի 28-ին Շվեդիայի վարչապետ Ուլֆ Պալմեի սպանությունը: Վերջինս իր կնոջ հետ վերադառնում էր կինոթատրոնից, երբ նրան հետևից մի մարդ մոտեցավ և սառնասրտորեն մի քանի անգամ կրակեց նրա վրա ատրճանակից: Պալմեն տեղում մահացավ: Հետաքննությունը այն ժամանակ արդյունք չտվեց: Սակայն 13 տարի անց Աբդուլլահ Օջալանը դատական գործընթացի ժամանակ հայտարարեց, որ այդ սպանությունը կազմակերպել էին ՔԱԿ-ի չորս մարտիկներ՝ իր նախկին կնոջ գլխավորությամբ: Այսպիսով՝ զինյալները վրեժ լուծեցին Շվեդիայի վարչապետից այն բանի համար, որ նա չցանկացավ քաղաքական ապաստան տալ այն քուրդ զինյալներին, որոնք գտնվում էին միջազգային հետախուզման մեջ:

ՔԱԿ-ը կոորդինացնում էր պայքարը հայ զինյալների հետ: ՔԱԿ-ի զինյալների մեկ երրորդը կազմում էին հայերը, բացի այդ, հայկական ընդհատակյա կազմակերպությունները օգնում էին քուրդ զինյալներին հետախուզական տվյալներով:

ՔԱԿ-ի ֆինանսավորումը իրականացվում է «հեղափոխական հարկի» միջոցով, որը վճարում են շատ քրդեր, անկախ իրենց բնակության վայրից, բայց նախևառաջ Թուրքիայից: Ֆինանսական մուտքի մեջ կարևոր դեր ունի թմրանյութերի առևտուրը:

PKK-ի դեմ կռիվ մղողները չեն խորշում նաև ծանր ոճի ճարտասանություն կիրառելուց: Այսպես, պրոֆեսոր Թաներ Գյուլենսոյը MHP –ի օրգան «Ortadogu» թերթի 1994 թվականի փետրվարի 22-ի համարում գրում է. «Այս դավաճանները, որոնք իրենց համար «քյուրդ» անուն են հորինել, նպատակադրված են թուրք ազգին վերացնել և Թուրքիան վերածել մի կրակարանի: Այս ոճրագործությունների համար նրանք պետք է պատժվեն: Ինչպե՞ս: Նախևառաջ նրանք պետք է հայերի, հույների և հրեաների նման փոքրամասնության կարգավիճակ ստանան ու զրկվեն պասիվ կամ ակտիվ ընտրական, ինչպես նաև զինվորական ծառայության իրավունքից: Նրանց պետք է արգելել նաև պետական կառավարման մարմիններում ծառայելուց: Այդպիսի օրենք գոյություն ունի նույնիսկ Միացյալ Նահանգների սահմանադրության մեջ»:

1995 թվականին թուրքական բանակը և ոստիկանությունը իրականացրին մի քանի մեծածավալ գործողություններ քրդական մարտա-

կան ջոկատների դեմ, որոնց ընթացքում զոհվեց շուրջ 2,5 հազար քուրդ զինյալ: Իզուր չէ, որ մինչև օրս թուրքական բանակը կազմված է «2 ու կես» ռազմավարական ձևով, որը ենթադրում է միաժամանակ պատերազմ մղել երկու ճակատով և ներքին հարցերի համար ևս տրամադրել բանակային ուժեր:

2,5 հազար զինյալ կորցնելուց հետո քրդերի պարտիզանական ու ահաբեկչական ակտիվությունը, համեմատած 1993 թվականի հետ, կրճատվեց մոտ 10 անգամ: ՔԱԿ-ի ղեկավարությունը ստիպված եղավ փոփոխություններ մտցնել իր ռազմավարության ու մարտավարության մեջ: Օրինակ, նախ հայտարարեց, որ շարժման նպատակը Թուրքիայից Քրդստանի անջատումը չէ, այլ քրդերին ինքնավարություն տրամադրելը: ՔԱԿ-ը ևս մի ծանր հարված ստացավ 1999 թվականի գարնանը, երբ Թուրքիայի հատուկ ծառայությունների գործակալներին հաջողվեց Քենիայում ձերբակալել Ա. Օջալանին, որին տեղափոխեցին Թուրքիա և դատապարտեցին մահվան: Սակայն հետագայում, տեղի տալով Եվրամիության ճնշումներին, Թուրքիայի իշխանությունները մահապատիժը փոխարինեցին ցմահ բանտարկությամբ:

Թուրքական Milli Gazete պարբերականի լրագրող Մեհմեդ Շնքեթ Էյգինն իր «Հարցն այդքան հեշտ և մատչելի չէ» զավեշտալի հրապարակման մեջ (Փետրվար 09, 2013 | 00:04) օրակարգ է բերել PKK-ի առաջնորդ, Իմրալը կղզում ցմահ բանտարկված Աբդուլլահ Օջալանի հայ լինելու մասին լուրերը՝ փորձելով Թուրքիայի քուրդ բնակչությանը հավաստիացնել, թե պետք չէ հավատալ «հայ Օջալանին և հայերի կողմից ստեղծված PKK-ին»:

Թուրքական Habervaktim.com կայքը ներկայացրել է հիշյալ հրապարակումը, որում թուրք լրագրողը, փաստարկելով, թե ինչու Թուրքիայում քրդական հարցը չի լուծվի, բերում է 7 կետից բաղկացած հիմնավորում.

1. PKK-ն վերջին 30 տարում հարյուր միլիարդավոր դոլարների հասնող թմրանյութերի և անօրինական զենքերի վաճառքով է զբաղվել: Ոմանք շատ գումար են աշխատել և հարստացել:
2. PKK-ն դրսից քրդական շարժման պես է երևում, սակայն այն իրականում հայկական գաղտնի շարժում է, որն ուզում է Անատոլիան կրկին քրիստոնյաների հայրենիք դարձնել և մեծ Հայաստանի երազանքն իրականացնել: Այս գործի հետևում են կանգնած սիոնիզմը, իմպերիալիզմը և խորքային ուժերը: Հայերը Թուրքիայից պահանջում են այսօրվա Հայաստանից չորս կամ հինգ անգամ ավելի մեծ տարածք: Այսինքն՝ PKK-ին չի լինի վերացնել, եթե փորձեն վերացնել, կվերացնեն այդ փորձն անողին:
3. Քանի դեռ PKK-ն շարունակվում է դիտարկվել որպես քրդական շարժում, ահաբեկչությունը չի վերանա:
4. Այսօր մեր երկրում ապրում են մեկ միլիոն երկքաղաքացի քրիստոնյաներ և այդքան էլ՝ հրեաներ:
5. Շատ կարևոր դիրքերում են գտնվում և արտաքուստ մուսուլման են ձևանում Բագրատունիները, ովքեր երկերեսանի քաղաքականություն են իրականացնում: Մինչև Բագրատունիները չբացահայտվեն, ահաբեկչությունը չի վերանա:
6. PKK-ի խաղում մի շատ կարևոր անձի երկու անուն կա՝ մեկը մուսուլմանական քրդական անունն է, մյուսը՝ գաղտնի և հիմնական անունը՝ Արթին: Այս պնդումը ճի՞շտ է: Եթե ճիշտ է, ապա պետք է բացահայտվի, հակառակ դեպքում ահաբեկչությունը չի վերանա:
7. Եվրամիությունը, ԱՄՆ-ն, սիոնիզմը, խաչակիրները և իմպերիալիստները մտադրվել են Թուրքիան պառակտել: Մինչև նրանց պլանները չխառնենք, խաղը չենք հաղթի:

Habervaktim.org կայքն այս հրապարակման վերջում ներկայացնում է նաև իր պնդումները Աբդուլլահ Օջալանի հայ լինելու մասին, ըստ որի, Օջալանի հայրը հայ է: «Օջալանի գյուղը՝ Ամարան, նախկինում հայկական բնակավայր է եղել: Աբդուլլահ Օջալանին ընտանիքում ասել են Արթին Հակոբյան: Բացի այդ, Աբդուլլահ Օջալանը քրդերեն էլ չգիտի:

Ամարա գյուղը, որտեղ ապրում է Օջալանի ընտանիքը, իրականում հայկական գյուղ է: Սակայն գյուղի բնակչությունը 1915-ի տեղահանության ժամանակ փոխել է ինքնությունը և քրդացել: Գյուղի բնակչությունը փոխել է նաև անուններն ու կրոնը: Թուրքիայում այդ գյուղի պես հազարավոր գյուղեր կան:

Թուրքիայի պատմագիտական ընկերության նախկին նախագահ Յուսուֆ Հալաչօղլուն բազմիցս հայտարարել է, որ PKK-ում և BDP-ում (քրդական «Խաղաղություն և ժողովրդավարություն կուսակցություն) բազմաթիվ հայեր կան, և Օջալանն էլ հայ է: Հալաչօղլուն նաև հայտնել էր քրդացած հայերի գյուղերի անունները:

1980-ականների վերջերին ԱՍԱԼԱ-ն ցրվեց, և նոր ինքնություն

ձեռք բերելով՝ կազմավորվեց PKK-ն: Հայերը, հասկանալով, որ Թուրքիային դրսից հարվածելով, արդյունքի չեն կարողանա հասնել, իրենց նպատակներն իրականացնելու համար սկսեցին Թուրքիայի ներքին գործերին խառնվել:

Հայտնի է, որ PKK-ի կազմավորվելուց մինչ այսօր նրան ամենաշատը Հայաստանն է աջակցել: Ապացուցվել է, որ քրդի անվան տակ մի շարք հայեր Թուրքիայում պատգամավոր են եղել, ինչպես նաև ղեկավարել են PKK-ն: Այսինքն՝ PKK-ն իրականում քրդական կառույց չէ: Այն քրդերին օգտագործելու միջոցով Թուրքիան բաժանելու ցանկություն ունեցող հայկական կազմակերպություն է,-նշվում է Habervaktim-ում:

Թուրքական կայքը հրապարակման վերջում մեջբերում է Սարգիս Հացպանյանի արած հայտարարությունը, թե հունվարի 9-ին Փարիզում սպանված և PKK-ի հիմնադիրներից հանդիսացող Սաքինե Ջանսըզը ևս հայ է*:

* Լուրեր Հայաստանից - NEWS.am

«ԳՈՐՇ ԳԱՅԼԵՐԸ» ԵՎ ՀԱՅԵՐԸ

Շատ լարված են «Գորշ գայլերի» հարաբերությունները հայերի հետ: Այդ է վկայում 1994 թվականի վերջերին «Ուլքյու օջաքլարը»-ի՝ Ստամբուլում տարածած թռուցիկը՝ ուղղված հայ բնակչությանը, որի բովանդակությունը մոտավորապես հետևյալն էր. «Դուք՝ ձրիակերներդ, որ ձեզ այս երկրի քաղաքացի եք կարծում, դուք և մսացած բոլոր հայերդ, դարեր շարունակ շահագործել եք մեր երկիրը: Այսքանից հետո դուք դեռ չեք սովորել ձեր դասը: Դուք տակավին շարունակում եք վարվել այնպես, ինչպես անցյալում: Օսմանցիների ժամանակից սկսած՝ դուք մեզ շահագործել եք ու արյան հեղեղներ հոսեցրել. այդ բոլորի դիմաց մենք՝ թուրքերս, ձեզ հետ միշտ մեր հանրահայտ բարյացակամությամբ ենք վերաբերվել: Այո՛, այս բոլորի դիմաց մինչև հիմա աչք ենք փակել, սակայն դուք արդեն չափն ու սահմանը անցել եք: Մեր համբերության բաժակը լցվել է: Իսկ թե ի՞նչ է պատահել, հիմա մենք ձեզ կբացատրենք: Ղարաբաղում, Լաչինում, Շուշիում, Զանգելանում և շատ ուրիշ վայրերում, որոնց անունը չենք տալիս, դուք հազարներով սպանել եք մեր թուրք եղբայրներին: Եվ հետո մեզ հետ միասին նստում եք մի սեղանի շուրջ, կարծես թե ոչինչ չի պատահել, իսկ միաժամանակ օգնում էիք մեր բնաջնջմանը: Այսպես դուք վարվել եք շատ երկար ժամանակ, բայց այժմ դրան վերջ պիտի դրվի: Այն, որ դուք կարողացել եք ամենալավ դիրքը ձեռք բերել, եղել է շնորհիվ մեր բարեսրտության և, սակայն, դուք շարունակում եք ձեր հնամենի դավադիր վերաբերմունքը մեր հայրենիքի հանդեպ: Ինչու՞ մենք պետք է արժանի լինենք այսպիսի վերաբերմունքի: Այսպիսի բան ո՞վ կարող է անել մի ժողովրդի հանդեպ, ինչպիսին մերն է: Այն ժամանակները, երբ կարելի էր թուրք անվան և ինքնության հետ խաղալ, անցել են: Անցյալի ու ներկայի բոլոր բաց մսացած հաշիվները մենք ձեզ հետ մաքրելու ենք: Թուրքիան պատկանում է միայն թուրքերին. դա ձեր ականջներին օ՛ղ արեք: Մեր Բաշբուղի օրինակով մենք ոտքի ենք ելել, որ ազատագրենք Թուրքիան շահագործումից: Եթե չեք ուզում, որ ձեզ քշենք, թափենք Երևան, լավ կանեք, որ հնարավորինս շուտ կորչեք ու հեռանաք այստեղից: Քանզի այնպես, ինչպես մեր հարգելի վարչապետն է ասել, այս գործը մենք, ինչ կերպ էլ լինի, գլուխ կբերենք: Կարևոր չէ՝ ինչ ձևով: Սա մեր վերջին զգուշացումն է: Թուրքիան պատկանում է միմիայն թուրքերին և ոչ թե ձեզ նման իժերի: Չհամարձակվե՛ք մոռանալ դա»[31]:

[31] Տե՛ս Աշոտ Ավագյան, Գորշ գայլեր, էջ 26-27:

1975 թվականի փետրվարի 24-ին Կիպրոսում լույս տեսնող «Bozkurt» թերթն իր խմբագրականում զգուշացնում էր. «Նոր դաս կտրվի նրանց, եթե նրանք շարունակեն հիշեցնել իրենց հայրերի ու պապերի հետ կատարվածի մասին»:

Թուրքիան իր ամենամեծ խնդիրները կապում է ներքին թշնամու հետ, իսկ թշնամու «ամենահարմար թեկնածուն» հայերն են: Սա էլ այն դեպքում, երբ 1964 թվականի Թուրքիա-Հունաստան փոխանակությամբ (Թուրքիա տեղափոխվեցին Հունաստանի թուրքերը, իսկ Հունաստան գնացին Թուրքիայում բնակվող հույները) թուրքերը հիմնականում լուծեցին հույների խնդիրը:

Օսմանյան կայսրությունում և Թուրքիայի Հանրապետությունում առաջին հայ որբերից կազմված ենիչերիների մասին նշվում էր, որ այս երեխաներից է հետագայում կազմվել և կազմավորվել այսպես կոչված «Gorbuzler ordusu» զորամիավորումը (ամրակազմերի բանակ): Քարաբեքիրն իր հուշերում նշում էր, որ 1922 թվականին երեխաների բանակի թիվը հասնում էր 6 հազարի: Gorbuzler ordusu-ի շատ անդամներ հետագայում որոշակի դիրք են գրավել թուրքական զինվորական համակարգում: «1960-70 թվականներին նրանցից ոմանք կարևոր դիրք են զբաղեցրել թուրքական բանակում: Օրինակ, գեներալ Մեհմուդ Թաղմազը1968 թվականին եղել էր Թուրքիայի ցամաքային ուժերի հրամանատար, իսկ 1969-72 թվականներին՝ ԳՇ-ի պետ, գեներալ Ջեմալ Թուրալը1964-66 թվականներին եղել է ցամաքային ուժերի հրամանատար, իսկ 1966-69 թվականներին՝ ԳՇ-ի պետ, գեներալ Սեմիհ Սանշարը 1972 թվականին եղել է ցամաքային ուժերի հրամանատար, 1973-78 թվականներին՝ ԳՇ պետ»[32]:

«Գորշ գայլերն» ունեն ակնհայտ հակահայ տրամադրություններ: Թյուրքեշը նույնպես ասել է, որ Քրդական բանվորական կուսակցության՝ PKK-ի ղեկավար Օջալանը քուրդ չէ, հայ է, և իսկական անունն էլ Ակոփ Արթինյան է՝ փորձելով PKK-ին տալ հայկական բնույթ:

«Ջումհյուրեյեթն» իր 1993 թվականի հուլիսի 11-ի համարում հրապարակել է հոդված PKK-ի դեմ «հոգեբանական շարժում» նախաձեռնելու նպատակով վարչապետ Չիլլերի նախագահությամբ ստեղծված պետական քարոզչական հանձնախմբի մասին, որը PKK-ի դեմ կանոնավոր տեղեկություն պիտի տար Թուրքիայի քաղաքական շրջանակներին: Հանձնախումբը, ըստ նշված աղբյուրի, լուսանկարների և այլ տեղեկությունների միջոցով նպատակ ուներ ճշտել PKK-ի շարքայիններին և հարցեր ուղղել, թե գիտեն արդյոք նրանք, որ Աբդուլլահ Օջալանը հայերի ձեռքին գործիք է դարձել և այլն: «PKK-ականների համար պարզ էր դառնալու կազմակերպության մեջ գործող ահաբեկիչների հայկական ծագումը[33]»:

Որոշ վերլուծաբաններ նշում են, որ Թուրքիայում PKK-ն հաճախ ներկայացվում է որպես «հայ ստրուկներից» բաղկացած կառույց: Հավանաբար այս քայլերով թուրքերը ցանկացել են մի գնդակով երկու նապաստակ սպանել. այսինքն՝ քրդերին հայերի դեմ լարելով, ազատվել երկուսից էլ, իսկ Օջալանին հետապնդելու ժամանակ այն հարցին, թե կարո՞ղ է, որ Ափոն Ղարաբաղում լինի, թուրքերը պատասխանել են. «Ուր էր, թե Ափոն Ղարաբաղ գնացած լիներ, այդ դեպքում ռումբ նետելով կազատվեինք երկուսից էլ»[34]:

Աջակողմյան «Meydan» թերթը չի խորշել նույնիսկ այս մասին եզրակացնել. «Թուրքիայում քրդական հարց գոյություն չունի, կա միայն հայկական հարց»:

Թուրքական մի շարք աղբյուրներ առևտրական շրջանակներում հայտնի Բեհչեթ Ջանթուրքին ներկայացնում են որպես PKK-ի նյութական գործերի և հայ ահաբեկչական խմբերի հետ կապերի պատասխանատու, շեշտում են, որ նա «ծնվել է 1950 թվականին Դիարբեքիրում քուրդ հորից և հայ մորից»:

Մյուս փաստը վերաբերում է PKK-ի նախագահական խորհրդի անդամ Նուրիե Գեսպիրի և Կենտրոնական կոմիտեի անդամներ Բեքիր Բաքըրճյանի և Մուսա Հաջըևի հայկական ծագմանը, որն առաջինը բացահայտել է «Turkiye» օրաթերթը 2002 թվականի նոյեմբերին:

Ազդեցիկ «Milliyet» թերթում Թուրքիայի ռազմական արտակարգ դրության կառավարիչ Յունիլ Էրքանը հայտարարել է. «Մեր համակարգիչներում արձանագրել ենք հայկական ծագմամբ 800 PKK անդամներ»: Որոշ աղբյուրների համաձայն՝ PKK զինված անդամների թիվը շուրջ 5.500 է, ինչը համապատասխանում է Բիթլիսի տանկային ստորաբաժանման հրամանատար գեներալ Թագմայի հայտնած տեսակետին: Նա մամուլին տված իր մի հարցազրույցում պնդում էր. «PKK-ի ամեն 7-րդ անդամ հայ է: PKK այդ անդամները զավակներն են այն հայերի, ովքեր Օսմանյան կայսրությանը կոնակից դաշնահարեցին Առաջին աշխարհամարտի ընթացքում»: Նույն գեներալ

[32] Տե՛ս Ռ.Մելքոնյան, Հայերի բռնի իսլամացումը Ցեղասպանության տարիներին. Ընթացքը և հետևանքները, էջ 36:

[33] Տե՛ս 11 hemsin ve hemsinler, էջ 116-117:

[34] Ափո-Օջալան-նրա հայկական ծագման մասին ակնարկվել է նաև 2000 թվականի ՄԱԿ- ի առանձին զեկուցագրում:

Թագման 1995 թվականին մի այլ առիթով ևս հայտնում է, որ տեղի ունեցած ծանր մարտերի ընթացքում քրդեր չկային. «Նրանք, ովքեր մեր ստորաբաժանման ուժերի գրոհների արդյունքում նահանջեցին լեռները, հայեր էին»:

Ներկայումս Եվրոպայում հաստատված մի քանի «ծպտյալ» հայերի հետ առանձին հարցազրույցներից պարզվում է, թե ինչպես նրանցից ոմանք աշխատել ու պայքարել են PKK-ի շարքերում, բայց Ա.Օջալանի ձերբակալությունից հետո հիասթափվելով՝ որոշել են վերադառնալ մայր հայրենիք կամ մեկնել Եվրոպա՝ Հոլանդիա, Գերմանիա և այլն:

Թուրքիայի ծայրահեղ ձախ հոսանքներից մեկի՝ TIKKO կազմակերպության համացանցային էջում կարելի է հանդիպել 1946 թվականին Ամասիայում ծնված Կարպիս Ալթինօղլուի անվանը, կենսագրականին ու նրա քաղաքական-տեսական հոդվածներին, ընդ որում՝ հաճախ այնտեղ նշվում է նրա հայ լինելը: Նա կրոնադարձված ծպտյալ հայի ժառանգ է, հայրը՝ Օհաննես Ալթըն օղլին, ըստ թուրքական աղբյուրների, աքսորի երեխաներից է. այսինքն՝ Ցեղասպանության ժամանակ որբ մնացածներից և 1957 թվականին, դիմելով Ամասիայի՝ քաղաքացիական հարցերով առաջին ատյանի դատարան, վերընդունել է քրիստոնեություն, իսկ մայրը՝ նույնպես ամասիացի, 1927 թվականին ծնված հայ քրիստոնյա է՝ Մարիամ անունով:

Հաջորդ հայ «ավազակներից» կարելի է նշել Օրհան Բաքըրին, կամ Արմենակ Բաքըրճյանին: Ծնվել է 1953 թվականին Դիարբեքիրում, ավելի ուշ՝ Ստամբուլի համալսարանում սովորելուն զուգընթաց, նա իր ընկերոջ՝ «Ակօս» թերթի գլխավոր խմբագիր Հրանտ Դինքի հետ աշխատել է հայկական Սուրբ Խաչ վարժարանում որպես դասուսույց: Հենց այդ տարիներին էլ նրանք ակտիվորեն սկսել են զբաղվել ու հետաքրքրվել Թուրքիայի արևելյան ու հարավարևելյան շրջաններում ապրող քրդախոս, իսլամացած հայերի խնդրով: Նրանց այդ հարցում մեծապես աջակցել է դիարբեքիրցի քահանա տեր Կիրակոսը: Իր աջակցությունն է ցուցաբերել նաև ժամանակի Հայոց պատրիարք Գարեգին Խաչատուրյանը: Արմենակը և իր համախոհ ընկերները այդ տարիներին համագործակցել են և հաճախ նաև անդամակցել ծայրահեղ ձախակողմյան խմբավորումներին ու նաև այդ պատճառով են թաքցրել իրենց հայկական անունները: Երբ Արմենակը «բարձրանում էր լեռները» Թունջելի-Խարբերդ-Երզնկա շրջաններում, նրան կոչում էին «Ալի աղա» ծածկանունով: Նա փորձում է կապ հաստատել նաև տեղի ծպտյալ հայերի հետ:

Հետաքրքրական է նաև Օրհան Բաքըրի ու Խարբերդի մզկիթի իմամի հարաբերությունները: Պարզվում է, որ այդ իմամն իրականում նույնպես ծպտյալ հայ է, որի ողջ ընտանիքը զոհ է գնացել Ցեղասպանության տարիներին, ու ինքն էլ վիրավոր մի կերպ փրկվել է: Այդ իմամն իրականում հայ քահանա է եղել, ով ցերեկները հանդես էր գալիս մզկիթում որպես իմամ, իսկ գիշերները իր տան նկուղում սարքած գաղտնի եկեղեցում ծառայություն էր անում: Նա և Օրհան Բաքըրը հանդիպում էին հենց այդ ընդհատակյա եկեղեցում, զրուցում, բանավիճում տարբեր հարցերի շուրջ: Օրհանը փորձում էր համոզել այդ իմամին, որ վերադառնա հայության գիրկը, սակայն այդ ծպտյալ հայը չի համաձայնում:

Օրհան Բաքըրը տարիներ շարունակ եղել է հետապնդման մեջ և 1980 թվականի մայիսի 13-ին Խարբերդի նահանգի Քարաքոզան նահանգում, ընկնելով ծուղակի մեջ, զոհվում է: Օրհանի մահից հետո ընկերները գաղտնի փախցնում են նրա մարմինը և իր կտակի համաձայն թաղում Ֆարաչ լեռներում: Նրա հուղարկավորությունը վերածվել է մեծ արարողության:

TIKKO կազմակերպության զոհվածների ցուցակում հանդիպում ենք 3 հայ երիտասարդների կենսագրականների:

Գիտենք՝ ASALA-ն համագործակցել է PKK-ի հետ, սակայն հայրդական համագործակցությունը իրեն զգալ է տվել դեռևս 1920-ական թվականների ավարտին, երբ պայթեց Արարատյան ապստամբությունը՝ սասանելով քեմալական Թուրքիայի հիմքերը: Շեյխ Սայիդ փաշայի՝ 1925 թվականին գլխավորած ընդվզման իներցիայով ընթացող այդ նոր ապստամբության 3 գլխավոր ղեկավարներն էին Իբրահիմ Հըսգե Թելի փաշան, Իհսան Նուրի փաշան ու Զիլան բեյը[35]: Արարատյան ապստամբության կազմակերպման գործում հայրդական համագործակցությունը չէր վրիպում Թուրքիայի իշխանու-

[35] Զիլան բեյ-Խնուսի Հարամիկ գյուղի բնակիչ Արտաշես Մուրադյան: Խաչիկ Դաշտենցն իր «Ռանչպարների կանչը» վեպում Զիլան բեյին ներկայացնում է այսպես. «...Բացատի վերջավորությանը մի պատանի հայդուկ զբաղված էր ծառերի չոր ճյուղեր կեղևելով:...: Սրա պաշտոնն էր չոր փայտերից անծուխ կրակ վառել: Մեկ առ մեկ վերցնում էր ճյուղերը, զննում ոստոտ տեղերը և կեղևը երկարությամբ մաշկում: Երկար տարիներ նա պետք է կեղևեր ծառերի ճյուղերը, մինչև որ որևէ կռվի մեջ քաջություն ցույց տար և նրան արտոնություն տրվեր հրացան կրելու՝ ավելի մեծ ճակատամարտերի մասնակցելու համար: Մինչև այդ շատ կռիվներ էին եղել, բայց նա ոչ մի կռվի մասնակցած չկար: Վրան ոչ մի վերք ու սպի չուներ: Ֆիդայիները նրա անունը ծաղրանքով կնքել էին «Բրինդար», այսինքն՝ «վիրավոր»:

Ինչպես տեսնում ենք՝ ֆիդայիների մեջ ոչ առաջին շարքերից ելնում է մեկը, որը հետագայում առաջիններից է դառնում քրդական թերևս ամենահզոր ապստամբության կազմակերպման և ղեկավարման մեջ:(Ա.Ա.)

թյունների աչքից: Ինչպես Սայիդ փաշայի ապստամբության, այնպես էլ հոյբունական այս շարժման մղիչ ուժն ու շունչ տվող ոգին թուրք իշխանությունների համոզմամբ հայությունն էր՝ իր վերապրող զանգվածներով:

Թուրքիայում հայ վրիժառուներին անվանում էին «էշքիյաներ»՝ ճանապարհի ավազակներ:

Ծայրահեղական կազմակերպությունների ձերբակալված որոշ անդամների մոտից հայտնաբերվել էին նաև պաստառներ, որոնց վրա գրված է եղել. «Հայոց ցեղասպանության պատասխանը տալու եք»:

Թուրքական պետական կառույցների մոտեցումը կրոնափոխ հայերին

Թուրք պատմաբան Թաներ Աքչամը նշում է, որ թուրքական պետությունը հենց սկզբից միջոցներ է ձեռք առել Ցեղասպանության տարիներին իսլամացած հայերին հետազայում տարբերակելու համար: Համապատասխան մարմիններից պահանջվել է գրանցամատյաններում հայերի անունների դիմաց հատուկ նշումներ անել և անձնագրերը լրացնել այնպես, որ հասկացվի նրանց հավատափոխ լինելը: Պատմակեղծարար Յուսուֆ Հալաչօղլուն հայտարարել է. «Պետությունը, տուն-տուն շրջելով, արձանագրել է այս մարդկանց»[36]:

1938 թվականին թուրքական պետությունը կոտորած է կազմակերպել Դերսիմում: Դերսիմի շատ ալևիներ, մեջբերելով հայերին, ասում էին, որ թուրքական բանակի թիվ մեկ թիրախը 1915 թվականին այնտեղ ապաստան գտած հայերն էին: Մի տարեց մարդ նշում է, որ թուրքերը 1915 թվականին կիսատ թողածը շարունակեցին 1938-ին, և այդ կոտորածի ժամանակ սպանվեցին մեծ թվով կրոնափոխ հայեր:

Այս նույն թեմայի համատեքստում է Սաբիհա Գյոքչենի պատմությունը: Սաբիհա Գյոքչենը լեգենդար անուն է շատ թուրքերի համար: Նա Թուրքիայի առաջին կին օդաչուն էր, ավելին՝ առաջին ռազմական կին օդաչուն, ով երկար տարիներ կարևոր տեղ է զբաղեցրել թուրքական ռազմաօդային ուժերի համակարգում, ճանաչվել աշխարհի հայտնի 20 օդաչուներից մեկը, ընդ որում, այս տիտղոսին արժանացած առաջին և միակ կինն է: 1938 թվականին Դերսիմի ալևիների ապստամբության ժամանակ ռմբակոծել է ապստամբներին, ինչը մեծապես օգնել է թուրքական բանակին ճնշել խռովությունը:

Եղել են դեպքեր, երբ իսլամացված հայը գործուն մասնակցություն է ունեցել հայ ազատագրական պայքարին կամ հայությանը վերաբերող այլ հարցերին: Մասնավորապես՝ ծնունդով Տարոնի Բուլանըխ գյուղի ուսուցիչ Ավետիսը եղել է 19-րդ դարի վերջերի հայ հեղափոխական պայքարի անդամներից: Այդ պատճառով էլ ձերբակալվել է և ենթարկվել անասելի կտտանքների: Չդիմանալով այս ամենին՝ Ավետիսը կրոնափոխ է լինում, ընդունում իսլամ, ավելին, դառնում ոստիկան և այդ ոլորտում զբաղեցնում բարձր պաշտոն՝ դառնալով բաշ կոմիսեր Մեհմեդ էֆենդի, այսինքն՝ գլխավոր կոմիսար: Ոստի-

[36] Տե՛ս Ռուբեն Մելքոնյան, Հայերի բռնի իսլամացումը ցեղասպանության տարիներին, էջ 136:

կան Մեհմեդ էֆենդին դառնում է հայերի խիստ հակառակորդը և իր բոլոր լծակներով պայքարում նրանց դեմ, սակայն դա ընդամենը արտաքին աշխարհի համար էր: Նրա գաղտնի կյանքի կարևոր դրվագներ է ներկայացնում Ռուբեն Տեր-Մինասյանը, ով հեղափոխական պայքարի տարիների տարբեր փուլերում համագործակցում էր բաշ կոմիսեր Մեհմեդի հետ, ով նրանց դաշնակիցն է եղել և օգնել խուսափել տարատեսակ վտանգներից: Խոսելով ուրացած Ավետիսի, մոլեռանդ մուսուլմանի հակահայ կերպարի մասին՝ Ռուբենը գրում է. «Ան մահմետական էր, բայց մաացած էր քրիստոնեայ. կինն ու որդիներն էլ նոյնպէս ներքուստ մոլեռանդ քրիստոնեաներ էին»: Մեհմեդ էֆենդիի մասին «Հայրենիք» ամսագրում հոդվածով հանդես է եկել Ա.Աստվածատրյանը: Նա գրում է, որ Մեհմեդ էֆենդին ապրում էր մեծ ողբերգություն, քանի որ շարունակում էր շրջապատի համար լինել մոլեռանդ մուսուլման, իսկ գիշերները աղոթում տան մի անկյունում սարքած գաղտնի եկեղեցում. «Այդ դժբախտ ընտանիքի իսկական կեանքը գիշերն էր»:

Առաքելոց վանքի կռվի ժամանակ Մեհմեդը՝ որպես թուրք պետության ներկայացուցիչներից մեկը, մեկնում է բանակցությունների, այնտեղ մի պահ հարմարեցնելով՝ առանձնանում է Գևորգ Չաուշի հետ: Նրա դեմքից կարդացվում էր մոտավորապես հետևյալը. «Ես էլ եմ ուզում սուլթանի բերդը քանդել, բայց ես այդ բերդի մեջ եմ, իսկ դուք բերդից դուրս: Ձեր ուժը անձրևի կաթիլ է բերդի պատերին ընկած, թեև դա էլ մեծ բան է: Թուրքն ասում է «դամլա, դամլա սելավ օլուր» (կաթիլ կաթիլ հեղեղ կեղնի): Բայց ես, որ այդ բերդի դուռը չբանամ, սելավն էլ անկարող կլինի քանդել այդ անհիմյալ ուժը»: Չաուշին ասում է. «...ես հավատափող դարձա տառապանքով, որ իմ տառապյալ ժողովրդին օգնեմ:...: Թո՛ղ անիծեն ու հայհոյեն ինձ: Թո՛ղ ինձ «դարձուկ» համարեն: Հետո կիմանան, թե ով է եղել պարոն Ավետիսը»:

Ավելի ուշ Մեհմեդ էֆենդին տեղափոխվում է Ստամբուլ և Զավեն Պատրիարքի ձեռամբ մկրտում իր զավակներին՝ նրանց վերադարձնելով քրիստոնեության, իսկ ինքը մնում է իսլամի գրկում մինչև կյանքի վերջ:

ՀԱՅ ՆՈՐԱԳՈՒՅՆ ԶԻՆՅԱԼ ՊԱՅՔԱՐԻ ՄԱՐՏԻԿՆԵՐԸ

«Գորշ գայլերի» ատելությունն, իհարկե, ուղղված չէ միայն քրդերի դեմ: Յուրաքանչյուր փոքրամասնություն, որ խափանում է նրանց պատրանքը, թե Թուրքիան միատարր ազգության երկիր է, իրենց աչքի փուշն է: Թուրքիայում բոլորը պետք է թուրք լինեն: Ինչպես թուրքերի հայր Աթաթուրքն է ասում. «Ne mutlum Turkum diyene» (երանի նրան, ով ասում է՝ ես թուրք եմ): Այսպես, Գյուլենսոյի մատնանշած հայ փոքրամասնությունը ատելության կրակի հարատև թիրախն է, թեև քանակային տեսակետից ընդամենը 50 հազար է: Նվաստացման նպատակով, սակայն, նրանք հաճախ քրդերին ու PKK-ին «հայ ստրուկներ» են անվանում:

Հայ նորագույն զինյալ պայքարի մեջ ԱՍԱԼԱ[37]-ի կողքին իր ուրույն տեղն ունի նաև Դաշնակցության մարտական կառույցը: Այդ պատճառով էլ կներկայացվեն երկուսն էլ:

«Հայ հեղափոխական դաշնակցություն» կուսակցությունը ստեղծվել է 1890 թվականին Հայաստանի անկախության համար մղվող պայքարը կազմակերպելու նպատակով: Դաշնակները թուրք պետական, քաղաքական ու ռազմական գործիչների դեմ պայքարի հիմնական ձևերից մեկը ի սկզբանե համարել են զինյալ պայքարը: Դաշնակցության պատմության մեջ հայտնի են զինյալ պայքարի վերելքի հատկապես 3 շրջան. առաջինը համընկնում է 19-20-րդ դդ ընկած ժամանակահատվածին: Հիմնական նպատակը՝ Թուրքահայաստանում թուրքերին հավասար տնտեսական ու քաղաքական իրավունքների ապահովումն էր հայերի համար: Երկրորդ շրջանը համընկնում է 1920-ական թթ, երբ դաշնակները վրեժ էին լուծում թուրքերից հայ ժողովրդի ցեղասպանության ժամանակ զոհված մոտ 1,5 միլիոն հայերի համար: Երրորդ շրջանը 1977-1983 թվականներն են:

[37] ԱՍԱԼԱ– ՀԱՀԳԲ (Հայաստանի ազատագրութեան հայ գաղտնի բանակ)

Դաշնակների մարտական խմբավորումը կոչվում էր «Հայոց ցեղասպանության արդարության մարտիկներ», «Հայ հեղափոխական բանակ»: «Հայոց Ցեղասպանության արդարության մարտիկների» առաջին գործողությունը Վատիկանի թուրք դեսպանի զգետնումն է 1977 թվականին, վերջին գործողությունը՝ «Հայ հեղափոխական բանակի»՝ Լիսաբոնի 1983 թվականի գործողությունը: Պետք է նշել, որ Դաշնակցությունը սկսեց գործել, երբ ԱՍԱԼԱ-ն սկսեց գործել, այսինքն՝ 1975 թվականից հետո և դադարեց գործել, երբ ԱՍԱԼԱ-ն դադարեց գործել:

Նշյալ ժամանակահատվածում նրանք իրականացրին Վատիկանի, Լոս Անջելոսի, Սիդնեյի, Բելգրադի, ինչպես նաև Լիսաբոնի զինյալ գործողությունները:

Տարիներ առաջ մի թուրք լրագրողի այն հարցին, թե ինչ է մտածում ԱՍԱԼԱ-ի մասին, ԼՂՀ նախկին նախագահ Արկադի Ղուկասյանը պատասխանեց. «ԱՍԱԼԱ-ն ազատագրական պայքարի փիլիսոփայություն է»: Ավելի ճշգրիտ և զորեղ երևի հնարավոր չէր ձևակերպել...

ԱՍԱԼԱ-ն գործում է Թուրքիայի տարածքում և այլ երկրներում 1975 թ. հունվարից: Նրա գլխավոր նպատակը Հայաստանի անկախության վերականգնումն է պատմական սահմաններով: Դա Թուրքիայի արևելքն է՝ ներառյալ Արդվինը, Կարսը, Էրզրումը, Վանը, հարավային Իրանի մի մասը, Ադրբեջանի Նախիջևան գավառը: Պայքարի եղանակները՝ հարձակում թուրք քաղաքացիների վրա, ովքեր պաշտպանում են Թուրքիային: Ե՛վ ԱՍԱԼԱ-ն և՛ ՔԱԿ-ը մարքսիստական կազմակերպություններ են:

ԱՍԱԼԱ-ի գործողությունների առաջին շրջանը համընկնում է 1975-82 թվականների հետ: Այդ շրջանում ԱՍԱԼԱ-ի հիմական բազան էր Լիբանանը, հիմական գործընկերը՝ Պաղեստինի ազատագրության կազմակերպությունը: ԱՍԱԼԱ-ն մեծ աջակցություն էր ստանում շատ երկրների հայ համայնքների կողմից: Կազմակերպության մարտիկները ոչնչացնում էին թուրք դիվանագետների, որոնք գտնվում էին տարբեր երկրների թուրքական ընկերություններում և ավիաընկերություններում, հիմականում պայթյունների միջոցով:

1981 թվականի սեպտեմբերին նրանց հաջողվեց գրավել թուրքական դեսպանատները Փարիզում և Լիբանանում:

Սակայն 1982 թվականին Իսրայելը հարձակվեց Լիբանանի վրա, և դա ստիպեց ԱՍԱԼԱ-ին տեղափոխվել Սիրիա ու Պաղեստինի ազատագրության կազմակերպության փոխարեն սկսեց համագործակցել

Աբու-Նիդալիա կազմակերպության հետ: Բացի այդ, կազմակերպության մեջ սկսվեցին քննարկումներ բնակչության շրջանում զանգվածային զոհերի պատճառ հանդիսացող գործողությունների շուրջ: Սրա առիթ դարձավ 1983 թվականի հունիսի «կույր» ահաբեկչությունը, որը Հայկական պետականության համար վտանգավոր էր համարվում:

Նրա հիմական բազաները առաջվա պես գտնվում են Սիրիայում: Նա կապ է պահպանում քրդական PKK-ի հետ:

Հաշվի առնելով, որ

ա.1915-20 թ.թ. թուրքերի կողմից Ցեղասպանությունը պաշտոնապես ճանաչեց ու դատապարտեց Եվրախորհուրդը, Ավստրալիան, ու Կանադան.

բ. Հայաստանը դարձավ անկախ պետություն.

գ.Հայաստանի ու Ադրբեջանի միջև մղվող պատերազմի արդյունքում Արցախն անցավ Հայաստանի վերահսկողության տակ, կազմակերպությունը հրապարակեց իր գործունեության նոր ծրագիրը, որը սակայն, հրաժարում չէր զինյալ պայքարից:

Միայն 1975-1985 թթ. ընթացքում ԱՍԱԼԱ-ն իրականացրել է ավելի քան 200 զինված հարձակում թուրքական հաստատությունների ու պաշտոնյաների դեմ Թուրքիայի տարածքում և նրանից դուրս: Նշենք դրանցից մի քանիսը.

1979թ.՝ հարձակում Լիոնի թուրքական հյուպատոսարանի վրա:

1981թ.՝ հարձակում թուրքական դեսպանատան զինվորական կցորդի վրա Փարիզի կենտրոնում:

1981թ. հունիսի 9՝ հարձակում Ժնևի թուրքական դեսպանատան զինվորական կցորդի վրա: Ժամեր անց ձերբակալված Մարտիրոս Ժամկոչյանը դատապարտվեց 15 տարվա բանտարկության:

1981թ. սեպտեմբերի 24՝ կազմակերպության չորս մարտիկները՝ Վազգեն Սիսլյանը, Գևորգ Գյուզելյանը, Արամ Բասմաջյանն ու Հակոբ Ջուլֆայանը գրավում են Փարիզի թուրքական հյուպատոսարանը:

1982թ. օգոստոսի 7՝ հարձակում Անկարայի «Էսեմբոդա» միջազգային օդանավակայանի վրա, մարտիկներ՝ Զոհրապ Սարգսյան և Լևոն Էքմեքչյան:

1983 թ.՝ հարձակում Կ. Պոլսի Ռսկու փակ շուկայի վրա, մարտիկ՝ Մկրտիչ Մադարյան:

1983 թ.՝ ռմբային հարձակում Փարիզի Օռլի օդանավակայանի թուրքական ավիաուղիների բաժնի վրա: Հետագայում ձերբակալվեցին և

տարբեր տարիների բանտարկության դատապարտվեցին Վարուժան Կարապետյանը, Սիմոն Նաիրյանը, Հովհաննես Սեմերջյանը:

Ի դեպ, իրականացված գրեթե բոլոր գործողությունները ամրագրված էին հատուկ ասելիքով ու հաղորդագրություններով, որոնց ուսումնասիրությունը իր հերթին շատ հետաքրքրական նյութ է կազմակերպության գաղափարախոսությունն ու մարտավարությունը հասկանալու տեսակետից, որն ուներ ազատագրական պայքարի իր ծրագիրը և որի երկրորդ կետում ասված էր. «Հայութիւնը հիմնական եւ անյետաձգելի նպատակ ունի ազատագրել Արեւմտեան Հայաստանը եւ բռնագրաւեալ այլ հողամասերը: Այս է Հայաստանի Ազատագրութեան Հայ Գաղտնի Բանակի միակ նպատակը, զոր իրագործելու համար ընտրած է զինեալ պայքարի ուղին»:

Զինյալ պայքարի կարևոր ձեռքբերումներից էր «Հայկական ժողովրդային շարժում» կազմակերպության՝ ԱՍԱԼԱ-ի քաղաքական թևի կազմավորումը, որն ուներ մամուլի իր օրգանները և տեղակայված էր աշխարհի գրեթե բոլոր հայաշատ վայրերում:

Հայկական հարցի ակտիվացման և ԱՍԱԼԱ-ի գործողությունների արդյունքում 1970-1980-ական թվականները փորձության տարիներ էին թուրքահայ համայնքի համար: Թուրքիայում ուժեղացան հակահայկական տրամադրությունները: Առավել դժվար կացություն ստեղծվեց 1982 թվականին Անկարայի Էսենբողա օդանավակայանում կազմակերպված գործողության և դրան հետևած Լևոն Էքմեջյանի դատավարության ժամանակ: Թուրքական իշխանությունները իրենց քարոզչական քաղաքականության մեջ օգտագործում էին թուրքահայ համայնքին, և ժամանակի պատրիարք Շնորհք Արքեպիսկոպոս Գալուստյանը ստիպված եղավ հանդես գալ վերոհիշյալ գործողությունները դատապարտող հայտարարություններով: Բանն այն է, որ եթե ԱՍԱԼԱ-ն ահաբեկչությունների միջոցով Հայոց ցեղասպանության ու կորցրած պատմական տարածքների հարցն էր բարձրացնում, ապա թուրքահայ համայնքի պատրիարքը պարտավոր էր դեմ արտահայտվել նման քայլերին, քանի որ դրանով նա պետք է ապահովեր թուրքահայ համայնքի անվտանգության հարցը: Թուրքահայ համայնքը միշտ էլ ենթարկվել է փորձությունների և միշտ էլ վտանգի տակ է, ու կան հայության պարբերական ահաբեկումներ:

Նորագույն զինյալ ազատագրական պայքարն ունեցավ նաև նահատակներ՝ 39 հոգի. ինչպես նկատել է մեր հոգևորականներից մեկը՝ «ճիշտ մեր այբուբենի տառերի քանակով»:

39 անուն՝ Գուրգեն Յանիկյան, Հակոբ Տարագճյան, Կարապետ Փաշաբեզյան, Վարդան Շիրվանյան, Մկրտիչ Մատարյան, Լևոն Էքմեքչյան, Զոհրապ Սարգիսյան, Պիեռ Գյուլումյան, Սուրեն Գրիգորյան, Զավեն Աբեթյան, Եղիա Քեշիշյան, Արամ Բասմաջյան, Սարգիս Գյուլխանջյան, Անդրանիկ Պաթուզյան, Ժան Խոզյան, Գառնիկ Վահրատյան, Խաչատուր Խուրշուտյան, Միլվա Չիլինկիրյան, Հրաչ Թրթոյան, Հրաչ Լուսինյան, Մովսես Բեքարյան, Սարգիս Դերձակյան, Անդրանիկ Սասունյան, Մինաս Սիմոնյան, Ռաֆֆի Բալյան, Զավեն Գազանճյան, Հարություն Վարդանյան, Հարություն Թագուշյան, Նուպար Յալըմյան, Խաչիկ Հավարյան, Վիգեն Այվազյան, Վաչե Տաղլյան, Արշակ Տեր-Սահակյան, Ջորջ Վարդանյան, Հարություն Խաչերյան, Հարություն Գյուլուզյան, Արամայիս Օհանյան, Լևոն Երկաթ, Գևորգ Աճեմյան:

Նրանց հիշատակը հավերժացնելու համար Երևանում՝ «Եռաբլուր» կոչվող պանթեոնում, կառուցվեց հուշարձան, դրվեցին 39 շիրմաքարեր, որոնք սպասում են թանկագին մասունքների վերադարձին հայրենի հող...

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՊԱՆԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ

Պանադրբեջանական նորօրյա շարժման հիմքում պանթուրքիզմի ցեղապաշտական գաղափարախոսությունն է: Սա անմիջական սպառնալիք է ոչ միայն Հայաստանի, այլև Իրանի, Ռուսաստանի և Վրաստանի համար:

Սուլեյման Դեմիրելը Հայաստանն անվանում էր «անիծյալ սեպ», իսկ պանթուրքիստ Յուսուֆ Աքչուրան կոչում էր «թումբ»:

«Գորշ գայլերը» Ադրբեջանում գտնվում էին լեգալ կարգավիճակում: Այստեղ հաշվվում էր կուսակցության մոտ 15 000 անդամ: Ի դեպ, նրանք բոլորը զինված էին, ծառայում էին բանակում, Ներքին գործերի նախարարությունում[38]:

Ադրբեջանում ահաբեկչական անկախ կազմակերպությունները կապված չեն արմատական-իսլամիստական կազմակերպությունների հետ: Հյուսիսային Ադրբեջանում սուննի մահմեդական բնակչության շրջանում կան այդպիսիները, ու նրանք ֆինանսավորվում են (որքան էլ զարմանալի է) Իրանի շիա կազմակերպություններից:

«Մուսաֆաթը» կողմնորոշված է դեպի ԱՄՆ, Թուրքիա: Հովանավորվում է «Bozkurt»-ի կողմից, փորձում է ստեղծել «Bozkurt»-ի բջիջներ Ադրբեջանում, որին դեմ էր Իսա Ղամբարը:

Ադրբեջանի զինյալ խմբավորումները կազմված են հիմնականում չեչեններից (հատկապես Բաքվի խմբավորումը): Ալիևի զինյալ խմբավորումը կազմված է հիմնականում նախիջևանցիներից:

Ադրբեջանում կա հիմնականում 3 կլան՝ Նախիջևանի, Բաքվի, Գյանջայի (Գանձակ): Գյանջայի կլանը կազմված է 200 գերդաստան ընտանիքից:

Ըստ Ադրբեջանի Ազգային դեմոկրատական կուսակցության («Bozkurt») նախագահ Իսկենդեր Համիդովի՝ Ադրբեջանին ստիպում են հրաժարվել Լեռնային Ղարաբաղի վրա իր ազդեցությունից:

Ադրբեջանի «Գորշ գայլերի» կուսակցությունն այժմ իրեն կոչում է Ազգային դեմոկրատական կուսակցություն՝ հավանաբար քողարկելու համար իր կապը Թուրքիայի «Գորշ գայլերի» հետ:

Ադրբեջանի «Գորշ գայլերի» առաջնորդն է Իսկենդեր Մեջիթ օղլի Համիդովը: Նա ծնվել է 1948 թվականին Քելբաջարի (Քարվաճառ) Բաղլրթեփե գյուղում: Մասնագիտությամբ իրավաբան է: 1990-95 թթ.

[38] Տե՛ս «Сегодня», 06/09/1993 г.

եղել է խորհրդարանի անդամ: Աբդուլֆազ Էլչիբեյի կառավարությունում (1992-93 թթ.) նա եղել է ներքին գործերի նախարար և չի էլ թաքցնում, որ «գորշ գայլ» է: Պաշտոնաթող եղավ 1993 թվականին այն բանից հետո, երբ Հայաստանի դեմ ատոմային ռումբ օգտագործելու սպառնալից հայտարարություն արեց, այնինչ հայտնի է, որ Ադրբեջանը երբեք նման զենք չի ունեցել: 1995 թվականի սեպտեմբերին դատապարտվել է 14 տարվա ազատազրկման: 9-ամյա բանտարկությունից հետո՝ 2003 թվականին, ազատվել է բանտից:

Բաղումյանը «Ալիք» օրաթերթի 2006 թվականի հուլիսի 6-ի համարում գրում է, թե պանթուրքիզմի այսօրվա ադրբեջանական տարբերակի արագ թափ ստանալուն մի քանի ազդակ են սատարել՝

ա. նավթային ընկերությունների շահերը, որոնք համընկնում են ադրբեջանական տարրի (և թուրքական՝ ընդհանրապես) շահերի, այդ թվում Մեծ Ադրբեջանի գաղափարի հետ (ինչպես եղավ Խորհրդային Միության պարագայում, հատկապես 2-րդ աշխարհամարտի տարիներին).

բ. Արևմուտքի (ներառյալ՝ Իսրայելի) և Իրանի հարաբերությունների գերլարվածությունը, առավել ևս՝ կապված միջուկային հակամարտության հետ.

գ. Ադրբեջանի համար ղարաբաղյան հարցում բանակցությունների միջոցով իր ազգայնամոլ մոտեցումների՝ հեշտ լուծման հասնելու անհավանականությունը և դրանից բխող հուսախաբությունը.

դ. Հայոց ցեղասպանության ճանաչման հարցով Թուրքիայի վրա միջազգային ճնշման վերացմանը միտված նույն երկրի պետական հակադիր ծրագրերը.

ե. միջազգային ասպարեզում Հայկական սփյուռքի ազդեցությունը չեզոքացնելու համար տարբեր երկրներում թուրք-ադրբեջանական գաղութների կազմակերպման նոր գործընթացը պանթուրքիստական դրոշի ներքո:

Նպատակ և միջոց

Պանադրբեջանական շարժման վերջնական նպատակը Մեծ Ադրբեջանի ստեղծումն է, որի մեջ, բացի ներկա Ադրբեջանի Հանրապետությունից, պիտի մտնեն Ղարաբաղը, Հայաստանն ամբողջությամբ, Իրանի Ատրպատական ու Ասթարա նահանգները և որոշ շրջաններ Վրաստանից և Ռուսաստանի Դաշնությունից:

Որպես գլխավոր զենք՝ թուրք-ադրբեջանական դաշինքը օգտագործում է թուրքացման (turkafication) միջոցը: Թուրքացման գործը, եթե նախկինում առաջ էր տարվում գլխավորապես ռազմական միջոցներով, այժմ հիմնականում ընթանում է «փափուկ» (soft) ձևերով, որոնցից են.

ա. թուրքերենի տարածումը, ապա՝ լեզվի ու ցեղային պատկանելության նույնացումը.

բ. պատմության խեղաթյուրված վերախմբագրումը՝ պանթուրքիստական գաղափարներին ու ծրագրերին համահունչ: Այս հարցում նրանք հետևում են Աթաթուրքի խորհրդին, ըստ որի՝ պատմություն գրի առնելը նույնքան կարևոր է, ինչքան պատմություն կերտելը: «Պատմաշինությունը» թուրքերը պաշտոնապես սկսել են դեռևս նոր Թուրքիայի Հանրապետության հիմնադրման օրվանից՝ նպատակ ունենալով.

- ազգակերտումը (նաև՝ հպատակ ժողովուրդների ձուլումով),
- ազգայնական-ցեղապաշտական սնապարծությանը մղում տալը, թրքության մեջ ոգի ստեղծելն ու մոբիլիզացնելը,
- մրցակից և հարևան ժողովուրդների պատմական ժառանգությունների յուրացումը և արդյունքում՝ թուրք զավթողականության համար պատմահիրավական ենթահող պատրաստելը:

Զավեշտական են նաև մյուս ժողովուրդներին թուրք համարելու փորձերը (քրդերին, որոնց համարում են լեռնային թուրքեր, տաջիկներին, ամերիկյան մայրցամաքում բնակվող կարմրամորթներին, բոսնիացիներին և, վերջապես, հայերին): Հայերը, իբր, սերում են կորած թուրք մի ցեղախմբից:

Այսպիսով՝ պատմական խեղաթյուրումը սահման չի ճանաչում, աներևակայելիորեն չափազանցված է և կատարվում է գիտականորեն չհիմավորված ընդհանրացումների միջոցով:

Կազմակերպություն և ղեկավարություն

Պանադրբեջանական (ինչպես նաև պանթուրքական) մերօրյա շարժման առանցքային կազմակերպությունը «Գորշ գայլեր» խմբակցությունն է, որը կապեր ունի թուրքական մաֆիայի հետ: Նրանք են այդ գաղափարախոսությունը վերակենդանացրել Ադրբեջանում հետխորհրդային տարիներին, իսկ այժմ տարածում են Իրանի թուրքախոս բնակչության շրջանում: «Գորշ գայլերի» ազգայնամոլական գաղափարները լայն տարածում ունեն Թուրքիայում՝ թուրքական սպայակույտի, անվտանգության կառույցների, տնտեսական մաֆիայի, ինչպես նաև որոշ քաղաքական կուսակցությունների ու սրանց ղեկավարության շրջանում: Թուրք ղեկավարներից «Գորշ գայլերի» կազմում են նաև Մերալ Աքսեները, պատմաբան Դիքլերը, ադրբեջանցիներից՝ Վաֆա Ղուլիզադեն, իրանցի ադրբեջանցիներից՝ Մահմուդ Չեհրենգալին և Ռահիմ Շահբազին:

Մ. Չեհրեգանլին Իրանի անջատողական ադրբեջանցիների գլխավոր ղեկավարն է: Ներկայումս ղեկավարում է SANAM (Հարավային Ադրբեջանի ազգային զարթոնքի շարժում) հակահիրանական ու հակահայկական խմբակցությունը:

Հակահայկական քարոզչության մեջ ներառում են Ղարաբաղի խնդիրը (այդ շարքից՝ Խոջալուի «ցեղասպանությունը»), Հայոց ցեղասպանության հերքման հարցը, Իրանական Ատրպատականում իբր 20-րդ դարասկզբին հայերի կողմից տեղի ժողովրդի նկատմամբ իրականացրած ջարդերը (Անդրանիկ և այլն), Դաշնակցության գործած «ոճիրները» Ատրպատականի բնակչության և Ադրբեջանի դեմ, հայ-պարսկական բարեկամության հակաատրպատականական (հակաադրբեջանական) բնույթը և այլն: Այսօր ՍԱՆԱՄ-ը հայտարարում է, որ ամբողջ աշխարհում ունի 24 ներկայացուցչություն (ԱՄՆ, Եվրամիություն, Թուրքիա, Եվրախորհրդարան և այլն):

Մյուս՝ ադրբեջանական պանթուրքիստական խմբակցություններից կարելի է հիշատակել UAM-ը, AZNF-ը, SANLM-ը:

Միջազգային հովանավորություն

Ադրբեջանական ազգայնականության զարթոնքը համընկնում է ԱՄՆ-ի, Եվրամիության, Թուրքիայի և Իսրայելի աշխարհաքաղաքական շահերի հետ: Նախ՝ դրա հաջողության դեպքում վերանում է Իրանի ազդեցիկ դերը Կենտրոնական Ասիայից և Միջին Արևելքից մինչև Արևմտյան Ասիա ու Եվրոպա անցնող նավթի ու գազի փոխադրական ուղիների վրա: Երկրորդ՝ Կասպից ծովի տարածաշրջանում ստեղծվում է մի երկրորդ կենտրոն՝ Պարսից ծոցից քաղաքականապես անջատ, որն այս շրջանի արաբական պետություններին և Իրանին զրկում է միջազգային մակարդակով ազդեցություն ունենալուց և նավթի գների ճշտման մեջ որոշիչ դեր ստանձնելուց: Հետևաբար, պատահական չէ այն հովանավորությունը, որ նրանք ստանում են թե՛ քաղաքական, դիվանագիտական, թե՛ գիտահետազոտական և թե՛ լրատվամիջոցների շրջանակներից: Իրականությունից հեռու չի լինի, եթե ասենք, որ պանադրբեջանականությունը հրահրվում է առաջին հերթին ոչ ադրբեջանցիների միջոցով:

Հետաքրքիր է արևմտյան լրատվամիջոցների լռությունը «Գորշ գայլեր» խմբակցության ազգայնամոլական գործունեության մասին: Առանց նրա բնույթն ակնարկելու՝ երևույթները մեկնաբանվում են ազգային ինքնորոշման, ժողովրդավարության և մարդու իրավունքների շրջագծում: Այս ներողամիտ մոտեցումը բացատրվում է նաև տիրող հակաիրանական մթնոլորտով:

Հակադրվող ուժեր

Պանադրբեջանական շարժմանը հակադրվող ուժերի մեջ առաջինը պետք է նշել Իրանին: Պանադրբեջանականները, հավատարիմ իրենց կեղծ պատմաշինության արհեստին, հայտարարում են, թե իբր ի սկզբանե գոյություն է ունեցել մեծ Ադրբեջան երկիրը, որը հետո գրավվել է ցարական Ռուսաստանի ու թագավորական Պարսկաստանի կողմից և բաժանվել միմյանց միջև, իսկ այսօր հյուսիսային բաժինն անկախացել է, բայց հարավային հատվածը դեռ սպասում է իր ազատագրմանը: Այս «թյուրիմացությունը» մեծ մասամբ ժառանգվել է խորհրդային ժամանակների հետևողական քարոզչությունից, որը որոշ չափով մուտք է գործել նաև իրանական ձախ գրականության մեջ (օրինակ՝ «պարսկական շովինիզմի» մասին գրույցները): Ադրբեջանում դասագրքերը ողողված են հակահայկական ու հակաիրանական նյութերով, և Իրանի հյուսիսարևմտյան նահանգները ներկայացված են որպես Հարավային Ադրբեջան:

Պանադրբեջանականները պարսկական մշակութային ժառանգությունը յուրացնելու գործունեություն են ծավալել: Գրողներ, բանաստեղծներ, ազգային հերոսներ, տոներ և այլն ներկայացվում են որպես թուրքական հարստություն: Անջատողականներն այնքան առաջ են անցել, որ բացեիբաց պանթուրքիստական թռուցիկներ ու գրքույկներ են ցրում Իրանի ադրբեջանցիների շրջանում և ցույցերի ժամանակ պարզում են Ադրբեջանի Հանրապետության դրոշը: Իրանի մասնատման ծրագիրը ներկայացվել է դեռևս 1979 թվականին Բեռնարդ Լուիսի կողմից, համաձայն որի՝ մասնատումը պիտի իրականացվի ցեղային ու լեզվական բաժանման գծերին համապատասխան:

«Գորշ գայլերին» և ընդհանրապես պանթուրքիստներին հակադրված են նաև քրդերը, Թուրքիայում և Ադրբեջանում բնակվող մյուս ազգային ու կրոնական փոքրամասնությունները, Թուրքիայի աշխատավորական շարժման ղեկավարությունը, ձախ հոսանքները, մտավորականությունը, ուսանողությունը և մարդու իրավունքների պաշտպանները:

Պանադրբեջանական մտայնության աղաղակող փաստերից և նորօրյա դրսևորումներից էր նաև հետևյալը. 2002 թվականին ՆԱՏՕ-ի «Համագործակցություն հանուն խաղաղության» ծրագրով տարբեր երկրներից զինվորականներ էին մեկնել Հունգարիա՝ ուսանելու Բուդապեշտում, այդտեղ ադրբեջանցի Ռամիլ Սաֆարովը առավոտյան ժամը 4-ին սրած կացնով մտել էր հայ սպա Գուրգեն Մարգարյանի

սենյակ և կացնահարել նրան: Սաֆարովը տարբեր գործիքներով մարդ սպանելը սովորել էր Հյուսիսային Կիպրոսում իր «գորշ գայլ» եղած ժամանակ: Նրա փաստաբանը, փորձելով արդարացնել նրան, ասել է, որ Ադրբեջանում հայ սպանելը մեղք չի համարվում:

Հունգարիայի բանտում 7 տարի անցկացնելուց հետո՝ ցմահ բանտարկության դատապարտված Սաֆարովը արտահանձնվեց Ադրբեջանին: Բաքու վերադառնալով՝ Սաֆարովը ներում ստացավ երկրի նախագահ Իլհամ Ալիևի կողմից, արտահերթ զինվորական կոչում և խոշոր դրամական պարգև՝ Ադրբեջանի պաշտպանության նախարարությունից: Շատ ադրբեջանցիներ, ինչպես նաև շատ տեղական քաղաքական գործիչներ նրան հերոս են անվանում ու համարում իսկական հայրենասեր: Երևանը սառեցրել է իր հարաբերությունները Բուդապեշտի հետ՝ պահանջելով Հունգարիայի ու Ադրբեջանի գործողությունների միջազգային դատապարտում[39]:

[39] Տե՛ս 24 september, 2012, Azatutyun.

ԱՆՋԱՏՎԱԾ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1986 թվականին Գերմանիայի թուրքական ֆեդերացիայի կառուցվածքում մի մեծ ճեղքվածք է առաջանում: Այս ֆեդերացիան Թուրքիայից դուրս «Գորշ գայլերի» ամենամեծ կազմակերպությունն է: Կազմակերպության նախագահ Մուսա Սերդար Չելեբին մի օր հանկարծ թողնում ու հեռանում է կազմակերպությունից: Նրա հետ հեռանում են նաև նրա ոչ քիչ համակիրները: 1988 թվականին Չելեբին հիմնադրում է մի նոր կազմակերպություն՝ «Թուրք իսլամական մշակութային կազմակերպությունների միավորում» անունով: Այս կազմակերպությունն ունի նաև ազգայնական հակումներ, սակայն առավել գնահատում է իսլամական արժեքները:

Գերմանիայում տեղի ունեցող այս զարգացումներն իրենց արտացոլումն են գտնում նաև Հոլանդիայում: HTDE-ի կողմից 1986 թվականի նոյեմբերին ծրագրված համագումարը վերջին պահին չեղյալ է հայտարարվում: Կազմակերպության այն ժամանակվա նախագահ Չենգիզ Օզդեմիրը, հետևելով Չելեբիի օրինակին, հրաժարվում է HTDE-ից: 1988 թվականին Օզդեմիրն իր ընկերների հետ միասին իր կազմակերպությունն է հիմնում Չելեբիի «Միավորումի» օրինակով՝ Թուրք իսլամական մշակույթի, կրթության ու հրատարակչական հաստատություն:

Կազմակերպության քայքայման մեջ «մեծ» դերակատարություն ունեցած Մուսա Սերդար Չելեբին տաղանդավոր, ոչ սովորական մարդ էր: Իր վայելած համբավը նա մասամբ ձեռք էր բերել շնորհիվ Ալի Աքչայի միջոցով Հռոմի պապի դեմ իրագործված ահաբեկչության մեջ իր հավանական դերն ունենալու համար: Այս «գործով» Չելեբին Իտալիայում 3 տարի բանտ նստեց, մինչև որ փաստերի չգոյության պատճառով ազատ արձակվեց:

Չելեբիի հեռանալու մասին Սերվեթ Ավջին՝ Թուրքիայում MHP-ի երիտասարդական բաժնի նախագահը, տալիս է հետևյալ բացատրությունը. «Համաձայն մեր այն ժամանակվա տեղեկությունների՝ Եվրոպայի թուրքական ֆեդերացիան իր տրամադրության տակ ուներ երկու միլիոն գերմանական մարկ: Թյուրքեշը, որ ջանում էր MHP-ին վերստին ոտքի կանգնեցնել, պահանջում էր այս գումարը: Չելեբին պարզապես մերժեց նրա պահանջը և հետո էլ հրաժարվեց նախագահությունից: Որևէ գաղափարախոսական տարաձայնության հարց չի եղել, այլապես Թուրքիայում դա կնկատվեր»:

1992 թվականին լուրջ տարաձայնություններ սկսվեցին «Գորշ գայլերի» շարքերում: Այս անգամ դա տեղի ունեցավ «Մայր հողում»: Մի խումբ մարդիկ հեռացան MHP-ից և հիմնեցին մի նոր կուսակցություն՝ BBP «Մեծ միավորում կուսակցություն» անունով: BBP-ն Եվրոպայում MHP-ի թուրքական ֆեդերացիայի օրինակով հիմնեց «Համաշխարհային կարգ» եվրոպական ֆեդերացիա՝ ANAF:

Եվրոպայի թուրքական ֆեդերացիան այն օղակն է, որ իրար է կապում Եվրոպայի տարբեր երկրների՝ Գերմանիայի, Շվեյցարիայի, Ավստրիայի, Բելգիայի, Անգլիայի, Շվեդիայի, Դանիայի, Հոլանդիայի ու Ֆրանսիայի թուրքական ֆեդերացիաներին: Եվրոպայից դուրս գոյություն ունեն ֆեդերացիայի անդամ-կազմակերպություններ Կանադայում, ԱՄՆ-ում, Սաուդյան Արաբիայում, Եգիպտոսում և Ավստրալիայում: Այս բոլոր կազմակերպությունների «մայր կազմակերպությունն» արդեն գոյություն ուներ 70-ական թվականների վերջերից: Նրա լրիվ անունն է «Եվրոպայի թուրք դեմոկրատ-իդեալիստական միությունների ֆեդերացիա»:

ՀՐԱՆՏ ԴԻՆՔԸ ԵՎ «ԳՈՐՇ ԳԱՅԼԵՐԸ»

Հրանտ Դինքը ծնվել է 1954 թվականի սեպտեմբերի 15-ին Մալաթիայում: Յոթ տարեկանից տեղափոխվել է Ստամբուլ, ավարտել տեղի հայկական միջնակարգ դպրոցը, ապա սովորել ու ավարտել է Ստամբուլի համալսարանի կենդանաբանության բաժինը, ստացել փիլիսոփայի մասնագիտություն: 1996 թվականից հրատարակել է «Ակոս» (Agos) թերթը՝ դառնալով նրա գլխավոր խմբագիրը: Սպանվել է Ստամբուլում 2007 թվականի հունվարի 19-ին: Ոճրագործը Օգյուն Սամաստն էր՝ 17 տարեկան, որը «Գորշ գայլեր» կազմակերպությունից առանձնացած «Մեծ Միություն» կուսակցության (Buyuk Birlik Partisi) անդամ էր: Նույն կազմակերպությունն էր նախապատրաստել Տրապիզոնում կաթոլիկ քահանայի սպանությունը: Նույն կազմակերպության մի այլ անդամ՝ Յասին Հայալն էր զենք ու փող տվել Դինքին սպանող Օգյուն Սամաստին, որը, Դինքին գնդակահարելով, բացականչել էր. «Ես գյավուրի եմ սպանել»: Օգյուն Սամաստին 18 այլ կասկածյալներից 12-ի հետ ձերբակալեցին:

Ըստ ՀՀ ԳԱԱ ԱԻ-ի տնօրեն Ռուբեն Սաֆրաստյանի՝ Դինքին սպանելու որոշումը կայացվել է ավելի «վերևներում»: Ըստ «Sabah» թերթի՝ Դինքի սպանությունը կազմակերպել է գաղտնի հետախուզության ծառայության «JITEM» ստորաբաժանումը, որի գոյության փաստը մշտապես հերքվել է պաշտոնյաների կողմից: «Էրգենեքոն»-ի մեղադրականում նշվում է, որ սպանությունը կազմակերպել են «JITEM» խումբը, պաշտոնաթող գեներալ Վելի Քյուչուքը և Անվտանգության ուժերի ստորաբաժանումներից մեկը:

Դինքը բազմիցս հետապնդվել էր իշխանությունների կողմից, սպառնալիքներ էր ստացել նախնառաջ աջ ծայրահեղական ուժերի կողմից:

Դինքի սպանությունը դեռ կարելի էր պատահականություն կամ սխալմունք համարել, եթե նա հայտնի չլիներ հայրենասիրությամբ և «Ակոս» թերթի բովանդակային էությամբ: Մահվանից 2 օր առաջ տված իր հայտարարության մեջ այն հարցին, թե ինչու է թերթը տպվում երկու լեզվով, Դինքը պատասխանել էր, որ հենց դրա համար է այն այդքան վտանգավոր համարվում ազգայնական ուժերի կողմից: Իսկ

այն հարցին, թե իրո՞ք այդքան վատ է Թուրքիայում հայ լինել, ասել էր, եթե մեկը լեզուն ատամների տակ է պահում, դժվար թե խնդիրներ ունենա: Իսկ թերթը, ըստ նրա, դարձել է թուրք և հայ հասարակություններ միջև իսկական կամուրջ:



Դինքն ասում էր, որ ինքը կցանկանար պայքարը շարունակել Թուրքիայի ներսում: Նա համոզված էր, որ ինքը գտնվում է իր հայրենիքում, որտեղ ապրել են իր նախնիները:

Հրանտ Դինքը «անզգուշություն» էր ունեցել քննադատելու Թուրքիայի պետական օրհներգը, և որ այդ օրհներգը պարտավոր են կատարել նաև ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչները: Նա քննադատում էր նաև Թուրքիայի դպրոցների աշակերտական երդումը, որում ասվում է. «Ես թուրք եմ, ես ազնիվ եմ, ջանասեր», որը պետք է ասի ամեն երեխա-դպրոցական՝ անկախ ազգային պատկանելությունից:

Նրան փորձում էին դատապարտել Թուրքիայի օրենսգրքի 301 հոդվածով՝ «Վիրավորանք թրքությանը», որով փորձում էին դատել թուրք հանրահայտ գրող, 2006 թվականի Նոբելյան մրցանակի դափնեկիր Օրհան Փամուքին՝ 1,5 միլիոն հայ զոհերի մասին խոսելու համար:

Ըստ Հրանտ Դինքի՝ Հայոց ցեղասպանության պատճառով հայը ձեռք բերեց ինքնության խեղում:

Աշխարհն ընդունեց և դատապարտեց հրեական ցեղասպանությունը, ինչը չարեց հայերի դեպքում: Հավանաբար դրա պատճառներից մեկը հրեաների աննպաստ վերաբերմունքն է Հայոց ցեղասպանության միջազգային դատապարտման գործընթացին, կարծես դրանով ուզում են «ամենատառապած և ամենախելացի» ազգը լինելու իրենց մենաշնորհը ամրագրել: Եվ սրանից ելնելով՝ բնական են նաև հայ քաղաքական և գիտական շրջանակներում առկա հակահրեական ու հակասիոնիստական տրամադրությունները:

Պետք չէ նաև մոռանալ մի զարմանալի, բայց տեսանելի փաստ. սփյուռքի հայկական ինքնության պահպանման համար ավելի բարենպաստ պայմաններ ստեղծվեցին Մերձավոր Արևելքի մուսուլմանական երկրներում, քան Եվրոպայում: Արևմուտքում շնորհված լայն ազատությունները, ցավոք, ավելի հեշտացրին ինքնության ձուլումը: Բացի այդ, քանի որ Մերձավոր Արևելքում ապրում էին ավելի «փակ կյանքով», ավելի հեշտ էր պահպանել ազգային սովորույթները, լեզուն ու, որքան էլ զարմանալի է, հավատը:

Ֆրանկֆուրտում ունեցած իր մի ելույթում Հրանտ Դինքն ասել է. «Եվրոպան կարևորագույն դեր է ունեցել 1915 թվի ողբերգության մեջ՝ շահարկելով հայկական հարցը և մինչ օրս էլ այն օգտագործում է իր նպատակների համար»: Թուրքահայ լրագրողը համոզված էր, որ Ցեղասպանությունը պիտի ճանաչվի, և ճանաչողը պիտի լինի Թուրքիան թուրք հասարակության ճնշման տակ և ոչ թե կախված պետք է լինի Ամերիկայի կամ Եվրոպայի քաղաքական խաղերից: Նա կարծում էր. «1915 թվականի Ցեղասպանության ճանաչումը ոչ ժողովրդավար Թուրքիայի կողմից քիչ բան կտա հայերիս» :

Նա կողմակից էր Թուրքիայի՝ Եվրամիություն մտնելուն՝ համարելով, որ դա Հայոց ցեղասպանության ճանաչման ճանապարհ է՝ պատճառաբանելով, որ Եվրամիության անդամ դառնալով Թուրքիան կենթարկվի ժողովրդավարացման, այսինքն՝ Թուրքիան, ներսից փոխվելով, կարող է հասնել Հայ դատի արդար լուծմանը:

Թուրքիայում լրագրողի մահից հետո կազմակերպվեցին բազում ցույցեր՝ «Միլիոնուկես + 1», «Այսօր բոլորս Հրանտ ենք, բոլորս հայ ենք» և այլ կոչերով: Սակայն այս բոլոր զղջման ու ափսոսանքի խոսքերը շատերի կարծիքով միֆ է: Թուրքիայում, ընդհակառակը, զարգացում է ապրում նացիոնալիզմը, և մեծ մասի կողմից կարծես խրախուսվում է կատարվածը: Այն թուրքական ԶԼՄ-ները, որոնք ունեն անգլերեն տարբերակ, դատապարտում են կատարվածը՝ հասկանալով, որ իրենց հետևում է ողջ աշխարհը, իսկ այն թերթերը, որոնք անգլերեն տարբերակ չունեն, պաշտպանում են մարդասպանին:

«Գորշ գայլերի» համակիր երգիչ Օզան Արիֆի անունը հայկական շրջանակներին հայտնի դարձավ վերջերս, երբ նրա գրած ու հորինած երգը՝ «Պլա՛ն մի՛ շինիր, պլա՛ն» երգեց թուրք երգիչ Իսմայիլը, և հատկապես այդ երգի համար պատրաստվեց մի տեսահոլովակ, որը գովաբանում էր հայ, «Ակօս» թերթի խմբագիր Հրանտ Դինքին սպանող պատանուն: Տեսաերիզի մեջ երևում էր Հրանտ Դինքի դիակը և թուրքական դրոշի առջև կանգնած մարդասպան պատանին այն պահին, երբ ասվում էին երգի հետևյալ բառերը. «Նա, ով ծախում է հայրենիքը, հենց այդ վայրկյանին իսկ վերջանում է նրա կյանքը»:

Մեծ աղմուկ բարձրացրեց 2004 թ. փետրվարի 6-ին Ստամբուլի «Ակոս» թերթում հանգուցյալ Հրանտ Դինքի տպագրած հոդվածն այն մասին, թե Թուրքիայի Հանրապետության գլխավոր խորհրդանիշներից մեկը՝ առաջին կին օդաչու և Աթաթուրքի հոգեզավակ Սաբիհա Գյոքչենը իրականում հայուհի է: Նա մեկն է Հայոց ցեղասպանության ժամանակ որբացած հայ երեխաներից, և նրա իսկական անունն է Խաթուն Սեբիլջյան: Եվ եթե ապացուցվում է, որ այդ խորհրդանիշը թուրքերի պատկերացմամբ թշնամի «գյավուր» հայ է, ապա նրանց ինքնագիտակցության մեջ ինչ-որ բան, այնուամենայնիվ, կոտրվում է: Միլիոնավոր թուրքեր, ովքեր մեծացել են հայերի հանդեպ ատելության մթնոլորտում և որպես խորհրդանիշ պատկերացրել Գյոքչենին, հիմա վստահաբար ապրում են հոգեբանական ճգնաժամ, քանի որ պարզվում է, որ իրենց վեհության խորհրդանիշն իրականում ծագումով հայ է: Հրանտ Դինքն ասել է. «Եթե մի օր Թուրքիան քանդվի, ապա դա կլինի ոչ թե զենքի միջոցով, այլ ինքնության խնդրի»: Այսինքն՝ համամիտ էր գիտական ասպարեզներում տարածված մտքին. «Մի օր կախաղանն ինքը կկախվի»:

Ըստ թուրքական պաշտոնական աղբյուրների՝ Սաբիհա Գյոքչենը ծնվել է 1913 թվականի մարտի 22-ին, Բուրսայում, հայրը՝ Հաֆիզ Մուսթաֆա Իզեթն է, մայրը՝ Հայրիեն: Ըստ հայկական աղբյուրների Սաբիհա Գյոքչենը իրականում Այնթափի Ջիբին գյուղից է և մեկն է այն 1000-ավոր հայ երեխաներից, որոնք հայտնվել էին որբանոցներում: «Ակօս» թերթի միջոցով հայաստանաբնակ Հռիփսիմե Սեբիլջյանը տեղեկացրել է, որ Սաբիհա Գյոքչենը իր հարազատ մորաքույրն է: Ըստ Հռիփսիմե Սեբիլջյանի մոր՝ Տիրուհու, իրենք բնիկ այնթափցիներ

են, մայրը Մարիամ Սեբիլջյանն է, հայրը՝ Ներսես Սեբիլջյանը, որը սպանվել է 1915 թվականին: Ինքը՝ Տիրուհին, ունեցել է հինգ եղբայր և մեկ քույր՝ Խաթունը, որը հենց նույն Սաբիհա Գյոքչենն է, կամ վերանվանված Սաբիհա Գյոքչենը: Թուրքահայ հայտնի լեզվաբան-պատմաբան Բարս Թուղլաջին (Բարսեղ Թուղլաջյան) հայտարարել էր, որ ինքը մտերիմ հարաբերություններ ուներ Սաբիհա Գյոքչենի հետ ու «Ակօսի» աղմկահարույց հոդվածից և՛ առաջ, և՛ հետո նշել էր, որ հայտնի օդաչուն իրականում գիտեր իր հայկական ծագման մասին: Սաբիհա Խաթունը նույնիսկ սովորել էր մի քանի հայերեն բառեր, որոնք օգտագործել էր Բարս Թուղլաջիի հետ զրուցելիս: Հոդվածի հեղինակներն էին Հրանտ Դինքը և Տիրան Լոքմաջյոզյանը: Հոդվածի դեմ պաշտոնական խիստ հայտարարությամբ հանդես եկան շատերը, այդ թվում և Թուրքիայի գլխավոր սպայակույտը:

Ըստ որոշ տեղեկությունների (Wikiliks)՝ հենց այդ հոդվածից հետո է, որ «Ակոս» թերթի խմբագրատան առջև իրականացվեցին բազմաթիվ ցույցեր, որտեղ թուրք ազգայնականները գոռում էին. «Հրա՛նտ, դու մեր թիրախն ես» :

Ինոնյու համալսարանի պատմության ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Սալիմ Ջոհջեն, Հրանտ Դինքի թաղման բազմահազարանոց արարողությունն ուղղակիորեն կապեց ծպտյալ հայերի հետ՝ համարելով դա վերազարթոնքի նշան: Նա մասնավորապես նշել է. «Ես կարծում եմ, որ Դինքի թաղման արարողության մասնակիցներից շատերը ծպտյալ հայեր էին....Իմ կարծիքով, իրենց մինչև օրս «Ահմեդ», «Մեհմեդ» անուններով կոչող հայերը հուղարկավորության ժամանակ գիտակցաբար բացահայտեցին իրենց հայ լինելը: «Բոլորս հայ ենք, բոլորս Հրանտ ենք» արտահայտությունը դրա վառ վկայությունն է: Հրանտ Դինքի սպանությունը ծպտյալ հայերի համար հիմնովին բացահայտվելու հայտնություն եղավ»:

ԹՊԸ նախկին ղեկավար, հայտնի պատմակեղծարար Յուսուֆ Հալաչօղլուի կարծիքով Դինքի թաղման արարողությանը մոտավորապես 50 հազար հայկական համայնքից կարող էր մասնակցել 20 հազար հայ և 10 հազար էլ իրենց անկեղծ բողոքի ձայնը բարձրացնող թուրքեր, այսինքն՝ մոտ 30 հազար մարդ: «Իսկ ովքե՞ր են մնացածները,-հարցնում է Հալաչօղլուն և ավելացնում,- անհրաժեշտ է՝ այս ամենը շատ լավ ուսումնասիրենք, իմանանք»:

Նույն Սալիմ Ջոհջեն նույնիսկ կարծիք է հայտնում, որ մինչև 2015 թվականը ծպտյալ հայերը ահաբեկչական պայքար են սկսելու. «Ուշագրավ է, որ 20-րդ դարի սկզբին այս կամ այն պատճառով իսլամ

ընդունած հայկական ծագմամբ մեր քաղաքացիների նկատմամբ տարվող աշխատանքները վերջին 8-10 տարիներին ապշեցնող թափ են ստացել....Թուրքերի հետ հաշիվներ պարզելու, նրանցից վրեժ լուծելու, և, ի վերջո «դրախտային Հայաստանը վերակերտելու նպատակները 2015 թվականին, այսինքն՝ տեղահանության ու աքսորի որոշում ընդունելու 100-ամյա տարելիցին, կրիպտո-հայերի խնդրում առկա սպառնալիքները բավական մեծացել են: Սկսած 2013-14 թթ. հատկապես կրիպտո-հայերի կողմից Թուրքիան ենթարկվելու է բացահայտ կամ թաքուն հարձակման, որն անցյալ դարի սկզբներին տեղի ունեցածներից շատ ավելի տարբեր է լինելու: Ես կարծում եմ, որ հայերի զինված շարժումը սկիզբ է առնելու քաղաքներից: Հատկապես արևելյան և հարավարևելյան անատոլիական որևէ քաղաքում որոշակի գործողություններ իրականացնելու համար 10-12 հազարանոց գաղութը բավական է: Ըստ էության, Թուրքիայի որոշ քաղաքներում մոտավորապես այս քանակությամբ ծպտյալ հայերկան» (Իմիջիայլոց, կրոնափոխ հայերի շրջանում նկատվում է նաև հետևյալ երևույթը. ոմանք, Հռոմի Պապից ավելի կաթոլիկ ձևանալով, դառնում են թուրք ազգայնականներ):

Ամենաշատ տարածված մեղադրանքը, որը հասցեագրվում է իսլամացած և ծպտյալ հայերին, այն է, որ նրանք համագործակցում են ծայրահեղական ձախ կազմակերպությունների, հատկապես Քրդական բանվորական կուսակցության (PKK) հետ: Հարցին մեծ հնչեղություն հաղորդեց «պալատական» պատմաբան Յուսուֆ Հալաչօղլուն՝ 2007 թվականի օգոստոսի 18-ին Կեսարիա քաղաքում կայացած գիտաժողովի ժամանակ հայտարարելով, որ Թուրքիայի քրդերի մեծ մասն ունի թուրքմենական ծագում, իսկ ալևի քրդերն իրականում կրոնափոխ հայերն են, որոնք առերես իսլամ են ընդունել և փոխել անունները՝ 1915 թվականի «տեղահանությունից» ազատվելու համար: «Այսօր բազմաթիվ մարդիկ, որոնք հայտնի են որպես քուրդ, ալևի, ցավոք սրտի, կրոնափոխ հայեր են: Մեր երկիրը մասնատել ձգտող PKK և TIKKO ահաբեկչական կազմակերպության անդամներից շատերը հենց այս հայերն են... PKK-ն և TIKKO-ն իրականում քրդական շարժումներ չեն»: Հալաչօղլուն հավելել է նաև, որ ունի իսլամացած հայերի ցուցակը և տիրապետում է նրանց մասին մանրամասն տվյալների: «Իմ ձեռքին կան 100 հազար կրոնափոխ հայերի մասին մանրամասներ՝ նրանց նախկին հայկական անունը, թուրքական անունը, բնակության վայրը և այլն»,- հայտարարել է նա միևնույն ժամանակ ասելով, որ դա չպետք է ընկալվի որպես

սպառնալիք: Ըստ Հալաչօղլուի՝ ինքը և Թուրքական պատմական ընկերությունը «Հայոց ցեղասպանության պնդումների» դեմ մի ամրոց են, և ներկայումս իր աշխատանքներում փորձում է տալ հայկական կողմի այն հարցի պատասխանը, թե ուր են մինչև 1915 թվականը այդ տարածքներում ապրող մեկուկես միլիոն հայերը: Պատմաբանը գտնում է, որ իսլամացած հայերի մասին իր «գիտական աշխատանքը» հենց այս հարցի պատասխանն է, և, մատնացույց անելով մահից փրկվելու համար իսլամ ընդունած հայերին, ասում է. «Ահա այդ «անհետացած» հայերը, նրանք չեն կոտորվել, և նշանակում է, որ հայկական կողմը մինչև այսօր սուտ է խոսել: Իմ ասածները ուղղակի ոչնչացնում են հայկական սփյուռքի պնդումները»:

Պետությունը ուշադրության կենտրոնում է պահել բոլոր կրոնափոխ հայերին և շարունակ հաշվառումներ արել: Կրոնափոխվելով հայերը չէին դադարում կասկածելի մնալ պետության համար: Նրանց շարունակ հետևում էին, քննում նրանց շրջանում տեղի ունեցող գործընթացները և զեկուցում կենտրոնին: Ըստ կրոնափոխված-դյոնմե հայտնի գրող Երվանդ Օտյանի՝ երիտթուրքերը ստիպել են հայերին կրոնափոխ լինել, եթե ցանկանում են ողջ մնալ և չաքսորվել անապատները: Բռնի կրոնափոխման համար խոչընդոտ էին հայ հոգևորականները, որոնց նկատմամբ կիրառվում էին ամենադաժան պատիժներ:

Թուրքական «Aktiv haber» թերթի լրագրող Յուսուֆ Գեզգինը իր հոդվածներով աչքի է ընկնում ծայրահեղ կողմնակալ, ոչ օբյեկտիվ մոտեցումներով: «Ծպտյալ հայերը հայերի դեմ» հոդվածում նա անդրադարձել է ծպտյալ հայերի շրջանում իբր գոյություն ունեցող երկու խմբերի խնդրին: Ըստ նրա՝ 35-50 հազար հաշվվող հայկական համայնքից բացի, կան իսլամացած ծպտյալ հայեր, որոնց թիվը մոտ 1 միլիոն է: Ըստ Յուսուֆ Գեզգինի՝ Թուրքիայի ծպտյալ հայերը բաժանվում են երկու խմբի. առաջինը նրանք են, ովքեր ցանկանում են ծպտյալ մնալով շարունակել Թուրքիայի պետության ներսում իրենց ունեցած ազդեցության մեծացումը, երկրորդը՝ նրանք, ովքեր ցանկանում են ինքնաբացահայտվել և այդպիսով ապահովել ուժեղ հայկական ներկայություն: Երկրորդ խումբը կողմ չէ բաց քաղաքականությանը և կարծում է, որ իր ուժը գաղտնի մնալու մեջ է: Այս խումբը հավատում է, որ ծպտյալ հայերին պետության, PKK-ի, Bozkurt-ի մեջ ներդնելով՝ կկարողանա հեշտությամբ ներսից ծնկի բերել, մասնատել թուրքական հասարակությունը, պետությունը: Նրանք կարծում են, որ ծպտյալ մնալն ավելի ազդեցիկ և ձեռնտու է նպատակին հասնելու և թուրքերից վրեժ լուծելու համար.... Ծպտյալ

հայերի այս երկու խմբերի միջև սկսվել է լուրջ պայքար»: Հոդվածագիրը ծպտյալ հայերին է վերագրում Հրանտ Դինքի սպանությունը. «Ես այնքան էլ անհավանական չեմ համարում նաև այն, որ Հրանտ Դինքին, որը կողմ էր բաց խոսելուն և խոսում էր ծպտյալ հայերի գոյության մասին, սպանել են ազգայնականների մեջ ներթափանցած ծպտյալ հայերը»: Վերջում Գեզգինն անդրադառնում է թուրքական այն հայտնի թեզին, թե ծպտյալ հայերը ամենուր են, և նրանցից մեծ վտանգ է սպասվում. «Այս երկրում ծպտյալ հայերը մեր մեջ են այն աստիճան, որ կարող են լինել թուրքական ազգայնականության ղեկավար, Շվեյցարիայում՝ Լոզանում հայկական թեզերին թուրքական կողմի անունից պատասխան տվող, ազգայնական ցույցերում առջևից թուրքական դրոշը թափահարող»:

Լրագրող Մեհմեդ Շնքեթ Էյգինը նշում է. «1960 թվականի մայիսի 27-ի հեղաշրջման մեջ նրանք՝ ծպտյալ հայերը, մեծ դեր են ունեցել: Վերջին 60 տարվա ընթացքում բոլոր ահաբեկչությունների, հեղաշրջումների, խռովությունների, հուզումների, բռնությունների մեջ մեծ դեր են ունեցել կրիպտո-հայերը»: Թուրքիան հայտարարել էր, որ թուրքական «Հըզբոլլահ» կազմակերպության «գաղտնի» ուղեղը Սուլիադդին Ուրուք անունով դավանափոխ հայն է: Այսպիսով՝ հայերին էին վերագրվում այդ կազմակերպության կատարած բոլոր արյունալի հանցագործությունները:

Ծպտյալ և իսլամացած հայերի խնդրին սկսել են անդրադառնալ նաև ադրբեջանցի «վերլուծաբան-գիտնականները»՝ ձայնակցելով ավագ եղբայրներին: Մասնավորապես ադրբեջանական Եվրասիայի Անվտանգության և ռազմավարության կենտրոնի նախագահ, քաղաքագիտության դոկտոր Հաթամ Ուլիխանլին հանդես է եկել հայերեն հոդվածով, որտեղ նշվում է, որ Թուրքիայի կրիպտո-հայերի ազգային և կրոնական լուրջ ակտիվությունը սկսվել է Հայաստանի Հանրապետության հռչակումից հետո:

Թուրքիայում հայերի թեմայի շահարկումը հասել է այն աստիճանի, որ անգամ հոդվածով հանդես է եկել մոլի թրքասեր, «գորշ գայլ», «հայազգի» Լևոն Փանոս Դաբաղյանը: Նույնիսկ ծայրահեղ թրքասեր «հայը» հարց է տալիս, թե ինչով պետք է զբաղվեին ոմանք, եթե չլինեին հայերը, նրանց համար ի՞նչը կլիներ գրելու նյութ և այդպիսով՝ նաև

ապրուստ հոգալու միջոց: Եվ ինքն էլ պատասխանում է իր հարցին՝ ասելով, որ այդ դեպքում նրանց համար ուղղակի նյութ չէր լինի:

Ծպտյալ հայերի խնդրի հետ ուղղակի առնչություն ունի նաև Ռաքել Դինքի պատմությունը:

Ո՞վ է Ռաքել Դինքը[40]

Հայոց ցեղասպանության ժամանակ աքսորվել էր նաև Ջիզրե գավառում բնակվող հայկական Վարթո տոհմը, որը եղել է բազմամարդ ու հարուստ: Ճանապարհին ենթարկվելով հարձակման՝ տոհմի հինգ ընտանիքներ փախչում ու ապաստան են գտնում հայտնի Ջուդի լեռան վրա: Ընտանիքներից մեկը կոչվել է «Մալա Վարթո», այսինքն՝ Վարթոյի տուն: Լեռան վրա ապաստանած այս տոհմը շուրջ 25 տարի, մեկուսացած արտաքին աշխարհից, ապրել է՝ տեղյակ չլինելով, որ փլուզված Օսմանյան կայսրության փոխարեն ձևավորվել է Թուրքիայի հանրապետությունը: Զբաղվել են անասնապահությամբ և բազմացել բացառապես ներքին ամուսնություններով: Շուրջ 30 տարի հետո իջել են լեռան բարձունքներից, յուրացրել քրդական կենսաձևը, հագել քրդական տարազ, սկսել են խոսել քրդերեն: Ի դեպ, այդ քրդախոս հայերը եղել են ծայրահեղ կրոնասեր:

Պատվելի Հրանտ Գյուզելյանը այցելել է տոհմապետ Սիյամենթ Յաղբասանին: Պատվելին նշում է, որ հայերի այս խմբի մասին տեղեկացել է Պոլսո Հայոց Պատրիարք Շնորհք Գալուստյանից: Սիյամենթ Յաղբասանը ունեցել է 13 երեխա և կնոջ՝ Դելալի մահից հետո հայտնվել է դժվարին կացության մեջ: Նա համաձայնում է Ստամբուլի հայ համայնք ուղարկել իննամյա աղջկան՝ Ռաքելին: Ստամբուլ մեկնած այդ աղջիկը՝ Ռաքելը, հետագայում դառնում է Հրանտ Դինքի կինը: Որբանոցում ուսումն ավարտած Վարթո տոհմի 25 երեխա չեն ցանկանում վերադառնալ գյուղ, և աշիրեթը իր առաջնորդ Յաղբասանի գլխավորությամբ որոշում է տեղափոխվել Ստամբուլ: Ստամբուլում Էրմենի Վարթո աշիրեթը չի փոխում իր ներտոհմային ավանդույթները: Եվ երբ Հրանտ Դինքը ցանկություն է հայտնում ամուսնանալ Ռաքելի հետ, Վարթո տոհմի երիտասարդները սպառնում են Դինքին, պահանջում հրաժարվել այդ մտքից: Ժամանակի Պատրիարք Շնորհք Գալուստյանը տոհմապետ Յաղբասանից անձամբ է խնդրում աղջկա ձեռքը, ու կրոնասեր հայը չի կարողանում մերժել բարձրաստիճան հոգևորականին: Այսպես Հրանտն ու Ռաքելը ամուսնանում են:

[40] Տե՛ս Ռուբեն Մելքոնյան, Հայերի բռնի իսլամացումը Ցեղասպանության տարիներին. Ընթացքը և հետևանքները , էջ 78-82:

ԷՐԳԵՆԵՔՈՆ+«ԳՈՐՇ ԳԱՅԼԵՐ»-ASALA ԱՌՃԱԿԱՏՈՒՄՆԵՐԸ[41]

Ըստ «Երկիր Մեդիա» հեռուստաընկերության՝ խորանում են կասկածները, որ «Էրգենեքոն» թուրքական ծայրահեղ ազգայնական կազմակերպությունը կանգնած է եղել նաև 2007 թ. Մալաթիայում քրիստոնեական հրատարակչության երեք աշխատակիցների սպանության հետևում:

Վերջերս հայտնաբերված մի փաստաթուղթ վկայում է, որ Թուրքիայի հետախուզության ազգային կազմակերպությունը վճարել է հանցավոր անցյալով ազգայնականներին՝ քաղաքական սպանություններ կատարելու համար:

Նման կասկածներ եղել են նաև նախկինում, սակայն սա առաջին փաստաթուղթն է, որը մանրամասներ է պարունակում, թե ինչպես է MIT-ը զինել և ֆինանսավորել «Ազգայնական շարժում» կուսակցության («Գորշ գայլեր») ազգայնական խմբերի անդամներին՝ քաղաքական սպանություններ իրականացնելու նպատակով:

«Էրգենեքոնի» արխիվներում հայտնաբերված փաստաթուղթը բացահայտում է մի շարք ազգայնականների միջև կնքված գործարքը: Վերջիններս երկրից փախուստի են դիմել 1980 թ. սեպտեմբերի 12-ի զինված հեղաշրջմանը նախորդած գործողություններին մասնակցելուց հետո:

Հանցավոր անցյալ ունեցող «գորշ գայլերին» վարձել էին Հայկական նորագույն զինյալ պայքարի մարտիկներին սպանելու համար: Այս տեղեկությունները պարունակող գաղտնի փաստաթուղթը հայտնաբերվել է Թուրքիայի Աշխատավորական կուսակցության գրասենյակում: Վերջինիս առաջնորդ Դողու Փերինչեքը ևս ձերբակալված է «Էրգենեքոնի» հետ կապեր ունենալու համար: Ի դեպ, նա արդեն դատապարտվել է Շվեյցարիայում՝ Հայոց ցեղասպանությունը կասկածի տակ դնելու մեղադրանքով: Իսկ «Հայկական հարց-2000-2002» վերնագրված փաստաթղթի համաձայն՝ 1980-ի հեղաշրջումը կազմակերպած գեներալները որոշել էին վրեժ լուծել ԱՍԱԼԱ-ից թուրք դիվանագետների վրա հարձակումներ կատարելու համար: Գործողությունը պետք է ղեկավարեր հետախուզության ազգային կազմակերպության պաշտոնյա Մեթին Գյունյոլը, որն ինքնությունը թաքցնելու նպատակով պաշտոնաթող է եղել և այլ

[41] Տե՛ս 2008 թ., «Հայոց աշխարհ», օգոստոսի 22:

անվամբ մեկնել Եվրոպա: Այնտեղ հանդիպելով «Գորշ գայլեր» կազմակերպության նախկին անդամ Ջենգիզ Ջոմերթին՝ կազմել է 12 հոգիանոց մի խումբ: Պետության միջոցներից խմբին ամսական 4700 դոլար էր հատկացվում:

Հենց այս խումբն է պատասխանատու 1984 թ. մայիսի 3-ին Փարիզում Հայոց ցեղասպանության հուշարձանի պայթեցման համար: Ֆրանսիական ոստիկանությունը պարզել էր, որ գործողության պատասխանատուն թուրքական MIT-ն է:

«Էրգենեքոնը» քեմալիստական-ծայրահեղական ընդհատակյա ահաբեկչական կազմակերպություն է, որի նպատակն է Թուրքիայում Աթաթուրքի հիմված աշխարհիկ սկզբունքների պահպանումը: «Էրգենեքոնի» մասին տվյալները հայտնի էին դարձել դեռևս 1996 թվականի Սուսուրլուքի միջադեպից հետո, սակայն նրա դեմ դատական գործընթացն սկսվել է միայն 2007 թվականին և շարունակվում է մինչև օրս: Կազմակերպության անդամները մեղադրվում են բազմաթիվ սպանություններ նախապատրաստելու և իրագործելու, ինչպես նաև ռազմական հեղաշրջումների նախապատրաստման մեջ: «Էրգենեքոնը» կասկածվում է նաև «Ակօս» թերթի խմբագրապետ Հրանտ Դինքի սպանությանը մասնակից լինելու, ինչպես նաև Պոլսո հայոց պատրիարքի և Սվազի հայ համայնքի ներկայացուցիչների դեմ մահափորձեր կազմակերպելու մեջ:

«Էրգենեքոնի» անդամների մեծամասնությունը Թուրքիայի զինված ուժերի ու Անվտանգության ծառայության աշխատակիցներ են[42]:

2007 թ. սկսած «Էրգենեքոն» կազմակերպության անդամների առաջին իսկ ձերբակալումներից թե՛ երկրի հասարակական շրջանակներում, թե՛ արևմտյան մամուլում ակտիվորեն սկսեց քննարկվել և շահարկվել Թուրքիայում գոյություն ունեցող այսպես կոչված «խորքային պետության» խնդիրը: Վերլուծաբանների մեծ մասը հակված է «Էրգենեքոնում» տեսնել այդ «խորքային պետություն» անվանվող կառույցը, մյուս մասը պնդում է, որ եթե նույնիսկ «Էրգենեքոնը» չի կարելի ամբողջովին նույնացնել «խորքային պետության» հետ, այնուամենայնիվ, նշված կառույցի ոչնչացմամբ շատ լուրջ հարված է հասցվել վերջինիս: Վերլուծաբանների մեկ այլ խումբ, միավորելով «Էրգենեքոն», «Մուրճ», «Սաունայի մաֆիա» և այլ բացահայտված գաղտնի դավադիր կազմակերպությունները, առաջ է քաշում այն տեսակետը, թե իշխող «Արդարություն և զարգացում»

[42] Տե՛ս HayNews.am, Թուրքիայում «խորքային պետության» և «Էրգենեքոն»-ի կապի շուրջ 11:28, 3–ը մայիսի, 2011թ.:

կուսակցությունը հետևողական պայքար է մղում «անցյալի ժառանգություն» հանդիսացող «խորքային պետության» կառույցներից և ավանդույթներից ձերբազատվելու համար: Թուրք գիտնականներից և լրագրողներից շատերն այն կարծիքին են, որ «խորքային պետություն» ասվածը իրականում գոյություն չունի, և այն շատ հարմար պատրվակ է, որին կարելի է վերագրել տեղի ունեցող բոլոր անարդարություններն ու դեռևս չպարզաբանված իրադարձությունները: Գիտնականների մեկ այլ խումբ գերադասում է «խորքային պետության» փոխարեն օգտագործել «խորքային կապեր» արտահայտությունը:[43]

Ի՞նչ է իրենից ներկայացնում «խորքային պետությունը», և արդյո՞ք այն հստակ ձևակերպված կառույց է՝ բնորոշ բոլոր ստորաբաժանումներով, թե՞ խոսքը գնում է ազդեցության շրջանակների ու խմբերի մասին, որոնք միավորվում են ինչ-որ միասնական գաղափարի շուրջ:

«Խորքային պետություն» ձևակերպումը և նրա շուրջ տարբեր շահարկումները Թուրքիայի քաղաքական կյանք մուտք գործեցին 1970-ական թվականներին: Քաղաքական գործիչներից 1970-ական և 1990-ական թթ. վարչապետի պաշտոնը զբաղեցրած Բյուլենթ Էջևիթն առաջինը բացահայտորեն խոսեց Թուրքիայում գոյություն ունեցող «խորքային պետության» մասին: Թուրքիայի 8-րդ նախագահ Սուլեյման Դեմիրելն ավելի հստակեցրեց այն՝ ասելով. «խորքային պետությունը զինվորականությունն է»: 1990-ական թթ. թուրք քաղաքագետներն ու պատմաբանները սկսում են գիտականորեն ուսումնասիրել «խորքային պետության» ֆենոմենը, նրա ծագումը և հավանական դերակատարությունն ամենաաղմկալի և ճակատագրական նշանակություն ունեցած իրադարձություններում: Ներկայումս գիտնականների մեծ մասն այն կարծիքին է, որ չնայած դեռևս Բյուզանդական և Օսմանյան կայսրություններում խորքային դավադիր խմբեր և ավանդույթներ գոյություն ունեին, այնուամենայնիվ Թուրքիայում «խորքային պետության» ձևավորումը որպես այդպիսին կապված է երիտթուրքական կառավարական շրջանակների հետ (1908-1918 թթ.): «Միություն և առաջադիմություն» կուսակցության կազմում գործում էր քաղաքական հակառակորդների սպանությունների կազմակերպմամբ աչքի ընկած «ֆիդայիների խմբավորում», որի հիման վրա 1913-1914 թթ. ստեղծվեց «Հատուկ կազմակերպությունը» (Teşkilat-ý Mahsusa): Հայտնի է, որ բացի 1915 թ. հայերի ցեղասպանության ժամանակ տեղահանման և ճանապարհին

[43] Տե՛ս Արմենպրեսս, 3-ը մայիսի:

տեղահանվածների քարավանների ոչնչացման իրականացումից, Հատուկ կազմակերպությունը զգալի դեր է խաղացել 1919-1922 թթ. Թուրքիայի ազգայնական շարժման կազմակերպման մեջ:

«Խորքային պետության» այս պատմական (երիտթուրքական) ավանդույթը հանրապետական Թուրքիայում իր հետագա զարգացումն ապրեց՝ ձևափոխվելով արևմտյան պետություններում, առաջին հերթին ԱՄՆ-ում գոյություն ունեցող տարբեր կիսագաղտնի կառույցների, որոնցից Թուրքիայի պարագայում առավել ազդեցիկ դարձավ 1950-ական թթ. ստեղծված «Հատուկ պատերազմական բաժինը»: Վերջինս մի շարք քաղաքագետների կարծիքով «սառը պատերազմի» տարիներին հանդիսացել է «խորքային պետության» կարևոր օղակներից մեկը: Սակայն, ինչպես երիտթուրքերի օրոք, այնպես էլ այսօր Թուրքիայում «խորքային պետության» մասին խոսելիս նկատի ունեն ոչ թե հստակ ձևավորված կառույց, որն իր ստորաբաժանումներն ու վերահսկողության մեխանիզմներն ունի, այլ ազդեցության խմբերի մասին, որոնք, մտահոգված լինելով պետության ամբողջականությամբ ու զարգացման ուղիով, միավորվում են նույն երիտթուրքական գաղափարի շուրջ՝ ինչպես կարելի է փրկել այս պետությունը: Այդ ազդեցության խմբերը կազմված են խոշոր արդյունաբերողներից, բանակի վերնախավից, մասսոնական կառույցներից, միջին և բարձր օղակի բյուրոկրատիայից: Ճգնաժամային պահերին այս ազդեցիկ խմբերի ու խմբավորումների շահերը համընկնում են, և նրանք, միասնական ծրագրեր որդեգրելով, ճգնաժամից դուրս գալու ուղիներ են որոնում: Այսպես, 1980 թվականի սեպտեմբերի 12-ի զինվորական հեղաշրջմանը նախորդել էր 1979 թվականին Կոնիայում տեղի ունեցած գաղտնի ժողովը, որին մասնակցում էին գեներալիտետը և խոշոր գործարարներն ու արդյունաբերողները, ինչպես նաև հետագայում ծայրահեղ ձախակողմյան կազմակերպություններից մեկի կողմից սպանված Օզդեմիր Սաբանջին: Այս ժողովում հավանության էր արժանացել պետությունը ճգնաժամից դուրս բերելու համար զինվորական հեղաշրջում իրականացնելու գաղափարը, ընդ որում, նման պահանջով հանդես էր եկել պետության գործարար վերնախավը:

Վերը նշվածի լույսի ներքո «Էրգենեքոնի» օրինակի դեպքում խոսքը «խորքային պետության» և նրա կողմից օգտագործվող ուժերի մասին է, որոնք հանդիսանում են ընդունված որոշման իրականացման մեխանիզմը: Տարբեր շրջաններում «խորքային պետության» կողմից օգտագործվող ուժերը փոփոխվել են և աչքի ընկել իրենց լայն սպեկտրով՝ ծայրահեղ ազգայնամոլներից մինչև իսլամական միաբանություններ (թարիքաթներ): 1960-1970 ական թթ. նման դերով հիմնականում հանդես էին գալիս ազգայնական ուժերը՝ հանձինս «Ազգայնական շարժում» կուսակցության, նրա երիտասարդական թև համարվող, սակայն իրականում առանձին կառույց հանդիսացող «Գորշ գայլեր» կազմակերպության: 1980-ական թթ. մի շարք քաղաքական խնդիրների լուծման, մասնավորապես ԱՍԱԼԱ-ի դեմ պայքարում օգտագործվեցին աջակողմյան կողմնորոշում ունեցող կազմակերպված հանցավորության կնքահայրերը: 1997 թ. փետրվարի 28-ի «փափուկ» կամ «սպիտակ» հեղաշրջումից առաջ ստեղծվեց «հասարակական պահանջի մթնոլորտ», որտեղ հիմնական դերակատարությունը տրված էր Աթաթուրքի գաղափարախոսությամբ առաջնորդվող ընկերություններին: Այդ շրջանում 1990-ական թթ. Հարավարևելյան Անատոլիայում քրդական անջատողականության և Քրդական բանվորական կուսակցության՝ PKK-ի դեմ պայքարում օգտագործվեցին «Էրգենեքոն» կազմակերպության ղեկավար կամ անդամ հանդիսացող անձինք, ինչպես օրինակ՝ գեներալ Վելի Քյուչուքը:

Ուշագրավ է, որ Թուրքիայի քաղաքական և հասարակական կյանքում գոյություն ունեն «տաբուներ», որոնց մասին մեծամասնությունը տեղյակ է, բայց գերադասում է խուսափել խոսելուց կամ քննարկելուց: Նման «տաբուների» թվին պատկանում է «խորքային պետության» կողմից օգտագործվող ուժերի կամ անձանց խնդիրը: Նրանք օգտվում են թողտվության մթնոլորտից, անձեռնմխելի են այնքան ժամանակ, մինչև դուրս չեն գալիս վերահսկողությունից և փորձում իրենց սեփական խաղը տանել կամ իրավիճակի փոփոխության հետևանքով վտանգավոր դառնում: Նորագույն շրջանի թուրքական պատմագրության և գրականության մեջ այդ իրավիճակի խորհրդանիշ հանդիսացավ «Միություն և առաջադիմություն» կուսակցության ֆիդայիներից Յաքուփ Ջեմիլը, որը 1913 թ. երիտթուրքական հեղաշրջման ժամանակ անձամբ սպանեց ռազմական նախարար Նազըմ փաշային և անպատիժ մնաց, բայց, երբ 1916 թ., գերագնահատելով իր ուժերը, պետական հեղաշրջման պատրաստություններ սկսեց, անմիջապես ձերբակալվեց և, չնայած Էնվերի կարգադրությանը, գնդակահարվեց: Նույն ճակատագրին արժանացավ 1960 թ. մայիսի 27-ի հեղաշրջման ակտիվ մասնակիցներից մեկը՝ գնդապետ Թալեաթ Այդեմիրը, որը հեղաշրջումից հետո նոր հեղաշրջման երկու անհաջող փորձ արեց: Առաջինից հետո նրան ներում շնորհվեց, և նա նույնիսկ նշանակվեց տանկային ուսումնարանի հրամանատար, բայց 1963 թ. իրականացրած երկրորդ

փորձից հետո արագացված դատավարության արդյունքում կա խաղան հանվեց: Այս օրինակները հիմնավորում են այն իրողությունը, որ Թուրքիայում կարևոր և պետության տեսակետից վտանգավոր դատավարությունները շատ կարճ են տևում, որպեսզի չբացահայտվի դեպի «խորքային պետություն» տանող կապը, ինչը «Էրգենեքոնի» պարագայում մեկ սպանությամբ կտրվեց: «Էրգենեքոնի» և վերջին շրջանում Թուրքիայում տեղի ունեցած ավելի փոքր չափի նմանատիպ գաղտնի կազմակերպությունների դատավարությունների ժամանակ ակնհայտ դարձավ «խորքային պետության» և նրա կողմից օգտագործվող ուժերի միջև նախկինում ևս նախադեպեր ունեցող կարևոր կապերի առկայությունը: Հանրապետական Թուրքիայի պատմության մեջ գրանցվել են դեպքեր, երբ «խորքային պետության» կողմից օգտագործվող կազմակերպություններ և ուժեր հզորանալով վերահսկողությունից դուրս են գալիս և փորձում իրենց սեփական գիծը տանել, ինչպես դա տեղի ունեցավ Յաքուփ Ջեմիլի և Թալեաթ Այդեմիրի հետ: «Էրգենեքոնի» պարագայում նման անձ հանդիսացավ այդ կազմակերպության ղեկավարներից մեկը՝ գեներալ Վելի Քյուչուքը: Վերջինիս վերահսկողությունից դուրս գալու պահը հարկ է համարել ոչ թե լրագրող Հրանտ Դինքի սպանության կամ հակակառավարական ակցիաների նախապատրաստումը, այլ երբ Քյուչուքը հայտարարեց, որ Աթաթուրքի կողմից ընդունած Ազգային ուխտը (խոսքը 1920 թ. ընդունած Թուրքիայի սահմանները նշող Ազգային ուխտի մասին է) չի ճանաչում Ադրբեջանը, որն իր համար նույնպես թուրքական տարածք է:

1990-ական թթ. Հարավարևելյան Անատոլիայի քրդաբնակ շրջաններում ժանդարմերիայի հատուկ ջոկատայինների (JITEM) կամ այլ կառույցների կողմից իրականացված սպանություններն ու բռնությունները կոծկվել էին և անպատիժ մնացել այնքան ժամանակ, քանի դեռ քաղաքական իրավիճակը երկրում չէր փոխվել, իսկ ամենակարևորը, տեսնելով իրենց անպատժելիությունը, այդ ուժերը սկսեցին հավակնել նաև քաղաքական որոշ դերակատարության: «Խորքային պետության» կողմից օգտագործվող կամ օգտագործված, հետագայում վերահսկողությունից դուրս եկած կամ չափազանց ուժեղացած և այլ դերակատարության հավակնող ուժերից մաքրվելն ամենևին էլ չի նշանակում «խորքային պետության» թուլացում կամ վերացում: Այդ տեսակետից խորհրդանշական են ժամանակին ԱՍԱԼԱ-ի դեմ պայքարում օգտագործած և ներկայումս դատապարտված թուր-

քական մաֆիայի «կնքահայրերից» Ալահեդդին Չաքըջըի խոսքերը. «Պետությունը մեզ օգտագործեց և աղբանոց նետեց»:

Անդրադառնանք նաև «խորքային պետության» և նրա կողմից օգտագործվող ուժերի միջև կապող օղակ հանդիսացող կուսակցությանը և այն անձին, որի անունը հավասարաչափ հիշատակվում է թե՛ «Էրգենեքոն» կազմակերպության, թե՛ Հրանտ Դինքի սպանության կազմակերպիչների, թե՛ 2006 թ. մայիսի 17-ի՝ Պետական խորհրդի վրա հարձակման ետևում կանգնած մայոր Մուզաֆֆեր Թեքինի դատավարությունների ժամանակ: Խոսքը նախ՝ «Մեծ միություն»-Buyuk Birlik Partisi–BBP աջ ծայրահեղական իսլամիստական կուսակցության մասին է, որն ստեղծվել է 1993 թվականի հունվարի 29-ին: Ստեղծվել է՝ նկատի ունենալով, որ կարող է փակվել MHP-ն: Այս կուսակցությունը մի յուրօրինակ սինթեզ է ազգայնականության և իսլամի: Հիմնադիր նախագահն է Մուհսին Յազըջօղլուն: Այդ կուսակցության անդամ էին Հրանտ Դինքի սպանության կազմակերպիչ Յասին Հայալը, Մուզաֆֆեր Թեքինը և ներկայումս տարբեր դատական գործերով անցնող մի շարք անձինք: Ապա՝ տարբեր ուղղություններով ձգվող թելերը կենտրոնանում էին մեկ մարդու ձեռքում՝ Մուհսին Յազըջըօղլուի, որը «խորքային պետության» կամ առնվազն խորքային կապեր ունեցող մարդու համբավ ուներ: 1980 թ. սեպտեմբերի 12-ի հեղաշրջումից հետո Մուհսին Յազըջըօղլուն առանց դատական վճռի 7,5 տարի բանտում անցկացրեց, և այն ժամանակվանից ի վեր տեղեկություններ հայտնվեցին, որ Յազըջըօղլուն օգտագործվում է շատ ազդեցիկ գաղտնի ուժերի կողմից: Յազըջըօղլուի անունն առաջին անգամ մամուլի էջերում հայտնվեց 1979 թ. Ստամբուլի Բահչելիեվլեր թաղամասում և Քահրամանմարաշ քաղաքում ազգայնականների կողմից կազմակերպված ջարդերի ժամանակ: «Էրգենեքոնի», Հրանտ Դինքի սպանության և այլ վերոնշյալ դատավարությունների ժամանակ, երբ սկսեց ակտիվորեն արծարծվել Մուհսին Յազըջըօղլուի անունը և բացահայտվել դեպի նրան տանող կապերը, վերջինս անսպասելիորեն 2009 թ. մարտի 25-ին ուղղաթիռի վթարի արդյունքում զոհվեց: Ընդ որում, նրա մահը շատ հարցեր հարուցեց, քանի որ հետաքնությունը պարզեց, որ ուղղաթիռի վայր ընկնելուց հետո Յազըջըօղլուն ողջ էր, միայն ոտքն էր կոտրվել, և տեղական իշխանությունները, մասնավորապես Քահրամանմարաշի նահանգապետը, դրա, ինչպես նաև ուղղաթիռի վթարի մոտավոր վայրի մասին ստույգ տեղեկություններ ունեին: Սակայն

ուղղաթիռի մասնագետները, Յազըջըօղլուի և նրա վեց ընկերների դիակները, որոնք մահացել էին ցրտահարությունից, գյուղացիները գտել էին միայն 48 ժամ անց իշխանությունների կողմից որոնման և փրկարար աշխատանքների անցկացման շրջանից 115 կմ հեռավորության վրա: Մուհսին Յազըջըօղլուի կասկածելի մահը պարզելու նպատակով Թուրքիայի Ազգային մեծ ժողովի կազմած հատուկ հանձնաժողովը մինչ այսօր որևէ արդյունքի չի հասել: Որոշ թուրք վերլուծաբանների կարծիքով Մուհսին Յազըջըօղլուի մահով կտրվեց «Էրգենեքոնից» դեպի «խորքային պետություն» տանող օղակը[44]:

[44] Տե՛ս Արսեն Ավագյան, պատմական գիտությունների դոկտոր, Քաղաքական գիտության Հայաստանի ասոցիացիայի խորհրդի անդամ, հատուկ «Արմենպրես»-ի համար:

ԴԱՐԻ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ[45]

Դառը դատավճիռ գեներալներին. մուրճը կոտրեց թուրքական հանրության միասնականությունը՝ նույնիսկ Ցեղասպանության հարցում: Առավոտյան Թուրքիայում դարի դատավճիռը կարդացին: Երկրի ռազմական ողջ էլիտան մոտ չորս հարյուր հոգի, դատապարտվեց ազատազրկման, նրանցից մի քանիսը՝ ցմահ: Մեծ մուրճի պլանը մուրճի մեկ հարվածով ձախողեց Էրդողանը: Մեծ մուրճը հեղաշրջման ծրագիր էր, որը 2003-ից նախապատրաստում էր երկրի ռազմական էլիտան:

Առավոտյան դատավորը կարդաց դատավճիռը, որը պայթեցրեց համաշխարհային հեղլայնները. «իսկական հեղաշրջումը» սա էր. Թուրքիայում առաջին անգամ զինվորականներին դատեց ոչ թե զինվորական դատարանը, այլ քաղաքացիականը, և բանակը զրկվեց էլիտայից:

Դատվեցին գեներալներ և ամենաբարձրաստիճան պաշտոնյաներ, որոնց ձեռքում, ըստ էության, իրական իշխանությունն էր:

[45] Հրապարակված է 22–ը սեպտեմբերի, 2012թ.:

ՎԵՐՋԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ

ԱՇԿ-ն բուռն կերպով քննադատում է Հայաստան-Թուրքիա սահմանի բացման գաղափարը: ԱՇԿ-ի նախագահը հայտարարում էր, որ Թուրքիայի նախագահի՝ Երևան այցելելը Հայաստանի հետ սկսած հարաբերությունների բնականոն գործընթացը հասցրել է միակողմանի զիջումների: 2010 թվի ապրիլի 29-ին Մեծ Եղեռնի 95-ամյա տարելիցի առիթով Պոլսում զոհերի հիշատակին նվիրված ոգեկոչումներ եղան: «Գորշ գայլերը» սպառնացին սպանել ոգեկոչողներին: 2010 թվականի հոկտեմբերի 7-ին Անիի Մայր տաճարում ԱՇԿ-ն կազմակերպեց մի խեղկատակություն. տեղի ունեցավ սելջուկյան նամազ, որը համաձայնեցված էր Թուրքիայի իշխանությունների հետ:

Ներկայումս Թուրքիայում իշխող «Արդարություն և զարգացում» կուսակցությունը (AKP) բազմիցս հայտարարել է, որ դեմ է ազգայնականությանը, և վարչապետ Էրդողանը բացահայտ քննադատել, ավելին՝ ֆաշիստական է համարել Թուրքիայի Հանրապետության այն քաղաքականությունը, որի հետևանքով փոքրամասնությունները հեռացան երկրից: Սակայն սրան զուգահեռ՝ որոշ թուրք բարձրաստիճան ղեկավարների արտահայտությունները շարունակում են մսալ խիստ մտահոգիչ: Դրանցից առանձնացնենք Թուրքիայի պաշտպանության նախարար Վեջդի Գյոնուլի՝ 2008 թվականի նոյեմբերին Բրյուսելում արված հետևյալ հայտարարությունը. «Եթե այսօր Էգեյան ծովի ավազանում հույները և Թուրքիայի շատ վայրերում հայերը շարունակեին ապրել, արդյո՞ք մենք կարող էինք նույն ազգային պետությունը լինել»:

Հանրապետական Թուրքիայի իշխանությունները Լոզանի պայմանագրով սահմանված իրավունքները բնութագրում են ոչ թե որպես ազգային, այլ կրոնական փոքրամասնության իրավունքներ, այդ պատճառով փոքրամասնությունները չեն կարող կուսակցություններ կամ ազգային հաստատություններ ունենալ:

Հիվանդագին ազգայնամոլության բնորոշ դրսևորումներից էին Ամենայն Հայոց կաթողիկոս Գարեգին Բ-ի շքախմբի դեմ հարձակման փորձը (2006 թվականի հունվար), Տրապիզոնում և Սամսունում երկու կաթոլիկ հոգևորականների սպանությունը (2006 թվականի փետրվար-հուլիս), 1955 թվականի Պոլսի հույների սպանդի հիշատակին նվիրված ցուցահանդեսի խափանումը (2005 թվականի սեպտեմբեր) և առհասարակ այլախոհների դեմ ամեն առիթով կիրառվող

ոտնձգությունները: 2005 թվականին Թուրքիայի քրեական նոր օրենսգրքի 301-րդ տխրահռչակ հոդվածի հիման վրա կատարվող հավատաքննական դատավարություններն ու Բեռլինում «Թալեաթ փաշա» և նման գործողությունները վկայում են, որ նման ախտը դեռևս առկա է պետական բոլոր մակարդակներում:

Թուրք այլախոհ պատմաբան Թաներ Աքչամը ժամանակակից Թուրքիայում առկա ազգայնամոլական տրամադրությունները համարում է միաժամանակ ֆաշիստական գաղափարներով պարուրված և 20-րդ դարի սկզբին Հայոց ցեղասպանությունը իրագործած «Միություն և առաջադիմություն» կուսակցության կողմից Երիտթուրքերի դավանած համաթուրանական արժեքային համակարգի շարունակությունը: Թուրքերը և Կենտրոնական Ասիայի իրենց ցեղակիցները երբեք թուրքական միևնույն ճամբարին չեն պատկանել: Հետևաբար Թուրքիայում համաթուրանական ցեղապաշտությունը և թուրքական ազգայնականությունը հաճախ եղել են իրար ամբողջացնող և երբեք չհակասող հարաբերակցության մեջ:

2012 թվականի փետրվարի 26-ին Ստամբուլի Թաքսիմ հրապարակում Խոջալուի դեպքերի 20-ամյակին նվիրված միասնական ցույց անցկացրին ադրբեջանցի և թուրք ազգայնականները: Ցույցի ընթացքում, ըստ թուրքական լրատվամիջոցների լուսանկարների, մասնակիցները կրել են ծայրահեղ հակահայկական բովանդակությամբ պաստառներ, որոնց վրա գրված է եղել «Վերջ հայկական ստերին», «Բոլորդ հայ եք, բոլորդ վիժվածք եք», «Այսօր՝ Թաքսիմ, վաղը՝ Երևան», «Մի զիշեր կարող ենք հանկարծակի գալ» :

Մամուլում, լրատվական այլ միջոցներում պարբերաբար հայտնվում են լուրեր, որոնք, թվում է, թե խոսում են միջազգային հանրության մեջ հայանպաստ քաղաքական փոփոխությունների մասին: Այսպես. «Ադրբեջանի ընդդիմության ներկայացուցիչները մտադիր են բողոքի գործողություն անցկացնել «ղարաբաղյան հակամարտության» կարգավորման առնչությամբ Ադրբեջանի նկատմամբ ճնշման դեմ»: (Երևան 18/04/06 Արմինֆո):

«Ադրբեջանի Ազգային դեմոկրատական կուսակցության («Գորշ գայլեր») նախագահ Իսկենդեր Համիդովի ասելով՝ Ադրբեջանին ստիպում են հրաժարվել ԼՂՀ-ի նկատմամբ իր ազդեցությունից:

«... Ըստ ԱՄՆ ծրագրերի՝ արդեն այսօր նախատեսվում է Ադրբեջանին հանձնել Զանգելանի, Ջեբրաիլի և Ղուբադլիի շրջանները՝ դրանք Իրան ներխուժելու ճանապարհին պլացդարմի վերածելու նպատակով: Մեր սեփական հողերը վերածվում են գերտերությունների գաղափարների պատանդների: Մինսկի խմբի համահովանավորները մշակում են ծրագրեր, որոնց համաձայն՝ հակամարտության գոտում կտեղաբաշխվեն օտարերկրյա զորքեր, սակայն ամենևին էլ ոչ հօգուտ Ադրբեջանի: Ենթադրվում է, որ խաղաղապահ զորքերը կտեղաբաշխվեն ԼՂ-ի և հայերի կողմից օկուպացված շրջանների միջև»,-հայտարարել է նա:

«Vakit»-ի պնդմամբ՝ սիոնիստների «Ավետյաց երկիրը» ներառում է նաև հարավարևելյան Անատոլիան, որի պատճառով հայերը նրանց համար դառնում են Եփրատն ու Տիգրիսը գրավելու առաջադրանքի իրականացման միջոց: Այնինչ սիոնիստները հայերի միջոցով ձգտում են տեր կանգնել Եփրատին և Տիգրիսին:

Թուրք մասսոնները ենթարկվում են ֆրանսիական Մեծ Արևելք օթյակին:

Մասսոնական օթյակները ծառայում են Իսրայելին. նրանք նպատակ ունեն, թուրքական առանձին թերթերի պնդմամբ, Թուրքիայի հարավ-արևելքում ստեղծել «Մեծ Հայաստան»:

Հավատալ և առավել ևս մեծ հույսեր պետք չէ՛ կապել միջազգային հանրության արդարամտության և բարի կամքի հետ:

ԱՄՆ-ն, ԵՄ-ը դեմ են «քեմալականներին», կողմ՝ «իսլամիստներին»:

Թուրքիայի վարչապետ Ռեջեփ Թայիփ Էրդողանը կոչ է անում եվրոպաբնակ թուրքերին ինտեգրվել այն հասարակությանը, որի մեջ ապրում են, բայց ամեն կերպ փորձել խուսափել ձուլումից: Ավելին, նա կարծիք է հայտնել, որ ձուլումը մեղք է մարդկության դեմ. «Ոչ մի մարդուց, ոչ մի հասարակությունից չես կարող պահանջել հրաժարվել իր լեզվից, կրոնից, մշակույթից, ավանդույթներից: Իսկ եթե պահանջես, ապա դա մարդկության դեմ մեղք է»: Եվ սա ասում է այն երկրի նախագահը, որտեղ ամեն քայլափոխի ոտնահարվում են ազգային փոքրամասնությունների իրավունքները, որտեղ նույնիսկ օրենքով են ճնշում ազգային փոքրամասնություններին:

Թուրքական մամուլում տպագրվեց որոշ կուսակցությունների հայտարարությունն այն մասին, որ պատրաստ են աջակցել Թուրքիայի՝ Եվրամիություն մտնելուն այն դեպքում, երբ Արևմուտքը հրաժարվի Թուրքիայի վզին փաթաթել քրդական խնդրի լուծման իր տեսակետը: Այսպես, ԱՇԿ-ի պառլամենտական խմբի քարտուղարի տեղակալ Օմեր Իզգին հայտարարեց, որ եթե ԵՄ-ն պատճառ դառնա երկրի մասնատմանը, երկրի ամբողջականության խարխլմանը, անհնար կլինի մտնել այդ կառույցի մեջ: «Եթե իմ ազգը սկսի հարավարևելքում ստանալ իր իրավունքները այնպես, ինչպես պահանջում է ԵՄ-ն, իմ գործունեության իմաստը կորչում է: Եթե ԵՄ-ն փորձի ցույց տալ ինչ անել ու ինչ չանել, գլուխ կհանենք առանց նրանց»,- ասում է նա:

Հանրապետության առաջին տարիներին վարչապետ Իսմեթ Ինոնյուն[46] պատրաստվում էր ԹԱՄԾ-ի հաստատմանը ներկայացնել փոքրամասնությունների մասին օրինագիծ և այն քննարկելու համար այցելում է նախագահ Ք. Աթաթուրքին, որը նրան ընդունում է նախագահական պալատի ծաղկանոցում, որտեղ կային բազմատեսակ ծաղիկներ: Լսելով վարչապետ Ինոնյուի՝ փոքրամասնությունների վերաբերյալ օրինագծի հարցը, Աթաթուրքը հետաձգում է դրա քննարկումը հաջորդ օրվան: Վարչապետի գնալուց հետո նախագահը

[46] Մուստաֆա Իսմեթ Ինոնյու (1889 թ. սեպտեմբերի 24–1973 թ. դեկտեմբերի 25)- Թուրքիայի վարչապետ, ապա՝ նախագահ: Ծնվել է Իզմիրում, հայրը՝ Հաջը Ռաշիդ Բեյ, մայրը՝ Ջևրիե Հանըմ: 1903 թվականին ավարտել է ռազմական ակադեմիան: Աշխատել է Մուստաֆա Քեմալ Աթաթուրքի հետ: Հմտորեն կառավարել է Թուրքիայի տնտեսությունը որպես վարչապետ: Աթաթուրքի մահից հետո դարձավ նախագահ: Իմացել է արաբերեն, ֆրանսերեն ու գերմաներեն: Մահացել է 1973 թվականին, թաղվել Անկարայում: Իսմեթ Ինոնյուն հայտնի է որպես Իսմեթ փաշա:

կարգադրում է արմատախիլ անել պարտեզի բոլոր ծաղիկները և թողնել միայն կակաչները: Հաջորդ օրը Իսմեթ Ինոնյուն, գալով Աթաթուրքի մոտ, անմիջապես նկատում է, որ ծաղկանոցում մնացել են միայն կակաչները: Ինոնյուի՝ ինչու են արմատախիլ արվել մյուս ծաղիկները հարցին, Աթաթուրքը պատասխանում է. «Փոքրամասնություններին հանեցի, թափեցի»: Այսպես՝ խոսելով Թուրքիայում ներկայումս ապրող և անօրինական աշխատող 100 հազար հայերի մասին, Էրդողանը հայտարարել է. «Անկարան մինչև այժմ հանդուրժել է նրանց ներկայությունը: Սակայն ի՞նչ կանեմ վաղը: Կանեմ հետևյալը: Նրանց կասեմ, արագացրե՛ք, ե՛տ գնացեք ձեր երկիրը: Ես պարտավոր չեմ ձեզ պահել իմ երկրում»: Էրդողանի այս հայտարարությունը Շվեդիայի խորհրդարանի կողմից Հայոց ցեղասպանության մասին ընդունած որոշման արձագանքն էր: Եվ սա շատ նման է Քեմալ Աթաթուրքի կողմից փոքրամասնությունների հարցում գտած իր լուծման հետ:

Նա անարգանքի սյունին է գամում երկրի փոքրամասնությունների խնդիրները կամ դրանց անդրադառնում, երբ պահանջում է քաղաքական շահը: Թուրքիայի վարչապետը այս արտահայտությամբ ևս մեկ անգամ փաստեց, որ ինքը հայ-թուրքական հարաբերությունների համատեքստում Թուրքիայում բնակվող հայերին դիտում է որպես քաղաքական ահաբեկման առարկա:

Թուրքիայում առկա ազգայնամոլությունը աճ է ապրում: Ժողովներից մեկում հնչում է. «Յուրաքանչյուր մուսուլմանի պարտականությունն է, որ գյավուրներին՝ անհավատներին, մուսուլման դարձնի»: «Արևմուտքը վարում է միտումավոր ասիմիլիացիայի քաղաքականություն: Նա պարտադրում է մեզ իր մշակույթն ու կրոնը»:

Ազգայնամոլական լուրջ աշխատանք է ծավալում երգիչ Օզան Արիֆը՝ «Գորշ գայլերի» անզուգական մեկնաբանը՝ ԱՇԿ-ի գաղափարախոսությունը երգերի միջոցով տարածողը: Նրա նշանավոր երգերից են. «Գաղափարապաշտների շարժումը», «Հնազանդ ենք հրամանիդ», «Ապրի՛ր, Հանրապետություն»:

Թուրքիայի Հանրապետությանը թուրք-հայկական հարաբերությունների կարգավորումը պետք է այնքան, որքան պետք է ցույց տալ Եվրամիությանը:

Շատերը կարծում են, որ Թուրքիան փոխվել է դրական առումով, որ եթե Թուրքիայում իշխում են չափավոր իսլամիստները, ապա Թուրքիան բռնել է բարենորոգման ճանապարհը: Եղած քաղաքական ուժերի մեջ, իրոք, իսլամիստները ամենաձեռնտուն են հայերի համար,

սակայն նույնիսկ նրանց հետ հույսեր կապել պետք չէ: Նմանատիպ կարծիք էր ձևավորվել նաև Քեմալի իշխանության գալու ժամանակ, սակայն ժամանակը ցույց տվեց, որ ոչինչ, կամ գրեթե ոչինչ չէր փոխվել:

Ներքոշարադրյալը Քեմալի ու քեմալիզմի մասին վերլուծություն է, երբ ցույց է տրվում բարեփոխումների և քեմալիզմի իրական բնույթը:

Մուսթաֆա Քեմալը մեծ փոփոխություններ արեց Թուրքիայում: Կա կարծիք, որ նա էր առաջին մեծ բարենորոգիչը Թուրքիայում, սակայն Թուրքիայի պատմությանը ծանոթանալիս նկատում ենք, որ նրանից առաջ էլ են եղել նման փորձեր: Մուսթաֆա Քեմալի կատարած փոփոխությունները հեռու էին պարզ բարենորոգումներ լինելուց: Դրանք հեղաշրջում էին Թուրքիայի կրոնական, պետական, տնտեսական և նույնիսկ ընտանեկան կյանքում: Պետք է, սակայն, գիտակցենք, որ Թուրքիայում եղած փոփոխությունները նույնքան արմատական էին, որքան 1789 թվականի ֆրանսիական, 1917 թվականի ռուսական հեղափոխությունները: Քեմալը իր նորամուծությամբ և հեղափոխականությամբ բնավ հետ չէր մնում Ռոբեսպիերից, կամ Լենինից: Քեմալը ժամանակի ամենաուժեղ և ամենից արմատական դիկտատորներից էր: Սակայն խորը վերլուծության դեպքում, տեսնում ենք, որ այդ փոփոխությունները միայն արտաքին են, ըստ էության ԹՈՒՐՔԻԱՆ ՉԷՐ ՓՈԽՎԵԼ:

Մուսթաֆա Քեմալի օրենքները նպատակ ունեին.

ա.Վերացնել Թուրքիայում ապազգային իսլամը (սրա համար գործի դրվեց լայիցիզմի մասին օրենքը, որը կազմում է քեմալիզմի հիմնական կետերից մեկը), «օսմանցի» հասկացությունը փոխարինել «թուրք» հասկացությամբ:

բ.Վերացնել օսմանյան առաձգական, անշոշափելի հայրենիքի գաղափարը և ստեղծվելիք թուրք ազգին տալ մի որոշակի հայրենիքի գաղափար, այժմյան հասկացողությամբ՝ Անատոլիան:

գ. Անատոլիան դարձնել Թուրքիա, իսկ թուրքին դարձնել արդիական ազգ՝ առաջադիմած կյանքի բոլոր բնագավառներում, ընդունակ ինքն իր հաշվին ապրելու՝ առանց այլոց կարիքը զգալու:

դ.Թուրք ազգը հզորացնել թվաքանակով, որակով, ուժով, ընդունակ իր գոյությունը անկախ պահելու և զգալի դարձնելու աշխարհում:

Անարդար կլինի, եթե այս բոլոր օրենքները և սկզբունքները որակենք որպես հետադիմական: Սակայն քեմալիզմը ժողովրդից չէր ծագել: Այսինքն՝ դա ներքևից, ժողովրդից ծագած պահանջ չէր և ոչ էլ վերևից սկսվող համընդհանուր բարեփոխում: Ռոբեսպիերները, դանթոները ֆրանսիական ժողովրդի մեծամասնության հեղափոխական պահանջների խտացումն էին, իսկ ռուս Պետրոս Մեծը, Ալեքսանդր 2-րդը՝ բարենորոգիչներ, պուշկինները, տուրգենևները և տոլստոյները՝ ռուս ժողովրդի ստեղծողները:

Այս երկու ձևերը թեև իրագործման միջոցներով տարբեր են իրարից, բայց մի կետում երկուսն էլ նույնն են, այս նույնացման կետը ժողովրդական զանգվածների բնական կարիքները բավարարելու ջանքն է: Ճիշտ է, որ ռոբեսպիերների փիլիսոփայությունը չէր, որ առաջացրեց 1789 թվականի և հետագա մեծ շարժումները: Պարզապես ռոբեսպիերները առաջնորդն էին այն ժողովրդի, որը ծարավ էր Բուրբոնների կապանքներից ազատագրման: Մինչ ռոբեսպիերները խտացումն էին ժողովրդի ուժի, այստեղ Թուրքիայում, ժողովրդական զանգվածի կամքը, նրա բնական կամքը գոյություն չուներ: Կար միայն մի խումբ մարդկանց կամքը, որը գլխավորում էր Քեմալը, և որն էլ թելադրվում էր ժողովրդական զանգվածներին: Կատարվածը թուրքական հեղափոխություն չէր, այլ հեղաշրջում Քեմալի ու քեմալականների կողմից: Քեմալական ռեժիմի առաջնային նպատակն էր ստեղծել թուրք ազգ: Սա տարօրինակ չպետք է թվա: Թեև Թուրքիան դարեր շարունակ գոյություն է ունեցել իբրև աշխարհակալ պետություն, թեև այն զերեզման իջեցրեց բազում փոքր ու մեծ ժողովուրդների, մինչև քեմալական իշխանության ի հայտ գալը որպես ազգ չէր ձևավորվել: Քեմալը նպատակ էր դրել վերացնել «օսմանցի», «մահմեդական» որակավորումները:

Հայրենիքի գաղափարը ամեն մի կազմակերպված ժողովրդի համար պարզ է ու հասկանալի, թեկուզև նա չկարողանա այդ զգացմունքը բացատրել: Այն երկիրը, որի հետ կապված են ժողովրդի անցյալի հիշողությունները, որոնք նույնանում են նրա էության հետ, այն երկիրը, որի համար ժողովուրդը թափել է իր արյունը, որտեղ իր պապերի ոսկորներն են, իր քրտինքը, իր միտքը, դաշտն ու անապատը, ջուրն ու օդը դառնում են ոչ միայն նյութական, այլ նաև զգացական ազդակ, ահա այդ երկիրը դառնում է տվյալ ժողովրդի հայրենիքը: Հայրենիքը ոչ միայն շահ է, այլ նաև զգացմունք է դեպի հողը, երկիրը, գրեթե նույնանման ճաշակ է դեպի կրոնը, գեղեցկությունը, կինը, բարոյականությունը: Հայրենիքի զգացմունքը

ժողովրդի «ես»-ն է: Այդ «ես»-ը տարբեր է տարբեր ժողովուրդների համար: Ֆինները երգում է սառցե ժայռերի մասին, հայը՝ խորխորատ անդունդների, բարձրաբերձ լեռների, ռուսը՝ անծայրածիր դաշտերի, արաբը՝ կիզիչ անապատների: Յուրաքանչյուրի համար իր երկիրը սուրբ է, նվիրական, թեկուզև այդ նվիրականությունը անարժեք, անհասկանալի լինի մեկ այլ ժողովրդի համար: Այս զգացմունքը անկախ է այդ երկրի իսկական արժեքից, հարստությունից և այդ երկրին տրված բնական պայմաններից: Անգլիացու համար հայրենիք է Բրիտանական կղզիները և ոչ հարուստ Հնդկաստանը, թեկուզև տիրում էր նրան, հայի համար հայրենիք է Հայաստանը, թեկուզև արյունաքամ է եղել այնտեղ:

Հայրենիքի գաղափարը երբեք չի եղել ո՛չ օսմանցիների, ո՛չ էլ թուրքերի մոտ: Ըստ թուրքի հասկացողության՝ երկիրը մի նյութ է, որից նյութապես օգտվում են, ժամանակավոր մի բնակատեղի, ուրիշ ոչինչ: Այդ բնակատեղին հեռու է նվիրական սրբություն լինելուց, հեռու է իր «ես»-ի անբաժան մասը լինելուց: Սա եկել է Ղուրանից, իսկ մենք գիտենք, որ օսմանցիների գլխավոր զենքը իսլամն էր: Ըստ իսլամի՝ մարդկությունը բաժանվում է երկու մասի՝ «մուսլիմ» (մահմեդական) և քաֆիր (անհավատ): «Սուրբ ամիսը վերջանալուց հետո ամենուրեք սպանե՛ք բոլոր քաֆիրներին, որտեղ որ նրանց հանդիպեք» (Ղուրան): Կամ՝ «Ես առաքելություն ունեմ ջարդելու բոլոր անհավատներին, մինչև որ նրանք ասեն. «Չկա՛ Աստված, բացի Ալլահից» (Լա իլլահ իլ Ալլահ): Երբ նրանք այս խոսքերը արտասանեն, փրկված են թե՛ իրենց կյանքը, թե՛ իրենց ունեցվածքը (Ղուրան):

Ղուրանը երկրագունդը բաժանում է երկու մասի «դար ալ իսլամ» (իսլամի տուն) և «դար ալ հարբ» (պատերազմի տուն) և հրամայում է. «Վերջացրե՛ք իմ գործը, ընդարձակե՛ք իմ իսլամական տունը ամբողջ երկրագնդի վրա, Ալլահը ձեզ կտա պատերազմի տունը»:

Ներկա Թուրքիան չի հրաժարվել իր ծավալապաշտական նկրտումներից: Թուրքիան այսօր իր երկրի տերն է, այն ազդեցություն ունի այլ երկրների վրա և դեռ նպատակ ունի մեծանալու: Սակայն Թուրքիան ազգային, կրոնական, պատմական և քաղաքակրթական տեսակետից երբեք հոմոգեն չի եղել: Այն տարբեր ժողովուրդներից, տարբեր դավանանքներից, տարբեր քաղաքակրթություններից կազմված մի կոնգլոմերատ է, որն էլ հենց ժամանակին դարձավ Օսմանյան կայսրության անկման պատճառներից մեկը:

ՀԵՏԳՐՈՒԹՅՈՒՆ

Ներքոշարադրյալը քաղաքական կամ ռազմական հնարավոր հանգուցալուծման առաջարկ չէ, ավելի շուտ, ինչպես Թուրքիայում Օսմանյան կայսրության անկումը համեմատվում էր Բոսֆորի ափին հիվանդ ծերունու հետ, ու հենց այդ ցավից շատ մտավորականների մոտ առաջացավ Պանթուրքիզմի գաղափարը, սա էլ, մեր կարծիքով, մտորել տվող նյութ է: Եթե ժամանակին «ցնորք» էր համարվում Պանթուրքիզմը, իսկ այժմ՝ իրականություն, ապա Արիական դաշինքն էլ կարող է մի օր իրականություն դառնալ:

Իսլամական Իրանը (Պարսկաստան) բարեհաճ է Հայաստանի Հանրապետության նկատմամբ. դա է վկայում այն, որ Հայաստանի անկախությունը առաջինը ճանաչեց Իրանի Իսլամական Հանրապետությունը: Բացի դա, շրջափակման ժամանակ միակ տարանցիկ ուղին անցնում էր, ինչպես Դինքն էր ասում, «մոլլաների երկիր» Իրանով:

Իրանը ժամանակին բրիտանական կայսրության չափ համբավ ուներ՝ իր հզորությամբ և քաղաքակրթական ազդեցությամբ: Այն հին աշխարհում ստեղծել է պարթևական կայսրությունը՝ իր մազդեականությամբ, ծնել է կյուրոսներ, որոնք ոտքի տակ առան շատ երկրներ: Ստեղծել է գիր և գրականություն այն ժամանակ, երբ նույնիսկ քաղաքակրթության օրրան Աթենքում և Հռոմում բարբարոսներ էին ապրում: Դարեհները լոկ բռնակալ իշխանավորներ չէին, այլև մտքի, գրի և քաղաքակրթության տարածողներ: Պարսկական Տիզբոն, Եկբադան կենտրոնները ժամանակի Լոնդոնն ու Փարիզն էին, որտեղից դեպի հարավ և հյուսիս, արևելք և արևմուտք էր տարածվում իշխանության և պետության գաղափարը, գիրն ու գրականությունը, ուսումը և կրոնը, գեղարվեստը, ճարտարվեստը: Հեռավոր Թուրանի ու Ասիայի և նույնիսկ ծայրահեղ Եվրոպայի խաշնարած և բարբարոս ժողովուրդները սնվում էին հզոր ու մեծ Պարսկաստանից: Եթե 20-րդ դարում բրիտանական կամ ֆրանսիական կայսրություններն էին երկրագնդի ջահակիրը, իսկ 21-րդ դարում Գերմանիան ու Ֆրանսիան են ներկայացնում զարգացած Եվրոպան, ապա Հռոմից առաջ երկրագնդի ջահակիրն էր 20-րդ դարում հետ քաշված, իսկ 21-րդ դարում բազում քաղաքական խնդիրներ առաջ բերող, զինված բախումների վտանգ առաջացնող Իրանը, որի դեմ հատկապես օգտագործվում է ատոմային ռումբ ունենալու խնդիրը: Իրանը հայ ժողովրդի

ամենից մոտ հարևանն է: Ըստ Ռուբենի[47]՝ մեր և պարսկական պետությունների ձևերն իրար շատ նման են եղել:

Մեր Արշակունյաց հարստությունը և պարսից Արշակունիները մեկ ընդհանուր ճյուղ էին: Մեր վաղարշակները, արշակները կամ իշխանական տոհմերից Պահլավունիները համանուն պարսիկ տոհմերի հետ ազգակիցների էին:

Դժվար էր ճիշտ սահմանը գտնել պարսից և հայոց միության, որը տարածվում էր բարձր դասերից մինչև ստորին խավերը:

Ի՞նչ էլ որ ասեն նախապատմական հետազոտությունները, ճիշտ բնորոշողը ամենից առաջ ժողովրդական բնազդն է: Մենք պարծանքով մեզ համարում ենք արիական ցեղից սերած, իսկ չէ՞ որ նույն հպարտությունն ունի և պարսիկ ժողովուրդը:

Այդպես էր առաջ՝ շատ հին ժամանակներում, բայց երբ մենք հետագայում կրոնական և քաղաքական պատճառներով թիկունք դարձրինք արևելքին և նայեցինք դեպի արևմուտք, երբ Պարսկաստանը ոտնատակ արվեց արաբների և հետո՝ Թուրանի կողմից, ստրկությունը և տարբեր կրոնները բաժանեցին մեզ:

Բայց պարսիկ ժողովուրդը ստրկական լծի տակ էլի ստեղծեց մեծ դեմքեր և հոյակապ բանաստեղծներ: Նոր կրոնի հիմքը դրեց ոչ միայն շիիզմը, այլ նաև Շիրազից ծնված Բաբը՝ բաբիականության հիմադիրը, որը, ինչպես նշում են փիլիսոփաները, համաշխարհային դավանանքի ուղղվածություն ունի:

Ցեղասպանության տարիներին Իրանում էին ապաստան գտել Հայոց ազատագրական միտքն ու ուժը: Իհարկե, հազարավոր տարիների ընթացքում երկու ժողովուրդների միջև եղել են նաև բախումներ, բայց նման դեպքերը չեն, որ պետք է վճռեն երկու ժողովուրդների ներկան ու ապագան:

Բարոյական պարտքը բավական է սերտորեն կապելու այս երկու ժողովուրդներին: Անցյալի կապերը, եղբայրական զգացումները կարող են միայն դյուրացնել ներկա վիճակը և ապագան: Բայց հիմնականը փոխադարձ շահերի գիտակցությունն է: Կանխիկ ներկայի համար պետք է կանխիկ շահ, որպեսզի ժաղովուրդներն իրար հետ կապվեն: Ներկայի գործը հեշտացնում է անցյալի կապը և ապագան՝ իր հեռանկարներով:

---

[47] Տես՝ ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության և իրավունքի ինստիտուտ: Լևոն Շիրինյան, Ռուբեն, Հայաստանի վերակերտումի ռազմավարությունը (Երկրաքաղաքական վերլուծություն): Երևան-2004 թ.

Կան իրական շահեր ինչպես անցյալում, այնպես էլ՝ ներկայում, որոնք իրար հետ են կապում այս երկու ժողովուրդներին և նրանց պատմությունը:

Մեր շահակցությունը պարսիկների հետ առաջ է գալիս ոչ միայն արյունակցական և այլ զգացումներից, այլև երկու ժողովուրդների միատեսակ ճնշման, միատեսակ պաշտպանության բնազդական կամ գիտակցական ձեռնարկներից: Ժողովուրդների պատմությունը որքան ներքին, նույնքան արտաքին պատճառներից է հյուսվում: Եթե մի քանի ժողովուրդների համար այդ երկու ազդակները նույնանում են, մեկ ազգ են կազմում, մեկ ժողովուրդ: Եթե ազդակներից մեկը կամ մյուսը ոչնչանում է, այդ դեպքում անկասկած դառնում են բարեկամ կամ դաշնակից:

Պատմությունը ներկայացնում է Իրանի և Թուրանի դարավոր մրցակցությունը: Հայերս էլ ենք թուրանիզմի վտանգին ենթակա: Դարեր շարունակ Թուրքիան կամեցել է մտնել Կովկաս և Պարսկաստան, իսկ այդ հորդայի առջև դարեր շարունակ կանգնել են արիական պարսիկն ու հայը: Իզուր չէ , որ պարսից բանակի կողքին դարեր շարունակ կռվել են Մամիկոնյան այրուձին և Սյունյաց բանակները: Եվ դա եղել է ոչ թե ստիպված քայլ և ոչ էլ ռոմանտիզմ, դա եղել է հետևանք երկու ժողովուրդների փոխադարձ ինքնապաշտպանության: Նույն վիճակը շարունակվում է և այսօր. Թուրքիան և Իրանը հակամարտում են:

Պարտությունները թանկ նստեցին պարսիկ ժողովրդի վրա, ինչպես աղետաբեր եղավ մեզ համար թուրքական լուծը: Իրանը մի քանի դար հետ մնաց զարգացման ուղուց, աղճատվեց իր դիմագծով, դարձավ ճկուն, բայց ոչ հատու, ինչպես առաջ: Այժմ հասել է ժամը, երբ ուզում է պատռել քողը և իր ազատագրական շարժումով իսպառ թոթափել Թուրանի խնամակալությունը: Եվ մենք՝ իբրև շահակից և բախտակից, նրան, իհարկե, պետք է հաջողություն մաղթենք:

Մեր երկուսի առջև մահաբեր գայլ է կանգնած՝ թուրանականությունը, որին կա՛մ պիտի զոհ գնանք, կա՛մ պիտի ջախջախենք:

Դրա համար պետք է.

ա. չանել այն, ինչ ուզում է թշնամին (թուրանականությունը):

բ. գործադրել բոլոր միջոցները, որը գործադրում է թշնամին և դրան ավելացնել այնպիսի միջոցներ, որոնց հասու չէ նրա միտքը:

գ. չթողնել, որ ջլատեն հայերին և պարսիկներին: Պետք է խուսափել այս խաղերից, որպեսզի չընկնենք թուրքի ձեռքը:

Ի՞նչ է անում թուրանականությունը.

ա. թուրքական ժողովուրդների սրտի մեջ կազմել է մի քանի օղակներ, որի հոգին և գլուխը գտնվում են Ստամբուլում: Մի գլխավոր հնոցը Ատրպատականում է, և երկրորդը՝ նոր մկրտված Ադրբեջանում՝ Բաքվում, մի գլխավոր հնոց էլ՝ Թուրքմենստանում ու Աֆղանստանում և նույնիսկ Հյուսիսային Հնդկաստանում: Կարելի է հետևություն անել, որ այդ կենտրոնները պաշարել են Հայաստանն ու Իրանը:

բ. թուրք գործիչներից, երբ անցնում էին թոշակի, տեսնում էինք Ջեմալին՝ Աֆղանստանում, Էնվերին՝ Թուրքմենստանում, Նազըմին՝ Բաքվում և այլն: Իբրև թուրանականության առաջնորդներ՝ անմեղ անուններով՝ «թուրք օջախ», «թուրք յուրդ» կազմում էին մշակութային օջախներ, միություններ:

գ. ի՞նչ է այդ հսկա կազմակերպության հիմնական նպատակը՝ միացնել բոլոր թուրք-մոնղոլական ծագումով ժողովուրդներին: Եվ քանի որ այդ ժողովուրդները անջատված են Հայաստանով, քրդական բնակավայրերով և Իրանով, ուրեմն պետք է մեջտեղից հանել այդ պետություններին ու ժողովուրդներին և ստեղծել չինգիզխանյան հսկա մի կայսրություն՝ գլուխը պահելով Ստամբուլում, իսկ փորը և պոչը՝ Արալի լճի շրջակայքում և ավելի հեռուներում:

դ. ի՞նչ մեթոդներով են ուզում հասնել իրենց նպատակին: Այդ էլ արևի նման պարզ է, նրանք երկու հիմնական զենք են օգտագործում: Մեկը՝ խաղաղ, մյուսը՝ բռնի:

Գործածվող խաղաղ զենքը, որը թերևս ավելի վտանգավոր է, քան այսօրվա բթացած զենքը, հետևյալն է՝ թուրք օջախը իր շուրջն է համախմբում սելջուկին, թուրքին, թաթարին, կալմիկին, սարդին, ուզբեկին, կիրգիզին ու նրանց ներշնչվում է թուրանական միության և Լենկ Թեմուրի գահի գաղափարները: Տարբեր ժողովուրդներ համաթուրանական աշխարհակալության տառով իբր թուրք են: Եվ հավատացեք, որ եթե ոչ միշտ, ապա հաճախ սա գործող համակարգ է: Թուրքերն ընդհանրապես լավ ամբոխավարներ են: Գործում են նաև զենքով: Թուրքերը ստեղծեցին Սովետական Ադրբեջանը՝ Ռուսաստանի միջոցով: Թվում է, թե, եթե ստեղծել է Ռուսաստանը, ապա հենց նրա ձեռքին է գտնվում Ադրբեջանը: Սակայն ոչ մի դարբին չի կարող պնդել, թե իր պատրաստած սուրը արդյո՞ք իր փորը չպիտի մխրճվի: Արդյո՞ք այդ ուժը չպիտի թափի իր ստեղծողի աղիքները:

Շատերն իրենք իրենց մխիթարում են՝ հույսները դնելով Հյուսիսի, ուրիշները՝ Հարավի վրա, իսկ ավելի միամիտները՝ Արևմուտքի վրա: Բայց հույսերը սին են, եթե իրական էլ՝ ժամանակավոր, իսկ Իրանի և Թուրանի պայքարը հիմնական է և տևական:

Ինչպե՞ս պետք է կանխել Թուրանից եկող վտանգը. այնպես, ինչպես գործում են մեզ մահ ցանկացողները: Պետք չէ՛ մոռանալ՝ համաթուրանականությունը երեկ ցնորք էր, այսօր՝ իրականություն: Ինչու՞ չհավատալ, որ վաղը չի իրագործվի մի այլ «ցնորք»՝ իբրև հակակշիռ թուրանականության. արիական ժողովուրդների համադաշնությունը: Եթե Ստամբուլը թուրանիզմի գլուխն է, ապա թո՛ղ Թեհրանը կամ հայկական մի բնակավայր դառնա արիական ցեղերի եղբայրության գլուխը: Եթե ուժ է թուրքական միությունը, նույնքան ուժ է և՛ թվով, և՛ որակով հայ, պարսից, քուրդ և արիական այլ ժողովուրդների միությունը: Եթե մեծ է թուրքական աշխարհը, մի քանի անգամ ավելի մեծ է արիական աշխարհը: Եթե ստեղծվում է թուրք օջախ, ապա պետք է ստեղծել և արիական օջախ, որտեղ իրար կողք կողքի կնստեն հայն ու պարսիկը, քուրդն ու աֆղանը, տաջիկն ու ռուսը, հույնն ու հնդիկը, գերմանացին, իտալացին և արիական այլ ազգեր:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ստելլա Բրամ, Մեհմեթ Ուլզեր: «Գորշ գայլեր» : Հետազոտություն թուրք ծայրահեղ աջակողմյանների մասին: Զանգակ–97: Հոլանդերենից թարգմանեց՝ Արսեն Նազարյան, Երևան–2003 թ.:

2. Հր. Ռ. Սիմոնյան: Թուրք-հայկական հարաբերությունների պատմությունից: Երևան–Հայաստան, 1991 թ.:

3. А. А. Радионов. Турция—перекресток судеб. Воспоминания посла.—М. Международний отнашения. 2006 г.

4. Ռուբեն Մելքոնյան: Ակնարկ Ստամբուլի Հայ համայնքի պատմություն (1920-ականներից մինչև մեր օրերը): Երևան ՎՄՎ–Պրինտ 2010 թ.: ԳԱԱ. ԱԻ.:

5. Ռուբեն Մելքոնյան: Հայերի բռնի իսլամացումը ցեղասպանության տարիներին. ընթացքը և հետևանքները: Երևան: Հեղինակային հրատարակչություն, 2010 թ.:

6. «Գորշ գայլեր»: Թուրքական ազգայնամոլության մշտարթուն պահակները: Posted by Asbares Staff On January 9 2007 y.

7. Ջոն Կիրակոսյան: Երիտթուրքերը պատմության դատաստանի առջև (19-րդ դարի 90-ական թթ. – 1914 թթ):

8. Alparslan Turkes. «Dokuz isik» (Менлик No 2 (8) 1992).

9. Современний тероризм. Анализ основних направлений, Евгений Кожушко. Под обшей редакцией А. Е. Тараса. Минск. Хорвест, 2000г.

10. Вехи Истории. Л. Н. Гумлиев. Древние Турки. Великий Тюркский каганат. Голубые Турки и уйгури, или эпоха второго каганата: История образования и расцвета Великого тюрецкого каганата VI – VIII в.в.н.э. Санкт Петербург, СЭКЭО «Кристал», Москва, «ОНИКС», 2003 г.

11. Հրանտ Դինք: Երկու մոտ ժողովուրդ, երկու հեռու հարևան, Հրանտ Դինքի մատենաշար, Ա.: Եր-«Գրափունջ» ՍՊԸ: 2005 թ., 178 էջ: «Հրանտ Դինք» միջազգային հիմնադրամ: Թուրքերենից թարգմանեց Մկրտիչ Սոմունջյանը:

12. Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ: Հ. XXIII : Երևան 2004թ. Ռուբեն Սաֆրաստյան: «Գորշ գայլերի» վերադարձը: «Պահպանողական կուսակցությունը Թուրքիայի քաղաքական կյանքում» , 1983-1985 թթ.:

13. Ислам на современном востоке. Институт востоковедения Российской Академии наук. Москва 2004г.

14. Թյուրքագիտական և օսմանագիտական հետազոտություններ, հ. 4, ՀՀ. ԳԱԱ ԱԻ, Երևան. Ասողիկ 2006թ.: Արթուր Դամանյան: Ազգայնական Շարժում կուսակցության՝ «Գորշ գայլերի» գործունեության հիմնական փուլերը Թուրքիայում. 1960-70-ական թթ.:

15. ՀՀ ԳԱԱ ԱԻ, Մերձավոր Արևելք: Երևան 2005, 168 էջ. Հ. II, Դումանյան Արթուր: Աջակողմյան ծայրահեղականների ահաբեկչությունը Թուրքիայում 1960 թվականի ռազմական հեղաշրջման նախօրեին:

16. ՀՀ ԳԱԱ ԱԻ, Մերձավոր Արևելք III: Երևան 2006 թ. 160 էջ: Դումանյան Արթուր: Թուրքիայի 1980 թվականի ռազմական հեղաշրջման պատճառների շուրջ:
17. ՀՀ ԳԱԱ ԱԻ, Թյուրքագիտական և օսմանագիտական հետազոտություններ, հատոր 5: Երևան 2008 թ. Արթուր Դումանյան: Բանակ-հասարակություն փոխհարաբերությունները Թուրքիայում, 1960-70-ական թթ.:
18. Աւօ Գաթրջեան: «Գորշ գայլեր»: Համաթրքության և համաթուրանականության թունդ ժառանգորդ: Ազգայնական Շարժում կուսակցություն:
19. Աշոտ Ավագյան: «Գորշ գայլեր» համառոտ ուրվագծեր: Եր.-«Հանուն հայրենիքի» հայրենասիրական ՀԿ, 2010 թ.:
20. Hemsin ve hemsinli Ermeniler, Erivan 2007 y.
20. ՀՅԴ Հայաստանի Գերագույն մարմնի պաշտոնաթերթ. «Երկիր» 2006 թ. հուլիսի 14, «Ժամանակակից պանադրբեջանական շարժումը»:
21. Гайк Демоян. Турция и Карабахский конфликт. Ереван.
22. Կարեն Խանլարյան: Հայ-Էթնոկրատական տարրը Արևմտյան Հայաստանում 1991-2005 թթ., noravank.am:
23. Ստամբուլի հայ համայնքի արդի իրավիճակը: Արսեն Ավագյան, Ռուբեն Մելքոնյան, Երևան, 2009 թ.:
24. Турецкая Республика. Справочник. Москва «Наука» 1990 г.
25. Արզումանյան Մ.Վ: Դարավոր գոյամարտ: Եր. Հայաստան: 1985թ. էջ 768:
26. Լևոն Հովսեփյան: Թուրքիայի զինված ուժերի ռազմարդյունաբերության արդիականացումը: ՀՀ ԳԱԱ ԱԻ, 2010թ.:
27. Ժամանակակից Եվրասիա, 1, 2012 թ., ՀՀԳԱԱ ԱԻ, Վահրամ Տեր-Մաթևոսյան, Թուրքիան 2008-2011 թթ.: Քաղաքական փոխակերպումների հիմնական առանձնահատկությունները:
28. Կարեն Խանլարի: «Դաշտոնական» հայերը Թուրքիայի հանրապետությունում 1923 – 2005 թթ. Noravank.am:
29. Ռուբեն Մելքոնյան: Իսլամացած հայերի խնդիրը Թուրքիայում. noravank.am:
30. Թյուրքագիտական և օսմանագիտական հետազոտություններ: Հատ. 7: Երևան 2011 թ., Մանուկյան Տաթևիկ, ՔԱԿ գործունեության հարցի շուրջ (1980-90- ական թթ.):
31. muhsinbozkurt.net.
32. turan.tc.
33. ulkuocaklari.org.tr.
34. erivan.az.com.
35. Խաչիկ Դաշտենց: Ռանչպարների կանչը: Երևան, «Նաիրի» 2010 թ: 203 էջ:
36. Համացանցի հայկական այլ էջեր և պատկերասփյուռի կայաններ:
37. Թուրքական համացանցի այլ էջեր և պատկերասփյուռի կայաններ:
38. ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության և իրավունքի ինստիտուտ: Լևոն Շիրինյան, Ռուբեն, Հայաստանի վերակերտումի ռազմավարությունը (Երկրաքաղաքական վերլուծություն): Երևան-2004 թ.:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Պանթուրքական ազգայնամոլության ներկա դրսևորումները 6
Քուրդ նորագույն զինյալ պայքարի մարտիկները 90
«Գորշ գայլերը» և հայերը 97
Հայ նորագույն զինյալ պայքարի մարտիկները 105
Ժամանակակից պանադրբեջանական շարժումը 110
Անջատված կազմակերպություններ 117
Հրանտ Դինքը և «Գորշ գայլերը» 119
«Էրգենեքոն» + «Գորշ գայլեր»- ԱՍԱԼԱ առճակատումներ 129
Դարի դատավարությունը Թուրքիայում 137
Վերջաբանի փոխարեն 138
Հետգրություն 146
Օգտագործված գրականություն 151

ՊԱՆԹՈՒՐՔԱԿԱՆ ԵՐԱՁԱՆՔ
ԿԱՄ
«ԳՈՐԾ ԳԱՅԼԵՐ»

ԸՍՏ ԱՍՊԱՐԵԶՈՒՄ ԵՂԱԾ ՆՅՈՒԹԵՐԻ

Հրատարակության պատրաստեց «Հանուն հայրենիքի» ՀԿ

Խմբագիր՝ Զոհրաբ Մուղդուսյան

Սրբագրիչ՝ Արմինե Ստեփանյան

Ձևավորումը՝ Լորա Մաթևոսյանի

ԱՍՈՂԻԿ

Տպագրված է «ԱՍՈՂԻԿ» հրատարակչության տպարանում:
Ք. Երևան, Սայաթ-Նովա 24, (գրասենյակ)
Ավան, Դավիթ Մալյան 45 (տպարան)
Հեռ. (374 10) 54 49 82, 62 38 63
Էլ. փոստ՝ info@asoghik.am

9(56)
Հ4-77
+
Հշ.

«Մինչ հայը իր ցեղի մեջ մարդկութիւն,
թուրքն իր հոգում՝ գայլութիւն է մշակում»:

Գարեգին Նժդեհ